

«Հաստատում էմ»

Տնօրենի Պ/Կ

«31» Հոկտեմբերի 2020 թ.

Կ.Տ.



ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՒԵՋԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ք.ՀՐԱԶԴԻԱՆ ԿԵՆՏՐՈՆ 96



Հրատարակվել է 2020

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

<i>Անուն, Ազգանուն</i>	<i>Պաշտոնը հաստատությունում</i>	<i>Պատասխանատվությունը խմբում</i>
<i>Գ. Գևորգյան</i>	<i>Տնօրեն</i>	
<i>Վ.Թովմասյան</i>	<i>Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն</i>	
<i>Լ.Արեյան</i>	<i>Դասախոս, Որակի ներքին ապահովման կենտրոնի ղեկավար</i>	<i>Ինքնավերլուծության 1-ին, և 10-րդ, չափանիշների պատասխանատու</i>
<i>Ք.Հակոբյան</i>	<i>Դասախոս, Կադրերի տեսուչ</i>	<i>Ինքնավերլուծության 5-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Ժ.Ստեփանյան</i>	<i>Կարիերիայի ուղղորդման պատասխանատու</i>	<i>Ինքնավերլուծության 9-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Ա.Բաղդասարյան</i>	<i>Դասախոս, Հանրակրթության բաժնի վարիչ</i>	<i>Ինքնավերլուծության 9-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Կ.Սեմիրջյան</i>	<i>Պրակտիկայի ղեկավար</i>	
<i>Ա.Զարգարյան</i>	<i>Դասախոս, ԴՈՒԱԼ-ի պատասխանատու</i>	<i>Ինքնավերլուծության 6-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Զ.Պետրոսյան</i>	<i>Դասախոս</i>	<i>Ինքնավերլուծության 6-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Լ.Ներսիսյան</i>	<i>Դասախոս</i>	<i>Ինքնավերլուծության 1-ին, չափանիշի պատասխանատու</i>
<i>Ք.Արշակյան</i>	<i>Դասախոս, Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ</i>	<i>Ինքնավերլուծության 8-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Հ.Առաքելյան</i>	<i>Դասախոս, Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ</i>	<i>Ինքնավերլուծության 8-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Հ.Բարեղամյան</i>	<i>Դասախոս, Լեզուների ամբիոնի վարիչ</i>	<i>Ինքնավերլուծության 2-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Է.Խաչատրյան</i>	<i>Դասախոս, Հումանիտար առարկաների ամբիոնի վարիչ</i>	<i>Ինքնավերլուծության 2-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Ա.Հայրապետյան</i>	<i>Դասախոս, Փոխադրումների կազմակերպման, գյուղատնտեսության և գազասարքավորումների ամբիոնի վարիչ</i>	<i>Ինքնավերլուծության 2-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Ս.Գաբրիելյան</i>	<i>Դասախոս</i>	<i>Ինքնավերլուծության 3-րդ, չափանիշի</i>

		<i>պատասխանատու</i>
<i>Ա. Կարապետյան</i>	<i>Դասախոս</i>	<i>Ինքնավերլուծության 3-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Ա. Օհանյան</i>	<i>Դասախոս</i>	<i>Ինքնավերլուծության 4-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Կ. Բարաջանյան</i>	<i>Դասախոս</i>	<i>Ինքնավերլուծության 4-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Ա. Խչոյան</i>	<i>Համակարգչային տեխնիկայի սպասարկող</i>	<i>Ինքնավերլուծության 7-րդ, չափանիշի պատասխանատու</i>
<i>Ն. Բաղդասարյան</i>	<i>Բժշկական մասնագիտությունների բաժնի վարիչ</i>	

Օգտագործած հասցեավումներ

ՀՀ ԿԳՄՄՆ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ԿՏՊՔ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ

ԲՈՒՀ Բարձրագույն ուսումնական հաստատություն

ՄՈՒՀ Մասնագիտական ուսումնական հաստատություն

ՄԿՈՒ Մասնագիտական կրթության ուսուցում

ՈՍԱԿ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈՍԾ Որակավորումների ազգային շրջանակ

ՈՍ Որակի ապահովում

ՄԿԾ Մասնագիտական կրթական ծրագեր

ՀԶՏԿ Հրազդանի զբաղվածության տարածքային կենտրոն

ՈւԱ Ուսումնառության արդյունք

ՊՈԱԿ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՄԿՈՒԶԱԿ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն

ՈւԽ Ուսանողական խորհուրդ

ԶՊԳ Զբաղվածության պետական գործակալություն

ՌԾ Ռազմավարական ծրագիր

ՈւՄ Ուսումնական մաս

ՊԿԶ Պետական կրթական չափորոշիչ

ՀՀ ԱՕ ՀՀ Աշխատանքային օրենսգիրք

ԱԻՆ Արտակարգ իրավիճակների նախարարություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ հատուկ առանձնացված ձևակերպումներ են, որոնք վերստուգելի տերմիններով սահմանում են հաստատության գործունեության կամ իրականացվող կրթական ծրագրերի բնութագրերը:

Չափորոշիչներ՝ ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատելու համար անհրաժեշտ պայմանները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	9
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	23
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	46
IV. ՈՒՄԱՆՈՂՆԵՐԸ.....	80
V. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ.....	100
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ.....	124
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ.....	143
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....	154
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ.....	171
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	179

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐԻՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈՂԵՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը միջին մասնագիտական, բազմագործառնությային ուսումնական հաստատություն է, որն ունի 54 տարվա պատմություն: Քոլեջը հիմնադրվել է 1966 թվականին և կոչվել Հրազդանի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում: 2000 թվականին տեխնիկումը վերանվանվել է Հրազդանի պետական քոլեջ, իսկ 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 346-Ս/Ք հրամանի համաձայն՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ:

Իր գործունեության տարիներին քոլեջը բազմապիսի մասնագիտություններով բազմաթիվ կադրեր է պատրաստել, որոնցից շատերն աշխատել և աշխատում են տարածաշրջանի մի շարք հիմնարկ ձեռնարկություններում:

Սյժմ քոլեջը տարածաշրջանին և հնարավոր շահառուներին ներկայանում է հիմնովին նորոգված և համալրված արդի տեխնիկական միջոցներով և կահույքով: Քոլեջն ունի համակարգչային ժամանանակակից տեխնիկայով ապահոված լսարաններ (գործում է ինտերնետային կայ), լինգվաֆոնային սարքավորումներ, մասնագիտական արհեստանոցներ, լաբորատորիաներ, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, գրադարան:

ԿՏՊՔ-ն իրականացնում է միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրով մասնագետների պատրաստում հետևյալ մասնագիտություններով.

1. 1041.01.5 - «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»
2. 0411.01.5 - «Հաշվապահական հաշվառում»
3. 0613.01.5 - «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»
4. 0212.01.5 - «Դիզայն»
5. 0413.06.5 - «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»
6. 0811.03.5 - «Ջերմատնային տնտեսություն»
7. 0732.10.4 - «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» (նախնական մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան)
8. 0911.01.5 - «Ատամնատեխնիկական գործ»
9. 0913.02.5 - «Քույրական քործ»
10. 0916.01.5 - «Դեղագործություն»

Քոլեջում դասավանդում են բարձրակարգ մասնագետներ, իսկ ԿՏՊՔ-ի 6 դասախոսներ մասնագիտական ուսումնական ձեռնարկների և գիտական հոդվածների հեղինակներ են:

Քոլեջի դասախոսական և վարչական կազմը հաճախակի վերապատրաստումներ է անցնում գերմանական GIZ կազմակերպության, ՄԿՈՒԶՍԿ-ի, British Council -ի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացներին և բարձրացնում մասնագիտական որակը:

Ուսուցումը քոլեջում իրակացվում է մոդուլային համակարգով և ինտերակտիվ մեթոդներով:

Քոլեջը համագործակցում է ինչպես Հրագրանի զբաղվածության տարածքային կենտրոնի, այնպես էլ տարածաշրջանի խոշոր հիմնարկ-ձեռնարկությունների և հյուրանոցային համալիրների հետ: Վերջիններիս հետ քոլեջը կնքում է նաև պրակտիկայի պայմանագրեր:

Քոլեջը, կախված մասնագիտությունից, իրականացնում է ընդունելություն 9-ամյա և 12-ամյա կրթության հիմքով: Ընդունված ուսանողների մոտ 90%-ը սովորում է անվճար հիմունքներով: Քոլեջում լավ և գերազանց գնահատականներով ավարտած ուսանողները հնարավորություն ունեն կրթությունը շարունակելու ԲՈՒՀ-երի համապատասխան բաժինների 2-րդ կուրսում:

Կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև նպատակային փորձարարական և նորարարական ծրագրերի իրականացմամբ քոլեջը դարձել է տարածաշրջանային բազմագործառնության կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը աշխատաշուկայի պահանջներին և անձի պահանջմունքներին համապատասխան:

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում ապահովում է կրթական ծառայությունների ճկունությունը, որակյալ մասնագետների պատրաստումը տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան՝ զարգացնելով տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը: Քոլեջը ստեղծում է օպտիմալ պայմաններ արդյունավետ և որակյալ ուսուցման համար՝ ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ, խթանելով նաև երկակի ուսուցման մոդելի ներդրմանը:

Քոլեջի ռազմավարական նպատակներն են.

- Իրականացնել տարածաշրջանի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրեր՝ պատրաստելով մասնագիտական հմտություններով և կարողություններով օժտված մրցունակ մասնագետներ:
- Խթանել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը, հանրային ծրագրերում և ծառայություններում ներգրավվածությունը:
- Ջարգացնել դասախոսական կազմի ներուժը, բարելավել աշխատանքային միջավայրը, մշակել և իրականացնել դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:
- Ջարգացնել և արդիականացնել քոլեջի ենթակառուցվածքները, նյութատեխնիկական բազան և ռեսուրսները:
- Ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար բարելավել անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, մասնագիտական կաբինետները, տեխնիկական հագեցվածությունը:
- Ապահովել քոլեջի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը՝ ապահովելով նաև ֆինանսական ներհոսք՝ լրացուցիչ կարճաժամկետ ծրագրերի ներդրման միջոցով:
- Բարելավել քոլեջի կառավարման համակարգը, նպաստել դրանց արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Հիմքեր	ՀՀ օրենքը՝ Կրթության մասին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՏՍԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
--------	--

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն

ՀՀ ՈԱԾ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն

Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

ԿՏՊԲ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրները, գործունեության ոլորտները բխում են նրա կանոնադրությունից (2019 հուլիսի 18 ԿԳՄՄ հրամանով) և ռազմավարությունից: Ըստ կանոնադրության՝ քոլեջի գործունեության հիմնական առարկան միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է: Քոլեջը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել նաև հանրակրթական և /կամ/ նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրեր:

ԿՏՊԲ-ն իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելություն՝ ապահովելով նրանց ուսումնական գործընթացի և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը, իրականացնում է մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր: Կրթական ծրագրերի առավել արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ քոլեջի ուսանողների համար ստեղծում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ՝ միջոցներ ձեռնարկելով քոլեջի ուսանողների ինքնազարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և սննդի կազմակերպման համար:

Քոլեջի գործունեության հիմնական նպատակներն են՝ իր մարզի, համայնքի ու երկրի զարգացման պահանջների բավարարմանը և մասնագիտական կրթության համակարգի զարգացմանն ուղղված մասնագիտական կառավարչական ուսումնամեթոդական գիտամանկավարժական մշակութային նյութատեխնիկական ներուժի ձևավորմանը նպաստելը, մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, միջազգային առաջավոր փորձի ներդրման, զարգացմանն ու տարածմանը, ինչպես նաև հարակից ուսումնական հաստատությունների զարգացմանն օժանդակելը, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող որակյալ և առաջավոր մասնագետների պատրաստումը /վերապատրաստում, մասնագետների որակավորման բարձրացում և վերաորակավորում/, ուսումնառության ընթացքում անհատի մասնագիտական կրթության, նրա հոգևոր, ֆիզիկական համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձ և քաղաքացի ձևավորելը:

Քոլեջն իր նպատակների շրջանակներում ուսումնական գործընթացը կազմակերպում է՝ ապահովելով թափանցիկությունը և հրապարակայնությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն՝ միջին մասնագիտական, նախնական արհեստագործական, արտադարձական դաստիարակության, կրթության, հանրակրթության, լրացուցիչ կազմակերպման միջոցով: Մասնագիտական ուսուցման և այլ դասընթացների կազմակերպման գործունեությունն իրականացվում է ստեղծագործական, հետազոտական, ուսումնամեթոդական նյութերի, ձեռնարկների, փորձարարական և փորձագիտական աշխատանքների շրջանակներում:

Քոլեջի առաքելությունը, նպատակները և խնդիրները ամրագրված են ռազմավարական ծրագրում: Քոլեջի առաքելությունից և գործունեության ոլորտներից են բխում նրա ռազմավարական հիմնական նպատակները՝ որակյալ կրթություն, հանրային ներգրավում և ծառայություններ, որակյալ մարդկային ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, ֆինանսական կայունություն և արդյունավետ կառավարում, տարածարջանային և միջազգային համագործակցության ընդլայնումը:

ԿՏՊԲ-ն իր առաքելության, ռազմավարական նպատակներին համահունչ իրականացնում է

տարածաշրջանի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ճկուն կրթական ծրագրեր պատրաստելով մասնագիտական հմտություններով և կարողություններով օժտված մրցունակ մասնագետներ:

ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին և շնորհիվ ուրակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքներին:

Որակյալ կրթություն ապահովելու համար ուսումնական գործընթացում ներգրավվում է նաև պրակտիկ մասնագետներ, մշտապես բարելավում դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները, ունի բարձր վարկանիշ տարածաշրջանում՝ արդյունավետ գործարկվող կրթական ծրագրերի շնորհիվ:

Միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան ԿՏՊԲ-ում իրականացվում են հետևյալ մասնագիտությունները.

1. 1041.01.5-«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»
Որակավորումը՝ տեխնիկ-կարգավար՝ տրանսպորտում փոխադրումների կազմակերպման և կառավարման (ըստ տրանսպորտի տեսակների)

2. 0411.01.5 - «Հաշվապահական հաշվառում»

Որակավորումը՝ հաշվապահ

3. 0613.01.5-«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»

Որակավորումը՝ տեխնիկ-ծրագրավորող

4. 0212.01.5 - «Դիզայն»

Որակավորումը՝ դիզայներ

5. 0413.06.5-«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»

Որակավորումը՝ մենեջեր զբոսաշրջության ծառայությունների սպասարկման

6. 0811.03.5 - «Ջերմատնային տնտեսություն»

Որակավորումը՝ տեխնիկ-ագրոնոմ

7. 0732.10.4-«Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» (նախնական մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան)

Որակավորումը՝ փականագործ՝ գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման և 2018թ-ից

8. 0911.01.5 - «Ատամնատեխնիկական գործ»

Որակավորումը՝ ատամնատեխնիկ

9. 0913.02.5 - «Քույրական քործ»

Որակավորումը՝ բուժքույր/բուժեղբայր

10. 0916.01.5 - «Դեղագործություն»

Որակավորումը՝ դեղագործ

2019 թվականից քոլեջում իրականացվում է նաև ԴՈՒԱԼ կրթական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս ուսանողներին երկակի կրթություն ստանալ ինչպես քոլեջում, այնպես էլ գործատուի մոտ՝ համադրելով տեսական և գործնական գիտելիքները, ձեռք բերելով անհրաժեշտ աշխատանքային հմտություններ:

ԿՏՊԲ-ն ունի անհրաժեշտ նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ՝ իր կրթական ծրագրերն արդյունավետ իրականացնելու նպատակով:

ԿՏՊԲ-ն իր կրթական ծրագրերի և կրթական գործընթացների որակի բարելավման, արդիականությունը ապահովելու նպատակով իրականացնում է մասնագիտական ծրագրերի, դասավանդման, ուսումնառության մեթոդների մշտադիտարկում և արդյունավետության գնահատում՝ աշխատաշուկայի հաճախակի փոփոխվող պայմաններում:

Ելնելով իր առաքելությունից և ռազմավարական նպատակներից՝ ԿՏՊԲ-ն իրականացնում է ստեղծագործական, հետազոտական, փորձարարական այնպիսի աշխատանքներ, որոնք

բավարարում են մասնագիտական կրթության բնագավառում գործատուների պահանջները՝ դրանցում արտահայտելով նաև ուսանողների ստեղծագործական, նորարական, ինքնուրույն մտածողական կարողությունները: Իրականացվող հետազոտական աշխատանքները միտված են ուսանողների քննադատական, վերլուծական, ճանաչողական, որոնողական և գործնական հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, ինչը և վերջիններս հաջողությամբ ապահովում են: Վերոհիշյալ գործընթացները նպաստում են նաև կրթական, մասնագիտական ոլորտների անընդհատ և խոր ուսումնասիրությանը և արդիականացմանը:

Հետազոտական աշխատանքների իրագործմանը հատկապես նպաստում են տարբեր ոլորտային մասնագիտությունների շրջանակներում անցկացվող պրակտիկաները, դրանք նպաստակ են հետապնդում նպաստել ուսանողների կողմից մասնագիտական գործունեության վերլուծության հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև մասնագիտական խնդիրների լուծման ճանապարհին ցուցաբերել ստեղծագործական մոտեցումներ, զարգացնել տեսական և գործնական գործունեության մոդելավորման և իրականացման ունակությունները, ձևավորել ինքնակրթության և ինքնակատարելագործման կարողություններ:

ԿՏՊԲ-ում իրականացվում են ուսումնական, արտադրական, նախադիպլոմային պրակտիկաներ, որոնց շրջանակներում ուսանողները հնարավորություն են ունենում ուսումնասիրել իրենց ոլորտի արհեստավարժ մասնագետների փորձը, մշակել մասնագիտական գործունեության պլանավորման, նախագծման, կազմակերպման, իրականացման, արժևորման, գնահատման և ինքնագնահատման կարողություններ:

Քոլեջի հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն է ուղղված նաև պետական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական գրականության, ընդհանուր և հատուկ դասընթացների, ուսումնական պլանների մշակման գործընթացը:

Քոլեջը, համաքայլ լինելով կրթական համակարգի արդի պահանջներին, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր՝ կարևորելով ու բարձրացնելով ուսանողի ինքնուրույն աշխատանքի դերակատարությունը, նրա ներգրավվածությունը քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում:

Արդյունավետ ուսանողակենտրոն միջավայր ապահովելու ճանապարհին կարևոր է ուսանողների՝ որպես ներքին շահառուների կարիքների բացահայտման և դրանց համապատասխան լուծումներ տալու գործընթացը, որը իրականացվում է տարբեր օղակների միջոցով /Ղեկավար անձնակազմ, դասախոս-կուրսղեկներ, ՈԱ ներքին կենտրոն, ուսանողական խորհուրդ/: Ուսանողների կարիքների վերհանման, խնդիրների բարձրաձայնման, առաջարկությունների ներկայացման արդյունավետ գործիք է նաև քոլեջում տեղադրված բողոքների և առաջարկությունների արկղը: Ուսանողների առաջարկով գործում են «Գրքասերների ակումբ» և «Հասարակագիտություն» առարկայի խմբակները, ըստ անհրաժեշտության կատարվում են նաև լսարանային պայմանների բարելավման աշխատանքներ:

Մասնագիտական ամբիոնների ու առարկայական կաբինետների կողմից սահմանված ժամանակացույցով կազմակերպվում են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվական պարապմունքներ՝ ուսանողների առաջադիմության խթանման, դասավանդվող առարկաների հեշտ յուրացման, քննությունների բարեհաջող հանձնման, ինքնուրույն հետազոտական աշխատանքների արդյունավետ կատարման, ուսումնական գործընթացի որակի բարելավման, ուսանողներին հուզող տարաբնույթ հարցերին լիարժեք և սպառիչ պատասխանների տրամադրման նպատակով:

Քոլեջում ակտիվորեն գործում է ուսանողական խորհուրդ՝ որպես ուսանողների շահերը ներկայացնող և պաշտպանող ինքնավար մարմին: Խորհրդի հիմնական նպատակներն են մասնակցել ուսումնական գործընթացի կատարելագործմանը, տարածել տեղեկատվություն ուսանողների շրջանում, ներկայացնել և պաշտպանել ուսանողների շահերը քոլեջի

կառավարման մարմիններում, ուսանողական խորհրդում ստեղծել և զարգացնել համապատասխան ներքին կառույցներ, ներկայացնել առաջարկներ ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ և քոլեջի համապատասխան մարմինների կողմից վավերացումից հետո, նպաստել դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը: ՈւՆ-ը կազմակերպում է ուսանողական և երիտասարդական տոներին նվիրված, ինչպես նաև ուսանողական առօրյան հազեցած դարձնող այլ միջոցառումներ, օգտագործում քոլեջի տեղեկատվական միջոցները՝ ուսանողական կյանքը համակողմանիորեն լուսաբանելու, ինչպես նաև Խորհրդի որոշումներն օպերատիվ կերպով ուսանողությանը հասցնելու համար:

ԿՏՊԲ-ում արդյունավետ գործունեություն է ծավալում Կարիերայի ստորաբաժանումը, որի հիմնական նպատակն է՝ կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև կարիերայի պլանավորման կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը: Ստորաբաժանումն իրականացնում է ուսանողներին կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության և ուղղորդման ծառայությունների մատուցում՝ անհատական եղանակով, ըստ անհրաժեշտության, ուսանողի անձնային որակների, նախասիրությունների, կարողությունների բացահայտում, անհատական ծրագրի կազմում, շարունակական և լրացուցիչ կրթության, ուսուցման, տնտեսության գերակա ոլորտների, աշխատաշուկայի վերլուծությունների և կանխատեսումների (տեղական, մարզային, հանրապետական և միջազգային), ինչպես նաև ըստ մասնագիտությունների զբաղմունքների մասին տեղեկատվության հավաքագրում և ուսանողներին ծանուցում, աշխատաշուկա մուտք գործելու, կարիերայի պլանավորման և կառավարման, այդ թվում՝ զբաղունակության, ձեռներեցության և առանցքային այլ կարողությունների զարգացմանն ուղղված խմբային և անհատական ծառայությունների մատուցում:

Կարիերայի կենտրոնը կազմակերպում է տարաբնույթ միջոցառումներ /սեմինարներ, աշխատաժողովներ, քննարկումներ, բաց դասեր, մենթորական ծրագրեր, ոչ ֆորմալ դասընթացներ, տոնավաճառներ, ցուցահանդեսներ/ և ապահովում դրանցում ուսանողների ակտիվ մասնակցությունը: Ուսանողների կարիերայի խորհրդատվության կազմակերպման աշխատանքներում կենտրոնը ներգրավում է ինչպես աշխատանքային հաջողություններ ունեցող շրջանավարտների, այնպես էլ՝ սոցիալական գործընկերների /գործատուներ, արհմիություններ/, հավաքագրում և ուսանողներին է ծանուցում թափուր աշխատատեղերի, կամավորական և հասարակական աշխատանքների հայտարարությունների մասին տեղեկատվությունները, զբաղվածության պետական ծրագրերից օգտվելու նպատակով աշխատանք փնտրող ուսանողներին ուղղորդում է ՁՊԳ տարածքային կենտրոններ:

Կարիերայի ստորաբաժանումն ունի հաստատության տեսանելի վայրում տեղադրված, պարբերաբար թարմացվող տեղեկատվական անկյուն, նաև ուսանողների և շրջանավարտների կարիերայի ծառայություններից օգտվելու և աշխատանքի տեղավորման տվյալների գրանցման և մշտադիտարկման գործիքակազմ, որը պարբերաբար վերահսկվում է արտաքին և ներքին հաշվետվությունների ձևով:

Քոլեջի ռազմավարական նպատակներից է հասարակայնության հետ կապերի խթանումը, հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը, հանրային ծրագրերում և ծառայություններում ներգրավվածությունը: Այդ նպատակով ՄՈՒՀ-ը շարունակաբար ընդլայնում և զարգացնում է սոցիալական և համագործակցության համակարգը, ընդլայնում գործընկերների շրջանակը, աջակցում դասախոսական կազմին և ուսանողությանը, որպեսզի վերջիններս առավելագույնս ներգրավվեն սոցիալական միջավայրի անցուղարձին:

Հասարակական պատասխանատվության գործընթացում արդյունքի հասնելու նպատակով արդյունավետորեն օգտագործվում են քոլեջի մարդկային և բազային ռեսուրսները

վերանայելով ռազմավարական ծրագրերը, ստեղծելով միջոցառումների, ծրագրերի կազմակերպման և իրականացման մշակույթ:

Հասարակական պատասխանատվության զարգացմանն է ուղղված ուսանողների կրթական և այլ կարիքների վերհանումը, մատուցվող ծառայություններից նրանց բավարարվածության գնահատումը, հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապի և մշտադիտարկման համակարգի զարգացումն ու ընդլայնումը, հանրային ծրագրերին և նախաձեռնություններին քոլեջի ներգրավումը:

Հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկությունները և աշխատաշուկայի պահանջները նախատեսվում է ներդնել հիմնական և կարճաժամկետ նոր ծրագրեր /սերվիս, ջերմատնային տնտեսություն, վերականգնվող էներգիա, կարուձև, վարսահարդարում, սեղանի դիզայն, ֆլորիստիկա/:

Քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվական հասանելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով մշտապես կատարելագործում է տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգը /Նախատեսվում է ստեղծել քոլեջի եռալեզու կայք, ինչպես նաև լուսաբանել քոլեջի գործունեությունը սոցիալական այլ հարթակներում/:

Քոլեջի տարբեր ստորաբաժանումներ ունեն հասարակական ծառայությունների մատուցման գործառույթներ, որոնց շրջանակներում իրականացնում են խորհրդատվություն՝ հասարակական տարբեր խմբերի համար: Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակն է քոլեջի ուսուցման գործընթացին հաղորդակից դարձնել հասարակական լայն շրջանակներին՝ տարածելով ձեռք բերված դրական փորձն ու գիտելիքը:

Քոլեջի ռազմավարական նպատակներից է՝

- առկա մրցակցային պայքարում պատրաստել մրցունակ և սոցիալապես պատասխանատու և օրինակելի մասնագետներ: Այս գործընթացին նպաստում է շարունակական կրթության ծրագրերի իրականացումը, պետական, ինչպես նաև հավատարմագրված բուհերի հետ եղած կապերի ամրապնդումը,
- զարգացնել դասախոսական կազմի ներուժը,
- բարելավել ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայրը՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ,
- բարձրացնել քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը,
- սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյուքների:

Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացներ վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձը ցանկալի է:

Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

Դասավանդող անձնակազմի աշխատանքի ընդունման գործընթացը տեղի է ունենում մրցութային կարգով, որը հնարավորություն է տալիս իրականացնել անկողմնակալ ընտրություն թեկնածուների միջև՝ ապահովելով որակյալ կադրերի ներգրավում:

Քոլեջն իր դասախոսական և ուսումնասիրական անձնակազմին տրամադրում է ֆինանսական միջոցներ՝ մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման նպատակով: Վերջիններս հաճախակի վերապատրաստումներ են անցնում գերմանական GIZ կազմակերպության, ՄԿՈՒԶԱԿ-ի, British Council-ի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացներին և բարձրացնում մասնագիտական որակները: Վերապատրաստումների և մասնագիտական դասընթացների քոլեջի դասախոսական կազմը մասնակցում է նաև սեփական նախաձեռնությամբ, նրանցից ոմանք նաև վերապատրաստող դասախոսներ են:

ՄՈՒՀ-ը հարցումների և դասընթացի գնահատման ընթացակարգի միջոցով իրականացնում է դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատում: Քոլեջն իրականացնում է նաև աշխատակիցների աշխատավարձի աճ կադրային օպտիմալ քաղաքականության միջոցով՝ ապահովելով կադրային կայունություն և աշխատանքային որակների բարձրացում:

Վերջին տարիներին քոլեջը համալրվել է երիտասարդ, նորարական մտեցումներ և ձևունություն ցուցաբերող կադրերով: ՄՈՒՀ-ի դասախոսները զբաղվում են ակտիվ հետազոտական աշխատանքներով, որոնցից 6-ը՝ մասնագիտական ուսումնական ձեռնարկների և գիտական հոդվածների հեղինակներ են:

ԿՏՊԲ-ն գտնվում է մարզկենտրոնում և տրանսպորտային առումով մատչելի է, ունի բարենորոգված շենք և տարածք, կենտրոնական ջեռուցման համակարգ: Համալրված է համակարգչային նոր տեխնիկաներով, ունի 3 համակարգչային սենյակ, նոր կահույքով հագեցած լսարաններ, կահավորված հյուրանոցային սենյակ, ադմինիստրատիվ տարածք, սպորտդահլիճ, լաբորատորիաներ, գոդման փականակագործական և կենցաղային գազային սարքավորումներով կահավորված արհեստանոց: Ունի նաև կարճաժամկետ դասընթացներ կազմակերպելու համար նախատեսված կարի արհեստանոց, վարսավիրանոց, խոհանոց: Ապահովում է սանիտարահիգիենիկ նորմերի պայմանները:

ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակների շրջանակներում տեղի է ունենում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի և ռեսուրսների շարունակաբար զարգացման և արդիականացման գործընթաց: Ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար կատարվում է անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանների, մասնագիտական կաբինետների, մարզադահլիճի տեխնիկական հագեցվածության բարելավման, արդիականացման և վերագինման միջոցառումներ, նախատեսվում է ստեղծել նաև էլեկտրոնային գրադարան: Առաջիկայում քոլեջի և ներդրողների ջանքերով պլանավորվում է քոլեջին կից տարածքում կառուցել ջերմոց և արևային էլեկտրակայան:

Ըստ անհրաժեշտության քոլեջն իրականացնում է ռեսուրսների պարբերաբար թարմացում՝ քոլեջի ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման շնորհիվ: Այս նպատակին է ուղղված նաև կարճաժամկետ և լրացուցիչ կրթական ծրագրերի մատուցման գործընթացը, որը արդյունավետ գործարկվում է նյութատեխնիկական և մարդկային անհրաժեշտ ռեսուրսների շնորհիվ՝ ապահովելով նաև լրացուցիչ ֆինանսական մուտքեր: Քոլեջն հնարավորինս ապահովում է տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում (առցանց եղանակով իրականացվող դասընթացների կանոնակարգում, իրականացում, ընդլայնում):

Իր ռազմավարական նպատակների համաձայն, ԿՏՊԲ-ն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

ՄՈՒՀ-ի նպատակներից են՝
1. Իր մարզի, համայնքի և երկրի զարգացման պահանջների բավարարմանը և մասնագիտության կրթության համակարգի զարգացմանն ուղղված մասնագիտական կառավարչական, ուսումնական, մեթոդական, գիտամասնկալարժական, մշակութային,

նյութատեխնիկական ներուժի ձևավորմանը նպաստելը, ինչպես նաև հարակից ուսումնական հաստատությունների զարգացմանը օժանդակելը:

2. Մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջնային առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրթության գլոբալ համակարգերին ինտեգրումը:

Քոլեջը իր առաքելությունն է համարում միջազգային համագործակցության ներուժի զարգացումը և պլանավորում է քայլեր ձեռնարկել հաստատության միջազգայնացման ուղղությամբ՝ հետևյալ միջոցներով.

- Եվրոպական երկրների ՄԿՈՒ հաստատությունների համագործակցության լավագույն փորձի ուսումնասիրում:
- ՄԿՈՒ ոլորտում գործունեություն իրականացնող, այդ թվում՝ արտասահմանյան ՄԿՈՒ իրավաբանական անձանց և ցանցերի հետ համագործակցության հաստատում:

2018թ-ից քոլեջում գործում է որակի ներքին ապահովման կենտրոն, որը կոչված է կատարել ուսումնական, կառավարման գործընթացների գնահատում, ապահովել դրանց որակի վերահսկում, հաշվետվողականություն և թափանցիկություն: Ինչպես նաև քոլեջում մշակել որակի ապահովման քաղաքականության նոր գործիքներ և մեխանիզմներ:

ԿՏՊԲ-ում որակի ապահովման համակարգը, ընթացակարգերը, գործընթացները ուղղված են մասնագիտական կրթության բնագավառում ուսումնական գործընթացների կազմակերպման դրանց բովանդակության, ինչպես նաև ուսանողներին տրամադրվող ծառայությունների և կառավարման համակարգի թերացումների շտկմանը, դրանց որակի խթանմանն ու բարելավմանը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Հիմքեր

- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն
- «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրինական խորհրդի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական խորհրդի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)
- Հարցումների անցկացման կանոնակարգ

Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը/ կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

ԿՏՊԲ-ում գործում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները վերհանող և բավարարող մեխանիզմներ, որոնք բացահայտվում են տարբեր խորհրդակցական մարմիններում վերջիններիս ներգրավածությամբ՝ ստանալով համապատասխան լուծումներ:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը ներգրավված է քոլեջի կոլեգիալ կառավարման և ստորաբաժանումների կառավարման հանձնախմբերում /կառավարման խորհուրդ, տնօրինական խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ուսումնամեթոդական խորհուրդ/, ինչը նպաստում է, որ կառավարումը լինի առավել արդյունավետ, թափանցիկ և օբյեկտիվ:

Կառավարման այս մարմինների համագործակցության արդյունքում քննարկվում, պարզաբանվում և մշակվում են ուսումնական գործընթացին և քոլեջի գործունեությանը առնչվող լուծումներ՝ բարելավելով ուսումնական ծրագրերն ու գործընթացը, աջակցելով ուսանողների առօրինակ առավել արդյունավետ կազմակերպմանը:

Ըստ ԿՏՊԲ-ի կանոնադրության քոլեջի ուսանողներն իրավունք ունեն մասնակցելու քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով կառավարման խորհրդի կազմում և մասնակցելով ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը, ներկայացնել իրենց առաջարկություններն ու հուզող հարցերը և հասնել դրանց անհրաժեշտ լուծմանը:

Ուսանողների՝ որպես ներքին շահակիցների կարիքները վերհանող և արդյունավետորեն գործող մարմին է քոլեջի ուսանողական խորհուրդը, որն ինքնակառավարվող, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող՝ ընտրովի ներկայացուցչական մարմին է: Խորհրդի նիստերը գումարվում են կիսամյակը առնվազն երկու անգամ, ելնելով անհրաժեշտությունից կարող են գումարվել նաև հավելյալ, դրանցում քննարկվում և համապատասխան առաջարկներ են ներկայացվում քոլեջի կառավարման մարմիններին:

Ըստ կանոնադրության ուսանողական խորհուրդը կարող է իր ներկայացուցիչներն ունենալ քոլեջի կառավարման մարմիններում՝ ապահովվելով ուսանողների մասնակցությունը քոլեջի գործունեությանը վերաբերվող կարևորագույն հարցերի լուծմանը:

Ուսանողների կարիքների և առաջարկությունների վերհանման արդյունավետ մեխանիզմներից է քոլեջում տեղադրված բողոքների և առաջարկությունների արկղը:

Ուսանողների կրթական կարիքների բացահայտման նպատակով մեծ աշխատանքներ են տարվում կուրսղեկների կողմից, ովքեր իրենց աշխատանքային պլանի համաձայն, անհրաժեշտ ժամանակացույցով իրականացնում են ուսանողների ռազմահայրենասիրական, քաղաքիաիրավական, բարոյահոգեբանական, գեղագիտական, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակությանն ուղղված բազմաբնույթ աշխատանքներ՝ պահպանելով կուրսղեկ-դասախոս-ուսանող-ծնող սերտ համագործակցությունը: Այս աշխատանքները անցկացվում են նպատակային և բավականին արդյունավետ են: Կուրսղեկի ժամերն ուղղված են նաև սովորողների առաջադիմության, կարգապահության, ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների իրազեկման, ներքոլեջային և արտաքոլեջային տարբեր միջոցառումների մասնակցության ապահովմանը: Կուրսղեկիների նախաձեռնությամբ զանազան թեմաներով կազմակերպվում են զրույցներ, բանավեճ-քննարկումներ, այցեր՝ հոգևոր-մշակութային կառույցներ, պատմամշակութային կենտրոններ: Կուրսղեկների արդյունավետ գործունեությունը շարունակվել է նաև հեռավար ուսուցման պայմաններում, որի ընթացքում կազմակերպվել են կուրսղեկական ժամեր և տարաբնույթ միջոցառումներ, դրանք լուսաբանվել են քոլեջի ֆեյսբուքյան էջում:

Ուսանողների ծնողների հետ կապը շատ ամուր է և վստահելի, կուրսղեկների կողմից մշտապես ապահովվում է կապը վերջիններիս հետ, պարբերաբար հրավիրվում են ծնողական ժողովներ: Ծնողները, խորհրդակցական ձայնի իրավունքով ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել կառավարման խորհրդի նիստերին:

Ուսանողների կրթական կարիքները բացահայտվում են նաև քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կազմում ձևավորված ուսանողական խմբի միջոցով: Վերոհիշյալ խումբը կազմված է նախագահից և յուրաքանչյուր մասնագիտության ուսանողից: Ուսանողական խումբն իր գործառնությունների շրջանակներում քոլեջի ուսանողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, իրենց իրավունքներից օգտվելու հնարավորություններին, կազմակերպում քննարկումներ ուսանողական խորհրդի հետ՝ կրթական գործընթացի և ուսումնական միջավայրի որակի խնդիրները բացահայտելու և որակի ներքին ապահովման կենտրոն համապատասխան առաջարկություններ անելու նպատակով: Ուսանողական խումբը իր գործառնությունների շրջանակներում աջակցում է նաև մշտադիտարկման նոր մեխանիզմների մշակմանը:

Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման և արդյունավետ հաղորդակցման մեխանիզմները մշակվում են կարիերայի ստորաբաժանման կողմից: Վերջինս աջակցում է աշխատանք փնտրող ուսանողներին, հավաքագրում թափուր աշխատատեղերի կամավորական և հասարակական աշխատանքերի մասին հայտարարությունները և ծանուցում ուսանողներին: Կարիերայի կենտրոնը ապահովում է տարբեր միջոցառումներին սեմինարներին, աշխատաժողովներին, քննարկումներին, բաց դասերին, մենթորական ծրագրերին, ոչ ֆորմալ դասընթացներին, տոնավաճառներին և ցուցահանդեսներին ուսանողների ակտիվ մասնակցությունը:

Աշխատանքային հաջողություն ունեցող շրջանավարտները ներգրավվում են ուսանողների կարիերայի խորհրդատվության կազմակերպման աշխատանքներում:

ԿՏՊԲ-ի արտաքին շահակիցներից են կառավարությունը և ՀՀ ԿԳՄՄՆ պետական տարածքային մարմինները: Տնօրենը ամենամյա հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավասությունների շրջանակում սահմանում է քոլեջի կառավարման համակարգը, հաստատում քոլեջի կանոնադրությունը և դրանում կատարված փոփոխությունները, ընդունում հաշվետվություններ և իրականացնում օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Գործատուների հետ կապը սկսվում է ուսումնական գործընթացի կազմակերպման հիմքերից: Նրանցից շատերը պետական ատեստավորման հանձնաժողովի նախագահներ են, պրակտիկայի ղեկավարներ, կառավարման խորհրդի անդամներ: Քոլեջը ուսումնասիրելով և կարևորելով գործատուների՝ որպես արտաքին շահակիցների պահանջները, մշտապես կատարելագործում է ՄԿԾ-ները՝ համահունչ դարձնելով աշխատաշուկայի արդի պահանջներին:

Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմներից են նաև նրանց շրջանում որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից պարբերաբար անցկացվող հարցումները: Հարցումներն ուղղված են կրթական գործընթացների, ուսումնառության որակի, ուսումնական հաստատության նյութատեխնիկական հագեցվածության, դասավանդող անձնակազմի հմտությունների և այլ գործընթացների վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության և գնահատման բացահայտմանը: Հարցումների արդյունքների վերլուծությունները օգտագործվում են ուսումնասիրվող գործընթացի բարելավման, գնահատման շահակիցների հետ հետադարձ կապի նոր նախագծերի մշակման նպատակով:

ԶԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

<p>Հիմքեր</p>	<p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u> <u>«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրինական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)</u> <u>Հարցումների անցկացման կանոնակարգ</u></p>
---------------	---

Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ

համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

Քոլեջում գործում են ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մի շարք մեխանիզմներ: Քոլեջի գործունեության ընթացիկ վերահսկողությունը իրականացվում է կառավարման խորհրդի կողմից, որը հաստատում է քոլեջի տնօրենի և դասախոսների աշխատանքների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները: Կառավարման խորհուրդը լիազոր մարմին է ներկայացնում քոլեջի գործունեության հիմնական ուղղությունների, տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկությունները, հիմնադրի սահմանված կարգով որոշում քոլեջի շահույթի տնօրինմանն ուղղությունները, ինչպես նաև հաստատում է քոլեջի ստորաբաժանումների կանոնակարգերը, քոլեջի գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր:

Քոլեջի տնօրենը վերահսկողություն է իրականացնում քոլեջի ընթացիկ գործունեության, ուսուցման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի նրանց վարքի, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման նկատմամբ, սահմանված ժամանակացույցով ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդին և լիազոր մարմնին: Տնօրենն իր լիազորությունների սահմաններում քոլեջի բոլոր ստորաբաժանումներին տալիս է հրահանգներ, ցուցումներ, հրամաններ և վերահսկում դրանց իրագործումը:

Ստորաբաժանումներն իրենց աշխատանքներն իրականացնում են ըստ տարեկան աշխատանքային պլանների: Փաստացի կատարված աշխատանքները ամփոփվում են կիսամյակային և տարեկան հաշվետվություններում՝ նախագծելով նաև հաջորդ տարվա կամ ժամանակահատվածի գերակա խնդիրները և դրանց իրականացմանն ուղիները: Հաշվետվությունների միջոցով հնարավոր է դառնում վեր հանել տարբեր ոլորտներում առկա խնդիրները, ձեռքբերումները և գնահատել փաստացի կատարված աշխատանքները:

Ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովմանը և որակի բարելավմանը նպաստում են կառավարման մարմինների /տնօրինական խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ուսումնամեթոդական խորհուրդ, ուսանողական խորհուրդ/ աշխատանքները, որոնք պլանավորվում և իրականացվում են ըստ սահմանված ժամանակացույցի: Խորհուրդները իրենց իրավասությունների և գործառնությունների շրջանակներում, գործունեության կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան պարբերաբար հրավիրվող նիստերին ներկայացնում են իրենց ընթացիկ, փաստացի կատարված աշխատանքները, հաշվետվությունները, ինչը նպաստում է քոլեջի տարբեր ոլորտներում առկա բացթողումների և ձեռքբերումների վերհանմանը, դրանց բարելավմանն ուղղությամբ միջոցառումների մշակմանը, կրթության որակի և կրթական միջավայրի որակի կատարելագործմանը:

Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության մշտադիտարկումը և բացթողումների վերհանումը, գնահատումը, բարելավմանն ուղղված միջոցառումների մշակումը, դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման, առաջարկությունների և երաշխավորությունների մշակումը իրականացվում է քոլեջի ուսումնական մասի կողմից:

Արդյունավետ գործող մեխանիզմներից են ամբիոնների աշխատանքները: Ամբիոնների վարիչները համակարգում և կազմակերպում են իրենց ամբիոնների ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքներն ըստ ժամանակացույցի, համակարգում և կազմակերպում են իրենց ամբիոններին կից ուսումնական կաբինետների և լաբորատորիաների աշխատանքները, իրականացնում նաև դասախոսների որակավորման մշտադիտարկում, ուսանողների առաջադիմության ուսումնասիրում և վերլուծում:

Առարկայական ծրագրերը կազմվում են պետական կրթական չափորոշիչների և մասնագիտության ուսումնական պլանների համաձայն՝ առարկան /մոդուլը/ դասավանդող մասնագետի կողմից: Ամբիոնի նիստում քննարկված և հավանության արժանանացած

առարկայական ծրագրերը ներկայացվում են ուսումնամեթոդական խորհուրդ՝ թերությունների շտկման համար: Ուսումնամեթոդական խորհրդի դրական արձագանքի դեպքում ներկայացվում են տնօրենի հաստատմանը, վերջնական հաստատումը կատարում է կառավարման խորհուրդը:

Ուսուցման գործընթացի արդյունավետ ապահովման մեխանիզմներից են ամբիոններում անցկացվող դասալուսմները, որոնց արդյունքում արձանագրվում և գնահատվում են դասախոսի մասնագիտական, մանկավարժական, մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպչական, ուսանող-դասախոս հարաբերությունների ձևավորման ունակությունները, դասը կազմակերպելու և վարելու ժամանակակից մեթոդների կիրառումը և այլն:

Դասալուսմները նպաստում են դասախոսների միջև փոքր խումբի փոխանակմանը, դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունների կարողությունների կատարելագործմանը:

Ուսումնական ծրագրերի, նորարարական մեթոդների համակարգման և կիրառման աշխատանքներին արդյունավետ աջակցում են ուսումնական կաբինետները՝ որպես ամբիոնների ենթակառուցվածքային համակարգ:

Ուսումնական կաբինետները ուսանողներին ցուցաբերում են մեթոդական, խորհրդատվական աջակցություն՝ իրենց հետազոտական աշխատանքների իրականացման համար: Կազմակերպում և անցկացնում են ավարտական որակավորման աշխատանքների, ռեֆերատների ինքնուրույն աշխատանքների քննարկումներ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ իրագործման տեսանյունից նշանակալից դեր են կատարում կուրսղեկները՝ ներկայացնելով իրենց աշխատանքների կիսամյակային հաշվետվությունները:

Քոլեջում որակի ներքին ապահովմանը նպաստող մեխանիզմներից են պարբերաբար անցկացվող հարցումները, /դասախոսների, աշխատակիցների, շրջանավարտների, գործատուների և ուսանողների շրջանում/, դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգը, որոնց նպատակն է ուսումնական և կրթական գործընթացի վերաբերյալ տեղեկացվության և գնահատման բացահայտումը, որակի մշտադիտարկումը, վերլուծումը, գնահատումը և կրթության որակի ապահովումը ԿՏՊԲ-ում: Հարցումների արդյունքներն օգտագործվում են ուսումնասիրվող և մշտադիտարկվող գործընթացի բարելավման, գնահատման, շահակիցների հետ հետադարձ կապի և նոր նախագծերի մշակման նպատակով:
/Հավելված 1 Հավելված 2/

Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները /SWOT վերլուծություն/

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ԿՏՊԲ-ի ռազմավարական նպատակներն ու առաքելությունը բխում են աշխատաշուկայի ժամանակակից պահանջներից՝ արտացոլելով ներքին և արտաքին շահակիցների կրթական կարիքները:	Դեռևս ամբողջական չեն արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմները:
Փորձառու և մասնագիտացված աշխատակազմ՝ կրթության որակի ապահովման, կատարելագործման նպատակով:	Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման առանձնացված ընթացակարգի բացակայություն:

<p>Կառավարման օղակների և ստորաբաժանումների միջև համագործակցային, թիմային աշխատանք՝ ապահովելով ուսումնական և կազմակերպական գործընթացների արդյունավետությունը:</p>	
<p>Շարունակաբար թարմացվող, վերագինվող անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի և ռեսուրսների առկայություն՝ ուսումնական գործընթացն արդյունավետ իրականացնելու և կրթական ժամանակակից միջավայր ապահովելու նպատակով:</p>	
<p>Ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման արդյունավետությունը գնահատող մեխանիզմների առկայություն /Հարցումներ, քննարկումներ, կլոր սեղաններ, ժողովներ, հաշվետվություններ/</p>	
<p>Բարձր վարկանիշ տարածաշրջանում՝ որակյալ մարդկային և ժամանակակից նյութական ռեսուրսների առկայության շնորհիվ:</p>	
<p>Ռազմավարական նպատակների և առաքելության իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների բախշման արդյունավետ քաղաքականություն:</p>	
<p>Հասարակությանը տրամադրվող մասնագիտացված ծառայություններ: /Մասնավորապես՝ կարճաժամկետ ծրագրեր/</p>	
<p>Հնարավորություններ</p>	<p>Ռիսկեր</p>
<p>Առաջատար բուհերի փորձի ուսումնասիրության հիման վրա առաջընթացի գնահատման ցուցանիշների համակարգի մշակում և տեղայնացում</p>	<p>Աշխատաշուկայի պահաջարկի փոփոխությունը:</p>

<p><i>Ռազմավարական նպատակների իրագործման և ինդիքների լուծման ճանապարհին գնահատման նոր մեխանիզմների մշակում:</i></p>	<p><i>Համավարակ:</i></p>
<p><i>Նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնում՝ փորձի փոխանակման, նորարարական մոտեցումների ներդրման նպատակով:</i></p>	<p><i>Պետական ֆինանսավորման թույլ աջակցություն:</i></p>
<p><i>Միջազգային և այլ արտաքին ֆինանսավորմամբ մասնագիտական վերապատրաստումների և կատարելագործման հնարավորություն:</i></p>	
<p><i>Արտաքին ֆինանսավորման նոր աղբյուրների ձեռքբերում՝ ռազմավարական նպատակների իրագործման նպատակով:</i></p>	
<p><i>Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները</i></p>	
<p><i>Քուլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից մշակել արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման նոր արդյունավետ մեխանիզմները և առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման առանձնացված ընթացակարգ:</i></p>	

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿՏՊԲ-ն ունի կառավարման կանոնակարգված համակարգ, կրթական և ռազմավարական այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ: Կառավարման համակարգը բաղկացած է հաստատության առաքելության արդյունավետ իրականացումը ապահովող ստորաբաժանումներից, որոնք ունեն իրենց կանոնակարգերը:

ԿՏՊԲ կառավարման օղակները և կառուցվածքային ստորաբաժանումները գործում են համակարգվածության, հաշվետվողականության սկզբունքներով, ինչն արդյունավետ է դարձնում քոլեջի կազմակերպական կառուցվածքն ու կառավարման գործընթացը:


ԿՏՊԲ-ն կառավարման համակարգում ապահովում է դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը, ինչի արդյունքում վերջիններս հնարավորություն են ստանում մասնակցել իրենց վերաբերող որոշումների և նախագծերի ընդունմանը, ինչպես նաև հանդես գալ սեփական նախաձեռնություններով, բարձրաձայնել իրենց հուզող խնդիրներն ու ստանալ դրանց անհրաժեշտ լուծումները:

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր	<p>«Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի ռազմավարություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի արհիվակարման կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի գրադարանի աշխատանքի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի կարգերի բաժնի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի կարիերայի ստորաբաժանման կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի տնօրինական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի հաշվապահական հաշվառման վարման քաղաքականություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի տնօրենի ընտրության ընթացակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, խրախուսման(այդ թվում ֆինանսական շահադրոման) կամ պատասխանատվության ենթարկելու կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի ներքին կարգապահական կանոններ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի ուսանողական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի ուսումնական մասի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի դասախոսական և ուսանողական համակազմից թոլեջի կոլեգիա կառավարման մարմնի անդամի առաջադրման և ընտրության ընթացակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական թոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն</u></p>
--------	---


Ներկայացնել կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզը:



Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանով է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանով է այն հասանելի անձնակազմին:

ԿՏՊԲ-ի կառավարումն իրականացվում է հիմնադրի՝ ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության (այսուհետ՝ Լիազորված մարմին), քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի՝ քոլեջի խորհրդի և գործադիր մարմնի՝ քոլեջի տնօրենի միջոցով: Քոլեջի գործունեությունը ղեկավարվում է ՀՀ «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» օրենքներով, Հիմնադրի որոշումներով, Լիազորված մարմնի հրամաններով և իր կանոնադրությամբ:

Կառավարումը բաշխված է համապատասխան ստորաբաժանումների միջև, որոնք ունեն իրենց կանոնակարգերը, և որոնց գործառույթների շրջանակները բխում են քոլեջի ռազմավարական ծրագրի նպատակներից և խնդիրներից:




Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը քոլեջի խորհուրդն է, որը բարձրագույն և

հսկողություն իրականացնող մարմին է, բաղկացած 12 անդամներից, և լիազորությունների ժամկետը 5 տարի է: Կառավարման խորհուրդը կանոնադրության համաձայն և իր լիազորությունների շրջանակներում քննարկում և հաստատում է քոլեջի ՌԾ-ը, հաստատում է քոլեջի տնօրենի և դասախոսների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները, հիմնադրի սահմանած կարգով որոշում է քոլեջի շահույթի տնօրինման ուղղությունները, լիազորված մարմին է ներկայացնում քոլեջի գործունեության հիմնական ուղղությունների, տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկությունները: Կառավարման խորհուրդը իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները՝ հաստատելով նաև քոլեջի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը:

Կառավարման խորհուրդը քոլեջի կրթության և ուսումնական գործընթացի որակի կատարելագործման, դասախոսական կազմի մանկավարժական վարպետության, հմտությունների և կարողությունների բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով, տնօրենի առաջարկությամբ կարող է ստեղծել քոլեջի մանկավարժական, ուսումնամեթոդական, մասնագիտական խորհուրդներ, ամբիոններ, մասնագիտական և առարկայական հանձնաժողովներ, սահմանել դրանց կազմերը, իրավասությունը և գործունեության կարգերը:

Կառավարման խորհուրդն է հաստատում քոլեջի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ, քոլեջի գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր, տնօրենի առաջարկությամբ քննարկում և առաջադրում է քոլեջի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը, քննարկում և առաջադրում պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները:

Կառավարման խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ, նիստերին ըստ անհրաժեշտության խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել քոլեջի աշխատողներ, ուսանողներ և նրանց ծնողներ, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:



ԿՏՊԲ-ի ընթացիկ գործունեության ղեկավարումը օրենքով, հիմնադրի որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով և քոլեջի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում իրականացնում է **տնօրենը**, ով կրում է պատասխանատվություն իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Տնօրենն ընտրվում է խորհրդի սահմանած մրցութային ընթացակարգով:

Տնօրենն է սահմանում քոլեջի կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների

իրավասությունը, անհրաժեշտ պայմաններ է ստեղծում քոլեջի մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացման համար, վերհսկողություն է իրականացնում քոլեջում ուսուցման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ, ապահովում է ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը: Տնօրենն իր լիազորությունների սահմաններում արձակում է քոլեջում և նրա ստորաբաժանումներում կատարման համար պարտադիր հրամաններ, հրահանգներ, տալիս ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

Քոլեջի **տնօրինական խորհուրդը** խորհրդակցական մարմին է, որը իրականացնում է կանոնակարգով իրեն վերապահված լիազորությունները: Տնօրինական խորհուրդի կանոնակարգը հաստատում է քոլեջի կառավարման խորհուրդը:

Տնօրինական խորհուրդը քննարկում, պարզաբանում և կազմակերպում է քոլեջի կառավարման և ուսումնամեթոդական խորհուրդների որոշումների իրականացման եղանակները և միջոցները, վերահսկում է դրանց ընթացքը:

Տնօրինական խորհուրդը քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ուսումնական գործընթացին առնչվող հարցերի շուրջ,

ա) ուսումնական գործընթացի կազմակերպում, պլանավորում,

բ) ավարտական պետական և ընթացիկ քննությունների ու ստուգարքների կազմակերպման, անցկացման արդյունքների ամփոփում,

գ) ուսանողների քոլեջից հեռացում և վերականգնում,

դ) ուսումնական և այլ տիպի պրակտիկաների կազմակերպման ընթացքի և արդյունքների ամփոփում,

ե) քոլեջի ուսումնական գործունեության հետ կապված այլ ընթացիկ հարցեր:

Քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ուսումնամեթոդական սեմինարների, քոլեջի ֆինանսատնտեսական գործունեության հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ:

Տնօրինական խորհրդի կազմում ընդգրկվում են՝

- ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը
- դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը
- ամբիոնների վարիչները
- կադրերի տեսուչը
- գլխավոր հաշվապահը
- պրակտիկայի բաժնի վարիչը
- կրթության որակի պատասխանատուն

Խորհրդի կազմում, տնօրենի որոշմամբ, կարող են ընդգրկվել տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ: Խորհրդի նիստերին, տնօրենի որոշմամբ, կարող են որպես հրավիրյալ, ներկայանալ տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ, եթե քննարկվող հարցը առնչվում է նրանց:

ԿՏՊԲ-ի **ուսումնամեթոդական խորհուրդը** քոլեջի ուսումնամեթոդական հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու ԿՏՊԲ-ում տարվող ուսումնական և մեթոդական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

Ուսումնամեթոդական խորհուրդը համակարգում է ուսումնական գործընթացը, քննարկում և երաշխավորում է ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը, գործող և նոր բացվող մասնագիտությունների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, դասավանդման նոր և առաջավոր մեթոդներն ու եղանակները, ուսումնական գործընթացում ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը:

Ուսումնամեթոդական խորհրդի նախագահը ի պաշտոնե ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենն է: Խորհրդի կազմի մեջ են մտնում փոխտնօրենները, ամբիոնների վարիչները, կաբինետների վարիչները, պրակտիկայի բաժնի և այլ բաժինների վարիչներ՝ 15-20


անդամներ, որոնք հրամանագրվում են տնօրենի կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա համար:

Ուսումնամեթոդական խորհրդի նախագահը խորհրդի ընթացիկ աշխատանքների մասին զեկուցում է տնօրենին կամ տնօրինական խորհրդին:

Քոլեջի կառավարման մարմիններից է նաև **մանկավարժական խորհրդը**, որի կանոնակարգը քննարկում և ընդունում է քոլեջի կառավարման խորհուրդը:

Մանկավարժական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է ԿՏՊԲ-ի տնօրենը, ով ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է: Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 1-ը: Մանկավարժական խորհրդի անդամների անվանական կազմը հաստատում է քոլեջի տնօրենը: ԿՏՊԲ-ի մանկավարժական խորհուրդը քոլեջում կոլեկտիվ ղեկավարման մարմին է, որը կոչված է նպաստելու ԿՏՊԲ-ում տարվող ուսումնական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, ամբիոնների, կաբինետների վարիչները, կուրսղեկները և բոլոր դասախոսները:



Մանկավարժական խորհրդի իրավասությունները դադարում են ուսումնական տարվա ավարտից հետո: Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, որոնք պետք է լինեն տարին 2-3 անգամ:

Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝

- քոլեջի զարգացման ծրագիրը և հանդես գալիս առաջարկությամբ
- մասնագիտական պետական չափորոշիչն համապատասխան ծրագրերի իրագործման հարցերը
- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտալսարանային և արտաքոլեջային աշխատանքների կազմակերպման հարցերը
- ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր (ֆինանսական, կազմակերպչական) քոլեջի աշխատանքային ռեժիմի, աշխատանքային շաբաթվա տևողության, աշխատողին իրախուսելու վերաբերյալ հարցերը և առաջարկություններ ներկայացնում հաստատության կառավարման մարմիններին

Մանկավարժական խորհուրդը իր գործառույթների շրջանակներում ընդունում է հետևյալ որոշումները՝

- սովորողներին կուրսից-կուրս փոխադրելու կամ հեռացնելու մասին
- սովորողներին քննություններին թույլատրելու մասին
- սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու մասին
- անհարգելի բացակայությունների, ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին
- գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին խրախուսելու մասին
- փոխադարձ դասալսումների արդյունքում ի հայտ եկած հարցերի վերաբերյալ

ԿՏՊԲ ուսանողական խորհուրդը ինքնակառավարման, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է: Խորհրդի լիազորություններն ու գործունեությունը, ՀՀ օրենսդրությանը և կանոնադրական ակտերին համապատասխան, սահմանվում են քոլեջի կանոնադրությամբ, քոլեջի ղեկավար մարմինների որոշումներով: Խորհուրդն ապահովում է քոլեջի ուսանողական ինքնակառավարման գործընթացները քոլեջի ուսանողների շրջանում և պաշտպանում է վերջիններիս շահերը:

Խորհրդի հիմնական նպատակն է նպաստել ուսանողների ակտիվ մասնակցությանը քոլեջի կյանքին:

Իր նպատակների իրականացման համար խորհուրդն ունի հետևյալ առաքելությունները՝

- Մասնակցել ուսումնական գործընթացի կատարելագործմանը:
- Տարածել տեղեկատվություն ուսանողների շրջանում:
- Ներկայացնել և պաշտպանել ուսանողների շահերը քոլեջի կառավարման մարմիններում:
- Ուսանողական խորհրդում ստեղծել և զարգացնել համապատասխան ներքին կառույցներ:
- Ներկայացնել առաջարկներ ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ և քոլեջի համապատասխան մարմինների կողմից վավերացումից հետո՝ նպաստել դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը:
- Աջակցել քոլեջում մարմնակրթության և սպորտի զարգացմանը:
- Կազմակերպել ուսանողական և երիտասարդական տոներին նվիրված միջոցառումներ:
- Աջակցել հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

Առաջարկված նպատակներին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար Խորհուրդն իրավասու է.

- Մշակել և իրականացնել միջոցառումներ:
- Օգտագործել քոլեջի տեղեկատվական միջոցները՝ ուսանողական կյանքը համակողմանիորեն լուսաբանելու, ինչպես նաև Խորհրդի որոշումներն օպերատիվ կերպով ուսանողությանը հասցնելու համար:
- Ստեղծել քոլեջի կանոնադրությամբ չբացառվող ուսանողական, մշակութային, մարզական միություններ, ըստ նախասիրությունների ակումբներ, կազմակերպել ուսանողական օլիմպիադաներ, ուսանողական առօրյան հազեցած դարձնող այլ միջոցառումներ:
- Ներկայացուցչական մարմիններում մասնակցել ուսանողների շահերը շոշափող նորմատիվ ակտերի մշակմանը, կատարելագործմանն ու ընդունմանը:
- Քոլեջի կանոնադրության համաձայն ունենալ ուսանողության ներկայացուցչություն քոլեջի կառավարման մարմիններում՝ ապահովելով ուսանողների մասնակցությունը քոլեջի գործունեությանը վերաբերող կարևորագույն հարցերի լուծմանը:

Խորհուրդը ձևավորում է քոլեջի համապատասխան կուրսերից ներկայացուցիչների ընտրության սկզբունքով: Խորհրդի լիազորությունների ժամկետը 2 տարի է, որի ընթացքում կարող է տեղի ունենալ խորհրդի անդամների մասնակի փոփոխություն. անդամների՝ քոլեջն ավարտելու և նոր ուսանողների ընդունելության հետ կապված: Խորհրդի ղեկավար մարմինը նախագահն է, կառուցվածքային ստորաբաժանումները՝ հանձնաժողովները: Խորհրդի նիստերը գումարվում են կիսամյակում առնվազն 2 անգամ: Արտահերթ ժողովներ հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Խորհրդի նիստերը համարվում են իրավագործ՝ Խորհրդի անդամների

առնվազն երկու երրորդի մասնակցության դեպքում: Խորհրդի նախագահ կարող է ընտրվել Խորհրդի անդամ հանդիսացող յուրաքանչյուր ուսանող: Խորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է Խորհրդի նիստում փակ գաղտնի քվեարկությամբ (եթե այդ մասին այլ որոշում չի կայացվում): Նախագահի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է Խորհրդի ներկա անդամների մեծամասնությունը:

Խորհրդի նախագահը ղեկավարում է ուսանողական խորհուրդը և կազմակերպում վերջինիս աշխատանքները: Ներկայացնում է Խորհուրդը պետական և վարչական մարմիններում, հասարակական կազմակերպություններում, զանգվածային լրատվության միջոցներում քոլեջի կանոնադրության համաձայն: Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի գործունեության պլանը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումներից է **ուսումնական մասը:**


ՈւՄ-ի հիմնական խնդիրներն են.

- պլանավորել և համակարգել ԿՏՊԲ-ի բոլոր մասնագիտությունների ուսումնական գործընթացը՝ ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ,
- համակարգել ուսումնական գործընթացին մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը,
- մասնակցել ԿՏՊԲ-ի համապատասխան ստորաբաժանումների հետ ուսումնական գործընթացի բարեփոխումներին,
- համակարգել ուսումնական գործընթացը, ուսումնական պլանների իրականացումը, ինչպես նաև նորմատիվ փաստաթղթերի կիրառումը՝ ԿՏՊԲ-ի ուսումնական ստորաբաժանումների կողմից,
- կազմակերպել ամբիոնների հետ համատեղ ԿՏՊԲ-ի ուսումնական պլանների կատարման, դասընթացներին ուսանողների գրանցման, ուսման առաջադիմության տվյալների ավտոմատացված մուտքագրման ու մշակման, ստուգարքային և քննական տեղեկագրերի ու դիպլոմի հավելվածի պատրաստման միասնական էլեկտրոնային համակարգով գործընթացը:

Ուսումնական մասը համաձայն գործող նորմատիվ իրավական ակտերի և քոլեջի կանոնակարգերի՝ իրականացնում է.

- ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության մշտադիտարկում և բացթողումների վերհանում, գնահատում, բարելավմանն ուղղված միջոցառումների մշակում,
- դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման առաջարկությունների և երաշխավորությունների մշակում,
- ուսանողների, շրջանավարտների և դասախոսական համակազմի շրջանում հարցումների կազմակերպում,
- փոխատեղման գործընթացի կազմակերպում, զեղչերի գործընթացի կազմակերպում,
- ամփոփիչ աստեստավորման հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
- ավարտական փաստաթղթերի լրացում,
- կրկնօրինակ դիպլոմների, կորցրած ներդիրների և արխիվային տեղեկանքների տրամադրում, փաստաթղթերի իսկության հավաստում,
- ուսանողների առաջադիմության ամփոփում կիսամյակային կտրվածքով,
- տեղեկատվական-վիճակագրական տվյալների հավաքագրում և համապատասխան մարմիններին ներկայացում,
- դասացուցակների կազմում,
- ուսանողների թվաքանակի հաշվառում,
- քննագրաֆիլների կազմում և հաստատում, լուծարքների ժամանակացույցի կազմում և հաստատում,
- դասալսումների անցկացման ստուգում և առանձին դասալսումների կազմակերպում, փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում

- մասնագիտությունների ուսումնական գործընթացի վերահսկողություն,




Ամբիոնը միջին մասնագիտական հաստատության հիմնական ուսումնամեթոդամանկավարժական ստորաբաժանում է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող մանկավարժական կազմը, կազմակերպում և իրականացնում է ուսումնական, ուսումնամեթոդական գործընթաց, իրականացնում է դասախոսների որակավորման մշտադիտարկման գործընթացներ: Ամբիոնը ստեղծվում է ընդհանուր և հատուկ դասընթացների դասավանդումն իրականացնելու նպատակով՝ առնվազն 5 դասախոսների առկայության պայմանով: Ամբիոնը ղեակավարում է ամբիոնի վարիչը, որին տվյալ պաշտոնում հրամանագրում է տնօրենը: Ամբիոնի գործունեությունը իրագործվում է նիստերով: Ամբիոնի նիստը համարվում է իրավասու, եթե մասնակցում է ամբիոնի կազմի 2/3-ից ոչ պակասը:


Քոլեջի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի հաստատմանն է ներկայացվում ամբիոնի աշխատանքների կիսամյակային պլանները և կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը: Ամբիոնի որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկում նիստի ներկաների 50%-ից ավելին: Ամբիոնի գործունեությունը պլանավորվում է յուրաքանչյուր կիսամյակի համար:

Ամբիոնի վարիչը՝

- Մասնակցում է պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլանների և ծրագրերի քննարկմանը և մշակմանը:
- Նախապատրաստում, անցկացնում և նախագահում է է ամբիոնի նիստերը:
- Նախապատրաստում և անցկացնում է դասախոսների մեթոդական զեկուցումները:
- Պլանավորում, կազմակերպում և համակարգում է ամբիոնի ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքներն ըստ օրակարգի և ժամանակացույցի:
- Կատարում է ուսումնական բեռնվածության բաշխում ամբիոնի հաստիքային աշխատողների, համատեղողների և ժամավճարային կարգով հրավիրվածների միջև դրանք հաստատելով ամբիոնի նիստում՝ վերահսկելով կատարման ժամկետներն ու որակը:
- Վերահսկում է դասախոսությունների, տեսական, գործնական, լաբորատոր պարապմունքների, ամբիոնի դասախոսների բեռնվածության կատարումը:
- Վերահսկում է ուսանողների ընթացիկ խորհրդատվությունը՝ օգտագործելով կաբինետների հնարավորությունները:



Ամբիոններին կից որպես ենթակառուցվածքային միավորներ գործում են նաև հետևյալ կաբինետները, որոնց աշխատանքները իրականացվում են համապատասխան ամբիոնների վարիչների ղեկավարությամբ՝ հաստատված համապատասխան պլանով և գրաֆիկով:



ԿՏՊԲ-ի կադրերի բաժինը քուլեջը անհրաժեշտ մասնագետներով համալրելու ուղղությամբ կադրային քաղաքականություն վարող կառուցվածքային ստորաբաժանում է:

Կադրերի բաժնի խնդիրներն են՝

- Վարչատնտեսական, դասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի աշխատանքի ընդունման, տեղափոխման, աշխատանքից ազատման գործընթացների կազմակերպում
- Աշխատողների անձնական գործերի և աշխատանքային գրքույկների վարում
- Աշխատողների հաստիքի, պաշտոնի և որակավորման վերաբերյալ ամենամյա վիճակագրական հաշվետվությունների կազմում
- Գրանցամատյանի վարում
- Ուսանողական համակազմի անձնական գործերի պահպանություն և վարում
- Ուսանողների համակազմի վերաբերյալ հրամանների գրանցամատյանի վարում

Կադրերի բաժնի գործառույթներն են՝

- Վարչատնտեսական, դասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի աշխատանքի ընդունման, տեղափոխման, աշխատանքից ազատման ձևակերպումների համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունում, հրամանների նախագծերի պատրաստում, հրամանագրում

- Անձնական գործերում, հաստիքացուցակում, աշխատակազմին վերաբերող հրամանների

ամրագրում

- Աշխատանքային գրքույկներում հրամանների ամրագրում
- Աշխատանքային պայմանագրերի ձևակերպում և դրանց լուծման դեպքում՝ ծանուցում
- Աշխատանքից ազատվածների անձնական գործերի արխիվացում և պահպանում
- Կենսաթոշակ ձևակերպելու և այլ հարցերի լուծման համար աշխատողների ստաժի վերաբերյալ տեղեկանքների պատրաստում
- Անձնակազմի վերաբերյալ ամենամյա վիճակագրական հաշվետվությունների կազմում՝ ըստ պաշտոնների, հաստիքային կարգավիճակի և որակավորման
- Աշխատողի անհատական հայտերի գրանցում՝ հարկային էլեկտրոնային ծառայություններում
- Վարչատնտեսական, դասախոսական, ուսումնասօժանդակ և սպասարկող անձնակազմին վերաբերող տվյալները համակարգչային բազայում ներմուծում և ժամանակակից պահանջներին համապատասխան դրա կատարելագործում
- Ամենօրյա կադրային հրամանների՝ տվյալների բազայում արտացոլում
- Ուսանողների համակազմի վերաբերյալ ընդունման, հաջորդ կուրս փոխադրման, կրթաթոշակի, փոխատեղման, հեռացման և ուսանողական իրավունքի վերականգնման, կարգապահական տույժերի կիրառման վերաբերյալ հրամանների պատրաստում և գրանցում համապատասխան գրանցամատյանում:

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի **Կարիերայի ստորաբաժանումը** ստեղծվում է ԿՏՊԲ-ի տնօրենի հրամանով և պատասխանատու է ուսանողների կարիերայի արդյունավետ ուղղորդման ծառայությունների մատուցման համար:

Ստորաբաժանման հիմնական նպատակն է՝ կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման աշխատանքների, ինչպես նաև կարիերայի պլանավորման կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը:

2018թ-ից որպես առանձին ստորաբաժանում գործում է **Որակի ներքին ապահովման կենտրոնը (ՈԱ)**, որի նպատակն է կատարել ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների գնահատում, ապահովել դրանց որակի վերահսկում, հաշվետվողականություն և թափանցիկություն, նպաստել շարունակական բարելավմանն ու զարգացմանը:

Կենտրոնի խնդիրներն են.

- Քոլեջում ձևավորել և արմատավորել որակի ապահովման մշակույթը.
- Ապահովել կրթական ծրագրերի և դրանց իրականացման գործընթացների որակի ապահովման ընթացակարգերի ստեղծումը, մշտադիտարկումը և շարունակական բարելավումը.
- Ապահովել կրթության որակի ապահովման չափորոշիչներին համապատասխան օրինակելի փորձի բացահայտումն ու տարածումը քոլեջում.
- Ապահովել քոլեջի հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև:

Գրադարանը ԿՏՊԲ-ի ստորաբաժանումներից է: Այն գիտական, ուսումնասօժանդակ և մշակութային-լուսավորական ստորաբաժանում է, որպես գիտելիքների տարածման, պահպանության, հոգևոր և մտավոր շփման մշակութային կենտրոն:

Արխիվը հանդիսանում է «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումը:

Արխիվի խնդիրներն են՝

- Արխիվում պահպանվող փաստաթղթերի հաշվառումը, պահպանության ապահովումը և օգտագործումը, պետական պահպանության ենթակա փաստաթղթերի նախապատրաստումը
- Արխիվի գործառույթներն են՝
- Սահմանված կարգով փաստաթղթերի ընդունումը
- Գործավարությամբ ավարտված մշտական պահպանման գործերի, ցուցակների կազմումը և

դրանց ներկայացնելը համապատասխան հանձնաժողովի և ՀՀ ազգային արխիվի փորձագիտական մեթոդական հանձնաժողովի քննարկմանը

- Հանրապետության տարբեր ատյաններից և արտերկրից ստացված հարցումներին պատասխանելը
- Քաղաքացիների դիմումները բավարարելու համար տեղեկանքների ժամանակին կազմելը և դրանց հիմքերը ճշտելը
- Արխիվում ժամանակավոր պահպանվող փաստաթղթերի փորձագիտական արժևորման անցկացումը, ամփոփումը և դրա արդյունքները կենտրոնական-փորձագիտական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելը:

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ **հաշվապահական հաշվառումը** վարում և ֆինանսական հաշվետվությունները է պատրաստում Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի համաձայն:

Ֆինանսական միջոցների բաշխումը իրականացվում է հաշվետվություններից ստացված ինֆորմացիայի պահանջարկի համապատասխան և բխում ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակներից: Քոլեջի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերը ներկայացվում են համաձայն ծախսերի գործառնայթի մեթոդի: Այդ մեթոդի համաձայն՝ ծախսերը դասակարգվում են ըստ ծրագրի կամ նպատակի, որի համար դրանք կատարվել են: Կատարված ծախսերը լիովին արդարացնում են այն նպատակները, որոնց ծառայում են: Ըստ ռազմավարական նպատակների՝ քոլեջի կառավարման բոլոր օղակները ծառայում են մեկ նպատակի՝ մատուցել նախնական և միջին մասնագիտական որակյալ կրթություն, պատրաստել աշխատաշուկայում մրցունակ մասնագետներ:

Ուսանողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, որակյալ մասնագիտական և դասախոսական կազմի համալրման նպատակով քոլեջը ունի տեխնիկայով և սարքավորումներով համարված, նոր կահույքով հագեցած լսարաններ, լաբորատորիաներ, համակարգչային տեխնիկայով հագեցած 3 լսարան և բարենորոգված շենքային պայմաններ՝ կենտրոնական ջեռուցման համակարգով:

2017թ.-ին քոլեջի ՈԱ կենտրոնի կողմից իրականացվեց ինստիտուցիոնալ կարողությունների նախնական ինքնավերլուծություն, որի արդյունքում առաջացավ մի շարք իրավական փաստաթղթերի /կանոնակարգեր, ընթացակարգեր և այլն/ մշակման անհրաժեշտություն: Արդեն մշակված և հաստատված փաստաթղթերը հնարավորություն են տալիս յուրաքանչյուր ստորաբաժանմանը հստակորեն իրականացնելու իր առջև դրված խնդիրներն ու նպատակները՝ ՌԾ-ից բխող: Բացի այդ՝ քոլեջում առկա հաստիքներն ունեն իրենց պաշտոնի նկարագրերը, և յուրաքանչյուր աշխատակից հստակ գիտի իր վրա դրված պարտականությունները:

Քոլեջն իր կառավարչական որոշումների կայացման, հրապարակման և իրականացման գործում աշխատում է թափանցիկ, ձևավորված է հաշվետվողականության մշակույթ:

Քոլեջի աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցերը ամրագրված են ԿՏՊԲ-ում գործող «Ներքին կարգապահական կանոններ» կանոնակարգում:

ԶՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Հիմքեր	<p><u>«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսական և ուսանողական համակարգի քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի անդամի առաջադրման և քնտրության ընթացակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրինական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն</u></p>
--------	---

Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:

ԿՏՊԲ-ի կառավարման և վարչարարության քաղաքականության գործընթացում ներգրավված շահակիցներից են դասախոսական և ուսանողական կազմի ներկայացուցիչներ: Քոլեջն ունի կառավարման համակարգում դասավանդողների և ուսումնառողների մասնակցության ապահովման անհրաժեշտ մեխանիզմներ:

Կառավարման խորհրդի անդամների 20%-ը դասախոսական կազմից են, որոնց թեկնածությունը առաջադրում է մանկավարժական խորհուրդը: Բացի այդ դասախոսները ընդգրկված են նաև քոլեջի կառավարման մի շարք մարմիններում, մասնավորապես՝ մանկավարժական խորհուրդում, տնօրինական խորհուրդում, ուսումնամեթոդական խորհուրդում և որակի ներքին ապահովման կենտրոնի աշխատանքային խմբում: Վերը նշված կառույցների միջոցով դասախոսական կազմը հնարավորություն ունի մասնակցելու, քննարկելու և բարձրաձայնելու առկա բոլոր խնդիրները, առաջարկները և ստանալու անհրաժեշտ լուծումները:

Քոլեջի կանոնադրությունը և կանոնակարգերը ուսանողներին ևս հնարավորություն են տալիս մասնակից լինելու քոլեջի կառավարման գործընթացին: Ուսանողությունը իր ներկայացուցիչներն ունի քոլեջի կառավարման խորհրդում, որի միջոցով բարձրաձայնում են իրենց հուզող խնդիրները և ներկայացնում առաջարկություններ դրանց լուծման համար: Բացի այդ ուսանողները քոլեջի կառավարման գործընթացներին են մասնակցում ուսանողական խորհուրդի միջոցով, որը ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող ինքնակառավարվող ընտրովի ներկայացուցչական մարմին է: Այդ կառույցի միջոցով ուսանողությունը հնարավորություն ունի ներկայացնել առաջարկներ ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ և քոլեջի համապատասխան մարմինների կողմից վավերացումից հետո՝ նպաստել դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը:

ԿՏՊԲ-ի որակի ներքին ապահովման աշխատանքների մեջ ևս ներգրավված են ուսանողական խմբեր՝ բոլոր մասնագիտություններից:

Բացի կառավարման օղակներում ուսանողների ներգրավվածությունից՝ քոլեջը ուսանողների կարծիքը բարձրաձայնելու այլ մեխանիզմներ էլ ունի մշակած: Օրինակ՝ ուսանողների ձայնը, բողոքները և առաջարկությունները հասանելի են դառնում «Բողոքների և առաջարկությունների» արկղի միջոցով: Յուրաքանչյուր խնդիր քննարկվում է ուսխորհրդի նախագահի և անդամների կողմից և ներկայացվում է տնօրենին, որոնց տրվում են համապատասխան լուծումներ:

ԿՏՊԲ-ում դասախոսների և ուսանողների կողմից վեր հանված խնդիրներին, նախաձեռնություններին (նյութատեխնիկական, տնտեսական, կրթական) հնարավորության շրջանակներում տրվում են լուծումներ՝ ընդհանուր քննարկումների, խորհրդակցությունների, վերլուծությունների միջոցով: Նման խնդիրների վերհանման գործիքներից են նաև պարբերաբար իրականացվող հարցումները /Հավելված 1/: Ուսումնական տարվա ավարտին ստորաբաժանումների հաշվետվությունների, առաջարկությունների հիման վրա գնվել են

համակարգչային սարքավորումներ, գույք, լսարաններում իրականացվել են կոամետիկ վերանորոգումներ: Վերը նշված գործընթացները կրում են շարունակական բնույթ:

ՉԱՓՈՂՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

<p>Հիմքեր</p>	<p><u>«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի արխիվավարման կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի գրադարանի աշխատանքի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կադրերի բաժնի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կարիերայի ստորաբաժանման կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրինական խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն</u></p>
---------------	--

Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը/կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանով է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:

ԿՏՊԲ-ն կառավարվում է երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերով: Քոլեջի յուրաքանչյուր ստորաբաժանում տվյալ ուսումնական տարվա համար մշակում և պլանավորում է իր աշխատանքային գործունեությունը: Այս ծրագրերի պլանավորումը բխում է քոլեջի ռազմավարությունից, որը միտված է աշխատաշուկային համապատասխան որակյալ մասնագետների պատրաստմանը: Օրինակ՝ ամբիոնի, կաբինետի, պրակտիկայի վարիչները իրենց մշակած պլաններում նշում են առանցքային կետեր, պլանավորում կիսամյակի կամ մեկ ուսումնական տարվա համար կատարվելիք աշխատանքները:

Ստորաբաժանումների աշխատանքների իրականացումը՝ ըստ իրենց պլանավորված աշխատանքի վերահսկվում է վերադաս օղակների կողմից՝ ուսումնական տարվա ավարտին ներկայացնելով նաև կատարած աշխատանքների մասին տարեկան հաշվետվություն:

Քոլեջի երկարաժամկետ պլանավորումը ռազմավարական ծրագիրն է, որը կազմվում է 5 տարի ժամկետով: Այն արտացոլում է քոլեջի առաքելությունները, նպատակներն ու խնդիրները, որոնք կարող են վերանայվել աշխատաշուկայի պահանջների և մարզի ՌԾ-ի փոփոխությունների հիման վրա: Օրինակ՝ ռազմավարական պլանավորման համաձայն, տարածաշրջանի պահանջարկներից ելնելով 2017թ. քոլեջում վերաբացվել է «Զերմատնային տնտեսություն» մասնագիտությունը: Բացի այդ իրականացվել են աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան կարճաժամկետ մի շարք ծրագրեր:

Երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի իրականացումը ապահովում է ներդրված մասնագիտությունների գծով որակյալ մասնագետների մուտքը աշխատաշուկա: Այս առումով բավականին մեծ ուսումնասիրություն է կատարում քոլեջի կարիերայի կենտրոնը, որը հետադարձ կապի միջոցով մշտապես տեղեկատվություն ունի աշխատող և չաշխատող շրջանավարտների, նոր աշխատատեղերի վերաբերյալ: Կարիերայի կենտրոնը իր հաշվետվությունները ներկայացնում է ինչպես տնօրենին, այնպես էլ Լիազոր մարմնին:

--	--

ԶՍՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր	<p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կարիերայի ստորաբաժանման կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն</u></p> <p><u>Հարցումների անցկացման կանոնակարգ</u></p>
--------	--

Նշել վերջին երեք տարիներին հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:

ԿՏՊՔ ՈԱ-ն ներքին հսկողության քաղաքականությունը թույլ է տալիս մշակել և կատարել արտաքին և ներքին գործոնների ուսումնասիրություններ: Այդ ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվում են կրթական ծրագրերի, դասախոսական կազմի աշխատանքների, դասապրոցեսների, ուսանողների գնահատման համակարգի և այլ գործընթացներում հայտնաբերված առակա խնդիրները: Դրանց բարեփոխման և հնարավոր շտկումներ կատարելու նպատակով հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ և տեղի են ունենում բաց քննարկումներ, որի ընթացքում առաջարկվում են յուրաքանչյուր օղակում հնարավոր լուծումներ և բարեփոխումներ կատարելու համար հարմար մեխանիզմներ կիրառել:

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունները, վերլուծությունները շարունակական գործընթացներ են: Արտաքին գործոնների ուսումնասիրության նպատակով կապը շրջանավարտների, նրանց աշխատանքի տեղավորման և գործատուների հետ մշտապես ակտիվացվում է կուրսդեկների, կարիերայի կենտրոնի, արտաքին շահակիցների միջոցով:

Այդ ուսումնասիրությունները վերլուծության են ենթարկվում՝ ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման, առկա թերությունների վերացման և հետագա պլաններում բարեփոխման նպատակով:

Քոլեջը տարածաշրջանի աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքում վերջին 3 տարիներին ներդրել է «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությունը, հաշվի առնելով այդ ոլորտում աշխատանքի պահանջարկի մեծացման և շրջանավարտներին հետագայում աշխատանքի տեղավորման հնարավոր լուծումները: Ներդրվել և իրականացվել է դուալ կարճաժամկետ դասընթաց «Արևային էլեկտրակայաններ» մասնագիտությամբ, արդեն երկրորդ տարին է, որ իրականացվում է դուալ երկարաժամկետ ծրագիր՝ քոլեջի 0413.06.5-«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությամբ: Արտաքին գործոնների ուսումնասիրման գործընթացում կատարվում է նաև դիմորդների նախնական մասնագիտական կողմնորոշման ճշգրտումներ՝ տարածաշրջանի դպրոցներ ամենամյա այցելությունների միջոցով:

Ներքին գործոնների ազդեցության նպատակով վերջին մի քանի տարիների ընթացքում կատարվել են հարցումներ ուսանողների շրջանում: Պլանավորվում է, ստեղծելով ֆոկուս խմբեր, կիրառել և կատարելագործել ներքոհիշյալ մեխանիզմները՝

- մշակել ընթացակարգեր,
- ստեղծել հարցաթերթիկների ձևաչափեր՝ բացահայտելու և վեր հանելու արտաքին և ներքին գործոնների ազդեցությունները քոլեջի կառավարման համակարգի, կրթական որակի, դասախոսական կազմի, գնահատման, ռեսուրսների, ընդունելության և այլ

գործընթացների հետ կապված:

Նախնական ուսումնասիրությունների արդյունքում կարելի է առանձնացնել քոլեջի գործունեության վրա ազդող այնպիսի գործոններ ինչպիսիք են՝

- տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը
- դիմորդների քանակը՝ տվյալ ուսումնական տարում
- դասախոսական կազմի ներհոսքը՝ վերջին 2-3 տարիների ընթացքում
- վարչական կազմում աշխատակիցների ներհոսքը
- արտաքին շահակիցների կարծիքները
- նյութատեխնիկական բազայի համալրումը
- շենքային բարենպաստ պայմանները

Այդ ուսումնասիրությունները կնպաստեն քոլեջի կառավարման համակարգում հետագա աշխատանքների ռազմավարական պլանավորմանը և ծրագրերի իրականացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Հիմքեր	<p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն</u></p> <p><u>Հարցումների անցկացման կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրինական խորհրդի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)</u></p>
--------	---

Վերլուծել որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Նշել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

Քոլեջում ներդրված ՈԱ ներքին կենտրոնը ձևավորում և արմատավորում է որակի ապահովման մշակույթը՝ նպատակ ունենալով կրթական ծրագրերի իրականացման գործընթացների, մշտադիտարկման, օրինակելի փորձի բացահայտման և դրա տարածման ուղիները քոլեջում, ապահովել հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների միջև:

Քոլեջի յուրաքանչյուր ստորաբաժանում որակի ապահովման շրջանակներում և ստեղծված քաղաքականությամբ պարբերաբար իրականացնում է ուսումնասիրություններ և ինքնավերլուծություններ: Ստեղծված աշխատանքային խմբերը (ամբիոնների վարիչներ, դասախոսներ, ուսանողական խմբեր, ֆոկուս խմբեր և վարչական կառույցի աշխատողներ), ըստ որակի ներքին ապահովման կանոնակարգի, ընթացակարգերի իրականացում են իրենց գործառույթները՝ պլանավորման, իրականացման, գնահատման, բարելավման սկզբունքներով:

Կազմակերպվում են քոլեջի գործունեության, ուսումնական գործընթացների գնահատման, արդյունքների վերլուծություն, վերանայվում քոլեջի ներքին կանոնակարգերը և դրանք համապատասխանեցվում գործող չափանիշներին՝ հետևելով դրանց իրագործման ընթացքին: Օրինակ՝ 2020թ. որակի ներքին ապահովման բարելավմանն ուղղված աշխատանքների արդյունքում վերանայվել և անհրաժեշտ փոփոխություններ են կատարվել քոլեջի որոշ ընթացակարգերում և կանոնակարգերում, ինչպես նաև մշակվել է նոր ընթացակարգ (Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսական և ուսանողական համակարգի քոլեջի

կոլեգիալ կառավարման մարմնի անդամի առաջադրման և ընտրության ընթացակարգ):

Յուրաքանչյուր ստորաբաժանում աշխատում է հետադարձ կապի սկզբունքով և ապահովում տեղեկատվության հասանելիությունը շահագրգիռ բոլոր կողմերին, գործող բոլոր ստորաբաժանումներին, աշխատանքային խմբերին և օղակներին: ԿՏՊԲ-ում գործընկերային և թիմային մոտեցմամբ, որակի ապահովման համակարգի ներդրմամբ, մշտադիտարկումների, ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում վեր հանված խնդիրների համար մշակվում են բարելավման ուղիներ և հաղթահարման մեխանիզմներ:

ԿՏՊԲ-ի թերացումները՝ տարբեր մակարդակներում, լավագույն փորձը կվերանայվեն և կընդգրկվեն առաջիկա ծրագրերում և պլաններում: Կառավարման համակարգի թափանցիկությունը, տարբեր օղակների հաշվետվողականությունը, ուսանողների, վարչական կազմի և դասախոսների առաջարկությունները, կարծիքները, քննարկումները որակի գործընթացների բարելավման նպատակով կդիտարկվեն և կընդգրկվեն բարելավման ծրագրերում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր

- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կարիերայի ստորաբաժանման կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական խորհրդի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոններում դասախոսների անցկացման և քննարկման կանոնակարգ (փոփոխություն)
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ (փոփոխություն)
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ
- Հարգումների անցկացման կանոնակարգ

Վերլուծել ՄՈՒՀ- ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Կրթական ծրագրերի վերլուծությունը և գնահատումը իրականացվում է որակի ներքին կենտրոնի կողմից անցկացվող հարցումների, ուսումնամեթոդական խորհրդի քննարկումների, ուսումնական մասի, դասախոսների, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգի և այլ մեխանիզմներով, որոնց արդյունքում կատարվում է համապատասխան հավաքագրված տեղեկատվության, կարծիքների, առաջարկությունների, փաստերի քննարկում և վերլուծություն:

Որակի ներքին ապահովման քաղաքականության ներդրումը քոլեջում հիմք հանդիսացավ

ստեղծելու և մշակելու «Հարցումների անցկացման կանոնակարգեր», որոնք շարունակական միտում ունեն՝ նպատակ ունենալով ապահովել կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման աշխատանքները:

«Հարցումների անցկացման կանոնակարգեր»-ի կիրառումը նպատակ ունի քոլեջի արտաքին և ներքին շահակիցների շրջանակներում իրականացնել հարցումներ, որոնց նպատակն է վեր հանել թերությունները, կատարել առաջավոր փորձի փոխանակում, լսել առաջարկություններ, կարծիքներ: Հավաքագրված արդյունքների հիման վրա քննարկվում, մշակվում են կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման գործընթացների բարեփոխման ուղիները:

ԿՏՊԲ-ում հարցումները հնարավորություն են տալիս բարելավելու կրթության որակը և կատարել վերլուծություններ մասնագիտությունների, ամբիոնների աշխատանքների, լաբորատորիաների, կաբինետների, կարիերայի կենտրոնի, գրադարանի և այլ ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ:

Վերոհիշյալ ստորաբաժանումների գործունեության արդյունավետության հետ կապված ԿՏՊԲ-ն պլանավորում և թարմացնում է ընթացակարգեր՝ համապատասխան ստորաբաժանումներում տեղեկատվության հավաքագրման, դասակարգման նպատակով:

Հավաքագրված տեղեկատվությունների հիման վրա կատարվում է վիճակագրական վերլուծություններ՝ կազմելով դիագրամներ, աղյուսակներ, որտեղ ակնառու կերպով երևում է հավաքագրված տվյալների արդյունքները: /Հավելված 1. Հավելված 2./:

Ուսումնական տարվա սկզբին ԿՏՊԲ-ի որակի ներքին ապահովման կենտրոնը կազմում է հարցումների անցկացման պլան- ժամանակացույց, մշակում են հարցման թերթիկներ:

Քոլեջում մշտադիտարկման առարկա կարող է հանդիսանալ.

- ուսումնառության որակը
- դասավանդող անձնակազմի որակը և հմտությունները
- ռեսուրսները և դրանց ապահովման որակը
- կառավարման համակարգի որակը և այլն:

Ելնելով ԿՏՊԲ-ի ՌԾ-ի հիմնական նպատակներից, այն է՝ ապահովել ՊԿԶ-ին համապատասխան կրթություն, մշակվել և ներդրվել է «Առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգը»:

Ուսանողների կողմից դասախոսների և նրանց վարած դասընթացի գնահատման ձևաչափը հանդիսանում է դասախոսի կողմից անցկացրած դասընթացը և կրթական միջավայրը ուսանողների տեսանկյունից վրլուծելու և գնահատելու միջոց, ինչպես նաև դասախոսի կրթական գործունեության բարելավմանը խոչընդոտող գործոնները բացահայտելու հնարավորություն: Գնահատումը նպատակ ունի խթանել դասախոսի մասնագիտական աճը, և շարունակական կատարելագործումը:

Գնահատման չափանիշներից է դասախոսի կողմից առարկայական ծրագրի ներկայացումն ու իրականացումը, ինչն էլ հանդիսանում է ծրագրերի արդյունավետության գնահատման մեխանիզմներից մեկը:

Կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատելու նպատակով, դրանք պարբերաբար ենթարկվում են մոնիթորինգի (մշտադիտարկման) ինչպես ներքին ռեսուրսների, այնպես էլ արտաքին ռեսուրսների մասնակցությամբ:

ԶՍՓՈՐՈՇԻՉ է: ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	<u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման</u>
--------	---

կենտրոնի քաղաքականություն
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կարիերայի ստորաբաժանման
կանոնակարգ

Վերլուծել ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ն որակյալ կրթության, ինչպես նաև աշխատաշուկայում շրջանավարտների ինտեգրման նպատակով պլանավորում է մշակել և կիրառել կրթության որակի լուսաբանում տեղեկատվության տարածման ժամանակակից և կատարելագործված մեթոդներով: ԿՏՊԲ-ի գործունեության իրազեկման նպատակով անհրաժեշտության դեպքում փոփոխության են ենթարկվում և մշակվում հանրությանը տրամադրվող տեղեկատվության ձևերն ու բովանդակությունը: Քոլեջը մշտապես կատարելագործում է հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը, զարգացնելով նաև մշտադիտարկման կապը:

Պլանավորվում է դասավանդման, ուսումնառության, գնահատման, պետական ամփոփիչ որակավորումների և այլ տեղեկատվությունների վերաբերյալ արդյունքների լուսաբանման միջոցով վեր հանել այդ գործընթացներում թերություններն ու բացթողումները, որոնց հաղթահարման համար ուղիներ են մշակվում: Դասախոսների աշխատանքների հրապարակումների (բաց դասեր, ցուցահանդեսներ, միջոցառումներ և այլն), փաստաթղթերի միջոցով լուսաբանվում և տեղեկատվություն է տրամադրվում ուսումնառության գործընթացում տեղի ունեցող ձեռքբերումների, առաջխաղացումների, սկսնակ դասախոսներին փորձի փոխանակման վերաբերյալ:

Տեղեկատվությունը արտաքին և ներքին շահակիցներին հասանելի է բուկլետների, ցուցապաստառների, կայքի, ֆեյսբուքյան էջի միջոցով: Քոլեջի գործունեության, իրականացվող աշխատանքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն կարելի է ստանալ ֆեյսբուքյան էջից և պաշտոնական կայքից: Պաշտոնական կայքում տեղադրված են քոլեջի գործունեությունը կարգավորող և համակարգող բոլոր փաստաթղթերը, որոնք հասանելի են:

ԿՏՊԲ-ի կողմից տրամադրվող որակական և քանակական տեղեկատվության արդյունավետության լավագույն արդյունքներից է դիմորդների ամենամյա կայուն հոսքը, ինչպես նաև քոլեջի գործունեության թափանցիկությունը, բարձր վարկանիշը տարածաշրջանում, արտաքին շահակիցների հետաքրքրության բարձրացումը, աշխատաշուկա մուտք գործելու, կարիերայի պլանավորման և կառավարման, այդ թվում՝ զբաղունակության, ձեռներեցության և առանցքային այլ կարողությունների զարգացմանն ուղղված խմբային և անհատական ծառայությունների մատուցումը, զբաղվածության պետական ծրագրերից օգտվելու նպատակով աշխատանք փնտրող ուսանողների ուղղորդումը, վարչական աշխատանքների իրականացումը և այլն:

Վերլուծել Չափանիշ 2-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները / SWOT վերլուծություն/

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> ԿՏՊԲ կառավարման օղակների և կառուցվածքային ստորաբաժանումների գործառնությունների և լիազորությունների կանոնակարգվածություն, համակարգվածություն, հաշվետվողականություն, ինչն արդյունավետ է դարձնում քոլեջի կազմակերպական կառուցվածքն ու կառավարման գործընթացը: ԿՏՊԲ-ում առկա նյութատեխնիկական և 	<ul style="list-style-type: none"> Տարածաշրջանի և այլ առաջատար քոլեջների հետ փորձի փոխանակման ակտիվացում՝ կառավարման գործընթացների կատարելագործման, նոր մեթոդների կիրառման

Ֆինանսական ռեսուրսները ուղղված են քոլեջի ռազմավարական նպատակների իրականացմանը և լիովին արդարացված են՝ բախշման ճիշտ մեխանիզմների շնորհիվ:

- Կառավարման համակարգում դասախոսների և ուսանողների ներգրավվածությունն ապահովող արդյունավետ մեխանիզմներ (դասախոսների ընդգրկվածությունը կառավարման տարբեր մարմիններում, Որակի ներքին ապահովման կենտրոնի ուսանողական և դասախոսական խմբեր, ուսանողների ընդգրկվածությունը Կառավարման խորհրդի կազմում) ինչի արդյունքում վերջիններս հնարավորություն են ստանում մասնակցել իրենց վերաբերող որոշումների և նախագծերի ընդունմանը, ինչպես նաև հանդես գալ սեփական նախաձեռնություններով, բարձրաձայնել իրենց հուզող խնդիրներն ու ստանալ դրանց անհրաժեշտ լուծումները:

- Քոլեջի երկարաժամկետ պլանավորումը արտացոլում է քոլեջի առաքելությունները, նպատակներն ու խնդիրները, որոնք կարող են վերանայվել աշխատաշուկայի պահանջների և մարզի ռազմավարական ծրագրի փոփոխությունների հիման վրա: Օրինակ տարածաշրջանի պահանջարկներից էլնելով 2017թ. քոլեջում վերաբացվել է «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությունը: Բացի այդ իրականացվել են աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան կարճաժամկետ մի շարք ծրագրեր: Երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի իրականացումը ապահովում է ներդրված մասնագիտությունների գծով որակյալ մասնագետների մուտքը աշխատաշուկա:

- Քոլեջի գործունեության և ուսուցման որակի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների արդյունավետ ուսումնասիրություններ, որի շնորհիվ բացահայտվում են կրթական ծրագրերի, դասախոսական կազմի աշխատանքների, դասապրոցեսների և այլ գործընթացներում հայտնաբերված առակա խնդիրները, մշակվում դրանց հնարավոր շտկումներն ու բարելավման մեխանիզմներ: /Օրինակ 2020թ. որակի ներքին ապահովման բարելավմանը ուղղված աշխատանքների արդյունքում, վերանայվել և անհրաժեշտ փոփոխություններ են կատարվել քոլեջի որոշ ընթացակարգերում և կանոնակարգերում, ինչպես նաև մշակվել է նոր ընթացակարգ (Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսական և ուսանողական համակազմից քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի անդամի առաջադրման և ընտրության ընթացակարգ):

- Կրթական ծրագրերի և այլ գործընթացների

նպատակով:

- Կառավարման գործընթացներում ներքին շահակիցների կողմից համապատասխան կանոնակարգերով տրվող իրավունքների և հնարավորությունների ոչ ակտիվ օգտագործում:

<p>արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ /մոնիթորինգ (մշտադիտարկում) ինչպես ներքին ռեսուրսների, այնպես էլ՝ արտաքին ռեսուրսների մասնակցությամբ, անցկացվող հարցումներ, կառավարման մարմինների, ուսումնամեթոդական խորհրդի, ուսումնական մասի քննարկումներ, դասալսումների, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ և այլն/, որոնց արդյունքում կատարվում է համապատասխան հավաքագրված տեղեկատվության, կարծիքների, առաջարկությունների, փաստերի քննարկում և վերլուծություն:</p>	
<p>Հնարավորություններ</p>	<p>Ռիսկեր</p>
<ul style="list-style-type: none"> • Առաջատար քոլեջների հետ համագործակցությունը կառավարման նորագույն մոդելների ներդրման նպատակով • Կառավարման էլեկտրոնային միջոցների զարգացման և տեղեկատվության հավաքագրման ու հրապարակման գործընթացների շարունակական բարելավում: • Քոլեջի բոլոր ստորաբաժանումների, ենթակառուցվածքների, աշխատանքների վերահսկման և հաշվետվողականության մեխանիզմների կատարելագործում: 	<ul style="list-style-type: none"> • Վճարովի տեղերի սակավություն ֆինանսական լրացուցիչ աղբյուր ունենալու համար
<p>Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները</p>	
<ul style="list-style-type: none"> • Տարածաշրջանի և այլ առաջատար քոլեջների հետ փորձի փոխանակման նպատակով համագործակցության ակտիվացում՝ փոխշահավետ առաջարկների հիման վրա : • Ներքին շահակիցների կողմից իրենց իրավունքների իրազեկման և լիարժեք օգտագործման նպատակով տեղեկատվական հանդիպումների անցկացում: • Նոր ֆինանսական աղբյուրների ձեռքբերում՝ դրամաշնորհների, կարճաժամկետ ծրագրերի և այլ միջոցներով: 	

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում, ռազմավարական նպատակների դրույթներին համահունչ, իրականացնում է որակյալ կրթության մատուցումը շահագրգիռ կողմերին՝ ապահովելով կրթության որակի արտաքին և ներքին գնահատման չափանիշները, որակի կառավարման ներքին համակարգի ձևավորման և մասնագիտական կրթության որակի ապահովման համար սահմանված չափորոշիչների պահանջները կատարելու միջոցով:

ԿՏՊԲ-ում կիրառվող կրթական ծրագրերը համապատասխանում են հաստատության առաքելությանը և ռազմավարական պլանին՝ ապահովելով տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստում, աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ կրթական ծառայությունների ձկունություն, կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճ:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Հիմքեր	<p><u>ՀՀ Կրթության մասին օրենք</u></p> <p><u>Մասնագիտության կրթական ծրագրերի նկարագրերը</u></p> <p><u>ՈՍՇ</u></p> <p><u>ՊԿՉ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u></p> <p><u>« Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ(փոփոխություն)</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ</u></p>
--------	--

(փոփոխություն)

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների
գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ
(փոփոխություն)

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ:

ԿՏՊԲ-ն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է միջին մասնագիտական, նախնական (արհեստագործական), հանրակրթական, ինչպես նաև մեծահասակների կրթության և ուսուցման կարճաժամկետ ծրագրեր:

Քոլեջը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սահմանված կարգով՝ իրականացնելով ուսանողների և ունկնդիրների ընդունելություն՝ ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը, կրթական ծրագրերի առավել արդյունավետ յուրացման նպատակով ուսուցման առաջավոր ձևերի, մեթոդների և միջոցների ընտրությամբ քոլեջի ուսանողների համար ստեղծում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ:

Մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների առաջավոր միջազգային փորձի ներդրման, զարգացման և տարածման տեղայնացմամբ ՄՈՒՀ-ը դարձել է ՀՀ կրթական համակարգի զարգացման առավել մեծ ներուժ ունեցող լիարժեք գերազանցության կառույց՝ ստանձնելով տարածաշրջանային և ռեսուրսային բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը:

ԿՏՊԲ-ն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է որակյալ կրթության մատուցումը շահագրգիռ կողմերին՝

- ապահովում է կրթության որակի արտաքին և ներքին գնահատման չափանիշները՝ որակի կառավարման ներքին համակարգի ձևավորման և մասնագիտական կրթության որակի ապահովման համար սահմանված չափորոշիչների պահանջները կատարելու միջոցով:
- ապահովում է կրթական ծառայությունների ձկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ
- ապահովում է որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

ԿՏՊԲ-ում իրականացվող կրթական ծրագրերը համապատասխանում են հաստատության առաքելությանը և ռազմավարական պլանին՝ ապահովելով տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստում, աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ կրթական ծառայությունների ձկունություն, կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճ:

ԿՏՊԲ-ն իր կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով զարգացնում է տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը, ստեղծում օպտիմալ պայմաններ՝ ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ՝ (էլեկտրոնային ուսուցում) խթանելով նաև երկակի ուսուցման մոդելի ներդրմանը:

ԿՏՊԲ-ն իրականացնում է միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրով մասնագետների պատրաստում հետևյալ մասնագիտություններով.

1. 1041.01.5-«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»

Որակավորումը՝ տեխնիկ-կարգավար՝ տրանսպորտում փոխադրումների կազմակերպման և կառավարման (ըստ տրանսպորտի տեսակների)

2. 0411.01.5 - «Հաշվապահական հաշվառում»

Որակավորումը՝ հաշվապահ

3. 0613.01.5 - «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»

Որակավորումը՝ տեխնիկ-ծրագրավորող

4. 0212.01.5 - «Դիզայն»

Որակավորումը՝ դիզայներ

5. 0413.06.5 - «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»

Որակավորումը՝ մենեջեր զբոսաշրջության ծառայությունների սպասարկման

6. 0811.03.5 - «Ջերմատնային տնտեսություն»

Որակավորումը՝ տեխնիկ-ագրոնոմ

7. 0732.10.4 - «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» (նախնական մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան)

Որակավորումը՝ փականագործ՝ գազի սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման և 2018թ-ից

8. 0911.01.5 - «Ատամնատեխնիկական գործ»

Որակավորումը՝ ատամնատեխնիկ

9. 0913.02.5 - «Քույրական քործ»

Որակավորումը՝ բուժքույր/բուժեղբայր

10. 0916.01.5 - «Դեղագործություն»

Որակավորումը՝ դեղագործ

Նշված բոլոր բաժիններում ուսուցումը իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով և ուսուցման առկա ձևով: Հեռակա ուսուցումը իրականացվում է միայն 1041.01.5- «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտությամբ: Ընդունելության ժամանակ ԿՏՊԲ-ն հեռակա բաժնում դիմորդ չի ունենում: Առկա բաժնից անցում է կատարվում հեռակային՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում (հիմնականում ՀՀ ԶՈԲ-ից գորացրված ուսանողները): Հեռակա բաժնում ուսուցումը կատարվում է մոդուլային դասընթացի ծրագրի տեսական մասի 30% -ի չափով:

2019-2020 թթ. երկրորդ կիսամյակից (համավարակի (COVID-19) պայմաններից ելնելով) ԿՏՊԲ-ն անցել է հեռավար ուսուցման: Նաև նախկինում հեռավար դասընթացի փորձ է արվել (հիբրիդային ծրագրով) 0413.06.5 - «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունում:

Քոլեջի ուսումնական գործընթացը կազմակերպվում է առկա ուսուցմամբ հիմնական կրթության (9-ամյա) հիմքով (ուսման տևողությունը 3 կամ 4 տարի) և միջնակարգ կրթության (12-ամյա) հիմքով (ուսման տևողությունը 2 կամ 3 տարի): Քոլեջում ընդունելությունն իրականացվում է առանց քննությունների՝ մրցութային կարգով (բացառությամբ դիզայն և բժշկական ոլորտային), դպրոցի ավարտական վկայականի գնահատականների հաշվառմամբ:

Բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները կարող են առանց ընդունելության քննությունների կրթությունը շարունակել պետական բուհերում՝ երկրորդ կուրսից (հեռակա և առկա):

Առարկայի (մոդուլի) ուսումնական ծրագիրը հիմնական կրթական ծրագրի պարտադիր մասն է և դասավանդվող առարկայի (մոդուլի) նյութը, ուսումնական պարապմունքների տեսակները և ժամային բաշխվածությունը կանոնակարգող հիմնական ուսումնամեթոդական փաստաթուղթը: ԿՏՊԲ-ում մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված բոլոր առարկաների (մոդուլների) մշակման, վերանայման, հաստատման գործընթացն իրականացվում է համաձայն «Առարկաների (մոդուլների) ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման» կանոնակարգի:

Առարկայի (մոդուլի) ծրագիրը վերանայելու, մշակելու, գնահատելու և հաստատելու համար հիմք են ընդունվում լիազոր մարմինների (ԿԳՄՄՆ) որոշումները, հրամանները, գրությունները: Քոլեջի դասխոսական կազմի և ամբիոնների համար ուսումնական ծրագրի առկայությունը պարտադիր է տվյալ առարկայի (մոդուլի) ուսումնառությունը կազմակերպելու համար:

Նոր առարկայի (մոդուլի) ծրագրերը կազմելու համար նախաձեռնող կողմերն են՝

ա. ամբիոնը
բ. տվյալ դասընթացը պարապող դասախոսները
գ. ուսումնամեթոդական խորհուրդը:

Ուսումնական ծրագիրը կազմվում է առարկան (մոդուլը) դասավանդող մասնագետների կողմից: Ծրագրերը կազմելիս ամբիոնի դասախոսները պետք է առաջնորդվեն պետական կրթական չափորոշիչներով, տվյալ մասնագիտության ուսումնական պլանով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գրություններով: Ծրագիրը համարվում է ընդունված, եթե այն համապատասխանում է պետական կրթական չափորոշիչների պահանջներին, ուսումնական պլաններին: Ամբիոնի նիստում հավանության արժանացած ուսումնական ծրագիրն ուղարկվում է ուսումնամեթոդական խորհուրդ՝ քննարկման և կառավարման խորհուրդ՝ հաստատման համար:

Առարկայական ուսումնական ծրագրի կառուցվածքը ներառում է առարկայի նպատակը, խնդիրները և բովանդակությունը, որը պետք է համապատասխանի մասնագիտությունների ուսումնական պլաններին և պետական կրթական չափորոշիչներին: Դասընթացի (մոդուլի) ծրագրերը կազմելիս ՄՈՒՀ-ն առաջնորդվում է ՊԿԶ-ներով, որոնք փոփոխության ենթակա չեն: Մոդուլային ծրագրերը մշակելիս անհրաժեշտության դեպքում հնարավոր է կատարել ժամային և բովանդակային փոփոխություններ: ՄՈՒՀ-ը կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետների կարողություններին և հստություններին ներկայացվող պահանջները, որոշելով նաև առարկայի կամ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում տեսական և գործնական պարապմունքների ժամաքանակները:

Հանրակրթական առարկաների ծրագրերի մշակումն իրականացվում է ավագ դպրոցների ծրագրերի հիման վրա: Ընտրովի առարկաների ծրագրերը մշակելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ տվյալ առարկան պետք է նպաստի ուսանողների հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Առարկայական ծրագրի նախագիծը մշակվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության կողմից, ինքնուրույն կամ տվյալ առարկայի օրինակելի ծրագրի հիման վրա:

ԿՏՊԲ-ն ունի անհրաժեշտ նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ՝ իր կրթական ծրագրերն արդյունավետ իրականացնելու նպատակով:

Մասնավորապես՝ պաշտոնական էլեկտրոնային փոստ՝ statecollege@list.ru, պաշտոնական կայք՝ www.kptc.am, որտեղ զետեղված են՝ ԿՏՊԲ-ի կանոնադրությունը, ռազմավարական

ծրագիրը, կանոնակարգերը, ընթացակարգերը, հայտարարությունները, քոլեջի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտեր, մասնագիտական տեղեկություններ, միջոցառումների վերաբերյալ տեսաֆիլմեր, նկարներ և այլն:

ԿՏՊԲ-ի աշխատանքային գործունեությունը լուսաբանվում է նաև ֆեյսբուքյան էջի միջոցով՝ «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ»: Քոլեջի ստորաբաժանումները համալրված են համակարգչային տեխնիկայով և ինտերնետ կապով:

ՄԿԾ-ների պահանջների բավարարման նպատակով քոլեջը պարբերաբար թարմացնում է առկա նյութատեխնիկական բազան՝ ապահովելով նաև մասնագիտական ուսուցման պատշաճ միջավայր՝ արդիական արվեստանոց-արհեստանոց-լաբորատորիաներով, մասնագիտական կաբինետներով, որտեղ ուսանողների համար ստեղծված են լավագույն պայմանները որակյալ կրթություն ստանալու համար:

ՄԿԾ-ների պահանջների բավարարման նպատակով քոլեջը հատկացնում է անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, որոնք գոյանում են պետբյուջեից, ինչպես նաև լրացուցիչ այլ աղբյուրներից՝ ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներ, օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներ, ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումներ, դրամաշնորհներ, վարկեր, ՀՀ համայնքների բյուջեներ:

ՄԿԾ-երի արդյունավետ գործարկման համար քոլեջն ունի որակյալ մարդկային ռեսուրսներ, համապատասխան, բազային և բարձրագույն կրթությամբ դասախոսական և ուսումնասովորողական կազմ: Դասախոսական կազմը իր մասնագիտական հմտությունների կատարելագործման, թարմացման նպատակով պարբերաբար վերապատրաստվում է:

Ծրագրերի համապատասխանությունը ՊԿԶ-ին և ուսումնական պլանին վերահսկվում է ամբիոնի վարիչի կողմից: Ստուգման արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում:

Պարբերաբար իրականացվում է ծրագրերի արդյունավետության գնահատում մասնագետների կողմից: Գնահատման արդյունքները ներկայացվում են ամբիոնների և ուսումնամեթոդական խորհրդի նիստերի քննարկմանը: Եթե տվյալ առարկայի համար առկա է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համապատասխան բաժնի կողմից կազմված և երաշխավորված ծրագիր, ապա դասախոսն իրավունք ունի օգտագործելու այն և նոր ծրագրի կազմումը պարտադիր չէ: Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվում աշխատաշուկայի առանձնահատկությունները (ընտրովի առարկա, պահուստային ժամեր):

ՄԿԾ-երի արդյունավետության մշտադիտարկումը և բացթողումների վերհանումը, գնահատումը, բարելավմանն ուղղված միջոցառումների մշակումը, դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման առաջարկությունների և երաշխավորությունների մշակումը իրականացնում է ուսումնական մասը՝ իր գործառույթների շրջանակներում:

ՀԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հիմքեր

Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները (Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար)

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ներքոլեջային կրթաթոշակների սահմանման և տրամադրման կանոնակարգ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ (փոփոխություն)

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ(փոփոխություն)

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ (փոփոխություն)

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ

Հարցումների անցկացման կանոնակարգ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն

0613.01.5

	Ուսումնառության արդյունքները	Դասավանդման մեթոդները	Ուսումնառության մեթոդները
1	Գիտական հետազոտություններում և նախագծային աշխատանքների ընթացքում տեխնոլոգիական, տնտեսական և սոցիալական համակարգերի կառավարման մեջ, ինչպես նաև մարդու հումանիտար գործունեության բնագավառներում հաշվիչ մեքենաների, համակարգչային նամակարգերի և ցանցերի	Մտազրոհ T-աձև մեթոդ M-աձև մեթոդ Փոխգործուն նշանների համակարգ Քառափուլ մեթոդ Ռեֆլեքսիա Անհատական աշխատանք Թեթևացնող մեթոդ(պրեզենտացիա)	Անատական աշխատանք Աշխատանքների ստուգատես Ընկալում, ունկրնդում, իմաստավորում, վարժություններ, գործնական աշխատանքներ

	<i>միջոցների կիրառում և մեթոդների ու տեխնոլոգիաների մշակում</i>		
2	<i>Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ու ծրագրային ապահովման կատարելագործում, հարակից աշխատանքներ(համակարգչային ճարտարապետություն, տվյալների շտեմարանի կառուցվածք, ալգորիթմների մշակում)</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
3	<i>Հաշվողական միջոցների և դրանց համակարգերի տեխնիկական զարգացմանն առնչվող մշակումների մասակցում</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
4	<i>Օգտվողների հարցումների և տեխնիկական միջոցների հնարավորությունների հիման վրա հաշվողական տեխնիկայի միջոցների և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման պահանջների և առանձնահատկությունների մշակում</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
5	<i>Համակարգիչները և դրանց համակարգերը կիրառելիս հաշվողական միջոցների աշխատանքը վերահսկող և տեխնիկական ու ծրագրային ապահովման փոխադարձ կապը պահպանող ծրագրերի ու տվյալների մշակում, գրառում ու թարմացում</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
6	<i>Գիատական փաստաթղթերի և հաշվետվությունների պատրաստում</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
7	<i>Լուծվող խնդիրների նպատակների, արդյունքներին ներկայացվող պահանջներն ուսումնասիրելու, հաշվիչ մեքենաներով մշակման ենթակա</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>

	<i>տեղեկատվության ծավալների, կառուցվածքի, աղբյուրների, դրանց մուտքագրման, մշակման, պահպանման, տրամադրման և վերահսկման մանրօրինակների և կառուցակարգերի որոշում</i>		
8	<i>Մաթեմատիկական մոդելների և ալգորիթմների օգնությամբ խնդիրների նկարագրում, բարձր մակարդակի ծրագրավորման և մեքենայական լեզուներով ծրագրերի կազմում և գրառում</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
9	<i>Մշակված ծրագրերի մշակում փորձարկում, շտկում և ճշտում</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
10	<i>Ավտոմատացված ծրագրավորման մեթոդների, տիպային և ստանդարտ ծրագրերի, կառավարող, մշակող, սպասարկող ծրագրերի, դրանց օգտագործման հրահանգների, մուտքային ալգորիթմական լեզուների մշակում</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
11	<i>Հաշվողական համակարգերի համանմանեցում, տեսակավորում, դրանց կիրառման տրիույթն ընդլայնելու աշխատանքների կատարում</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
12	<i>Համակարգչային ծրագրերի և փաստաթղթերի սպասարկում, նորացում, ճշտում՝ ըստ համապատասխան մուտքային և ելքային տվյալների փոփոխման և հաշվողական համակարգերի կառուցվածքի և առանձնահատկությունների</i>	<i>//-//</i>	<i>//-//</i>
<i>0413.01.5</i>			
	<i>Ուսումնառության արդյունքները</i>	<i>Դասավանդման մեթոդները</i>	<i>Ուսումնառության մեթոդները</i>
1	<i>Զբոսաշրջիկներին սպասարկող աշխատակազմի աշխատանքային գրաֆիկի կազմում</i>	<i>Մտազրոհ T-աձև մեթոդ M-աձև մեթոդ Ռեֆլեքսիա Անհատական</i>	<i>Անհատական աշխատանք Աշխատանքների ստուգատես Խմբային աշխատանք Ընկալում, ունկրնդրում,</i>

		<i>աշխատանք Վեննի դիագրամ Խմբային աշխատանք Դերային խաղ Բանավեճ</i>	<i>Խմաստավորում, Վերլուծություն, համադրում, համեմատում</i>
2	Զբոսաշրջիկների սպասարկման մեթոդների և ձևերի կատարելագործմանը ուղղված ռազմավարության մշակում	//-//	//-//
3	Ստորաբաժանման աշխատանքի մարտավարության մշակում	//-//	//-//
4	Ստորաբաժանման աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունների մշակման աշխատանքներին մասնակցում	//-//	//-//
5	Օժանդակ կադրերի բաժնի նոր աշխատակցի ընտրում և նոր ընդունված աշխատակիցներին աշխատանքային պայմաններին ու կանոնակարգին ծանոթացում	//-//	//-//
6	Զբոսաշրջիկներին սպասարկող աշխատակազմի աշխատանքային պարտականությունների կատարման հետևում	//-//	//-//
7	Զբոսաշրջիկներին պատշաճ մակարդակով սպասարկման ապահովում	//-//	//-//
8	Զբոսաշրջային արդյունքի համակարգում, կազմակերպում, ղեկավարում, իրացում, սպասարկում	//-//	//-//
9	Զբոսաշրջիկների բողոքների նկատմամբ հետևողականություն	//-//	//-//

10	Զբոսաշրջային խմբի դիմավորում և ճանապարհում	//-//	//-//
11	Էքսկուրսիաների և արշավների կազմակերպում	//-//	//-//
12	Շրջագայության և էքսկուրսիաների ընթացքում զբոսաշրջային խմբին առաջնորդում և ուղեկցում	//-//	//-//
13	Շրջագայության ընթացքում մատուցվող ծառայությունների որակյալ կատարման ապահովում	//-//	//-//
1041.01.05			
1	Ավտոմեքենայի անվտանգ շահագործման ապահովում	//-//	//-//

ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈւԱ) համապատասխանությունը (անհրաժեշտության դեպքում ավելացնել տողերը և սյուները)

0413.01.5

	Դասընթացի անվանում	ՈւԱ1	ՈւԱ2	ՈւԱ3	ՈւԱ4	ՈւԱ5	ՈւԱ6	ՈւԱ7	ՈւԱ8	ՈւԱ9	ՈւԱ10	ՈւԱ11	ՈւԱ12	ՈւԱ13
1	Հայոց լեզու	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
2	Հայ գրականություն		+									+		+
3	Հայոց պատմություն		+									+		+
4	Հասարակագիտություն		+					+						+
5	Օտար լեզու	+	+					+		+	+	+	+	+
6	Ռուսաց լեզու	+	+					+		+	+	+	+	+
7	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր	+	+		+				+			+		
8	Երկրաչափություն		+									+		
9	Բնագիտական առարկա 1/Ֆիզիկա/											+		+
10	Բնագիտական առարկա 2/Քիմիա/											+		+
11	Բնագիտական առարկա 3/Կենսաբանություն/											+		+
12	Բնագիտական առարկա 4/Աշխարհագրություն/		+									+	+	+
13	Ինֆորմատիկա և SՏՏ	+	+	+		+	+			+				
14	Ֆիզիկուլտուրա		+									+		+
15	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն		+									+	+	+
16	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	+	+			+		+	+	+	+	+	+	+
17	Տնտեսագիտության հիմունքներ	+	+	+										
18	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ.		+							+	+	+		
19	Պատմություն											+		+
20	Իրավունքի հիմունքներ	+	+			+	+							
21	Էկոլոգիա և լանդշաֆտագիտության հիմունքներ	+	+									+		+
22	Քաղ պաշտպանություն և արտակարգ իրավիճ.	+	+									+	+	+

	Հիմնահարցեր													
23	Հաղորդակցություն	+	+				+		+		+			
24	Անվտանգություն և առաջին օգնություն	+	+								+	+	+	+
25	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ	+	+	+	+	+	+	+	+					
26	Հաղորդակցում օտար լեզվով-1	+	+						+		+	+	+	+
27	Հաղորդակցում օտար լեզվով-2	+	+						+		+	+	+	+
28	Երկրագիտություն		+											
29	Համակարգչային օպերատր և մասնագիտական գործունեություն	+	+											
30	Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով-1	+	+											
31	Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով-2	+	+											
32	Մասնագիտական հաղորդակցում օտար լեզվով-3	+	+											
33	Սպասարկման ծառայությունների կազմակերպում օտար լեզվով	+	+											
34	Սպասարկման ոլորտի մասնագիտական նյութի եռալեզվյան գործնական թարգմանություն	+	+											
35	Մասնագիտական հայոց լեզուն` պատմա-ճարտարատական և մշակութային բնագավառներում	+	+											
36	Մասնագիտական հայոց լեզուն` զբոսաշրջության ծառայությունների կազմակերպման ոլորտում	+	+											
37	Մասնագիտական հայոց լեզուն` հյուրանոցային ծառայությունների կազմակերպման ոլորտում	+	+											
38	Մասնագիտական հայոց լ` միջոցառումների և այլ ծառայությունների սպասարկման ոլորտում	+	+											

39	Ծառայությունների կազմակերպման հիմքը և իրավական կարգավորումը	+	+											
40	Կիրառական տնտեսագիտություն և գործարար հմտություններ	+	+											
41	Մարքեթինգային հմտություններ	+	+											
42	Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ	+	+											
43	Գործարար հաղորդակցման հմտություններ	+	+		+	+		+						
44	Ղեկավարման հմտություն, հոգեբանություն և սպասարկման էթիկա	+	+	+	+	+	+	+	+	+				
45	Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարում	+	+		+	+							+	+
46	Զբոսաշրջության և զբոսաշրջային ծառայությունների ճանաչողություն	+	+						+				+	+
47	Զբոսաշրջության ոլորտի միջազգային կարգավորումները		+					+	+					
48	Զբոսաշրջային ռեսուրսներ	+	+									+	+	+
49	Զբոսաշրջային կազմակերպությունները և դրանց ծառայությունների իրացումը	+	+					+	+	+	+	+		
50	Ճանապարհորդությունների կազմակերպման գործաբանություն	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
51	Հիմնական ծառայությունների կազմակերպումը հյուրանոցներում	+	+					+	+	+				
52	Հասարակական սննդի կազմակերպման ծառայությունները	+	+						+			+		+
53	Փոխադրման ծառայությունները զբոսաշրջության մեջ	+	+									+		
54	Ձեռներեցություն	+	+											
55	Ընտովի Գործարար հաղորդակցություն	+	+											

1041.01.5		ՌԻԱ
1	Հայոց լեզու	+
2	Հայ գրականություն	
3	Հայոց պատմություն	
4	Հասարակագիտություն	
5	Օտար լեզու	+
6	Ռուսաց լեզու	+
7	Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր	
8	Երկրաչափություն	
9	Բնագիտական առարկա 1/Ֆիզիկա/	
10	Բնագիտական առարկա 2/Քիմիա/	+
11	Բնագիտական առարկա 3/Կենսաբանություն/	
12	Բնագիտական առարկա 4/Աշխարհագրություն/	
13	Ինֆորմատիկա և SՀS	
14	Ֆիզկուլտուրա	+
15	ՆՁՊ և անվտանգ կենսագործունեություն	+
16	Օտար լեզու	+
17	Ռուսաց լեզու	+
18	Ֆիզկուլտուրա	+
19	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	+
20	Տնտեսագիտության հիմունքներ	
21	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքն.	

22	Պատմություն	
23	Իրավունքի հիմունքներ	+
24	Էկոլոգիա և լանդշաֆտագիտության հիմունքներ	+
25	Քաղ պաշտպանություն և արտակարգ իրավիճ. հիմնահարցեր	
26	Հաղորդակցություն	+
27	Անվտանգություն և առաջին օգնություն	+
28	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ	+
29	Համակարգչային օպերատորություն	
30	Ճարտարագիտական գրաֆիկա	
31	Գծագրական երկրաչափություն	
32	Համակարգչային գրաֆիկա	
33	Կիրառական մեխանիկա	
34	Նյութագիտության հիմունքներ	
35	Ավտոմոբիլային ճանապարհներ	+
36	Միասնական տրանսպորտային համակարգեր	
37	Բեռնման-բեռնաթափման աշխատանքների կազմակերպում	
38	Ավտոտրանսպորտային միջոցներ և շարժիչներ	+
39	Ավտոշահագործական նյութեր	+
40	Ավտոտրանսպորտի օրենսդրություն	
41	Ավտոմոբիլի շասի, շարժահաղորդակ կառավարման համակարգ	+
42	Մարքեթինգ և կառավարում ավտոտրանսպորտում	
43	Լոգիստիկայի հիմունքներ	

44	Ավտոսերվիս	+
45	Ճանապարհային երթևեկ կազմակերպում և անվտանգություն	+
46	Ճանապարհային երթևեկության կանոններ	+
47	Ավտոմեքենայի անվտանգ վարման հմտություններ	+
48	Բեռնատար ավտոմոբիլային փոխադրումներ	
49	Ուղևորատար ավտոմոբիլային փոխադրումներ	
50	Միջպետական փոխադրումների կազմակերպում	
51	Տրանսպորտային աշխատանքների հաշվետվություն և արդյունքների գնահատում	
52	Տրանսպորտի տեսակների համագործակցություն	
53	Ձեռներեցություն	
57	ԸՆՏՐՈՎԻ Ավտոմեքենայի վարման հնարքներ	

	0613.01.5	ՌՍ1	ՌՍ2	ՌՍ3	ՌՍ4	ՌՍ5	ՌՍ6	ՌՍ7	ՌՍ8	ՌՍ9	ՌՍ10	ՌՍ11	ՌՍ12
	Դասընթացի անվանում												
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	+			+		+						
2	Տնտեսագիտության հիմունքներ	+					+						
3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ												
4	Իրավունքի հիմունքներ				+		+						
5	Պատմություն				+		+						
6	Ռուսաց լեզու				+		+						
7	Օտար լեզու	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
8	Ֆիզիկական կուլտուրա												
9	Էկոլոգիայի և լանդշաֆտագիտության հիմունքներ				+		+						
10	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր				+		+						
11	Հաղորդակցություն				+		+						
12	Անվտանգություն և առաջին օգնություն												
13	Մաթեմատիկական անալիզի հիմունքներ							+	+				
14	Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի կիրառությունները							+	+				
15	Անալիտիկ երկրաչափության տարրերը							+	+				
16	Ալգորիթմների տարրերի կիրառումը		+					+	+	+		+	
17	Ծրագրավորման հիմունքներ							+	+	+	+		
18	ԷՀՄ ճարտարապետություն		+	+		+							
19	Միկրոպրոցեսորներ		+	+		+							
20	Օպերացիոն համակարգեր		+	+	+	+							+
21	Տեքստային և գործարար փաստաթղթերի մշակման ու ներկայացման տեխնոլոգիա						+						+
22	Էլեկտրոնային աղյուսակներ						+						+
23	Կիրառական հավելվածների ստեղծման միջոցներ									+	+		

24	Դիսկրետ մաթեմատիկայի հիմունքներ							+	+				
26	Դիսկրետ մաթեմատիկայի կիրառությունները տնտեսության տարբեր ոլորտներում							+	+	+			
27	Գծային հանրահաշվի տարրերը և ֆունկցիոնալ հավասարումների լուծման մոտավոր մեթոդները							+	+				
28	Ինտերպոլացիա և դիֆերենցիալ հավասարումների լուծման թվային մեթոդներ							+	+				
29	Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն							+	+				
30	Արտադրության կազմակերպում												
31	Կազմակերպության մարքետինգային գործունեություն												
32	Կառավարման գործունեության կազմակերպում												
33	Օբյեկտ կողմնորոշված ծրագրավորման կողմի մշակում							+	+	+	+		
34	Օբյեկտ կողմնորոշված մոդելի կիրառում							+	+	+	+		
35	Տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ	+	+										+
36	Գրաֆիկական ինտերֆեյսի ծրագրավորում							+		+	+		
37	Համակարգչային ցանցեր, սարքավորումներ, ինֆորմացիայի պաշտպանությունը և հասցեավորման համակարգը ցամաքներում	+		+	+								+
38	WEB տեխնոլոգիաների կիրառումը									+	+		
39	Ռեյսցիոն տվյալների բազաների նախագծում									+	+		
40	Ռեյսցիոն տվյալների բազաների ծրագրավորման էլեմենտները									+	+		
41	WEB ծրագրավորում									+	+		

ուսումնառության վերջնարդյունքների հիման վրա՝ կախված դասընթացի նպատակից և դասընթացի ձևից:

Ուսումնառության նյութը կազմվում է տվյալ մոդուլի համապատասխան արդյունքի կատարման չափանիշներին համապատասխան ուսումնառության համար:

Ուսումնառության նյութը նախատեսված է ուսանողների համար, ուսումնառության նյութերը կազմելիս անհրաժեշտ է պահպանել 2 հիմնական պայման.

1. Նյութում պետք է պարտադիր ներգրավված լինի այն ամենը, ինչը անհրաժեշտ կլինի ուսանողին նոր դասի յուրացման համար:

2. Նյութում չպետք է ներգրավված լինի նոր դասի այն մասը, ինչին կարող է ուսանողը ինքնուրույն հասնել՝ օգտագործելով 1-ին կետում նշված և նախորդ դասերի ընթացքում ստացած տեղեկությունները:

Ուսումնառության նյութը տրվում է յուրաքանչյուր ուսանողի: Ուսումնառության նյութի վերնագրային մասում նշվում է.

Մոդուլի անվանումը

Արդյունքի անվանումը

Թեմայի անվանումը

Դասի անվանումը

Դասի նպատակը

Դասավանդման նյութը կազմվում է դասախոսի համար: Այն իր բովանդակությամբ նման է ուսումնառության նյութին, բայց ուսանողի համար անհրաժեշտ, սակայն դասախոսի համար էական նշանակություն չունեցող մանրամասներ չի պարունակում: Դասավանդման նյութը կարող է այլ մանրամասներ պարունակել, որոնք տվյալ դասախոսի տեսանկյունով իր համար կարևոր կլինեն տվյալ դասը անցկացնելու համար: Ընդհանրապես ուսումնառության և դասավանդման նյութերը ցանկալի է քննարկել համապատասխան ամբիոններում և տալ եզրակացություն՝ դրանք կիրառելու մասին:

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացման նպատակով կիրառվում են հետևյալ ընթացակարգերը՝ դասավանդման և ուսումնառության ռեսուրսների առկա բազայի ուսումնասիրում և գրանցում, դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդյունավետության գնահատում շահակիցների շրջանում, ուսանողների և դասախոսների շրջանակում հարցումների կազմակերպում՝ դասավանդման և ուսումնառության ռեսուրսների և նյութերի արդյունավետության մակարդակի վերաբերյալ:

Այս նպատակներին է ուղղված նաև դասալսումների անցկացումը ամբիոններում, որոնց ընթացքում համապատասխանաբար արձանագրվում և գնահատվում են դասախոսների մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպչական, ուսանող-դասախոս հարաբերությունների ձևավորման ունակությունները՝ դասը կազմակերպելու և վարելու ժամանակակից մեթոդների կիրառումը, ինչպես նաև դասավանդման և ուսումնառության նյութերի արդյունավետության գնահատումը:

Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգի համաձայն վեր է հանվում նաև ուսանողների կողմից դասախոսների մասնագիտական պատրաստվածության մանկավարժական որակների մասին իրենց ընկալումները :

Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացման նպատակն է՝ բարձրացնել և կատարելագործել կրթական գործընթացի որակը, ուսանողի ուսումնառության որակը, դասավանդման որակը, ուսանողի կրթական վերջնարդյունքներին հասնելու որակը, ուսանողների պատրաստվածության մակարդակը, ապահովել դասավանդման գործընթացը ժամանակակից տեխնիկական միջոցներով, ապահովել ուսանողներին արդիական ուսումնամեթոդական բազայով, պարբերաբար վերանայել և թարմացնել ուսումնառության և դասավանդման նյութերը:

Ուսումնառության ժամանակակից ռեսուրսները բաժանվում են հետևյալ տեսակների՝ տպագիր նյութեր (դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասավանդման նյութեր և այլն),

էլեկտրոնային կրթական ռեսուրսներ (ցանցային կրթական ռեսուրսներ, էլեկտրոնային ուսումնամեթոդական ռեսուրսներ և այլն), աուդիովիզուալ նյութեր (սլայդներ, սլայդ-ֆիլմեր, ուսումնական ֆիլմեր և այլն), ցուցադրական նյութեր (մակետներ, մոդելներ), լաբորատոր սարքեր (մասնագիտական սարքեր լաբորատոր պարապմունքների համար, դիդակտիկ նյութեր):

Դասավանդման /ուսումնառության/ մեթոդների վերանայման և արդիականացման համար իրականացվում է դրանց մշտադիտակում և գնահատում: Մշտադիտարկումը իրականացվում է քոլեջում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի /մոդուլի/ ծրագրի ուսումնասիրման, թերությունների վերհանման, արձանագրման և դրանց շտկման նպատակով: Գնահատումը ենթադրում է առարկայի /մոդուլի/ ծրագրում ներառված դասավանդման /ուսումնառության/ մեթոդների դասընթացի նպատակների և ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանության ստուգումը և գնահատումը՝ նախապես սահմանված գնահատման չափանիշների հիման վրա:

Դասախոսները մշտապես կատարելագործում են իրենց կողմից կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Մասնավորապես՝

0413.06.5 - «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողները «Զբոսաշրջություն և զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» առարկայի շրջանակներում քոլեջի հյուրանոցային սենյակում մասնակցել են «Տուր-օպերատոր- զբոսաշրջիկ- սպասարկող» դերային խաղի մեթոդով անցկացված դասին, որի ընթացքում վերջիններս ձեռք են բերել գործնական հմտություններ ու յուրացրել անհրաժեշտ գիտելիքները:

ԶՍՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈւՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ (փոփոխություն)
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ (փոփոխություն)
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ

Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար ներկայացնել ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները

	Ուսումնառության արդյունք	Գնահատման մեթոդ
1	Գիտական հետազոտություններում և նախագծային աշխատանքների ընթացքում տեխնոլոգիական, տնտեսական և սոցիալական համակարգերի կառավարման մեջ, ինչպես նաև մարդու հումանիտար գործունեության բնագավառներում հաշվիչ մեքենաների, համակարգչային նամակարգերի և ցանցերի միջոցների կիրառում և մեթոդների ու	Մասնակցություն Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Գործընկերների գնահատում

	<i>տեխնոլոգիաների մշակում</i>	
2	<i>Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ու ծրագրային ապահովման կատարելագործում, հարակից աշխատանքներ(համակարգչային ճարտարապետություն, տվյալների շտեմարանի կառուցվածք, այգորիթմների մշակում)</i>	<i>Առաջադրանք Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Ինքնաստուգում, փոխստուգում</i>
3	<i>Հաշվողական միջոցների և դրանց համակարգերի տեխնիկական զարգացմանն առնչվող մշակումներին մասակցում</i>	<i>Առաջադրանք Մասնակցություն Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Ինքնաստուգում, փոխստուգում</i>
4	<i>Օգտվողների հարցումների և տեխնիկական միջոցների հնարավորությունների հիման վրա հաշվողական տեխնիկայի միջոցների և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման պահանջների և առանձնահատկությունների մշակում</i>	<i>Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Պորտֆոլիո</i>
5	<i>Համակարգիչները և դրանց համակարգերը կիրառելիս հաշվողական միջոցների աշխատանքը վերահսկող և տեխնիկական ու ծրագրային ապահովման փոխադարձ կապը պահպանող ծրագրերի ու տվյալների մշակում, գրառում ու թարմացում</i>	<i>Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ</i>
6	<i>Գիատական փաստաթղթերի և հաշվետվությունների պատրաստում</i>	<i>Առաջադրանք Պորտֆոլիո Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Ինքնաստուգում, փոխստուգում</i>
7	<i>Լուծվող խնդիրների նպատակների, արդյունքներին ներկայացվող պահանջներն ուսումնասանելու, հաշվիչ մեքենաներով մշակման ենթակա տեղեկատվության ծավալների, կառուցվածքի, աղբյուրների, դրանց մուտքագրման, մշակման, պահպանման, տրամադրման և վերահսկման մանրորինակների և կառուցակարգերի որոշում</i>	<i>Առաջադրանք Վարքագծի գնահատում աշխատանքում Պորտֆոլիո Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Ինքնաստուգում, փոխստուգում</i>
8	<i>Մաթեմատիկական մոդելների և այգորիթմների օգնությամբ խնդիրների նկարագրում, բարձր մակարդակի ծրագրավորման և մեքենայական լեզուներով ծրագրերի կազմում և գրառում</i>	<i>Առաջադրանք Մասնակցություն Պորտֆոլիո Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Ինքնաստուգում, փոխստուգում</i>
9	<i>Մշակված ծրագրերի մշակում փորձարկում, շտկում և ճշտում</i>	<i>Առաջադրանք Վարքագծի գնահատում աշխատանքում Պորտֆոլիո Հմտությունների թեստ</i>

		Գործնական առաջադրանքներ Ինքնաստուգում, փոխստուգում
10	Ավտոմատացված ծրագրավորման մեթոդների, տիպային և ստանդար ծրագրերի, կառավարող, մշակող, սպասարկող ծրագրերի, դրանց օգտագործման հրահանգների, մուտքային արժեքի մասին լեզուների մշակում	Առաջադրանք Պորտֆոլիո Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Ինքնաստուգում, փոխստուգում
11	Հաշվողական համակարգերի համանմանեցում, տեսակավորում, դրանց կիրառման տրիույթն ընդլայնելու աշխատանքների կատարում	Առաջադրանք Պորտֆոլիո Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ
12	Համակարգչային ծրագրերի և փաստաթղթերի սպասարկում, նորացում, ճշտում՝ ըստ համապատասխան մուտքային և ելքային տվյալների փոփոխման և հաշվողական համակարգերի կառուցվածքի և առանձնահատկությունների	Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Ինքնաստուգում, փոխստուգում
	0413.06.5	
	Ուսումնառության արդյունքները	Գնահատման մեթոդ
1	Զբոսաշրջիկներին սպասարկող աշխատակազմի աշխատանքային գրաֆիկի կազմում	Դերային խաղ Բանավոր հարցում Գործնական առաջադրանքներ Տեսանյութերի պատրաստում Հմտությունների թեստ
2	Զբոսաշրջիկների սպասարկման մեթոդների և ձևերի կատարելագործմանը ուղղված ռազմավարության մշակում	Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք
3	Ստորաբաժանման աշխատանքի մարտավարության մշակում	Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք
4	Ստորաբաժանման աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունների մշակման աշխատանքներին մասնակցում	Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն

		<p>Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք</p>
5	<p>Օժանդակ կադրերի բաժնի նոր աշխատակցի ընտրում և նոր ընդունված աշխատակիցներին աշխատանքային պայմաններին ու կանոնակարգին ծանոթացում</p>	<p>Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք</p>
6	<p>Զբոսաշրջիկներին սպասարկող աշխատակազմի աշխատանքային պարտականությունների կատարման հետևում</p>	<p>Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք</p>
7	<p>Զբոսաշրջիկներին պատշաճ մակարդակով սպասարկման ապահովում</p>	<p>Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք</p>
8	<p>Զբոսաշրջային արդյունքի համակրգում, կազմակերպում, դեկավարում, իրացում, սպասարկում</p>	<p>Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք</p>
9	<p>Զբոսաշրջիկների բողոքների նկատմամբ հետևողականություն</p>	<p>Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք</p>
10	<p>Զբոսաշրջային խմբի դիմավորում և ճանապարհում</p>	<p>Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում</p>

		Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք
11	Էքսկուրսիաների և արշավների կազմակերպում	Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք
12	Շրջագայության և էքսկուրսիաների ընթացքում բնաշրջային խմբին առաջնորդում և ուղեկցում	Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք
13	Շրջագայության ընթացքում մատուցվող ծառայությունների որկյալ կատարման ապահովում	Խմբային աշխատանք Դերային խաղ Անհատական առաջադրանք Ուսումնական հետազոտություն Բանավոր հարցում Գրավոր գնահատում Ռեֆերատ Գործնական առաջադրանք
	1041.01. 05	
1	Ավտոմեքենայի անվտանգ շահագործման ապահովում	Բանավոր հարցում Խմբային աշխատանք Հմտությունների թեստ Գործնական առաջադրանքներ Գրավոր գնահատում
<p>Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</p> <p>ԿՏՊԲ-ում գրագողության դեմ կիրառվում են մի շարք մեթոդներ՝ անհատական մոտեցում, հարց ու պատասխան, բանավոր հարցում, կազմվում են նոր գնահատման թերթիկներ:</p>		

ԿՏՊԲ-ն ունի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ:

Գիտելիքների գնահատման կանոնակարգի նպատակն է բացահայտել մոդուլների /առարկաների/ դասավանդման ընթացքում ուսումնառողի ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերջնարդյուքների որակական ձևավորումը:

ԿՏՊԲ-ում գնահատումն իրականացվում է ուսումնառության ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և ուսումնառության ավարտին (ամփոփիչ ավարտական ատեստավորում):

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումներն իրականացվում են դասախոսի կամ ուսումնական հաստատության կողմից՝ ըստ ուսումնական մոդուլների (առարկաների), և գրանցվում են դասամատյանում, այնուհետև քննական ամփոփագրում:

Մոդուլների գնահատման արդյունքում ընդունվում է վերջնական որոշում. «անցել է» կամ «չի անցել», թեև գնահատման գործընթացների շրջանակներում ուսանողների կատարած աշխատանքը կարող է ստանալ որոշակի միավորներ՝ ըստ նախապես սահմանված սանդղակի:

Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) մոդուլի (առարկաների) արդյունքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում:

բ) ամբողջ մոդուլի (առարկայի) եզրափակիչ գնահատում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի (առարկայի) համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում:

Պրակտիկայի գնահատումը բազմագործոնային է: Այն կատարվում է դասախոսի կամ մեթոդիստի կողմից պրակտիկայի օրագրի պարտադիր առկայությամբ: Գնահատման բաղադրիչները հետևյալն են. հաճախումներ, տեսական գիտելիքների գործնական կիրառում, կազմակերպչական աշխատանք: 50%-ից ավելի բացակայությունների դեպքում ուսանողի պրակտիկան գնահատվում է անբավարար:

Ստուգարքային և քննական ամփոփագրերը կազմվում են ուսումնական մասում, վավերացվում են տնօրենի և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից և կնքվում հաստատության կնիքով: Ստուգարքային և քննական ամփոփագրերը տրամադրվում են դասախոսական կազմին ստուգարքի կամ քննության սկսվելուց անմիջապես առաջ և վերադարձվում են ուսումնական մաս ստուգարքի կամ քննության ավարտից անմիջապես հետո:

Ստուգարքին կամ քննությանը պարտավոր է ներկայանալ ստուգման գրքույկով, և տվյալ դասընթացի դասախոսը պատասխանատվություն է կրում ստուգման գրքույկի և ստուգարքի կամ քննական ամփոփագրի գրանցման համապատասխանության համար:

Գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և որակական (ուսուցանող) ձևերով:

ԿՏՊԲ-ում կիրառվում են գնահատման տարբեր ձևեր, որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի:

Սիավոր	Անվանում
10	«բացառիկ»
9	«զերազանց»
8	«շատ լավ»
7	«լավ»
6	«միջինից բարձր»
5	«միջին»
4	«բավարար»
3	«անբավարար»
2	«վատ»
1	«շատ վատ»

Գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքների արդյունքները (այդ թվում՝ ինքնաստուգումներ (0613.1.5), ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ ստուգումներ, հետազոտական-ստեղծագործական աշխատանքը, ուսումնա-հասարակական նախագծեր, ուսումնական ճամփորդություններ, հայրենագիտական արշավներ, ստեղծագործական ստուգատեսներին, օլիմպիադաներին, այդ թվում՝ մեդիա, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցություն): Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում:

ԿՏՊԲ-ում ուսանողների գիտելիքների ստուգումն իրականացվում է կամ դասավանդող դասախոսի կամ հանձնաժողովի կողմից: Գիտելիքների ստուգման համար նախատեսված են որոշակի չափանիշներ, որոնք կատարվում են ըստ գնահատման կանոնակարգի:

Ստուգարքային և քննական ամփոփագրերը կազմվում են ուսումնական մասում, վավերացվում են տնօրենի և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից և կնքվում հաստատության կնիքով: Ստուգարքային և քննական ամփոփագրերը տրամադրվում են դասախոսական կազմին ստուգարքի կամ քննության սկսվելուց անմիջապես առաջ և վերադարձվում են ուսումնական մաս ստուգարքի կամ քննության ավարտից անմիջապես հետո:

Ստուգարքին կամ քննությանը ուսանողը պարտավոր է ներկայանալ ստուգման գրքույկով, և տվյալ դասընթացի դասախոսը պատասխանատվություն է կրում ստուգման գրքույկի և ստուգարքի կամ քննական ամփոփագրի գրանցման համապատասխանության համար: Եթե ուսումնական պլանով նախատեսված է հանրագումարային ստուգում իրականացնել քննության միջոցով, ապա վերջինիս համար մշակվում են հարցատոմսեր՝ համաձայն ծրագրում ընդգրկված քննական հարցերի, վավերացվում են համապատասխան ամբիոնի վարիչի, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից և պահվում են ամբիոններում: ԿՏՊԲ-ն յուրաքանչյուր ուսանողի համար նրա ընդունման պահից սկսած վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ստացած գնահատականներ՝ ըստ առարկաների, մոդուլների և կիսամյակների:

Հանրագումարային ամփոփումների անցկացման ձևի և բովանդակության ցանկացած փոփոխություն պետք է քննարկվի ամբիոնում կամ ամբիոնների համատեղ նիստում և հաստատվի տնօրենի կողմից:

Բոլոր գրավոր քննությունները (ստուգողական աշխատանքները) կատարվում են շտամպած տետրում, իսկ մոդուլների արդյունքների ամփոփումները՝ դասախոսի կողմից տրված գնահատման թերթիկներում կամ որոշ մոդուլների արդյունքների գնահատման դեպքում՝ տետրերում:

ԿՏՊԲ-ն յուրաքանչյուր ուսանողի համար նրա ընդունման պահից սկսած վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ստացած գնահատականներ՝ ըստ առարկաների, մոդուլների և կիսամյակների:

Դասախոսները ամբիոնների վարիչների հսկողությամբ կատարում են փոխադարձ

դասալսումներ, որի արդյունքում կատարվում է գնահատման մոտեցումների փորձի համեմատական վերլուծություն: Այս համեմատական վերլուծությունները քննարկվում և գրանցվում են ամբիոնների արձանագրությունների գրքերում, դասալսումների մատյան: Այն նապատում է դասախոսների միջև փորձի փոխանակման և գնահատման մոտեցումների զարգացմանը:

Ընթացիկ ստուգման ժամանակ դասախոսը դիտարկում է գործնական պարապմունքներին ուսանողի պատրաստվածության մակարդակը, ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքը, ուսումնական նյութի յուրացման աստիճանը, լսարանային աշխատանքներին մասնակցության մակարդակը:

Ստուգումների անցկացման նպատամար հսկողությունն իրականացնում է ուսումնական մասը և համապատասխան ամբիոնը:

Եթե ուսանողները կարողանում են ցուցադրել, որ բավարարում են որակավորման չափորոշչով սահմանված պահանջներին, նրանք ստանում են համապատասխան որակավորում: Եթե նրանք չեն բավարարում վերոնշյալ պահանջները կամ մասամբ են բավարարում դրանք, նրանք պետք է զարգացնեն իրենց հմտություններն ու կարողությունները, որից հետո դիմեն կրկնակի գնահատման ըստ կանոնակարգի կարող են նաև բողոքարկել, սակայն մինչ օրս բողոքարկում չի եղել:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր	<u>«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u>
--------	--

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր

	Երկիր, հաստատություն	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019	2019-2020
1						
2						
3						
4						
5						
6						
7						

	<i>Երկիր, հաստատություն</i>	<i>2015-2016</i>	<i>2016-2017</i>	<i>2017-2018</i>	<i>2018-2019</i>	<i>2019-2020</i>
1						
2						
3						
4						
5						
6						
7						



	<i>Երկիր, հաստատություն</i>	<i>2015-2016</i>	<i>2016-2017</i>	<i>2017-2018</i>	<i>2018-2019</i>	<i>2019-2020</i>
1						
2						
3						
4						
5						
6						

Դասավանդողների արտահոսք

	<i>Երկիր, հաստատություն</i>	<i>2015-2016</i>	<i>2016-2017</i>	<i>2017-2018</i>	<i>2018-2019</i>	<i>2019-2020</i>
1						
2						
3						
4						
5						
6						
7						

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/։ Բնչքանտ՝ վ է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությունը:

Որպես տարածաշրջանային, բազմագործառնությային հաստատություն՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը մարզի միջին և նախնական մասնագիտական 10 ուսումնական հաստատությունների հետ 2012 թվականին կնքել է մտադրությունների հուշագիր, որով համաձայնել են.

- *Բոլոր հաստատությունների անդամակցությամբ ձևավորել Կոտայքի մարզի նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանց, որի գործունեության հիմնական նպատակներն են՝ Կոտայքի մարզում ՄԿՈՒ հեղինակության, վարկանիշի և գրավչության, դրա որակի, հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացումը և սոցիալական գործընկերության ընդլայնումը,*
- *Առավելագույնս համագործակցել հետևյալ բնագավառներում՝*
 - ✓ *ՄԿՈՒ համակարգի մարդկային ռեսուրսների կարողությունների շարունակական հզորացում՝ հաստատությունների կառավարման խորհուրդների անդամների, վարչական համակարգի և դասավանդողների փորձի փոխանակման ու վերապատրաստման, ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացման միջոցով,*
 - ✓ *Ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակում և ներդրում՝ պետական կրթական չափորոշիչների պահանջների տեղայնացման և իրականացման միջոցով,*
 - ✓ *Գործատուների հետ համագործակցության ընդլայնումը՝ մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպման և իրականացման գործընթացում,*
 - ✓ *Կարիերայի կենտրոնների ստեղծում առանձին հաստատություններում և մասնագիտական կողմնորոշմանա շխատանքների իրականացում,*
 - ✓ *Եվրոպականերկրների ՄԿՈՒ հաստատությունների համագործակցության լավագույն փորձի ուսումնասիրում,*
 - ✓ *ՄԿՈՒ ոլորտում գործունեություն իրականացնող այլ, այդ թվում՝ արտասահմանյան ՄԿՈՒ իրավաբանական անձանց և ցանցերի հետ համագործակցության հաստատում:*

ՉԱՓՈՂՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր

- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն
- «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ (փոփոխություն)
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ
- Հարցումների անցկացման կանոնակարգ
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի արարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ(փոփոխություն)
- Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջն ունի հարուստ ավանդույթներ և մեծ ներուժ՝ որակյալ միջին մասնագիտական ուսուցում իրականացնելու համար: Այդ նպատակով քոլեջը կատարելագործում է ուսուցման գործընթացը՝ հիմք ունենալով ուսուցման ակտիվ ուսանողակենտրոն մեթոդների ներդրումը, մասնագիտական կրթության բնագավառում ժամանակակից մոտեցումների կիրառումը, հմտությունների և կարողությունների ձևավորմանը միտված ուսումնական փաստաթղթերի և նյութերի մշակումը:

ԿՏՊԲ-ն իր կրթական ծրագրերի և կրթական գործընթացների որակի բարելավման, արդիականությունը ապահովելու նպատակով իրականացնում է մասնագիտական ծրագրերի մշտադիտարկում՝ աշխատաշուկայի հաճախակի փոփոխվող պայմաններում:

Մասնագիտությունների ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության մշտադիտարկումը և բացթողումների վերհանումը, գնահատումը բարելավմանն ուղղված միջոցառումների մշակումը կատարում է ուսումնական մասը՝ իր գործառույթների շրջանակներում:

ԿՏՊԲ-ն իր առջև խնդիր է դրել գործող մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացում գնահատել և վերագնահատել ՀՀ ՈԱԾ-ի բնութագրիչներին ՄԿԾ-ների վերջնարդյունքների համապատասխանությունը, դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, վերլուծել արտաքին և ներքին շահակիցների բավարարվածությունը սվյալ ծրագրերից, բացահայտել թերացումները, ծրագրերի ուժեղ և թույլ կողմերը, նախաձեռնել բարելավումներ՝ ելնելով վերլուծության արդյունքներից:

Առարկայական ծրագրերը մշակելիս հաշվի են առնվում աշխատաշուկայի ժամանակակից պահանջները, տարածաշրջանի առանձնահատկությունները:

Ուսումնական ծրագրերը փոփոխելիս հաշվի են առնվում գործատուների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազոր մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները:

Պարբերաբար իրականացվում է նաև ծրագրերի արդյունավետության գնահատում մասնագետների կողմից: Գնահատման արդյունքները ներկայացվում են ամբիոնների և ուսումնամեթոդական խորհրդի նիստերի քննարկմանը:

Մասնագիտական պետական չափորոշյին համապատասխան կրթական ծրագրերի

իրագործման հետ կապված հարցերը քննարկվում են նաև մանկավարժական խորհրդի նիստերում:

ՄԿԾ-ների գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը վերանայվում են յուրաքանչյուր հինգ տարին մեկ՝ լիազոր մարմինների կողմից:

Օրինակ՝ վերանայման գործընթացներից մեկի արդյունքում հաշվի առնելով 3 գործընկեր-հյուրանոցների պահանջները, ուսումնական պլանից հանվել են այն մոդուլներ, որոնց հետ կապված տվյալ գործատուները պահանջ չեն ներկայացրել:

Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

Յուրաքանչյուր 5 տարին մեկ ՄԿՈԻԶԱԿ-ը անց է կացնում մի շարք ՊԿԶ-ների վերանայումներ: Նման վերանայումները հնարավորություն են ընդձեռնում իրականացնել ծրագրերի գնահատում և կատարել ՄԿԾ-ների էական փոփոխություններ՝ ըստ անհրաժեշտության: Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային սպահովում մասնագիտության «ԷՀՄ ճարտարապետություն», «Ալգորիթմների հիմունքներ», «Օպերացիոն համակարգ» մոդուլներում եղել են կրկնվող արդյունքներ, որոնք ՄԿՈԻԶԱԿ-ի վերանայումից հետո ենթարկվել են փոփոխությունների:

Միաժամանակ հայտնվում է, որ «Գերմանիայի միջազգային համագործակցություն ընկերության» (ԳՄՀԸ) աջակցությամբ և ՀՀ կրթության և գիտության նախարարության երաշխավորությամբ դուրս կրթության համակարգի տարրերը միջին մասնագիտական կրթության ծրագրերում փորձարարական կարգով ներդնելու նպատակով Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում ձևավորված աշխատանքային խումբն ուսումնասիրել և վերլուծել է քոլեջում իրականացվող 0413.06.5 «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության 0413.06.01.5-«Մենեջեր՝ զբոսաշրջության ծառայությունների սպասարկման» որակավորմամբ պետական կրթական չափորոշիչը, 0413.05.5 «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտության մոդուլային ծրագրերը և ուսումնական պլանները:

Պատրաստվող մասնագետի մասնագիտական գործունեության բնութագրի հիման վրա վերանայվել և մշակվել են մասնագիտության ուսումնական պլանը՝ հիմնական ընդհանուր և միջնակարգ կրթության հիմքով, ինչպես նաև մոդուլային ծրագրերը քոլեջի դասախոսների և գործատուների համատեղ ջանքերով:

Վերոնշյալ աշխատանքների և վերլուծության արդյունքում աշխատանքային խումբն առաջարկել է ներքոնշյալ մեթոդաբանությունն ու գործողությունները 0413.06.5-«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունը դուրս կրթական մոդելով կազմակերպելու համար.

1. 0413.06.01.5-«Մենեջեր՝ զբոսաշրջության ծառայությունների սպասարկման» որակավորմամբ պետական կրթական չափորոշչում և մոդուլային ծրագրում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

Ընդհանուր մասնագիտական մոդուլներից.

- ԶՄՄՄ-5-19-003-«Երկրագիտություն» մոդուլը հանվել է ուսումնական պլանից
- ԶՄՄՄ-5-19-004-«Համակարգչային օպերատորություն և մասնագիտական գործունեություն» մոդուլի որոշ կատարման չափանիշներ տեղափոխվել է ԶՄՄՄ-5-19-026-«Հյուրանոցներում կիրառվող ամրագրման գործընթացի կազմակերպման համակարգչային ծրագրերի իմացություն» մոդուլի մեջ
- ԶՄՄՄ-5-19-010 «Մասնագիտական հայոց լեզուն՝ պատմաճարտարապետական և մշակութային բնագավառներում», ԶՄՄՄ-5-19-012 «Մասնագիտական հայոց լեզուն՝ հյուրանոցային ծառայությունների կազմակերպման ոլորտում», ԶՄՄՄ-5-19-011

«Մասնագիտական հայոց լեզուն՝ զբոսաշրջության ծառայությունների կազմակերպման ոլորտում», ՁԾՄՄ-5-19-013 «Մասնագիտական հայոց լեզուն՝ միջոցառումների և այլ ծառայությունների սպասարկման ոլորտում» մոդուլները միավորվել են մեկ մոդուլի մեջ և անվանվել ՁԾՄՄ-5-19-009 «Մասնագիտական հայոց լեզուն զբոսաշրջության ոլորտում»

- Ավելացվել է ՁԾՄՄ-5-19-013 «Հաշվապահական հմտություններ» մոդուլը
- ՁԾՄՄ-5-19-020 «Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարում» մոդուլը կատարման չափանիշների տեսքով ավելացվել է ՁԾՄՄ-5-19-014 «Կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ» մոդուլի 5-րդ արդյունքի մեջ
- Ավելացվել է ՁԾՄՄ-5-19-020 «Ազգային, մշակութային և կրոնական առանձնահատկությունների ճանաչողություն» մոդուլը:

Հատուկ մասնագիտական.

ՁԾՄՄ-5-19-023 «Զբոսաշրջային ռեսուրսներ» մոդուլը հանվել է ուսումնական պլանից

- Ուսպլանում ավելացվել է ՁԾՄՄ-5-19-022 «Լրացուցիչ ծառայությունների կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մոդուլը
- Ուսպլանում ավելացվել է ՁԾՄՄ-5-19-024 «Միջոցառումների (MICE) կազմակերպում և սպասարկում» մոդուլը
- Ուսպլանում ավելացվել է ՁԾՄՄ-5-19-026 «Հյուրանոցներում կիրառվող ամրագրման գործընթացի կազմակերպման համակարգչային ծրագրերի իմացություն» մոդուլը
- Փոփոխությունների արդյունքում փոփոխվել են մոդուլների դասիչների թվային հաջորդականությունը
- Պրակտիկայի ժամերը (30 շաբաթ) համամասնորեն բաշխվել են ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների վրա

ՄԿԾ-ների մշտադիտարկման, գնահատման և վերանայման գործընթացները կրում են շարունակական բնույթ՝ արդյունավետության ապահովման նպատակով:

Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • ԿՏՊԲ-ում գործարկվող կրթական ծրագրերը համապատասխանում են հաստատության առաքելությանը և ռազմավարական նպատակներին՝ ապահովելով տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստում, աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ կրթական ծառայությունների ձկունություն /օրինակ՝ «Ջերմատնային տնտեսություն», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունների ներդրում՝ տարածաշրջանի պահանջներից ելնելով/: • ԿՏՊԲ-ն իր կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով զարգացնում է տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը, ստեղծում օպտիմալ պայմաններ՝ ցանկացած տեղում և ցանկացած 	<ul style="list-style-type: none"> • Բենչմարքինգի բացակայություն նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող առաջատար ՄՈՒՀ-երի հետ՝ ուսանողների և դասավանդողների փոխանակման ծրագրեր իրականացնելու նպատակով:

<p>ժամանակ՝ (էլեկտրոնային ուսուցում) խթանելով նաև երկակի ուսուցման մոդելի ներդրմանը:</p> <p>Մասնավորապես՝ 2019 թվականից քոլեջում իրականացվում է ԴՈՒԱԼ կրթական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս ուսանողներին երկակի կրթություն ստանալ ինչպես քոլեջում, այնպես էլ գործատուի մոտ՝ համադրելով տեսական և գործնական գիտելիքները, ձեռք բերելով անհրաժեշտ աշխատանքային հմտություններ:</p> <ul style="list-style-type: none"> • Բարձր վարկանիշ տարածաշրջանում՝ արդյունավետ գործարկվող կրթական ծրագրերի շնորհիվ: • ԿՏՊԲ-ն ունի անհրաժեշտ նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ՝ իր կրթական ծրագրերն արդյունավետ իրականացնելու նպատակով: • Քոլեջն ունի բավարար ֆինանսական ռեսուրսներ՝ նեղ մասնագիտական վերապատրաստումներ իրականացնելու համար: • Քոլեջն ունի ՄԿԾ-ների, դասավանդման, ուսումնառության մեթոդների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեխանիզմներ /դասախոսներ, հարցումներ և այլն/: • Արտաքին և ներքին շահակիցների հետ համագործակցություն՝ կրթական ծրագրերի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման նպատակով: • ԿՏՊԲ-ում գրագործության դեմ կիրառվող մեթոդների առկայություն /անհատական մոտեցում, հարց ու պատասխան, բանավոր հարցում և այլն/: • Դասավանդման որակից և արդյունավետությունից, ուսումնառությունից ուսանողների և շրջանավարտների բավարարվածության գնահատում հարցումների միջոցով շարունակական բարելավման նպատակով: • Կարճաժամկետ և լրացուցիչ կրթական ծրագրերի մատուցում՝ նյութատեխնիկական և մարդկային անհրաժեշտ ռեսուրսների շնորհիվ /Ավտոփականագործի և գազի սարքավորումների տեղադրման և կարգավորման դասընթաց, Արևային էներգիայի համակարգերի շահագործում և սպասարկում, Հաշվետար/: 	
<p>Հնարավորություններ</p>	<p>Ռիսկեր</p>
<ul style="list-style-type: none"> • ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից ՄԿԾ-ների վերանայման գործընթացի անցկացում, որը հնարավորություն է ընդձեռում իրականացնել ծրագրերի գնահատում և կատարել ՄԿԾ-ների էական փոփոխություններ՝ ըստ 	<ul style="list-style-type: none"> • Պատերազմական, արտակարգ իրավիճակներ, համավարակ: • Արտաքին շահակիցների, հիմնականում գործատուների

<p><i>անհրաժեշտության:</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>Տարածաշրջանի կրթական կարիքների ուսումնասիրությունից էլնելով նոր կրթական ծրագրերի և մասնագիտությունների ներդնման հնարավորություն:</i> • <i>Տեղական և միջազգային նոր համագործակցություններ՝ կրթական ծրագրերի կատարելագործման և արդիականացման նպատակով:</i> • <i>Արտաքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրություններ՝ հարցումների միջոցով:</i> 	<p><i>ոչ բավարար շահագրգռվածություն և մասնակցություն ԿԾ-ների շարունակական բարելավմանը:</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>աշխատաշուկայի հաճախակի փոփոխվող պայմաններ:</i>
--	--

Համագործակցության խթանում այլ առաջատար ՄՈՒՀ-երի հետ՝ ուսանողների և դասավանդողների փոխանակման ծրագրեր իրականացնելու, լավագույն փորձի ուսումնասիրման և ներդնման նպատակով:

Զարգացնել համագործակցությունը գործատուների հետ կրթական ծրագրերի բարելավման և իրենց կրթական կարիքների բավարարման նպատակով :

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով

Իր զարգացման ռազմավարական ծրագրի դրույթներին և որդեգրած առաքելությանը համապատասխան՝ ԿՏՊԲ-ն ձգտում է դառնալ տարածաշրջանային բազմագործառույթային կենտրոն՝ նպատակ ունենալով պատրաստել բարձրորակ, ժամանակակից հասարակության և տնտեսության պահանջներին համապատասխանող մասնագետներ, ովքեր ունակ կլինեն արդյունավետ աշխատելու աշխատաշուկայի փոփոխվող պայմաններում և կկարողանան լիարժեք կերպով իրացնել իրենց ներուժը:

Քոլեջը, համաքայլ լինելով կրթական համակարգի արդի պահանջներին, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր՝ կարևորելով ու բարձրացնելով ուսանողի ինքնուրույն աշխատանքի դերակատարությունը, նրա ներգրավվածությունը քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում: Կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով ուսանողակենտրոն համակարգում ուսանողն ընդունվում է որպես գործող սուբյեկտ և ոչ թե ներգործվող օբյեկտ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ոլորտային մասնագիտությունների գծով ըննությունների կազմակերպման, անցկացման և բողոքարկման ընթացակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կարիերայի ստորաբաժանման կանոնակարգ
 Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը՝ ըստ Աղյուսակ 1-ի
 ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020-ի հուլիսի 16-ի N 16-Ն հրամանը 2012-ի ապրիլի 5-ի N 254-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
 ՀՀ հառավարության 2020-ի հունիսի 25-ի N1045-Ն որոշումը 2013 -ի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին :
dimord.emis.am
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ներքոլեջային կրթաթոշակների սահմանման և տրամադրման կանոնակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների կարգապահական կանոններ

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:

Ուսանողների թիվը	2016	2017	2018	2019	2020
«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ըստ տրանսպորտի տեսակների	88	96	73	81	77
«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»	96	100	92	92	83

«Հաշվապահական հաշվառում»		65	59	59	50	64
«Դիզայն»		58	56	61	52	68
«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»		34	58	70	82	82
«Թարգմանություն և սպասարկման կազմակերպում»		23	6			
«Գազամատակարարման սարքերի և ստորգետնյա գազատարների շահագործում»		14				
«Ջերմատնային տնտեսություն»				18	39	59
«Գազամատակարարման սարքերի և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում»		44	37	49	50	53
«Քույրական գործ»						52
«Դեղագործություն »						21
«Ատամանատեխնիկ»						11
<i>Ուսումնառողների շարժունությունը</i>						
<i>Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով</i>						
<i>Ուսանողների արտահոսք</i>						
Հաստատություն/երկիր		2016	2017	2018	2019	2020
1	Վերադարձ դպրոց		2		1	
2						
3						
4						
5						
6						
7						
<i>Ուսանողների ներհոսք</i>						
Հաստատություն/երկիր		2016	2017	2018	2019	2020
1	Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ			1		
2	Չարենցավանի պետական քոլեջ					2
3						

4						
Հեռացումներ և վերականգնումներ						
	Ուսանողների թիվ	2015	2016	2017	2018	2019
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	23/ 5,7%	41/ 11,14%	63/ 16,98%	35/ 9,88%	37/ 9,3%
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	22/ 5,41 %	37/ 10,05%	53/ 14,28%	47/ 13,27 %	30/ 7,53%

Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման /մասնագիտական կողմնորոշման/ տարբեր մեխանիզմներ:

Սովորողներին իրազեկելու և մասնագիտական կողմնորոշման հարցում օժանդակելու նպատակով յուրաքանչյուր ուսումնական տարվա նախաշեմին՝ ապրիլ-մայիս ամիսներին այցելություններ են կատարվում տարածաշրջանի և հարակից գյուղերի բոլոր դպրոցներ, հանդիպումներ են կազմակերպվում աշակերտների, նրանց ծնողների հետ, որոնց ժամանակ տրամադրվում է համապատասխան տեղեկատվություն քոլեջի յուրաքանչյուր մասնագիտության վերաբերյալ, տարածվում են բուկլետներ, սահիկաշարերի միջոցով ներկայացվում են քոլեջի կողմից մատուցվող ծառայությունները: Ուսանողների հավաքագրման նպատակով արվում են նաև հեռուստատեսային հայտարարություններ, կազմակերպվում են բաց դռների օրեր:

Քոլեջն ունի ակտիվ գործող ֆեյսբուքյան էջ, ինչը նույնպես ուսանողների հավաքագրման արդյունավետ մեխանիզմներից է: Այդտեղ տեղադրվում են քոլեջի գործունեությունը լուսաբանող զանազան նյութեր, տեղեկատվական և գովազդային հայտարարություններ, հրապարակվում են իրականացված աշխատանքները: Անհրաժեշտ տեղեկատվությունն առկա է նաև քոլեջի պաշտոնական կայքում՝ www.kptc.am: Ուսանողների հավաքագրման և քոլեջի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տարածելու համար համացանցի կիրառումը չափազանց արդյունավետ գործիք է: Հասկապես արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ ընդունելության գործընթացը կազմակերպվել և անցկացվել է էլեկտրոնային եղանակով, ընդունելության դիմում-հայտերն ներկայացվել են dimord.emis.am կայքի միջոցով, քոլեջի ֆեյսբուքյան էջն առավել ակտիվ է գործել՝ ապահովելով տեղեկատվության մշտական հասանելիություն, արդյունավետ հետադարձ կապ:

ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստր գործակալության 2020թ. հունիսի 15-ի քաղվածքով Հրագրանի պետական բժշկական քոլեջը միացավ ԿՏՊՔ-ին, ինչը նպաստեց նոր մասնագիտությունների ավելացմանը և դիմորդների թվի աճին:

ԿՏՊՔ-ում գործում են ուսանողների ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: Ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգի համաձայն: Յուրաքանչյուր մասնագիտության համար հասկացվող տեղերի/վճարովի և անվճար/ քանակը հաստատվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով:

Ոլորտային մասնագիտությունների համար ընդունելությունն իրականացվում է քննությամբ («Դիզայն»-Գծանկար, «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» - Կենսաբանություն), իսկ ոչ ոլորտային մասնագիտությունների դեպքում ընդունելության հիմքը հիմնական կրթության վկայականների, միջոնակարգ կրթության ատեստատների կամ դիպլոմի ներդրի միավորներն են:

ԿՏՊՔ-ի ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է ԿՏՊՔ ընդունող հանձնաժողովը և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմը:

Ընդունող հանձնաժողովը, որն ապահովում է ընդունելության կազմակերպումն ու անցկացումը, դիմորդի՝ դիմում-հայտի լրացման ժամանակ տրամադրում է նաև անհրաժեշտ մասնագիտական կողմնորոշման, ընդունելության լրացուցիչ խորհրդատվություն:

Դիմորդների ընդունելությունն իրականացվում է ավարտական վկայականների գնահատականների հիման վրա՝ ապահովելով այդ գործընթացի արդարությունն ու թափանցիկությունը: Արդեն մի քանի տարի է քոլեջում ներդրված է ավարտական վկայականների միավորների հաշվարկման էլեկտրոնային համակարգը: Բացի այդ՝ ընդունելությունից հետո իրականացվում է տեսչական ստուգում, ապա ընդունվողների անձնական տվյալներն ուղարկվում են ԿԳՄՍ նախարարություն:

Ընդունելության թափանցիկությունն ապահովող կարևոր փաստ է նաև այն, որ ամեն տարի ոլորտային մասնագիտությունների ընդունելության քննությունների ժամանակ, դիմորդների ծնողներին հնարավորություն է տրվում հետևել քննական ընթացքին՝ անձամբ տեսնելով իրենց երեխաների աշխատանքները: Իսկ 2020-2021թթ. ուս.տարում ընդունելության քննությունների ժամանակ քննասենյակներում տեղադրվել են տեսախցիկներ՝ հնարավորություն ընձեռելով ծնողներին հետևելու քննական ընթացքին:

Աշխատակազմի ազնիվ գործելաճի և անկողմնակալ վերաբերմունքի արդյունքում ԿՏՊԲ-ում վերջին տարիներին ընդունելության քննությունների գնահատականների բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել:

Ուսանողների ընդունելության գործում մեծ դեր են խաղում քոլեջում գործող ուսուցման անվճար և վճարովի համակարգերը: Ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հատկացված տեղերի՝ ավարտական վկայականների բարձր առաջադիմությամբ դիմորդները ընդունվում են անվճար համակարգ: Ուսումնական հաստատությունում իրականացվում է փոխատեղում /ռոտացիա/՝ ըստ մասնագիտությունների, ինչը ուսանողների սովորելու գործընթացում կարևոր խթան է հանդիսանում: Գործում է նաև ուսման վարձերի զեղչման համակարգ, տրամադրվում են կրթաթոշակներ: Վարձավճարների զեղչման, ուսանողական նպաստների ու պետական կրթաթոշակների տրամադրումը կատարվում է ՀՀ կառավարության սահմանած կարգի համաձայն:

Ըստ ԿԳՄՍ նախարարի պաշտոնական թույլտվության /լիցենզիայի/ ԿՏՊԲ-ում հեռակա ուսուցում է իրականացվում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտության 6-րդ կիսամյակում (3 -րդ կուրս)՝ ըստ ուսանողների ցանկության ու կարիքի: Նախարարությունը սահմանային տեղեր է հատկացրել նաև «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությամբ հեռակա ուսուցում կազմակերպելու համար, սակայն անհրաժեշտ թվաքանակով /նվազագույնը 10-ը /դիմորդներ չունենալու պատճառով այն դեռևս չի իրականացվում:

Տարածաշրջանում քոլեջն ունի բարձր վարկանիշ, ինչի շնորհիվ վերջին տարիներին պահպանվում է դիմորդների կայուն թվաքանակ: Նույնիսկ արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ քոլեջը հնարավորություն չի ունեցել լիարժեք իրականացնել հավաքագրման ուղղությամբ աշխատանքներ, դիմորդների թվաքանակի նվազում ընդհանուր առմամբ չի գրանցվել:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել տվյալ խնդիրների լուծման տարբերակները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Վերջին 5 տարիների վերլուծությունների համաձայն, ուսանողների հեռացումների հիմնական պատճառներն են անհարգելի բացակայությունները, ուսման վարձավճարը չմուծելը, ուսումնական պարտքերը, քոլեջի ներքին կարգապահական կանոնների խախտումը: Անհարգելի բացակայությունների պատճառով ուսանողների հեռացումները կանխարգելելու նպատակով իրականացվում է վերահսկողություն, կուրսղեկների կողմից տարվում են արդյունավետ աշխատանքներ, պահպանվում է մշտական կապ ուսանողների ծնողների հետ:

Վարձավճարի պատճառով ուսանողների հեռացում քոլեջում շատ հազվադեպ է լինում,

որովհետև ուսանողներին հնարավորություն է տրվում վարձը վճարել ըստ ամիսների, ըստ կիսամյակների կամ ամբողջությամբ, անհրաժեշտության դեպքում՝ վարձավճարի փոխհատուցման հարցով դիմել աջակցող կազմակերպություններին: Ինչ վերաբերում է ուսումնական պարտքերի հետևանքով ուսանողների հեռացումներին, որպես խնդրի լուծման տարբերակ՝ մեծապես կարևորվում է լրացորցիչ խորհրդատվությունների նշանակությունը, կուրսդեկ-դասախոս- ծնող-ուսանող արդյունավետ համագործակցության դերը:

Ուսումը վերականգնող ուսանողների մեծաթիվ մասը բանակից գորացրվածներն են: Բանակ գորակոչվածների մեծ մասը ծառայությունից հետո վերականգնում են իրենց իրավունքները քոլեջում ուսումը շարունակելու համար: Քոլեջը հետևողական է և ժամանակին անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում ինչպես ծառայությունից վերադարձածներին, անպես էլ ծառայության մեկնողներին, որպեսզի փաստաթղթային ուշացումներ չլինեն:

Մինչ 2018 թվականը քոլեջում ուսուցումը կազմակերպվում էր առանց տարկետման իրավունքի, սակայն 2018թ.-ից նոր օրենքով ուսանողներին տրվում է տարկետում, և ուսանողը ստիպված չի լինում ընդհատել ուսումնառությունը զինծառայության մեկնելու պատճառով: Չնայած սրան՝ ուսանողներից շատերը չեն օգտվում ընձեռված հնարավորությունից:

ԶՄՓՈՂՈՇԻՉՔ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր

- [Ուսանողի ներքին կարգապահական կանոններ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական խորհրդի կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսական և ուսանողական համակազմից քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի անդամի առաջադրման և ընտրության ընթացակարգ](#)
- [Հարցումների անցկացման կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ](#)

Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողակենտրոն միջավայրի ապահովումը կարևոր պայման է քոլեջի համար, ուստի ուսանողների՝ որպես քոլեջի ներքին շահակիցների կարիքների վերհանումն ու դրանց բավարարումը քոլեջի կարևորագույն նպատակներից է:

Քոլեջի կանոնադրության համաձայն՝ ուսանողներն ընդգրկված են կառավարման խորհրդի կազմում (25%), ինչի շնորհիվ նրանք հնարավորություն ունեն բարձրացնել հարցեր, ներկայացնել առաջարկներ և ստանալ լուծումներ:

Կարիքների վերհանումն իրականացվում է նաև ուսանողական խորհրդի գործունեության միջոցով, որը ուսանողների շահերը ներկայացնող ու պաշտպանող ինքնավար մարմին է: Ուսխորհրդի 5 հանձնաժողովներից 2-ը՝ ուսանողների հետ կապի և տեղեկատվական, ինչպես նաև ուսումնամասնագիտական հանձնաժողովները, զբաղվում են նաև կրթական կարիքների վերհանմամբ:

Խնդիրների բարձրաձայնումը ուսանողների համար անկաշկանդ դարձնելու նպատակով քոլեջում տեղադրվել է բողոքների և առաջարկությունների արկղ, որը հնարավորություն է տալիս հանդես գալ առաջարկներով, բարձրացնել իրենց հուզող հարցերն ու խնդիրները:

Վերհանված հարցերը ներկայացվում են տնօրենին, քննարկվում և ստանում անհրաժեշտ լուծումներ: Կարիքների վերհանման այս տարբերակով քոլեջի որոշ լսարաններ, որոնք չունենին

հագուստի համար նախատեսված պատի կախիչներ, ինչպես նաև վնասված արևապաշտպան շերտավարագույրներ, ձեռք բերեցին դրանք: Ուսանողների առաջարկով և առարկայական կաբինետների օժանդակությամբ գործում են «Գրքասերների ակումբ» և «Հասարակագիտություն» առարկայի խմբակները: Կարևոր է նշել, որ այդ խմբակների շրջանակներում քննարկվող թեմաները հիմնականում ընտրվում են ուսանողների կողմից:

Քոլեջի ուսանողական խորհուրդը բավականաչափ ակտիվ գործող ենթակառույց է, որի միջոցով արդյունավետորեն վեր են հանվում ուսանողների կարիքներն ու խնդիրները: Տնօրենը մեծապես աջակցում է ուսանողական խորհրդի աշխատանքներին և նախաձեռնություններին, այդ թվում՝ ֆինանսապես: Ուսանողական խորհուրդը հիմնականում տեղեկացված է ուսանողների խնդիրներից և բարձրաձայնում է դրանք անհրաժեշտ տարբերակներով: Ուսխորհուրդը համագործակցում է տարբեր հասարակական կազմակերպությունների /«Միասնական Հրազդան», «Կոտայք ինֆոտուն», «Հայ օգնության միություն» և այլն/ հետ, մասնակցում նրանց նախաձեռնած սեմինար-դասընթացներին, խմբային աշխատանքներին, քննարկումներին, որոնց ժամանակ բարձրաձայնվում են նաև կրթության ոլորտին վերաբերող հարցեր:

Ուսանողները հանդես են գալիս նաև հետաքրքիր նախաձեռնություններով: Օրինակ՝ քոլեջի ուսխորհրդի մի շարք ներկայացուցիչներ, ովքեր «Կոտայք ինֆոտուն» անդամներ են, Հրազդան համայնքի ղեկավարին են ներկայացրել փողոցների նշագրման նախագիծ, որը ենթադրում էր Հրազդան քաղաքի կարևոր նշանակության կառուցներ տանող ճանապարհներին տեղադրել համապատասխան նշաններ: Նախագծի առաջարկը հավանության է արժանացել Հրազդան համայնքի քաղաքապետի կողմից և իրագործվել:

Ուսանողները ակտիվորեն մասնակցում են Կոտայքի մարզային գրադարանում տեղի ունեցող գրքերի քննարկումներին, միջոցառումներին, հանդիպում մշակույթի ներկայացուցիչների հետ:

Ուսանողները հիմնականում ակտիվ գործունեություն են ծավալում, նախաձեռնող են, իրականացնում են բազմաբնույթ միջոցառումներ: Օրինակ՝ 2019թ-ին քոլեջի ուսանողական խորհուրդը նախաձեռնել էր միջոցառում՝ նվիրված ուսանողի միջազգային օրվան: Նույն թվականին քոլեջի ուսխորհրդի կողմից առաջադրված 5 լավագույն ուսանողներ, ովքեր ուսման բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն են ցուցաբերել, ուսանողների միջազգային օրվա առթիվ Կոտայքի մարզպետի կողմից արժանացել են շնորհակալագրի և պարգևատրման:

Բացի վերոնշյալ օղակներից՝ ուսանողների կարիքները վեր են հանվում նաև ՈԱ ներքին կենտրոնի կողմից: Կենտրոնը պարբերաբար հարցումներ է իրականացնում ուսանողների շրջանում, որոնց միջոցով գնահատվում է ուսանողների բավարարվածության աստիճանը ուսումնական գործընթացի որակից, քոլեջի ռեսուրսներից, վեր են հանվում նոր խնդիրներ, նպաստելով դրանց լուծմանը /Հավելված 1/:

Ուսանողների կրթական կարիքների բացահայտման նպատակով մեծ աշխատանքներ են տարվում հատկապես կուրսդեկների կողմից: Կուրսդեկները կուրսդեկի ժամի շրջանակներում կազմակերպում են ուսանողների ռազմահայրենասիրական, քաղաքացիաիրավական, բարոյահոգեբանական, գեղագիտական, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակությանն ուղղված բազմաբնույթ աշխատանքներ՝ պահպանելով կուրսդեկ-դասախոս-ուսանող-ծնող սերտ համագործակցություն: Ըստ կուրսդեկների աշխատանքային պլանի՝ անցկացվում են ուսանողների առաջադիմությանը, կարգապահությանը, ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոններին իրազեկելուն ուղղված աշխատանքներ, ապահովում նաև ուսանողների մասնակցությունը ներքոլեջային և արտաքոլեջային տարբեր միջոցառումներին, բազմաբնույթ թեմաներով կուրսում կազմակերպվում են զրույցներ, բանավեճ-քննարկումներ, կատարվում այցեր՝ հոգևոր-մշակութային կառույցներ, պատմամշակութային կենտրոններ: Հեռավար ուսուցման պայմաններում կուրսդեկների կողմից անցկացվել են կուրսդեկի ժամեր, կազմակերպվել տարաբնույթ միջոցառումներ, որոնք լուսաբանվել են քոլեջի ֆեյսբուքյան էջում:

2020-2021թթ. ուս.տարվանից նախատեսվում է անցկացնել հարցումներ՝ կուրսղեկի աշխատանքների արդյունավետության գնահատման վերաբերյալ:

Ուսանողների կարիքների վերհանմանն ուղղված գործընթացները նպաստում են քոլեջի կողմից ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Ուսանողների կարիքների վերհանման, նրանց հուզող խնդիրների բացահայտման և լուծման գործընթացներն ունենալու են շարունակական բնույթ՝ ուսանողակենտրոն միջավայրի կատարելագործման և արդյունավետ ուսուցման գործընթացի ապահովման նպատակով:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Հիմքեր
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական կաբինետների կանոնակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)

Պատասխանել հետևյալ հարցին:	%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	83%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	83%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	72.6%	
Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվո՞ւմ են խորհրդատուներ:	√	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվո՞ւմ է:		

Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար ԿՏՊԲ-ն ստեղծում է խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ: Խորհրդատվական ծառայություններն հասանելի են բոլոր ուսանողներին: Կազմակերպվում են խորհրդատվություններ անհատական խմբային, ինչպես նաև կուրսղեկի ժամերի ընթացքում: Առաջնորդվելով կրթական ծրագրերի ուսումնական պլաններով և սահմանված ժամանակացույցով՝ ուսանողների համար համապատասխան խորհրդատվություն ապահովում են մասնագիտական ամբիոնները, առարկայական կաբինետները: Ուսումնական խորհրդատուները հիմնականում բանավոր զրույցների միջոցով խորհրդատվական պարապմունքներ են իրականացնում առավել հաճախ քննական առարկաների գծով: Քննաշրջանների նախաշեմին և ամփոփիչ աստեսավորումից առաջ

հստակ ժամանակացույցով դասախոսները կազմակերպում են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություններ: Խորհրդատվական պարապմունքները ներառում են նաև խորհրդատվություն և օժանդակ աջակցություն պրակտիկաների անցկացման, կուրսային և դիպլոմային աշխատանքների իրականացման գործընթացներում:

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքները նպատակ ունեն ուսանողներին տրամադրել լիարժեք և սպառիչ պատասխաններ՝ իրենց հուզող տարաբնույթ հարցերի վերաբերյալ, օգնել յուրացնելու դասավանդվող առարկայի դժվար հասկանալի թեմաները, բարեհաջող հանձնել քննությունները, աջակցել ուսանողների կողմից ինքնուրույն հետազոտական աշխատանքների արդյունավետ կատարմանը, և ամենակարևորը՝ նպաստել ուսումնական գործընթացի որակի բարելավմանը:

Դասախոսների կողմից իրականացրած արդյունավետ խորհրդատվական պարապմունքների արդյունքում քոլեջի ուսանողների առաջադիմության բարձրացում է նկատվում, ուսանողներն առավել արդյունավետ և խորքային ինքնուրույն հետազոտական աշխատանքներ են կատարում: Օրինակ՝ խորհրդատվությունների շնորհիվ ռեֆերատների թեմաների ճիշտ ընտրություն է կատարվում, պահպանվում է դրանց ճիշտ գրելաձևը, ձևի և բովանդակության միասնությունը, բացատրվում է դժվար յուրացվող նյութը, քննություններից առաջ ըստ հարցաշարերի կատարվում են քննարկումներ: Լրացուցիչ պարապմունքների դերը կարևորվում է նաև այն առումով, որ դասախոսը կարողանում է ուսանողին անհատական վերաբերմունք ցուցաբերել, ուսանողներն էլ ավելի լավ են ինքնադրսևորվում: Խորհրդատվությունների անցկացման օրվա, ժամի, խորհրդատվություններ իրականացնող դասախոսների մասին ուսանողները տեղեկանում են համապատասխան հայտարարությունների միջոցով /փակցվող հայտարարություններ, դասերի ընթացքում դասախոսների կողմից արվող հայտարարություններ և այլն/: Քոլեջի դասախոսների կողմից իրականացվող լրացուցիչ խորհրդատվական պարապմունքները ստեղծում են ուսանողների կրթական կարիքները բավարարելու լրացուցիչ հնարավորություններ:

Խորհրդատվական ծառայությունները արդյունավետ են և նպաստում են ուսանողների մասնագիտական գիտելիքների խորացմանը, բարձրացնում դասընթացների յուրացման արդյունավետությունը: Խորհրդատվական պարապմունքները ներկա պահին չեն փաստաթղթավորվում, սակայն նոր ուսումնական տարվանից նախատեսվում է խորհրդատվությունների վերաբերյալ գրառումներ պահպանել համապատասխան գրանցամատյանում, հսկել և վերլուծել ուսանողի առաջադիմության շարժը՝ խթանելով հետ մնացող ուսանողների առաջադիմության բարձրացումը:

Քոլեջի ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքների վերլուծությունները վկայում են այն մասին, որ ուսանողների մեծ մասը կարևորում է լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների դերն ու նշանակությունը և բավարարված է խորհրդատվություններից:

ԶՍՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈԻՉ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր	<p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների կարգապահական կանոններ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական կաբինետների կանոնակարգ (փոփոխություն)</u></p>
--------	--

Պատասխանել հետևյալ հարցին:	%
<p>Ուսանողների n ը տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:</p> <p>Ուսանողների n ը տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:</p> <p>Ուսանողների n ը տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:</p>	Հավելված 1

Վերլուծել լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ժամանակակից կրթության նոր՝ ուսանողակենտրոն միջավայրում ուսանողին ընդունելով որպես գլխավոր շահառու՝ ԿՏՊԲ-ն անհրաժեշտություն չի համարում ուսանողներին լրացուցիչ վարչական օժանդակություն և ուղղորդում տրամադրելու հատուկ կանոնակարգ և ժամանակացույց սահմանել: Վարչական կազմի հետ հանդիպումները իրականացվում են առանց ժամանակային սահմանափակման: Աշխատանքային բոլոր ժամերին՝ ուսանողը կարող է ստանալ իրեն հուզող հարցերի պատասխանը վարչական աշխատակազմի կողմից:

Յուրաքանչյուր ստորաբաժանում իր իրավասության շրջանակներում օժանդակում է ուսանողին, ուղղորդում և անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրում: Հիմնականում բոլոր ուսանողներն էլ տեղեկացված են վարչական ծառայությունների մասին, քանի որ տարբեր խնդիրներով ու հարցերով առնչվում են վարչական աշխատակազմի հետ: Տարաբնույթ հարցերով ուսանողները դիմում են հաշվապահություն, տնօրինություն, Կարիերայի ստորաբաժանում, ուսումնական մաս և այլ վարչական ստորաբաժանումներ, օգտվում են գրադարանի, բուժկետի ծառայություններից: Քոլեջի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներին ուսանողները կարող են ծանոթանալ «Ուսանողի անկյուն»-ի միջոցով, որը տեղադրված է բոլորի համար տեսանելի վայրում:

Վարչական կազմին ուղղված սովորողների հարցերի շրջանակը հիմնականում ներառում է քննաշրջանների, լուծարքների անցկացման ժամանակացույցը, ուսման վարձի հետ կապված խնդիրները, կրթաթոշակների ու շացումների և պրակտիկաների հետ կապված հարցերը, դասավանդողներից և դասընթացներից ունեցած առաջարկությունները, դժգոհությունները, անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերումը և այլն: Բոլոր հուզող հարցերի շուրջ վարչական աշխատակազմը ուսանողներին տրամադրում է համապատասխան օժանդակություն և ուղղորդում վերջիններիս:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կարիերայի ստորաբաժանման կանոնակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	70%
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	70%
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	58%

Վերլուծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ում արդյունավետորեն գործում է ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների պատասխանատու մարմինը՝ Կարիերայի ստորաբաժանումը:

Ստորաբաժանումն իր գործունեությունն իրականացնում է իր կանոնակարգի համաձայն՝ առաջնորդվելով տնօրինության կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանով:

Կարիերայի ստորաբաժանումը ուսանողներին ուղղորդող կենտրոն է, որի նպատակն է կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, կարիերայի՝ կրթության և ուղղորդման ծառայությունների իրազեկման և մատուցման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:

Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն կարիերայի խորհրդատուն է, ով պարտադիր ընդգրկվում է ընդունող հանձնաժողովի կազմում՝ ապահովելով կարիերայի արդյունավետ ուղղորդման ծառայությունների մատուցումն ուսանողներին:

Այն դիմորդներին, ովքեր դժվարանում են մասնագիտության կողմնորոշման հարցում, կարիերայի խորհրդատուն առաջարկում է մասնագիտական կողմնորոշման ծառայություններ՝ տրամադրելով մասնագիտական թեստեր, որոնք գրեթե 95% ճշգրտությամբ բացահայտում են անձի մասնագիտական ուղղվածությունը:

Կարիերայի ստորաբաժանումն իրականացնում է հետևյալ գործառնությունները .

ա. ուսանողներին կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության և ուղղորդման ծառայությունների մատուցում ինչպես անհատական եղանակով, այնպես էլ խմբային:

բ. ըստ անհրաժեշտության, ուսանողի անձնային որակների, նախասիրությունների, կարողությունների բացահայտում, անհատական ծրագրի կազմում,

գ. շարունակական և լրացուցիչ կրթության, ուսուցման, տնտեսության գերակա ոլորտների, աշխատաշուկայի վերլուծությունների և կանխատեսումների (տեղական, մարզային, հանրապետական և միջազգային), ինչպես նաև ըստ մասնագիտությունների զբաղմունքների մասին տեղեկատվության հավաքագրում և ուսանողներին ծանուցում,

դ. սոցիալական գործընկերների՝ գործատուների, արհմիությունների, աշխատանքային հաջողություններ ունեցող շրջանավարտների ներգրավում ուսանողների կարիերայի խորհրդատվության կազմակերպման աշխատանքներում,

ե. թափուր աշխատատեղերի, կամավորական և հասարակական աշխատանքների մասին հայտարարությունների հավաքագրում և ուսանողների ծանուցում,

զ. զբաղվածության պետական ծրագրերից օգտվելու նպատակով աշխատանք փնտրող ուսանողների ուղղորդում ԶՊԳ տարածքային կենտրոններ:

Կարիերայի ստորաբաժանումն ունի հաստատության տեսանելի վայրում տեղադրված, պարբերաբար թարմացվող տեղեկատվական անկյուն, նաև ուսանողների և շրջանավարտների կարիերայի ծառայություններից օգտվելու և աշխատանքի տեղավորման տվյալների գրանցման և մշտադիտարկման գործիքակազմ, որը պարբերաբար վերահսկվում է արտաքին և ներքին հաշվետվությունների ձևով:

Կենտրոնի կողմից կազմակերպվում են սեմինարներ, կլոր-սեղան քննարկումներ, կարիերայի օրեր, տեսանյութերի դիտում, ճանաչողական այցեր, հանդիպումներ քոլեջի այն շրջանավարտների հետ, ովքեր աշխատում են իրենց մասնագիտությամբ, հանդիպումներ զբաղվածության տարածքային կենտրոնի ներկայացուցիչների հետ, նաև գործատուների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում գործատուները ներկայացնում են այն որակական պահանջները, որոնք կարևորում են մասնագետների ընտրության հարցում:

Ուսանողների կարիերայի ուղղորդմանն նպատակով կարիերայի խորհրդատուն իրականացնում է դասընթացներ (հիմնականում ավարտական կուրսերում), որոնց շրջանակներում ուսանողները ձեռք են բերում աշխատաշուկայում մրցունակ աշխատանքային կենսագրություն (CV) կազմելու, աշխատավայրում ձիշտ դրսևորվելու, աշխատանքի տեղավորման հարցազրույցներին մասնակցելու որոշակի գիտելիքներ և կարողություններ:

Կարիերայի ստորաբաժանումն իրականացնում է ուսանողների մասնագիտական կողմնորոշման անհրաժեշտ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում ինչպես ողջ ուսումնառության ընթացքում, այնպես էլ ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո:

Քոլեջի աշխատելառձի առավելություններից կարելի է նշել այն, որ ստորաբաժանումն իր գործունեությունը ժամանակացույցի մեջ չի կադապարում, և ուսանողն իրեն հուզող հարցերով ցանկացած պահի կարող է դիմել կարիերայի խորհրդատուին:

Կարիերայի ստորաբաժանումը համագործակցում է տարբեր կազմակերպությունների և գործատուների հետ, ապահովում ուսանողների և շրջանավարտների հետ հետադարձ կապը: Ուսումնառությունն ավարտելուց հետո կարիերայի խորհրդատուն բոլոր շրջանավարտներին ուղղորդում է զբաղվածության տարածքային կենտրոն՝ գրանցվելու որպես աշխատանք փնտրողներ:

Կարիերայի ստորաբաժանումն 3-5 տարվա կտրվածքով հետևողականորեն կապ է պահպանում շրջանավարտների հետ՝ անընդհատ թարմացվող տեղեկատվության հասանելիությունն ապահովելով տարբեր միջոցներով /էլեկտրոնային եղանակով, տպագիր նյութերով, հանդիպումների միջոցով, հեռախոսային կապի միջոցով/: Այդ հարցում մեծապես օժանդակում են նաև կուրսղեկները:

Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը գնահատելու նպատակով յուրաքանչյուր դասընթացի ավարտին ստորաբաժանման պատասխանատուն անցկացնում է հարցում ուսանողների շրջանում և կատարում համապատասխան վերլուծություն:

Գնահատման թերթիկների արդյունքների ամփոփումը փաստում է, որ ստորաբաժանման կողմից իրականացրած աշխատանքները արդյունավետ են, գոհացնում են ուսանողներին: Կարիերայի ստորաբաժանման աշխատանքներից բավարարվածության գնահատման նպատակով հարցումներ է անկացվում նաև քոլեջի Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից:

Ուսանողների կարիերային նպաստում են նաև ԿՏՊՔ պրակտիկայի բաժնի գործունեությունը և ուսանողների անցկացրած պրակտիկաները, որոնք մասնագիտական ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչն են, հնարավորություն են տալիս ուսանողներին գործնականորեն դրսևորել իրենց գիտելիքները, ձեռք բերել մասնագիտական հմտություններ և փորձառություն:

Կան դեպքեր, երբ պրակտիկայի ընթացքում առավել բանիմաց, մասնագիտական բարձր որակներ դրսևորած ուսանողները ստանում են աշխատանքի առաջարկ, և այս դեպքում կրթությունն ու աշխատանքը համատեղվում են: Վերջին 5 տարիների տվյալներով ԿՏՊՔ շրջանավարտներից մի ուսանող էլ հենց քոլեջում է ընդունվել աշխատանքի՝ որպես դասախոս:

Կարիերայի ստորաբաժանման կողմից իրականացվող ծառայությունները գնահատելու և նրա գործունեությունը բարելավելու նպատակով քոլեջի ՈԱԿ-ը նույնպես անցկացնում է հարցումներ ուսանողների շրջանում: Ըստ հարցումների արդյունքների՝ ուսանողների գերակշիռ մասը լիարժեք բավարարված է կարիերայի կենտրոնի ծառայություններից

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հիմքեր [«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն](#)
[Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն](#)
[Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ](#)
[Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական կաբինետների կանոնակարգ \(փոփոխություն\)](#)

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

	Ուսումնառողներ	2016	2017	2018	2019	2020
	Բակալավր					
	Մագիստրոս					
	Հետազոտող					

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների

	Գիտահետազոտական ծրագիր	2016	2017	2018	2019	2020
1						
2						
3						
4						

Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը

	Տպագրված աշխատանք	2016	2017	2018	2019	2020
1						
2						
3						
4						
5						
6						

Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջում ուսանողներն կատարում են հետազոտական բնույթի տարբեր աշխատանքներ: Հետազոտական աշխատանքները նպատակ ունեն զարգացնել ուսանողների տրամաբանական, վերլուծական, դատողական, ինքնուրույն մտածելու, հետազոտելու կարողությունները: Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածությունը հիմնականում ապահովվում է դիպլոմային և անհատական աշխատանքներ գրելով, նախագծեր կազմակերպելով: Դիպլոմային նախագծեր նախատեսվում են «Դիզայն» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների ավարտական կուրսերում: Հաշվի առնելով ուսանողների հետազոտությունների շրջանակը՝ ուսանողներին հնարավորություն է տրվում առաջարկելու կամ ընտրելու նախընտրած թեման: Հետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողները ստանում են ինչպես դեկավար դասախոսի, այնպես էլ համապատասխան ամբիոնի մյուս դասախոսների, համապատասխան մասնագիտական կաբինետների ուղղորդումն ու խորհրդատվական աջակցությունը: Մյուս մասնագիտությունների ուսանողները կատարում են տարատեսակ ինքնուրույն աշխատանքներ, որոնք պարունակում են հետազոտական տարրեր: Մասնագիտական հետազոտական կարողությունների զարգացման համար պայմաններ են ստեղծում նաև պրակտիկաները: Պրակտիկան պարտադիր բաղադրիչ է քոլեջի բոլոր

մասնագիտությունների համար և հնարավորություն է տալիս տեսական գիտելիքները ամրապնդել գործնականորեն:

Պրակտիկաներն իրականացվում են ինչպես քոլեջի ներսում, այնպես էլ քոլեջից դուրս: Ներլսարանային պայմաններում անցկացվում են «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության պրակտիկաները: Ուսանողները կատարում են նոր թեմաների, լրացուցիչ ծրագրերի ուսումնասիրություն: Հիմնականում քոլեջում է կազմակերպվում նաև «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ըստ տրանսպորտի տեսակների մասնագիտության պրակտիկան, որովհետև քոլեջն ունի նյութապես և տեխնիկապես հազեցած համապատասխան կաբինետ:

Պրակտիկաներն ուսանողների համար ինքնաբացահայտման հնարավորություններ են: Շատ հաճախ ուսանողները, ովքեր դասերի ժամանակ տեսական գիտելիքներով աչքի չեն ընկնում, պրակտիկաների ժամանակ բարձր արդյունք են ցուցաբերում:

Ուսանողները, ընդհանուր առմամբ մոտիվացված են մասնակցելու հետազոտական աշխատանքներին, պատրաստակամ են և նախաձեռնող:

Որպես օրինակ՝ ներկայացնենք «Դիզայն» և «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտարլեզվի խորցված իմացությամբ» մասնագիտությունների ուսանողների ներգրավվածությունը քոլեջի հետազոտական աշխատանքներում:

«Դիզայն»-ի ուսանողները հետազոտական աշխատանքներ են ներկայացնում բոլոր կուրսերում. Ավարտական տարում իրականացվում է դիպլոմային նախագիծ, մյուս տարիներին՝ ուսումնական հետազոտական աշխատանքներ: Ուսանողների լավագույն աշխատանքները ներկայացվում են տարբեր ցուցահանդեսներում, նրանք հանդես են գալիս նաև անհատական ցուցահանդեսներով:


Տաթև Մնացականյան - «Օշիբանայով կատարված կոմպոզիցիաներ և նատյուրմորդներ»



Աստղիկ Աղաջանյան - «Գեղարվեստական աշխատանքներ և դեկորատիվ նկարներ»



Դիպլոմային նախագծերը գործնական կիրառելիություն են ունենում: Օրինակ՝ շրջանավարտներից մեկի դիպլոմային նախագծի /« Դելֆին» ջրաշխարհի մանրակերտը/ հիման վրա Հրազդան քաղաքում կառուցվել է AquaM սպորտային համալիրը:





«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողները նույնպես կատարում են բազմաթիվ հետազոտական աշխատանքներ՝ և՛ անհատական, և՛ խմբային. ուսումնասիրում են իրենց բնակավայրերի, պատմական հուշարձանների պատմությունը, ժամանակ առ ժամանակ կազմակերպում են արշավներ, ճանաչողական էքսկուրսիաներ, այցելում տարածաշրջանի զբոսաշրջային դեստինացիաները, այնուհետև դրանց հիմքի վրա պատրաստում բավականաչափ հետաքրքիր տեսանյութեր, կից քննարկումներ:

Կատարում են նաև ինչպես ՀՀ, այնպես էլ՝ աշխարհի գրեթե բոլոր հյուրանոցային համալիրների ուսումնասիրություն, հետազոտում աշխարհի մի շարք երկրների զբոսաշրջային ներուժը՝ կազմելով տուր-փաթեթներ: Հետազոտական աշխատանքները նպաստում են ուսանողների մոտ ինքնուրույն մտածողության, ճանաչողական, ստեղծագործական հմտությունների և ունակությունների ձևավորմանը, պրակտիկայում տեսական գիտելիքների արդյունավետ կիրառմանը:

ՉԱՓՈՂՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Հիմքեր [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ](#)
[Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կանոնակարգ \(փոփոխություն\)](#)
[Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների կարգապահական կանոններ](#)
[Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական խորհրդի կանոնակարգ](#)

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	95%
Ուսանողների n ^o ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	95%
Ուսումնառողների n ^o ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	82,1%

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

ԿՏՊԲ-ում ուսանողների իրավունքներն ու պարտականություններն ամրագրված են քոլեջի ներքին կարգապահակ կանոններ կանոնակարգում, քոլեջի և ուսանողների միջև ստորագրվող պայմանագրում:

ԿՏՊԲ ուսանողների իրավունքների ներկայացումն ու պաշտպանությունը ապահովում է հիմնականում ուսանողական խորհուրդը, որը ինքնակառավարվող մարմին է, գործում է իր կանոնադրության համաձայն:

Ինչպես ներկայացվել է երկրորդ չափանիշի վերլուծությունում, ուսանողները ներգրավված են նաև կառավարման խորհրդում, ինչը նույնպես թույլ է տալիս բարձրացնել խնդիրներ, հետամուտ լինել դրանց լուծմանը:

Ուսանողական խորհուրդը ուսանողների իրավունքների պաշտպանության համար հիմնական պատասխանատու մարմինն է և ներքոլեջային կյանքում ակտիվ դերակատարում ունի:

Ուսանողական խորհրդի անդամները ուսանողներին իրազեկում են իրենց իրավունքների և պարտականությունների մասին, արտահայտում և պաշտպանում ուսանողների շահերը, մասնակցում քոլեջի ներքին կարգապահության պահպանմանը, ուսանողների շրջանում տարածում տեղեկատվություն: Ինչպես փաստում են ՈԱ ներքին կենտրոնի կողմից անցկացված հարցումները, ուսանողները գրեթե ամբողջությամբ բավարարված են ուսանողական խորհրդի աշխատանքներից:

Իրենց իրավունքների պաշտպանության հարցերով, բողոքներով և բողոքարկումներով ուսանողները կարող են դիմել համապատասխան ստորաբաժանումներին՝ վարչական աշխատակազմ, կուրսդեկներ, ուսանողական խորհուրդ: Բողոքարկման գործընթացը կանոնակարգվում է «Ուսանողների գնահատման և բողոքարկման ընթացակարգով»:

Ուսանողը կարող է բողոքարկել գնահատականը: Տնօրենի կողմից ստեղծվում է բողոքարկման հանձնաժողով: Հանձնաժողովը նորից կատարում է ուսանողների գիտելիքների ստուգում և գնահատում՝ պահպանելով օբյեկտիվություն և թափանցիկություն: Արդյունքում բողոքարկողի գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ մնալ անփոփոխ:

Ուսանողների բողոքների և դրանց լուծման վերաբերյալ վիճակագրական տվյալներ չեն պահվում, դրանք լուծվում են բանավոր պայմանավորվածությունների միջոցով, հոգուտ ուսանողի: Վերջին անկացված հարցումների արդյունքների վերլուծությունները ցույց են տվել, որ հարցման մասնակից ուսանողների մոտ 41%-ն է ունեցել բողոքներ և առաջարկներ՝ բավարարված մնալով դրանց լուծումից:

Ուսանողների շրջանում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ գրեթե բոլոր ուսանողները տեղեկացված են իրենց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կարգի մասին:

ՉՍՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Հիմքեր

- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոններում դասախոսման անցկացման և քննարկման կանոնակարգ \(փոփոխություն\)](#)
- [Հարցումների անցկացման կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսի և նրա վարած](#)

դասընթացի գնահատման ընթացակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի
կանոնակարգ (փոփոխություն)

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ում ուսումնառողներին մատուցվող կրթական ծառայությունների գնահատումն և որակի ապահովումն իրականացվում է մի շարք մեխանիզմների միջոցով: Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության մշտադիտարկումը և բացթողումների վերհանումը, գնահատումը, բարելավմանն ուղղված միջոցառումների մշակումը, դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման առաջարկությունների և երաշխավորությունների մշակումը իրականացվում են ուսումնական մասի կողմից: Ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման արդյունավետ մեխանիզմներ են նաև «Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատում» ընթացակարգը, քոլեջի ստորաբաժանումներից և ռեսուրսներից, ուսումնական գործընթացի կազմակերպումից ուսանողների բավարարվածության գնահատման վերաբերյալ պարբերաբար իրականացվող հարցումները, ամբիոնների դասալսումները:

Իրենց գործառույթների շրջանակներում ամբիոնները կազմակերպում և համակարգում են դասախոսների կողմից ամբիոնի հիմնական ուղղվածության շրջանակներում ուսումնամեթոդական աշխատանքները, իրականացնում ամփոփիչ ատեստավորման խորհրդատվությունների և քննությունների կազմակերպման գործընթաց, ուսանողների առաջադիմության ուսումնասիրություն, վերլուծություն:

Ուսանողների հարցումները մշակվում և իրականացվում են քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից: Արդյունքներն ամփոփվում են, քննարկվում և կատարվում են համապատասխան վերլուծություններ: Հարցումների գործընթացի շարունակական բարելավումն ապահովելու նպատակով հարցաթերթերը պարբերաբար վերանայվում են: Որակի ապահովման և կրթության շարունակական բարելավման նպատակով քոլեջում անցկացվող հարցումները կրում են շարունակական բնույթ: Հիմնականում սոցիալական հարցումների միջոցով են ստացվում ուսումնական գործընթացի վերաբերյալ ուսանողների արձագանքները:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմներից է «Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատումը», որն իրականացվում է սոցիալական հարցման միջոցով, յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո, հարցումների անցկացման կանոնակարգի համապատասխան:

Գնահատման արդյունքները վերլուծվում են որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից: Գնահատման նպատակը դասախոսի վարած դասընթացի, կրթական միջավայրի բարելավումն է: Այն թույլ է տալիս բարձրացնել ուսանողների պատասխանատվությունը կրթական գործընթացի նկատմամբ, նպաստում ուսանող - դասախոս կրթական համագործակցությանը:

Որակի ապահովման քաղաքականության ելակետը քոլեջի առաքելությունն է, ռազմավարական նպատակները: Կրթության որակի ապահովումն ԿՏՊԲ-ի ծրագրային առաջնահերթությունների օրակարգում է, և որակի ներքին ապահովման կենտրոնի աշխատանքն ուղղված է թերացումների շտկմանը, բացթողումների լրացմանը, կրթության որակի խթանմանը և բարելավմանը: Քոլեջի որակի ապահովման կենտրոնի կազմում ուսանողության ներկայացուցիչների առկայությունը ապահովում է ուսանողության անմիջական մասնակցությունը որակի ներքին ապահովման և գնահատման գործընթացներում:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների որակի ապահովման մեխանիզմներից է մասնագիտական ամբիոններում կրթության որակի վերաբերյալ գեկուցումները ու խորհրդակցությունները:

Կրթական ծառայությունների որակի ընթացիկ գնահատման կարևորագույն մեխանիզմ է

դասալսումների անցկացումը: Ամբիոններում կատարվում են փոխադարձ դասալսումներ՝ ըստ ուսումնական մասի կազմած ժամանակացույցի: Դասալսումը կարևորվում է որպես ուսումնական գործընթացի որակի նպատակային կատարելագործման մեխանիզմ և դասական դասի որակի բարելավման միջոց: Դասալսումները նպատակ ունեն նպաստել դասախոսների մանկավարժական վարպետության աճին, փորձի փոխանակմանը, կրթության որակի խթանմանը:

Քոլեջն նախատեսում է ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման նոր մեխանիզմների մշակում:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):						
	Զբաղվածություն/ուսման շարունակություն	2016	2017	2018	2019	2020
1	Ավարտելուց անմիջապես հետո	31	41	26	47	50
2	Նախքան ավարտելը					
3	Մասնագիտությամբ	8	23	10	25	31
4	Ոչ-մասնագիտությամբ	23	18	16	22	19
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	16,5%	14,1%	10,6%	20%	22,4%
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	30%	28%	32%	30%	35%
7	Գործազուրկ ուսանողների տոկոսը	70%	72%	68%	70%	65%
8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը	40%	36%	38%	35%	43%

Վերլուծել Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները / SWOT վերլուծություն /	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Քոլեջը գտնվում է մարզկենտրոնում և հասանելի է շրջակա բնակչության համար: • Քոլեջի տարեցտարի աճող վարկանիշի արդյունքում ապահովվում է դիմորդների մեծաքանակ հոսք: • Ուսանողների որպես՝ քոլեջի կարևորագույն ներքին շահառուների կրթական կարիքների վերհանման և բավարարման գործընթացի արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ /ուսանողների կարիքները վեր են հանվում տարբեր օղակների միջոցով/ ղեկավար անձնակազմ, դասախոս-կուրսղեկներ, ՈԱ ներքին կենտրոն, ուսանողական խորհուրդ/ստանում անհրաժեշտ լուծումներ: • Ուսանողների կարիքների վերհանման, խնդիրների բարձրաձայնման, առաջարկությունների ներկայացման արդյունավետ գործիք է քոլեջում տեղադրված բողոքների և առաջարկությունների արկղը: Ուսանողների առաջարկով սկսեցին գործել «Գրքասերներ ակումբ», «Հասարակագիտություն» առարկայի խմբակները, կատարվել են նաև լսարանային պայմանների բարելավումներ: 	<ul style="list-style-type: none"> • Մոցիալական հարթակներում ուսանողների հարցումների օբյեկտիվության և մասնակցության վերահսկողության մեխանիզմի բացակայություն: • Քոլեջի կառավարման խորհրդում ընդգրկված ուսանողները պասիվ են խնդիրների բարձրաձայնման, առաջարկությունների ներկայացման, կառավարմանը մասնակցելու հարցերում:

- Ուսանողների առաջադիմության խթանում՝ մասնագիտական ամբիոնների ու առարկայական կաբինետների կողմից սահմանված ժամանակացույցով կազմակերպվող լրացուցիչ մասնագիտական խորհրդատվական պարապմունքների արդյունքում:
- Ուսումնաօժանդակ կազմի կողմից ուսանողներին առանց ժամանակային սահմանափակման տրվող լրացուցիչ վարչական օժանդակություն և ուղղորդում. ուսանողների հարցերին տրվում են արագ արձագանքներ և լուծումներ:
- Ակտիվ գործող ՈւՄ՝ որպես ուսանողների շահերը ներկայացնող և պաշտպանող ինքնավար մարմին, որի միջոցով ուսանողները հանդես են գալիս սեփական ակտիվ նախաձեռնություններով /միջոցառումներ, հասարակական ակտիվություն, համագործակցություն հասարակական տարբեր կազմակերպությունների հետ/, ուսանողների առաջարկներին, խնդիրներին տրվում են համապատասխան լուծումներ:
- Ուսանողների առաջադիմության և ներքին կարգապահության արդյունավետ ապահովում՝ կորստեկների կողմից տարվող դաստիարակչական և կազմակերպչական համակարգված աշխատանքների միջոցով:
- Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների՝ Կարիերայի ստորաբաժանման կանոնակարգված աշխատանքի շնորհիվ կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, իրազեկման և մատուցման միջոցով մասնագիտական կողմնորոշում/մասնագիտական թեստեր, կարիերայի տեղեկատվության, շարունակական և լրացուցիչ կրթության, ուսուցման, տնտեսության գերակա ոլորտների, աշխատաշուկայի վերլուծությունների, կանխատեսումների և ըստ մասնագիտությունների զբաղմունքների մասին տեղեկատվության հավաքագրման և ուսանողներին իրազեկման, թափուր աշխատատեղերի, կամավորական և հասարակական կազմակերպությունների մասին հայտարարությունների հավաքագրման, զբաղվածության պետական ծրագրերից օգտվելու նպատակով աշխատանք փնտրող ուսանողների ուղղորդում.../
- Որոշ ոլորտային մասնագիտությունների գծով ուսանողների հետազոտական աշխատանքներ, որոնք կյանքի են կոչվել:

Հնարավորություններ	Վտանգներ
---------------------------	-----------------

<ul style="list-style-type: none"> • ԿՏՊՔ-ը տրամադրում է շարունակական կատարելագործման հնարավորություններ՝ իր կողմից իրականացվող կրթական ծրագրերի և ծառայությունների բարելավման միջոցով: • Դասախոսների՝ տեղական և միջազգային ծրագրերի ներգրավվածությամբ բարելավել քոլեջում իրականացվող գործընթացները՝ ներգրավելով ուսանողներին տարբեր նախագծերում: • Ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման նոր մեխանիզմների մշակում: • Ոլորտային մասնագիտություններով պրակտիկաների ընդլայնում, ինչը կնպաստի աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան արհեստավարժ և մրցունակ կադրերի պատրաստմանը: • Կարիերայի ստորաբաժանման՝ գործատուների հետ համագործակցության ակտիվացում և ընդլայնում, ինչն էականորեն կնպաստի շրջանավարտների զբաղվածության մակարդակի բարձրացմանը: 	<ul style="list-style-type: none"> • Համավարակ: • Արտագաղթը կարող է ազդել ուսանողների թվաքանակի վրա: • Գործատուների կողմից բարձրագույն կրթության որակավառման պահանջ: • Աշխատաշուկայի պահանջարկի փոփոխություն:
---	---

Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները

<ul style="list-style-type: none"> • բարձրացնել ուսանողների իրազեկվածության մակարդակը՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասով, • ներդնել խրախուսման, ուսանողների ակտիվությունը խթանող մեխանիզմներ, որոնց շնորհիվ կապահովվի նաև ուսանողների գործուն մասնակցությունը առկա խնդիրների բարձրաձայնման և դրանց կարգավորման հարցերում: • քոլեջի կառավարման գործընթացներում ուսանողների ներգրավվածության շարունակական բարելավման նոր մեխանիզմների մշակում:
--

V. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍՏԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ԿՏՊՔ-ն իր ռազմավարական նպատակների և առաքելության իրականացման համար, որպես հիմնարար արժեք կարևորում է որակյալ մարդկային ռեսուրսների առկայությունը՝ սահմանելով հետևյալ նպատակները՝

1. էլեմենտար կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից՝ քոլեջը նպատակ ունի խթանել իր դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը, դասախոսական կազմի ներուժը
2. ներգրավելով բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրել շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր, ինչպես նաև բարձրացնել քոլեջի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը,
3. նպաստել իր մարզի, համայնքի ու երկրի զարգացման պահանջների բավարարմանը և մասնագիտական կրթության համակարգի զարգացմանն ուղղված մասնագիտական, կառավարչական, ուսումնամեթոդական, գիտամանկավարժական, մշակութային, նյութատեխնիկական ներուժի ձևավորմանը, ինչպես նաև օժանդակել հարակից ուսումնական հաստատությունների զարգացմանը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր

[Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգ \(փոփոխություն\)](#)

[Պետական կրթական չափորոշի 5-րդ գլուխ](#)

[ՀՀ աշխատանքային օրենսգիրք](#)

[Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ներքին կարգապահական կանոններ](#)

[Հիմնական\(աղյուսակ 1\) և համատեղությամբ\(աղյուսակ 2\) դասավանդողների կազմը քստ որակավորումների՝ նշելով գիտական աստիճանները և կոչումները /առկայության դեպքում/ աշխատանքային ստաժը քոլեջում, նրա կողմից վարվող հիմնական դասընթացները](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄՈՒՀ-ի առաքելությանը և կրթական ծրագրի նպատակներին:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի գործունեության գերակա նպատակներից է կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրմամբ ավանդական, ինչպես նաև նպատակային, փորձարարական և էլեկտրոնային ուսուցման կարճաժամկետ ծրագրերի, ԴՈՒԱԼ կրթական ծրագրերի իրականացման ու տարբեր կազմակերպությունների, այդ թվում ուսումնական հաստատությունների ընդգրկմամբ ստեղծված ցանցային համակարգի ձևավորման շնորհիվ դառնալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի զարգացման գերազանցության և տարածաշրջանային բազմագործառույթային կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը աշխատաշուկայի պահանջներին և անձի պահանջմունքներին համապատասխան, որն իրականացնելու համար անհրաժեշտ են որակյալ, իրենց ոլորտում հմուտ մասնագետներ:

Ռազմավարական նպատակներին զուգահեռ կա նաև դասավանդողին ներկայացվող պետական կրթական չափորոշի պահանջ, ըստ որի ԿՏՊԲ-ի դասախոսները համապատասխանում են քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչների 5-րդ գլխում հստակ սահմանված ներքոհիշյալ պահանջներին (պետական կրթական չափորոշիչի 5-րդ գլխի 14-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետեր)։

1. ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2. ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն:

Բացի կրթական չափորոշիչի պահանջներից, 2018 թվականից քոլեջում մշակվել են պաշտոնի նկարագրեր, որոնցում հստակ ամրագրված է դասախոսի կոմպետենցիաները:

Կրթական ծրագրերի համար ներգրավված դասախոսները, ինչպես երևում է աղյուսակ 1-ում, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությունը համապատասխանող բազային կրթություն, պարբերաբար վերապատրաստվում են և լրացնում իրենց գիտելիքների պաշարը:

2019 թվականից քոլեջում 0413.06.5-«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությամբ դուալ ծրագրի իրականացնելու կապակցությամբ դասախոսական անձնակազմը համալրվել է 3 գործընկեր հյուրանոցների 6 աշխատակիցներով, ովքեր գործատուի մոտ կազմակերպում են ուսանողների գործնական պարապմունքները: Վերջիններս իրենց փորձառությամբ աչքի են ընկնում տարածաշրջանում, ինչը փաստում է, որ ուսանողները ստանում են համարժեք կրթություն, նրանց մոտ ձևավորվում են աշխատանքային առանցքային հմտություններ: Վերջիններիս հետ քոլեջը կնքել է քաղ. իրավական պայմանագրեր:

2019 թվականին քոլեջի դասախոսական անձնակազմը համալրվել է քոլեջը գերազանցությամբ ավարտած, կրթությունը բուհում շարունակած երիտասարդ կադրով: Վերջինս դասավանդում է այնպիսի մոդուլներ, որոնք մոդուլային ծրագրի մեջ են ներառվել 2019 թվականի վերանայումից հետո, և դրանք դասավանդելու համար քոլեջը չունի համապատասխան մասնագետ: Այսպիսով՝ քոլեջն իր շրջանավարտների հետ ունի ձևավորված և արդյունավետ աշխատող հետադարձ կապի մեխանիզմներ, որի արդյունքում շրջանավարտները իրենց ստացած գիտելիքներն ու հմտությունները ցանկանում են ներդնել հարազատ կրթօջախի զարգացման գործում:

ԿՏՊԲ-ում 2020 թվականի սեպտեմբերի դրությամբ աշխատում է 64 դասախոս, որոնցից 10-ն աշխատում են համատեղությամբ: Դասախոսական կազմն ամբողջությամբ ունի բարձրագույն կրթություն և մեծ մասը՝ մագիստրոսի գիտական աստիճան:

Ուսումնասօժանդակ կազմի մասնագիտական որակները նույնպես համապատասխանում են իրենց կատարած աշխատանքին, ինչը նույնպես արտացոլված է պաշտոնի նկարագրերում:

Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ մշտականներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ում արտադրական ուսուցման վարպետները և դասախոսները աշխատանքի են ընդունվում մրցութային կարգով, իսկ ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականությունը բխում է հաստատության ներքին կարգապահական կանոնակարգից և ՀՀ ԱՕ-ից:

2018 թվականի փետրվարին քոլեջում մշակվել է «Դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի ընթացակարգ», իսկ 2020 թվականին հաստատվել է վերջինիս փոփոխությունը: Ըստ ընթացակարգի քոլեջում՝ թափուր տեղի մրցույթին կարող են մասնակցել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ: Քննությունը բանավոր է և իր մեջ ներառում է միայն դասավանդվող առարկաների/մոդուլների/ վերաբերյալ հարցեր: Ձևավորված հանձնաժողովը, փակ քվեարկությամբ, անկողմնակալ ընտրություն է կատարում թեկնածուների միջև, ինչը հնարավորություն է տալիս քոլեջի դասախոսական կազմը համարել որակյալ կադրերով: 2018 թվականից առ այսօր մրցութային կարգով աշխատանքի է ընդունվել 5 դասախոս: Մրցութի հաղթահարած մասնագետի հետ երեք աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ առանց փորձաշրջան սահմանելու:

Ուսումնաօժանդակ անձնակազմը աշխատանքի է ընդունվում ոչ մրցութային կարգով: Աշխատանքի ընդունման ժամանակ հաշվի են առնվում վերջիններիս կրթությունը, աշխատանքային փորձը և համապատասխանությունը պաշտոնի նկարագրին: Նրանց հետ, ըստ ՀՀ ԱՕ-ի , կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կամ ընդունվում է անհատական իրավական ակտ և սահմանվում է փորձաշրջան: Փորձաշրջանի ավարտից հետո, եթե կողմերից մեկը չի առաջարկում լուծել պայմանագիրը, ապա փորձաշրջանն համարվում է հաղթահարված, իսկ պայմանագիրը կնքված անորոշ ժամկետով:

Մեկից ավելի հավակնորդ և հավասար պայմաններ ունենալու դեպքում, առաջնահերթությունը տրվում է աշխատանքային գործունեությունը առավել արդյունավետ կատարող անձին:

Մինչ աշխատանքի անցնելը աշխատողը ծանոթանում է իր պաշտոնի նկարագրին, իր կողմից կատարվող աշխատանքին առնչվող ներքին իրավական ակտերին, քոլեջի ներքին կարգապահական կանոններին, ինչպես նաև անվտանգության տեխնիկայի, սանիտարական, հակահրդեհային կանոններին և աշխատանքի պայմաններին:

Քոլեջի աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարում են ՀՀ ԱՕ սահմանված կարգով՝ աշխատանքային պայմանագրի լուծման միջոցով, նախապես ծանուցելով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Հիմքեր	Պետական կրթական չափորոշիչի 5-րդ գլխի 14-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետեր Հիմնական(աղյուսակ 1) և համատեղությամբ(աղյուսակ 2) դասավանդողների կազմը ըստ որակավորումների՝ նշելով գիտական աստիճանները և կոչումները /առկայության դեպքում/, աշխատանքային ստաժը քոլեջում, նրա կողմից վարվող հիմնական դասընթացները Դասախոսի պաշտոնի նկարագիր
--------	---

Հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը

մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:

Քոլեջում դասավանդողների կոմպետենցիաների համապատասխանությանը ներկայացված են հստակ պահանջներ, որոնք, ինչպես նշվեց, ամրագրված են յուրաքանչյուր պետական կրթական չափորոշիչի 5-րդ գլխի 14-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում և յուրաքանչյուր դասավանդողի պաշտոնի նկարագրում: Քոլեջի դասախոսական կազմի մեծամասնությունն ունի մագիստրոսի գիտական աստիճան, տիրապետում է խորը և մասնագիտական գիտելիքների, ինչը թույլ է տալիս վերջիններին ներգրավվել հետազոտական գործունեության մեջ, լուծել ավելի բարդ խնդիրներ:

ՀԱՓՈՐՈՇԻՉՁ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հիմքեր
[Ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, խրախուսման\(այդ թվում ֆինանսական շահադրդման\) կամ պատասխանատվության ենթարկելու կանոնակարգ](#)
[Ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ](#)
[Հարցումների անցկացման կանոնակարգ](#)
[Դասընթացի գնահատման կանոնակարգ](#)
Արձագանքների օրինակները (ուսումնառողների, այլ դասավանդողների, դեկավարների) հարցաշարեր, դասալսումների փաստաթղթեր, մատյաններ

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ռազմավարական նպատակին համապատասխան՝ քոլեջն իր առջև խնդիր է դրել համալրել անձնակազմը որակյալ կադրերով՝ կատարելագործելով դասախոսական անձնակազմի մասնագիտական, մանկավարժական հմտություններն ու կարողությունները, դասախոսի մասնագիտական պատրաստվածության աստիճանը, անձնային որակները: Այս նպատակով քոլեջում կիրառվում են դասախոսական կազմի գնահատման մի շարք մեխանիզմներ:

ԿՏՊԲ-ում 2018 թվականին մշակվել է «Ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, խրախուսման(այդ թվում ֆինանսական շահադրդման) կամ պատասխանատվության ենթարկելու կանոնակարգը», սակայն այն որպես այդպիսին չի գործարկվել քոլեջում:

Ուսանողների կողմից ԿՏՊԲ-ի դասախոսների և նրանց վարած դասընթացի գնահատման ձևաչափն հանդիսանում է դասախոսի կողմից անցկացրած դասընթացը և կրթական միջավայրը ուսանողների տեսանկյունից վերլուծելու և գնահատելու միջոց, ինչպես նաև դասախոսի կրթական գործունեության բարելավմանը խոչընդոտող գործոնները բացահայտելու հնարավորություն:

Գնահատման չափանիշներն են.

- Դասախոսի կողմից առարկայական ծրագրի ներկայությունն ու իրականացումը
- Դասախոսի կողմից կիրառվող գնահատման մեխանիզմները
- Դասախոսի կողմից մատուցվող նյութին արձագանքները հնարավորությունը
- Դասախոսի դասավանդման հմտությունը
- Դասախոսի կողմից ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը
- Ուսանողների մասնակցության ապահովումը դասին:

Գնահատման նպատակն է.

- Նպաստել ուսանող-դասախոս համագործակցությանը
- Խթանել դասախոսի մասնագիտական աճը՝ առկա բացթողումները շտկելու նպատակով
- Շարունակաբար կատարելագործել ԿՏՊԲ-ի դասախոսների աշխատանքների որակը

Այս մեխանիզմը հնարավորություն է տալիս բարձրացնել դասախոսի մասնագիտական պատրաստվածության մակարդակը, մանկավարժական հմտությունների և կարողությունների որակը:

2018 թվականից ԿՏՊԲ-ում դասախոսական անձնակազմի գնահատման համար իրականացվում են անանուն հարցումներ ուսանողների շրջանում՝ «Հարցումների անցկացման կանոնակարգին» համապատասխան: Հարցումները հանդիսանում են որակի մշտադիտարկման, վերլուծության և

գնահատման մեխանիզմներ և օգտագործվում են ուսումնասիրվող գործընթացի բարելավման, գնահատման, շահակիցների հետ հետադարձ կապի, նոր նախագծերի մշակման նպատակով: Վերջիններս իրականացվում են հիմնականում ըստ մասնագիտությունների: Այս տարի դրանք իրականացվել են տիրող իրավիճակին համահունչ՝ օնլայն տարբերակով՝ կիրառելով google forms ձևաչափը: Ըստ ընթացակարգի արդյունքները վերլուծվում են Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից և ներկայացվում ուսումնական մաս, ամբիոններ՝ հետագա գործընթացների արդյունավետ կազմակերպման համար:

Դասախոսների գնահատման մեխանիզմներից են նաև դասալսումները, որոնք իրականացվում են ըստ ժամանակացույցի:

Դասալսումներն իրականացնում են բաժնի վարիչները, համապատասխան ամբիոնների վարիչները և ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, այլ դասախոսներ՝ քոլեջում գործող կանոնակարգերին համապատասխան: Ըստ «Ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ»-ի՝ դասալսման արդյունքները քննարկվում են, քննարկման արդյունքները համապատասխանաբար արձանագրում և գնահատում են դասախոսի մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածության աստիճանը, կազմակերպչական, «ուսանող-դասախոս» հարաբերությունների ձևավորման ունակությունները, դասը կազմակերպելու և վարելու ժամանակակից մեթոդների կիրառումը և այլն: Դասալսումների արդյունքների քննարկմանը հետևում է արդյունքների հրապարակումը, որն իրականացվում է մանկավարժական խորհրդի նիստում: Առանձին դեպքերում դասախոսները արժանանում են գովասանքի, իսկ նրանք, ովքեր թերանում են՝ ընդգրկվում են վերապատրաստվողների ցուցակում կամ փորձառու դասախոսների կողմից ստանում են մեթոդական աջակցություն և խորհրդատվություն:

Կրթության մակարդակի բարձրացման գործում մեծ նշանակություն ունեն նաև ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող մշտադիտարկումները: Վերջինը իրականացվել է 2020 թվականի օգոստոսին, որի արդյունքները բավականին գոհացուցիչ են:

ՉԱՓՈՂՈՇԻՉ Պ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Վերապատրաստվողների անվանացանկ
 Հիմքեր
 Հավաստագրեր և վկայականներ
 Հոդվածներ
[Մասնագիտական ձեռնարկներ](#)

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործընթացների արդիականությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԶ-ն կրթական ծրագրերն արդյունավետ իրականացնելու համար իր առջև խնդիր է դրել ոչ միայն համալրել բարձրորակ դասախոսական կազմը, այլ նաև նրանց համար ստեղծել շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր: Քոլեջի դասախոսական անձնակազմը ոչ միայն պահպանում է և կատարելագործում է իր մասնագիտական որակավորման մակարդակը՝ կրթական ծրագրերի նորացվող բովանդակությանն ու կրթական տեխնոլոգիաների ու մեթոդների զարգացմանը համահունչ: Հարկ է նշել, որ քոլեջի տարեկան նախահաշվի պլանավորման մեջ հատուկ հոդվածով հատկացվում է որոշակի գումար՝ անձնակազմի մասնագիտական որակները բարձրացնելու, մասնագիտական վերապատրաստումներին մասնակցելու համար:

Դա իրականացվում է հաշվի առնելով դասախոսների գնահատման գործընթացի արդյունքում վերհանված խնդիրները: Դասախոսների գնահատման միջոցով վերջին երեք տարիներին իրականացվել են դասավանդողների կատարելագործմանն ուղղված մի շարք միջոցառումներ.

- Քոլեջի դասախոսները հենց քոլեջում սովորել են օգտվել համակարգչային նորագույն տեխնոլոգիաներից:

- Դասախոսների մեծ մասը մասնակցել է «Հեռավար կրթության ժամանակ կիրառվող գործիքակազմը» թեմայով օնլայն վերապատրաստումներին, մասնագիտական վերապատրաստումներին, ստացել են հավաստագրեր, որոնց մեջ կան նաև այնպիսի միջազգային կրթական հաստատությունների կողմից տրամադրած հավաստագրեր, ինչպիսիք են Hamdan Bin Mohammed Rtart Universit, Мультипрок և այլն:
 - Նոր ներդրված «Ձեռներեցություն» մոդուլի շրջանակներում քոլեջի երեք դասախոս վերապատրաստվել են, որոնցից մեկը որպես վերապատրաստող:
 - Դասախոսները մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին:
 - Մասնակցել են «Պարադիգմա» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված ուսուցչական առցանց համաժողովին, որի ընթացքում վեր են հանվել կրթական ոլորտին վերաբերող հիմնահարցեր, մասնակիցները ներկայացրել են իրենց լավագույն մանկավարժական փորձը:
 - Դասախոսները մասնակցել են GIZ-ի կողմից իրականացված վերապատրաստումներին:
 - Մասնակցում են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին:
- Վերջին երեք տարիներին ԿՏՊԲ-ի դասախոսները գրանցել են բավականին մեծ հաջողություններ՝ իրենց մասնագիտական որակները բարձրացնելու, հետազոտական գործունեություն իրականացնելու ուղղությամբ.
- Դասախոսներից երկուսը moodle հեռավար հարթակում ստեղծել են իրենց դասընթացը, որը հեռավար կրթության պայմաններում հնարավոր կլինի օգտագործել քոլեջում, ստացել են հավաստագրեր:
 - Դասախոսներից 4-ը մասնակցել են պետական կրթական չափորոշիչների ստեղծման աշխատանքներին:
 - Դասախոսներից մի քանիսն ունեն փորձագիտական աշխատանք իրականացնելու հմտություններ:
 - Մասնակցել են GIZ-ի կողմից իրականացված վերապատրաստումներին, որի արդյունքում մշակվել և ներդրվել է հեռավար ուսուցման դասընթաց՝ «Սպասարկման կազմակերպում՝ հյուրանոցներում» թեմայով, որը բավականին լավ արձագանք է ունեցել փորձագիտական խմբի կողմից:
 - Ստեղծել են դուալ կրթական մեկ երկարաժամկետ և երկու կարճաժամկետ կրթական ծրագրեր՝ «Ձրոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»-երկարաժամկետ, «Հյուրանոցի ադմինիստրատոր» և «Արևային և ջերմային կայանների տեղակայում և շահագործում»:
 - ԿՏՊԲ-ի 5 դասախոս մասնագիտական ուսումնական ձեռնարկների հեղինակներ են, որոնք տպագրվել են ՄԿՈՒԶԱԿԻ աջակցությամբ.
 1. «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում»
 2. «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»
 3. «Ավտոտրանսպորտի էկոնոմիկա, մարքեթինգ և կառավարում»
 4. «Մարքեթինգ և կառավարում»
 5. «Օժանդակ և լրացուցիչ ծառայությունների կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում»
 6. «Թղթի վրա գծանկարի տեղադրման մասնագիտական պահանջները: Գծանկարի ձեպանկարի ընկալման և կիրառման մեթոդները »
 7. «Սեփական կապիտալ:Եկամուտների և ծախսերի հաշվառում»
 8. «Սպասարկման կազմակերպում և հոգեբանություն»
 9. « Գծանկարի հմտությունների կիրառումը դիզայնի և աշխատանքներում»
 10. «Ակտիվների և պարտավորությունների հաշվառում»
 - Ասպիրանտ դասախոսը միջազգային և տեղական կրթական ամսագրերում գիտական հոդվածների հեղինակ է:
- Դասախոսները իրենց հետազոտական, փորձագիտական և գիտական հմտությունները կիրառում

<i>են ուսումնական գործընթացում՝ բարձրացնելով քոլեջում կրթության որակը:</i>	
ՉԱՓՈՂՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:	
Հիմքեր	<i>Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և /կամ կոչումները) քանի դասընթաց է վարում Համատեղությամբ աշխատող դասավանդողների ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և /կամ կոչումները)</i>
<i>Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների արդիականությունը վերջին 3 տարիների համար / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i>	

ԿՏՊԲ-ում աշխատում է 64 դասախոս, որոնցից 10-ն աշխատում են համատեղությամբ: Դասախոսական կազմն ունի բարձրագույն կրթություն՝ բակալավրի կամ մագիստրոսի գիտական աստիճան, դասախոսներից մեկն ասպիրանտ է: Քոլեջի մի շարք դասախոսներ հրավիրվում են այլ հաստատությունների կողմից համատեղությամբ աշխատելու, ինչը վկայում է վերջիններիս մասնագիտական բարձր որակների մասին: Դուրս կրթական ծրագրի ներդրման և իրականացման համար քոլեջը ներգրավվել է զբոսաշրջային ոլորտից մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող մասնագետներ, որոնց մասնագիտական կարողություններն արդիական են: Բացի այդ բժշկական մասնագիտությունների գծով հատուկ մասնագիտական առարկաները և մոդուլները՝ դասավանդում են պրակտիկ բժիշկները՝ տեսական ժամերը՝ քոլեջում, իսկ գործնականները՝ բժշկական հաստատություններում: Նմանօրինակ դասավանդման մոդելը և դասավանդողների վարպետությունը նպաստում է կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը և ուսումնառության որակին:

Դասախոսական կազմով ապահովվածության կայունության տեսանկյունից կարևորվում է նաև երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականությունը: Մտորն ներկայացված աղյուսակներից երևում է, որ տարեցտարի ավելացել են երիտասարդ կադրերը, ովքեր վերջին տարիներին են ավարտել ԲՈՒՀ-ը, քաջատեղյակ են նոր կրթական մոտեցումներին, ուսումնառության և դասավանդման նոր մեթոդներին, արագ են սովորում և շուտ են հարմարվում ցանկացած իրավիճակին: Մա քոլեջն համարում է իր ուժեղ կողմերից մեկը: Դասախոսական անձնակազմի կայունությունը երևում է «Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ որակավորումների» աղյուսակի «ստաժը քոլեջում» սյունից, բացի այդ հարկ է նշել, որ վերջին տարիներին դասավանդողների թիվն աճել է

Քոլեջի դասախոսական կազմը 2017-2018թթ.

Տարիքային խումբ	Ընդամենը՝ մարդ	Որից				Նշել հիմնական աշխատող է, թե համատեղությամբ
		բ/կրթ	մ/մ	Իգական	արական	
20-35 տարեկան	13	13		10	3	2 համատեղությամբ
36-45 տարեկան	11	11		6	5	1 համատեղությամբ
46-55	5	5		4	1	

56-65	7	7		6	1	
65+	1	1		-	1	
Ընդամենը	37	37		26	11	3 համատեղություն

Քոլեջի դասախոսական կազմը 2018-2019թթ.

Տարիքային խումբ	Ընդամենը՝ մարդ	Որից				Նշել հիմնական աշխատող է, թե համատեղությամբ
		բ/կրթ	մ/մ	Իգական	արական	
20-35 տարեկան	15	15		12	3	2 համատեղություն
36-45 տարեկան	10	10		6	4	1 համատեղություն
46-55	5	5		4	1	
56-65	7	7		6	1	
65+	2	2		-	2	
Ընդամենը	39	39		28	11	3 համատեղություն

Քոլեջի դասախոսական կազմը 2019-2020թթ.

Տարիքային խումբ	Ընդամենը՝ մարդ	Որից				Նշել հիմնական աշխատող է, թե համատեղությամբ
		բ/կրթ	մ/մ	Իգական	արական	
20-35 տարեկան	14	14		12	2	
36-45 տարեկան	19	19		16	3	3 համատեղություն
46-55	5	5		4	1	
56-65	9	9		6	3	
65+	3	3		-	3	
Ընդամենը	50	50		38	12	3 համատեղություն

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍՄՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԸՍՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՍՏԱԺԻ ԵՎ ԴԱՍՄՎԱՆԴԱԾ ԱՌԱՐԿԱՅԻՄՈՂՈՒԼԻ

№	Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը	Որակավորում	Որակավորման աստիճան	Աշխատանքային ստաժը քվեջում	Դասավանդվող առարկաները
1	Գևորգյան Գագիկ Լիպարիտի	ինժեներ	բարձրագույն	14	1.ուսումնական պրակտիկա 2.արտադրական պրակտիկա
2	Թովմասյան Վայա Սիրեկանի	ինժեներ-էլեկտրիկ	բարձրագույն	41	1.արտադրական պրակտիկա 2.ուսումնական պրակտիկա 3.ծրագրավորման առաջին պրակտիկա
3	Մարգարյան Մարինե Մաքսիմի	ինժեներ-տնտեսագետ	բարձրագույն	31	1.տնտեսագիտության հիմունքներ 2.ՏԳՎ-ի հիմունքներ 3.արտադրության կազմակերպում 4.մարքեթինգ և կառավարում 5.միկրոտնտեսագիտություն 6.կառավարչ. հաշվառում 7.ընդհանուր տնտեսագիտություն և մաս. ոլորտի տնտեսագիտություն 8.տրանսպորտային աշխատանքների հաշվետվություն և արդ. գնահատում 9.կիրառական տնտեսագիտություն և գործարար հմտություններ
4	Սեմիրջյան Կարինե Մեսրոպի	կոնստրուկտոր-տեխնոլոգ ռադիոսարքաշինության	բարձրագույն	41	1.Էլեկտրոնային ռադիոսարքերի կարգավորում 2.նախաավարտական պրակտիկա 3.ուսումնական պրակտիկա 4.տեխնոլոգիական պրակտիկա
5	Հակոբյան Քրիստինե Մարտինի	մանկավարժ,մեթոդիստ, տարրական դասարանների ուսուցիչ/ տուրիզմի զարգացման հիմունքներ(հեռավար դասընթաց)	բարձրագույն	15	1.գրոսաշրջային ծառայությունների ճանաչողություն 2.հյուրանոցների և սննդ. կազմ. օբյ. տեսակները 3. բանակցությունների վարում 4. արդյունքների գնահատում 5.որակի կառավարում փոխադրումները տուրիզմում 6. դեկավարման հոգեբանություն 7. ճանապարհորդությունների կազմակերպման գործաբանություն
6	Խաչատրյան Էսֆիրա Հայկարամի	ֆրանսերենի և	բարձրագույն	16	1.բանավոր խոսք՝ մակ. 3

		անգլերենի ուսուցիչ			2. գրավոր խոսք՝ մակ. 1 3. օտար լեզու ընթերցանություն՝ մակ. 4 4. օտար լեզվի ընթերցանություն՝ մակ. 3
7	Բախշիյան Շողեր Արայիկի	թարգմանչական գործ, անգլերեն և հայոց լեզու	բարձրագույն, բակալավր	7	1. անգլերեն
8	Բաղդասարյան Աննա Օնիկի	անգլերեն լեզու	բարձրագույն, մագիստրոս	10	1. օտար լեզու ընթերցանության՝ մակ. 1 2. թարգմանության տեսություն 3. անգլերեն 4. բանավոր ծոսք՝ մակ. 1
9	Գրիգորյան Միրա Գևորգի	ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ	բարձրագույն	19	1. ռուսաց լեզու 2. բանավոր և գրավոր հաղորդակցություն երկրորդ օտար լեզվով 3. երկխոսություն և տեքստի կազմում երկրորդ օտար լեզվով 4. հաղորդակցման կարողություն երկրորդ օտար լեզվով
10	Օհանյան Աստղիկ Ստյոպայի	Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Կրթության կազմակերպում	բարձրագույն, մագիստրոս	2	1. հայոց լեզու և գրականություն
11	Կարապետյան Աննա Անդրանիկի	Հայոց լեզու և գրականություն	բարձրագույն, բակալավր	2	1. հայոց լեզու և գրականություն
12	Բարեղամյան Հերիքնազ Աղաբեկի	բանասեր, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ	բարձրագույն	21	1. հայոց լեզու և խոսքի մշակույթ 2. հայոց լեզու, հայ գրականություն 3. բառագիտություն և բառակազմություն
13	Բաբաջանյան Հասմիկ Օնիկի	նախադպրոցական մանկավարժ	բարձրագույն	25	1. անվտանգություն և առաջին օգնություն 2. հաղորդակցության հմտություններ 3. սպասարկման հոգեբանություն 4. աշխատանքային գործունեության հմտություններ
14	Պատվականյան Աննա Ժորայի	մաթեմատիկայի ուսուցիչ	բարձրագույն	20	1. մաթեմատիկա 2. անալիտիկ երկրաչափություն 3. հանրահաշիվ 4. մաթեմատիկայի անալիզի հիմունքներ
15	Հարությունյան Նոնա Մանվելի	պատմության ուսուցիչ	բարձրագույն	21	1. պատմություն 2. հայոց պատմություն 3. քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ

16	Հարությունյան Ջուլետա Բյիչի	նախադպրոցական մանկավարժ	բարձրագույն	20	1.Էկոլոգիայի հիմունքներ 2.քիմիա 3.կենսաբանություն 4.յանդաֆտ և էկոլոգիայի հիմունքներ
17	Իսախանյան Սերոբ Սամվելի	ճարտարագետ, մարզիչ	բարձրագույն	7	1.Ֆիզկուլտուրա
18	Տեր-Հակոբյան Կարապետ Սահակի	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	բարձրագույն	3	1.Ֆիզկուլտուրա
19	Առաքելյան Հասմիկ Զավենի	ինժեներ-սիստեմատեխնիկ	բարձրագույն	21	1.Ալգորիթմի տարրերի կիրառում 2. ԷՀՄ-ի ճարտարագիտություն 3.օպերացիոն համակարգ 4.ինֆորմատիկա և ՏՀՏ 5.Համակարգչային ցանց 6.համակարգչային գրաֆ. ծրագրեր 7.համակարգչային օպերատորության հիմունքներ 8. էլեկտրոնային աղյուսակների մշակում 9. օպերացիոն համակարգ 10.տեղեկատվական անվտանգություն
20	Մանուկյան Սրբուհի Լաերտի	ինժեներ-սիստեմատեխնիկ	բարձրագույն	20	1.ինֆորմատիկա 2.տեղեկատվության ապահովման տեխնիկական միջոցներ 3. համակարգչային օպերատորության հիմունքներ 4. միկրոպրոցեսորներ 5. կետային գրաֆիկա 6. վեկտորային գրաֆիկա 7. ինֆորմատիկա և ՏՀՏ 8. տեքստերի և գործնական փաստաթղթերի մշակման տեխնոլոգիաներ 9.նախադիպլոմային պրակտիկա 10.համակարգչային գործավարություն
21	Գաբրիելյան Մյուզաննա Լյուվայի	կիրառական մաթեմատիկա	բարձրագույն	15	1.օբյեկտի կողմնորոշման մոդելի կիրառում 2.կիրառական համելվածների ստեղծ միջոցներ 3. ծրագրավորման հիմունքներ 4.օբյեկտի կողմն. ծրագրային կողմի մշակում 5.վեբ տեխնոլոգիաներ 6.գրաֆիկական ինտերֆեյսի ծրագրավորում 7.վեբ ծրագրամորման հիմունքներ
22	Հակոբյան Աշոտ Սպարտակի	ինժեներ-մեխանիկ	բարձրագույն	20	1.ավտոշահագործման նյութեր 2.ՃԵԿ 3.ավտոանվտանգության վարման հմտություններ 4.ավտոտրանսպորտային միջոցներ
23	Խաչատրյան Նիկողոս	Միջնակարգ դպրոցի	բարձրագույն	6	1.Գազային տնտեսություն

	<i>Արտավազդի</i>	<i>մաթեմատիկայի ուսուցիչ</i>			<i>2. փականագործական աշխատանքներ 3. նյութագիտություն 4. չափագիտություն 5. արտադրական ուսուցում</i>
24	<i>Դավթյան Հայկուհի Սուրիկի</i>	<i>Գյուղատրտեսության մեքենայագույն</i>	<i>բարձրագույն, բակալավր</i>	<i>1</i>	
25	<i>Արշակյան Քրիստինե Արբերտի</i>	<i>տնտեսագետ</i>	<i>բարձրագույն</i>	<i>18</i>	<i>1. աշխատակազմի կառավարում 2. հարկային օրենսդրություն 3. կազմակերպության մարքեթինգային գործունեություն 4. աուդիտի հիմունքներ 5. ֆինանսների հիմունքներ 6. տնտեսագիտություն 7. ավտոտերվիս 8. տեղեկատվական տեխնոլոգիաներ 9. կառավարման գործունեության հիմունքներ 10. մարքեթինգի և ծառայության վաճառքի կազմակերպում</i>
26	<i>Հունանյան Անահիտ Վիլիկի</i>	<i>Արդյունաբերության պլանավորում</i>	<i>բարձրագույն</i>	<i>2</i>	<i>1. տնտեսագիտություն 2. հաշվառում և հաշվետվություն</i>
27	<i>Մարտիրոսյան Մարատ Ռաֆիկի</i>	<i>ինժեներ –մեխանիկ</i>	<i>բարձրագույն</i>	<i>6</i>	<i>1. նախնական զին. պատրաստվածություն 2. արտակարգ իրավիճակներ և քաղպաշտպ.</i>
28	<i>Աբելյան Լիլիթ Աշոտի</i>	<i>պատմություն</i>	<i>բարձրագույն, մագիստրոս</i>	<i>4</i>	<i>1. հասարակագիտություն 2. հայոց պատմություն</i>
29	<i>Պետրոսյան Զվարթ Արտուրիկի</i>	<i>պատմություն</i>	<i>բարձրագույն, մագիստրոս</i>	<i>4</i>	<i>1. ԱՏ օրենսդրություն 2. իրավունքների հիմունքներ 3. հայոց պատմություն</i>
30	<i>Զարգարյան Անահիտ Արտաշեսի</i>	<i>Մերվիս</i>	<i>բարձրագույն, մագիստրոս</i>	<i>2</i>	<i>1. փոխադրման ծառայությունները զբոսաշրջության մեջ 2. գործարար հաղորդակցման հմտություններ 3. կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսի կառավարում 4. զբոսաշրջային ռեսուրսներ 5. հասարակական սննդի կազմակերպում 6. ղեկավարման հոգեբանություն և էթիկետ</i>
31	<i>Ջոհրաբյան Քերոբ Մեսրոպի</i>	<i>դիզայներ</i>	<i>բարձրագույն, մագիստրոս</i>	<i>5</i>	<i>1. ինտերիեր, էքստերիեր 2. դիզայնի պատմություն և մեթոդաբանություն 3. նախագծում և մոդելավորում 4. երկրաչափական պարզ ձևերի կոմպոզիցիա</i>
32	<i>Ներսիսյան Լիլիթ Ռազմիկի</i>	<i>կերպարվեստ և գծագրություն</i>	<i>բարձրագույն, ասպիրանտ</i>	<i>7</i>	<i>1. նյութագիտություն 2. պլաստիկ անատոմիա 3. գունանկարչություն</i>

					4. Գծանկարչություն
33	Դանիելյան Կարինե Կարապետի	նախադպրոցական մանկավարժ	բարձրագույն	25	1.արվեստի պատմություն 2.համաշխարհային արվեստի զարգացումն ըստ տարածաշրջանների 3.հայ կերպարվեստի պատմություն 4.հորինված կոմպոզիացիաների հիմունքներ
34	Փանոսյան Ապետ Արարատի	նկարիչ	բարձրագույն	5	1.քանդակագործական աշխատանքներ 2.ուսումնասան պրակտիկա 3.արտադրական պրակտիկա 4.նախադիպրոմային պրակտիկա
35	Եղիազարյան Սյուզաննա Համլետի	դիզայն	բարձրագույն, բակալավր	1	1.համակարգչային գրաֆիկայի ժամանակակից հնարավորությունները 2.համակարգչային գրաֆիկական ծրագրեր 3.կետային գրաֆիկա 4.վեկտորային գրաֆիկա
36	Համբարձումյան Մելանյա Մուկուչի	տնտեսագետ	բարձրագույն	47	1.ՀՀ տնտեսություն 2.ոչ նյութական ակտիվներ 3.դրամական միջոցների հաշվառում 4.հիմնական միջոցների հաշվառում 5.դեբիտորների և կրեդիտորների հաշվառում
37	Հակոբյան Արևիկ Գվիդոնի	«Գենսաբանություն և քիմիա»առարկաների ուսուցիչ	բարձրագույն	13	1.անատոմիա 2.բժ.գենետիկ 3.կենսաբանութ 4.մանրէաբանություն
38	Դանիելյան Ռուբեն Մելսիկի	Ֆիզիկայի ուսուցիչ	բարձրագույն, բակալավր	8	1.ֆիզիկա 2.հաշվառում և հաշվետվության կազմում 3.արտադրական ուսուցում
39	Գրիգորյան Ռոզա Մայիսի	Դեղագետ- քիմիկ, պրովիզոր	բարձրագույն	5	1.դեղաձևերի տեխնոլոգիա
40	Բաբաջանյան Կարինե Վահագնի	Մաթեմատիկայի ուսուցիչ	բարձրագույն, բակալավր	2	1.հանրահաշիվ 2.երկրաչափություն 3.գծային հանրահաշիվի տարրեր
41	Մկրտչյան Անահիտ Վազրենի	Այգեպտղաբուծություն և խաղողագործություն	բարձրագույն	1	1.հողի գյուղատնտեսական նշանակության տիպերը և հատկությունները 2.ընդհանուր երկրագործություն 3.հողի մշակման աշխատանքների կազմակերպում 4.բույսերի աճի և զարգացման գործընթացը 5.ցանքաշրջ սխեմատիկ մշակման հմտություններ
42	Բաղդասարյան Նաիրա Դերենիկի	Բուժ.գծով բժիշկ	բարձրագույն	9	1.քույր.գործը թերապիայում,

					2.վերականգն.և ավանդական բժշկություն
43	Զաքարյան Աշոտ Համագասպի	Ֆիզիկական կուլտ. դասատու	բարձրագույն	3	1.ֆիզիկական կուլտուրա
44	Մնացականյան Վրույր Վազգենի	Բուժ.գծով բժիշկ	բարձրագույն	6	1.քույր.գործը վիրաբուժությունում
45	Սաֆարյան Աննա Սերյոժայի	Դեղարարություն և դեղաձև	բարձրագույն	15	1.դեղաբանություն 2.ֆարմակոլոգիա 3.բուսաբանության հիմունքներ
46	Սարգսյան Հեղինե Մխիթարի	պատմություն	բարձրագույն, բակալավր	4	պատմություն
47	Եղիազարյան Մարինե Մուկուչի	Ինժեներ-քիմիկ-տեխնոլոգ	բարձրագույն	18	1.անօրգանական քիմիա 2.օրգանական քիմիա
48	Ղազարյան Աշխեն Քաջիկի	Հայոց լեզու և գրականություն	բարձրագույն, մագիստրոս	3	1.հայոց լեզու 2. գրականություն
49	Մխոյան Հասմիկ Սանասարի	Պատմության ուսուցիչ	բարձրագույն, բակալավր	1	1.պատմություն
50	Ալեքսանյան Սուսաննա Ալեքսանի	Էլեկտրոնային տեխնիկայի ինժեներ	բարձրագույն	13	1.ինֆորմատիկա
51	Թովմասյան Նազելի Ադվանի	Մաթեմատիկա, մանկավարժություն	բարձրագույն, բակալավր	10	1.մաթեմատիկա 2.երկրաչափություն
52	Հովհաննիսյան Էլմիրա Մխիթարի	Անգլերեն և գերմաներեն լեզուների ուսուցիչ	բարձրագույն, բակալավր	3	1.անգլերեն
53	Հարությունյան Աստղիկ Արամի	Ռուսաց լեզու և գրականություն	բարձրագույն, բակալավր	0	1.ռուսաց լեզու
54	Խչոյան Անահիտ Մանվելի	մաթեմատիկա	բարձրագույն, բակալավր	0	1.համակարգչային ցանցեր, սարքավորումներ, ինֆորմացիայի պաշտպանումը և հասցեավորման համակարգը ցանցերում 2. հյուրանոցներում կիրառվող ամրագրման գործընթացի կազմակերպման համակարգչային ծրագրերի իմացություն


						<i>3. տեղեկատվության անվտանգության ապահովում</i>
--	--	--	--	--	--	--

ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՄԲ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԸՍՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴԱԾ ԱՌԱՐԿԱՅԻ/ՄՈՂՈՒԼԻ

№	Դասախոսի ազգանունը անունը, հայրանունը	Որակավորումը	Գիտական աստիճանը	Դասավանդած առարկան/մոդուլը
1	Արսենյան Քրիստինե Ջանիկի	Ֆիզիկայի և աստղագիտության ուսուցիչ	Բարձրագույն	1.Ֆիզիկա 2.կիրառական մեխանիկա
2	Մարգարյան Եսթեր Գագիկի	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	բարձրագույն, բակալավր	1,կիրառական հավելված 2.ալգորիթմի տարրերի կիրառում
3	Հայրապետյան Աննա Նորայրի	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	Բարձրագույն	1.հաղորդակցություն 2.միջպետական փոխադրումների կազմակերպում 3.համակարգչային գրաֆիկա 4.ավտոկադ ծրագիր 5.լոգիստիկայի հիմունքներ 6.ավտոտերվիս
4	Վարդանյան Տաթևիկ Վարդանի	Բժիշկ-ստոմատոլոգ	օրդինատոր	1.Շարժական պրոթեզների պատրաստման տեխնիկան 2.Ձուլման գործ 3.Կոմբինացված պսակների պատրաստման տեխնիկան 4.Դիմաձևոտային պրոթեզների պատրաստման

				տեխնիկան
5	Մեխանիկայի Վահան Վարդանիսի	Ատամնատեխնիկ	Մասնագետ	1.Քամիկներ, ներդիրներ 2.Մետաղական և պլաստմասե պսակներ 3.Պլաստմասե և մետաղյա կամուրջներ
6	Հարությունյան Արմեն Վահանի	Բժիշկ-ստոմատոլոգ	Օրդինատոր	1.Լրիվ շարժ. թիթեղ. պրոթեզներ I, II 2.Լրիվ շարժ. թիթեղ. պրոթեզներ I, III 3.Շարժ. պրոթեզների պատրաստման տեխնիկա 4.Բյուզել պրոթեզների պատրաստման տեխնիկան
7	Այվազյան Արմեն Վահանի	Սոցիալ-մշակութային գործունեություն	Մագիստրոս	1.Հասարակագիտություն 2.Սոցիոլոգիայի հիմունքներ 3.քաղ. և սոց. հիմունքներ
8	Նիկողոսյան Նարինե Նորայրի	Գենսաբանության և քիմիայի ուսուցիչ	բարձրագույն, մագիստրոս	1.կենսաբանություն 2.քիմիա
9	Մաթևոսյան Թերեզա Ռուբիկի	Տնտեսագետ	Բարձրագույն	1.Ձեռներեցություն
10	Եղիազարյան Խաչատուր Ռաֆիկի	Ինժեներ-էլեկտրամեխանիկ	Բարձրագույն	1.Հարշվապահական հաշվառման տեսություն 2.Հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման ընթացակարգ 3.Փաստաթղթավորում և հաշվապահական հաշվառման վարում

ՊՏԴ կազմով ապահովվածության կայունության երաշխիքներից մեկը նաև աշխատանքի վարձատրության դինամիկ աճն է՝ դասախոսների համար ժամի արժեքի, կուրսդեկության, ամբիոնի, կաբինետների աշխատանքների համար վճարվող աշխատավարձի բարձրացումը, իսկ ուսումնասօժանդակ անձնակազմինը՝ աշխատավարձի բարձրացումը և այլ լրավճարները: Ստորև գծապատկերում ներկայացվում է աշխատանքի վարձատրության դինամիկան՝ վերջին 5 տարիների կտրվածքով, բացի այդ վերջին հինգ տարվա կտրվածքով աշխատանքից ազատվողների և աշխատանքի ընդունվողների թիվը 2-ը 10-ի հարաբերակցություն ունի, ինչը նույնպես կայունության ցուցանիշ է: Ազատվողները հիմնականում այն աշխատակիցներն են, ում կենսաթոշակային տարիքն է լրացել:



ՉՍՓՈՂՈՇԻՉ գ.ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր [Ամբիոնի կանոնակարգ](#)
[Ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ](#)
[Ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ](#)
[Դասընթացի գնահատման կանոնակարգ](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ինչպես նշվեց, վարպետները և դասախոսները աշխատանքի են ընդունվում մրցութային կարգով և միշտ չէ, որ վերջիններս ունենում են դասավանդման փորձ: Ուստի այս խնդրի լուծումը ստանձնում են քոլեջի ամբիոնները, որոնց կանոնակարգում հստակ նշված են սկսնակ դասավանդողներին ներկայացվող օժանդակության, մենթորության քայլերը: Բացի այդ մեթոդական աջակցություն է ցուցաբերվում քոլեջում գործող ուսումնամեթոդական խորհրդի, փորձառու մասնագետների կողմից, ում կցված է սկսնակ դասախոսը: Նմանօրինակ մենթորության արդյունավետությունը ապացուցվում է նրանով, որ սկսնակները արտաքին և ներքին գնահատումների ժամանակ ներկայանում են հավուր պատշաճի:

Ինչպես նշվեց, քոլեջը իր տարեկան ծախսերի նախահաշվում հատկացնում է որոշակի ֆինանսական միջոցներ աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման համար: Օրինակ՝ 2018 թվականին ՈԱԱԿ-ում վերապատրաստվել է քոլեջի ներքին որակի ապահովման կենտրոնի ղեկավարը, օգոստոսին՝ քոլեջի կադրերի տեսուչը և այլոք: Նման վերապատրաստումները նպատակային են և հնարավորություն են տալիս աշխատակիցներին ծանոթանալ իրենց աշխատանքի ոլորտում տեղի ունեցած փոփոխություններին և նորամուծություններին, դրանք բերել քոլեջ և կիրառել ուսումնական գործընթացում:

ՉՍՓՈՂՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմքեր Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների
Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները՝ պաշտոնի նկարագրեր
[Հարցումների անցկացման կանոնակարգ](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի հաստիքացուցակի ձևավորումը, աշխատողների պարտականությունների սահմանումն ըստ պաշտոնների, կարգավորվում են կանոնադրությամբ, առանձին ստորաբաժանումների կանոնակարգերով, պաշտոնների նկարագրերով:

ԿՏՊԲ-ում վարչական աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար գործում են հետևյալ ստորաբաժանումները՝ կադրերի բաժին, հաշվապահություն, ուսումնական մաս, կարիերայի, պրակտիկայի, հեռակա ուսուցման, հանրակրթության, բժշկական մասնագիտությունների բաժիններ, գրադարան, տնտեսական բաժին, բուժկետ, ճաշարան, որակի ներքին ապահովման կենտրոն, արխիվ:

Քոլեջի վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքները նպատակաուղղված են ռազմավարական նպատակների իրականացմանը: ԿՏՊԲ-ն ներկայումս ունի 3 վարչական և 27 ուսումնաօժանդակ և տեխնիկական աշխատող: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին քոլեջի ստորաբաժանումները ռազմավարական ծրագրի իրականացման համար կազմում են իրենց տարեկան աշխատանքային պլանները, իսկ տարեվերջին տալիս են հաշվետվություն, որը

ամփոփ ձևով ներակացում է տարեկան իրականացված աշխատանքները, բացահայտված խնդիրները և աշխատանքների արդյունավետությունը: Վարչական և ուսումնասովանողական աշխատողների աշխատանքի, ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետությունը պարզելու և եղած խնդիրները բացահայտելու համար իրականացվում են հարցումներ թե՛ ուսանողների շրջանում, թե՛ աշխատողների: Ճիշտ է հարցումները հենց հատուկ աշխատակիցներին չեն վերաբերում, այլ այն ստորաբաժանումների աշխատանքին, որտեղ վերջիններս աշխատում են և բացահայտված խնդիրները անմիջականորեն կապ ունեն նրանց հետ: Հարցումների արդյունքների հիման վրա իրականացվել են որոշ բարեփոխումներ, որոնց արդյունքում ակտիվացել է գրադարանի աշխատանքը (կազմակերպվում են միջոցառումներ, գրքի ընթերցումներ, քննարկումներ, գիրք նվիրելու մշակույթը), բուժկետը համալրվել է համապատասխան սարքավորումներով և դեղորայքով:

Աղյուսակ 3

ՎԱՐՉԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱԶՄԸ

№	Աշխատակցի ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոնը	Աշխատանքային ստաժը քվեջում
1	Թովմասյան Վայյա Սիրեկանի	տնօրենի պարտականությունները կատարող, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն	41
2	Գևորգյան Գագիկ Լիպարիտի	Ուսումնաարտադրական պրակտիկայի գծով փոխտնօրեն	14
3	Մարգարյան Մարինե Մաքսիմի	դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն	23
4	Սեմիրջյան Կարինե Մեսրոպի	պրակտիկայի ղեկավար	30
5	Բալբաբյան Ազիզ Ոսկանի	գլխավոր հաշվապահ	17
6	Հակոբյան Քրիստինե Մարտինի	կադրերի տեսուչ	15
7	Հովասյան Ալվարդ Հենրիկի	հաշվետար, պահեստապետ	21
8	Ստեփանյան Ժաննա Մկրտչի	կարիերայի պատասխանատու, տնօրենի օգնական	10
9	Տիգրանյան Ռուզաննա Համլետի	ուսումնական մասի քարտուղար	17
10	Բաղդասարյան Աննա Օնիկի	հանրակրթության բաժնի ղեկավար	10
11	Բաղդասարյան Նաիրա Դերենիկի	բաժնի վարիչ բժշկական մասնագիտությունների գծով	
12	Զարգարյան Անահիտ Արտաշեսի	դուալ կրթական ծրագրի ղեկավար	2
13	Մկրտչյան Մարիամ Սերյոժայի	մանկավարժ-հոգեբան	0
14	Թորոսյան Նարինե Նորիկի	Բուժքույր	0

15	Հուսիկյան Սուսաննա Թելմանի	Գրադարանավարուհի	0
16	Աբելյան Լիլիթ Աշոտի	որակի ներքին ապահովման կենտրոնի ղեկավար	4
17	Խչոյան Անահիտ Մանվելի	համակարգչային տեխնիկայի սպասարկող	1
18	Մարգարյան Եսթեր Գագիկի	Լաբորանտ	5
19	Նիկողոսյան Էլզիկ Արարատի	Հավաքարար	30
20	Խուրոյան Գոհար Վարդանի	Հավաքարար	1
21	Թադևոսյան Գայանե Ասատուրի	Հավաքարար	4
22	Սիմոնյան Գոհար Սուրենի	Հավաքարար	3
23	Դավթյան Լուսինե Աբովի	Հավաքարար	1
24	Պողոսյան Աիդա Վաղարշակի	Արխիվավար	47
25	Աբրահամյան Վոլոդյա Զավենի	տնտեսավար, պարետ	1
26	Դանիելյան Արսեն Մայիսի	գիշերային պահակ	18
27	Ազիզյան Ռուբիկ Աղամիրի	գիշերային պահակ	17
28	Մարտիրոսյան Յուրիկ Հրանտի	գիշերային պահակ, բակապան	1
29	Եղիազարյան Մարինե Մուկուչի	Լաբորանտ	18
30	Ծատուրյան Մերի Արմենի	Գործավարուհի	1

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Քոլեջի դասախոսական անձնակազմի մասնագիտական որակավորման աճ՝ վերապատրաստումների միջոցով, որոնք իրականանում են ինչպես դասախոսական կազմի սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ՝ քոլեջի կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներով: • Դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատման մեխանիզմներ՝ դասալսումների, ինչպես նաև հարցումների և դասընթացի գնահատման ընթացակարգի միջոցով: • Դասավանդող անձնակազմի աշխատանքի ընդունման մրցութային կարգ, որը հնարավորություն է տալիս իրականացնել անկողմնակալ ընտրություն թեկնածուների միջև՝ ապահովելով որակյալ կադրերի ներգրավում: • Քոլեջի աշխատակիցների աշխատավարձի աճ՝ կադրային օպտիմալ քաղաքականության միջոցով, ինչն ապահովում է կադրային կայունություն և աշխատանքային որակների բարձրացում: • Երիտասարդ կադրերով քոլեջի անձնակազմի համալրում՝ ապահովելով նորարական մոտեցումներ, ձկունություն, արագ արձագանքման պատրաստականություն: • Դասախոսների ներգրավվածություն հետազոտական աշխատանքներում, ինչը նպաստում է նմանօրինակ փորձի ներդրմանը քոլեջում: • Մասնագիտական և մեթոդական աջակցություն ցուցաբերող, քոլեջի վերապատրաստող դասախոսներ: • Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի խրախուսման մեխանիզմների ներդրում՝ մոտիվացիայի և աշխատանքային որակի բարձրացման նպատակով: • Ուսուցման պրոցեսում պրակտիկ մասնագետների ներգրավվում (դուալ կրթական ծրագրով, բժշկական մասնագիտություններով)՝ սովորողների գործնական հմտությունների ձևավորման նպատակով: • Քոլեջի կառավարման գործընթացներին դասախոսների ակտիվ մասնակցություն՝ խնդիրների վերհանման և լուծման նպատակով: 	<ul style="list-style-type: none"> • Քիչ թվով գործատու դասախոսների ներգրավվածություն՝ պրակտիկ գիտելիքների զարգացման նպատակով: • Այլ ուսումնական հաստատությունների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ փորձի փոխանակման բացակայություն՝ մասնագիտական հմտությունների կատարելագործման, նոր մեթոդների կիրառման նպատակով: • Ուսանողական հարցումների արդյունքները դեռևս լիարժեք չեն բացահայտում դասախոսների մասնագիտական վերապատրաստման ուղղորդելու համար:

Հնարավորություններ	Ռիսկեր
<ul style="list-style-type: none"> • Դասախոսական անձնակազմի վերապատրաստումներ՝ ուսուցման նորարական տեխնոլոգիաների և մեթոդների ներդրման նպատակով: • Մոցվիաթեթի բացակայություն: • Գերազանցության կենտրոններ հանդիսացող ուսումնական հաստատությունների՝ նույն մասնագիտությամբ փորձառու դասավանդողների փորձի փոխանակում՝ մասնագիտական որակների կատարելագործման նպատակով: 	<ul style="list-style-type: none"> • Լավագույն կադրերի հնարավոր հոսունություն:
Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները	
<ul style="list-style-type: none"> • Գործատուների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպումներ, նպատակ ունենալով վերջիններիս ուշադրությունը սևեռել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պատրաստած կադրերի գործնական հմտությունների վրա: Բացի այդ կարևորել գործատուների մասնակցությունը ուսումնական պրոցեսին, ինչը կնպաստի հենց իրենց կազմակերպությունների համար որակյալ կադրերի պատրաստմանը և հետագայում նրանց աշխատանքով ապահովմանը: • Այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության եզրերի որոնում՝ հմուտ մասնագետների փորձի փոխանակման, դասավանդողների շրջանում նորարար մոտեցումների ձեռքբերման և մասնագիտական որակների բարձրացման նպատակով: 	

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ԿՏՊԲ-ն իր ռազմավարական նպատակների և առաքելության շրջանակներում ակտիվացնում է հետազոտական գործունեությունը՝ մշակելով այնպիսի քաղաքականություն, որով հնարավոր կլինի գնահատել կատարվող հետազոտությունների արդյունավետությունն՝ ըստ արդիականության և կիրառելիության, խրախուսել ուսանողների պրակտիկաների կիրառական-հետազոտական ուղղվածությունը, ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

Քոլեջի հետազոտական գործունեության հիմնական նպատակներից է ուսումնառողների մոտ ձևավորել քննադատական, ճանաչողական, վերլուծական և գործնական հմտություններ: Համադրելով, հավաքագրելով, մշակելով և վերլուծելով իրենց ոլորտի /մասնագիտության/ քանակական, որակական տվյալները, դրանցում ցուցաբերել ստեղծագործական և նորարական մոտեցումներ:

Քոլեջն իրականացնում է աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համահունչ հետազոտական աշխատանքներ և ձգտում դրանք կիրառելի դարձնել գործնականում:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հիմքեր	<p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</p> <p>« Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ(փոփոխություն)</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական կարիներտների կանոնակարգ (փոփոխություն)</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ</p>
--------	---

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հիմք ընդունելով քոլեջի կանոնադրությունը և ռազմավարական նպատակները՝ մշակվում և իրականացվում են ստեղծագործական, հետազոտական, փորձարարական աշխատանքներ՝ /կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, անհատական ինքնուրույն աշխատանքներ, դիպլոմային աշխատանքներ, նախագծային աշխատանքներ, ստենդներ, պաստառներ, մակետներ և այլն/ բոլոր ոլորտային մասնագիտությունների շրջանակներում:

Հետազոտական աշխատանքների արդյունավետությունը ապահովելու նպատակով իրականացվում է ուսումնական փաստաթղթերի, առարկայական ծրագրերի և ուսումնամեթոդական նյութերի մշակում, որոնք միտված են մասնագիտական կրթության բնագավառում աշխատաշուկայի ժամանակակից պահանջների, մոտեցումների կիրառմանը, հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Քոլեջի հետազոտական աշխատանքների ընթացիկ իրականացումը և վերահսկողությունը իրականացվում է դասախոսների, ամբիոնների և կաբինետների վարիչների, ինչպես նաև ուսումնական մասի կողմից: Մասնավորապես, ամբիոնի հիմնական ուղղվածության շրջանակներում դասախոսների կողմից կազմակերպվում և համակարգվում են ուսումնամեթոդական աշխատանքները, ինչպես նաև այլ հետազոտական ծրագրեր (ձեռնարկներ, հոդվածներ): Վերահսկողություն է իրականացվում ամբիոնում ուսումնական, մեթոդական, հետազոտական աշխատանքների կազմակերպման ու որակի պահպանման, ուսումնական և արտադրական պրակտիկաների, ուսանողների դիպլոմային աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Քոլեջի հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն է ուղղված նաև պետական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական գրականության, ընդհանուր և հատուկ դասընթացների, ուսումնական պլանների մշակման գործընթացը: Իրականացվում է նաև ամբիոնների դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքների ուսումնասիրություն, ձեռքբերումների ընդհանրացում ու տարածում՝ հետազոտական փորձի փոխանակման նպատակով: Հետազոտական աշխատանքների կազմակերպման գործում կաբինետների կողմից իրականացվում է ուսանողների ուղղորդման, խորհրդատվական աջակցության, ավարտական որակովորման աշխատանքների, ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների քննարկումների, կազմակերպման և անցկացման գործընթաց:

Հետազոտական աշխատանքների իրագործմանը հատկապես նպաստում են տարբեր ոլորտային մասնագիտությունների շրջանակներում անցկացվող պրակտիկաները, դրանք նպատակ են հետապնդում նպաստել ուսանողների կողմից մասնագիտական գործունեության վերլուծության հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև մասնագիտական խնդիրների լուծման ճանապարհին ցուցաբերել ստեղծագործական մոտեցումներ, զարգացնել տեսական և գործնական գործունեության մոդելավորման և իրականացման ունակությունները, ձևավորել ինքնակրթության և ինքնակատարելագործման կարողություններ:

ԿՏՊԲ-ում իրականացվում են ուսումնական, արտադրական, նախադիպլոմային պրակտիկաներ:

Ուսումնական պրակտիկայի նպատակն է յուրացված տեսական գիտելիքների ամրապնդումը, ուսանողների մասնագիտական կողմնորոշումը, հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, նրանց արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների նախապատրաստումը:

Արտադրական պրակտիկայի նպատակն է յուրացված տեսական գիտելիքների ամրապնդումը և ուսանողների մոտ գործնական գործունեության հիման վրա մասնագիտական հմտությունների ձևավորումը:

Նախադիպլոմային պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողների մոտ պրակտիկ գործունեության հմտություններ և հավաքագրել նյութեր՝ ավարտական մասնագիտական աշխատանքի համար:

Ուսանողները պրակտիկաների շրջանակներում, հնարավորություն են ունենում ուսումնասիրել իրենց ոլորտի արհեստավարժ մասնագետների փորձը, մշակել մասնագիտական գործունեության պլանավորման, նախագծման, կազմակերպման, իրականացման, արժևորման, գնահատման և ինքնագնահատման կարողություններ:

Հատկանշական է 2020թ. հունվար ամսին «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտության շրջանակներում «Գրին ֆերմեր» ՄՊԸ-ում հաջողությամբ իրականացված պրակտիկան: Այն միանշանակ մեծ արդյունավետություն է գրանցել, քանզի սովորողները հնարավորություն են ունեցել տեղում զբաղվել հետազոտական աշխատանքներով, լինելով սածիլանոցում, ուսումնասիրել են սերմերի ցանքը՝ հիդրոպոնիկ եղանակով, ջերմատան ժամանակակից ավտոմատացված սարքավորումները, մասնակցել են ընթացիկ բոլոր աշխատանքներին՝ բույսերի կապ, նոսրացում, տերևների հեռացում, հետևել ընդհանուր սանիտարական աշխատանքներին, բերքահավաքին, ծանոթացել սածիլների մշակման արդիական տեխնոլոգիաների իրականացման գործընթացներին, գործնականում կիրառել արդեն իսկ ձեռք բերված տեսական գիտելիքները: Պրակտիկայի ընթացքում ուսանողներից մեկի կողմից առաջարկվել է նորարարություն՝ աշխատանքները ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով, ինչի համար վերը նշված ուսանողը խրախուսվել է «Գրին ֆերմեր» ՄՊԸ-ի ղեկավարության կողմից: Հետագայում ուսանողները իրենց արդյունավետ փորձով կիսվել են նույն մասնագիտության այլ խմբերի հետ:





Իրականացվող հետազոտական աշխատանքները միտված են ուսանողների քննադատական, վերլուծական, ճանաչողական, որոնողական և գործնական հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, ինչը և վերջիններս հաջողությամբ ապահովում են: Վերոհիշյալ գործընթացները նպաստում են նաև կրթական, մասնագիտական ոլորտների անընդհատ և խոր ուսումնասիրությանը և արդիականացմանը:

Մասնավորապես որոշ ոլորտային մասնագիտությունների գծով, ուսանողների կողմից գործարկվել են այնպիսի ծրագրեր և աշխատանքներ, որոնք համապատասխանում են աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին և արդիականությանը:

Օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» օտար լեզվի խորացված իմացությամբ՝ մասնագիտության ուսանողների կողմից մշակվել և իրականացվել է զբոսաշրջային տուրփաթեթ՝ Հրազդան-Խոր Վիրապ-Զանգակատուն-Արենի գինու գործարան-Արենի 1 քարանձավ-Նորավանք-Հրազդան կանգառներով, որտեղ որպես գիդ ներկայացել են հենց ուսանողները: Ուսանողները խմբերով նախապես ուսումնասիրել են յուրաքանչյուր կանգառ, գծել հստակ երթուղին /ժամերով և սննդակարգով/: Այնուհետև ուսանողները ներկայացրել են իրենց անհատական հետազոտական աշխատանքները՝ կատարելով երթուղու SWOT վերլուծությունը: Միաժամանակ այս մասնագիտությամբ սովորող ուսանողները իրականացնում են բացահայտ և թաքնված հետազոտական աշխատանքներ տուրիստական կազմակերպություններում՝ այցելելով և ուսումնասիրելով վերջիններիս մատուցած ծառայությունները:

Վերը նշված մասնագիտության շրջանակներում ուսանողներին հանձնարարվում է նաև ուսումնասիրել տարածաշրջանի հյուրանոցների գնային քաղաքականությունը, ձևավորել տեղեկատվական բուկլետներ, բացահայտել նաև վերջիններիս կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունները: Կատարված հետազոտությունների հիման վրա ձևավորել նոր առաջարկներ՝ բուկլետների, պաստառների, տեսահոլովակների տեսքով: Այնուհետև ուսանողները, իրենց հետազոտական աշխատանքների շրջանակներում, ուսումնասիրելով աշխատաշուկան, ստեղծում են իրենց հյուրանոցները և դրանցում ընդգրկում այնպիսի ինովացիոն ծառայություններ, որոնք գրավիչ կլինեն այցելուների համար:

«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» օտար լեզվի խորացված իմացությամբ՝ մասնագիտության ուսանողները որպես անկախ զբոսավարներ կամ ծառայություններ մատուցողներ, ուսումնասիրում են Հայաստանում գործող տուրիստական

կազմակերպությունների մատուցած ծառայությունները, պայմանները, առանձնացնում, թե դրանցից քանիսն են զբաղվում ներգնա, արտագնա և ներքին տուրիզմով, պարզում գնացուցակը և առաջարկում իրենց խմբերին:

Վերը նշված մասնագիտության ուսանողներին «Ղեկավարման հմտություններ, հոգեբանություն և սպասարկման էթիկա» մոդուլի շրջանակներում, հանձնարարվում է ուսումնասիրել աշխարհի նշանավոր առաջնորդների կյանքն ու գործունեությունը, առանձնացնել նրանց ղեկավարման կարևորագույն հատկանիշները: Կատարված հետազոտությունների արդյունքում ուսանողները ներկայացնում նաև իրենց որպես ղեկավարների՝ նշելով այնպիսի սկզբունքներ, որոնք կկիրառեն իրենց գործունեության ժամանակ:

Ինքնուրույն հետազոտական աշխատանքների շրջանակներում, սովորողներին հանձնարարվում է ուսումնասիրել զբոսաշրջության որևէ տեսակով առանձնացող ՀՀ դեստինացիա և համեմատել արտասահմանյան նմանատիպ այլ դեստինացիայի հետ՝ վեր հանելով դրանց բնորոշ կողմերն ու առանձնահատկությունները:

«Դիզայն» մասնագիտության շրջանակներում ուսանողները իրենց դիպլոմային նախագծերը կատարելիս ուսումնասիրում են համաաշխարհային փորձն ու արդիականությունը, շուկայի ժամանակակից պահանջները: Օրինակ 2019-2020 ուս. տարում արտակարգ դրության պայմաններում, ուսանողները իրենց դիպլոմային աշխատանքները գրելիս ուսումնասիրել են ինչպես Հայաստանի, այնպես էլ Եվրոպական սրճարանների նախագծերը, ինտերիերը, դիզայնի և լուծումները և հեռավար կրթության շրջանակներում ներկայացրել են իրենց տարբերակները՝ ռետրո ոճի մեջ:

«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության շրջանակներում, ուսանողներին հանձնարարվել է ուսումնասիրել համացանցում առկա առավել պահանջված կայքերը, կատարել համապատասխան հետազոտություններ: Ուսումնասիրություններից հետո ուսանողները ստեղծել են բազմատեսակ կայքեր, օրինակ՝ «Ծխախոտի դեմ պայքարի», «Մանկական սրճարանի» կայք՝ հաշվի առնելով շուկայի պահանջարկը, մրցակցությունը, կատարվելիք ներդրումները, սպասվելիք շահույթը, ինչպես նաև այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ սրճարանի գործունեության ընթացքում, «Երաժշտական կայք» ներառելով «YouTube»-ում ավելի շատ դիտումներ արձանագրած երաժշտությունները: Հետազոտական աշխատանքների շրջանակներում կատարել են վիդեոմոնտաժային աշխատանքներ, ստեղծել էլեկտրոնային գրադարան, որտեղ իրենց ցանկությամբ ներառվել են տեղեկություններ թե՛ հայկական, և թե՛ արտասահմանյան հեղինակների մասին, տեղադրվել են նրանց ստեղծագործությունները, ստեղծել են նաև աուդիո գրքեր:

Վերը նշված մասնագիտության ուսանողները մասնակցել են մրցույթի, որի շրջանակներում տեսանյութով ներկայացրել են քոլեջում սովորող ուսանողների ուսումնական ամբողջ գործընթացը՝ առաջինից մինչև վերջին կուրս, նրանց մասնագիտական ձեռքբերումները, որակյալ մասնագետ դառնալու ճանապարհին իրենց կատարած աշխատանքները, ջանքերը և այլն: Ստեղծել են տուրիստական գործակալության կայք, ուսանողներից մեկի կողմից ուղղորդիչ քարտեզով տեսանյութ է պատրաստվել Հրազդան քաղաքի մասին, որն այնքան հաջողված է եղել, որ տվյալ ուսանողը կարողացել է այն վաճառել շահագրգիռ կողմի: Ստեղծել են կայք՝ Հայաստանի Հանրապետության ավանդույթների, տարագների, ազգային խոհանոցի, մշակույթի, պատմության վերաբերյալ, որտեղ ներառվել են նաև ավագ սերնդից հավաքագրված պատմություններ, ավանդագրույցներ՝ փոխանցված սերնդեսերունդ :

Հետազոտական աշխատանքի օրինակ է նաև ԿՏՊԲ-ի կողմից իրականացվող ամենամյա համաքոլեջային «Ճանաչի՛ր Հայրենիքը քո» խորագիրը կրող հայրենասիրական, ճանաչողական արշավի անցկացումը, որի շրջանակներում ուսանողները նախապես

ուսումնասիրում են այցելվող պատմամշակութային կոթողի պատմությունը, տեղում ներկայացնում մասնակիցներին :



Քոլեջի որոշ դասախոսների կողմից արդեն տպագրված ուսումնական ձեռնարկները հետազոտական աշխատանքների արդյունք են, որոնք նաև աղբյուր են հանդիսանում ուսանողների ուսումնասիրությունների և ինքնուրույն աշխատանքների համար:

Մասնավորապես՝

№	Անվանումը	Հեղինակները	Հրատարակ- չություն	Տպագրման տարեթիվը	Էջերի քանակը
1.	«Մեփական կապիտալ: Եկամուտների և ծախսերի հաշվառում»	Ք.Արշակյան	Կրթության ազգային ինստիտուտ	2017	288
2.	«Ակտիվների և պարտավորությունների հաշվառում»	Ք.Արշակյան	Կրթության ազգային ինստիտուտ	2020	
3.	«Օժանդակ և լրացուցիչ ծառայությունների կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում»	Ք.Հակոբյան	Կրթության ազգային ինստիտուտ	2015	224
4.	«Սպասարկման կազմակերպում և հոգեբանություն»	Ք.Հակոբյան	Կրթության ազգային ինստիտուտ	2020	200

5.	«Ջրաներկով աշխատելու տեխնոլոգիական առանձնահատկությունները»	Լ.Ներսիսյան	Զանգակ	2013	38
6.	«Նկարչություն բնօրինակից» պարապմունքի անցկացման մի քանի հարցեր դպրոցում »	Լ.Ներսիսյան	Զանգակ	2015թ.	203 էջ,
7.	«Մանրանկարչության դպրոցները Հայաստանում և Հայկական գաղթօջախներում»	Լ.Ներսիսյան	«Մխիթար Գոշ»	2017/2	175 էջ,
8.	«Զարդանախշը և դրա կիրառումը ուսուցման գործընթացում »	Լ.Ներսիսյան	Զանգակ	2017թ	60 էջ,
9.	«Հայկական մատենական նկարչության ուսումնադաստիարակչական նշանակությունը»	Լ.Ներսիսյան	Զանգակ	2018թ	43 էջ,
10.	«Թղթի վրա գծանկարի տեղադրման մասնագիտական պահանջները Գծանկարի ճեպանկարի ընկալման և կիրառման մեթոդները »	Լ.Ներսիսյան	«Երևան»	2017թ.	224 էջ,
11.	«Գծանկարի հմտությունների կիրառումը դիզայնի և աշխատանքներում»	Լ.Ներսիսյան	«Երևան»	2020թ.	185 էջ,

ՉԱՓՈՂՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջի ռազմավարական նպատակներից է՝ կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրմամբ՝ ավանդական, ինչպես նաև նպատակային փորձարարական և էլեկտրոնային ուսուցման կարճաժամկետ ծրագրերի իրականացման ու տարբեր կազմակերպությունների, այդ թվում ուսումնական հաստատությունների ընդգրկմամբ

ստեղծված ցանցային համակարգի ձևավորման շնորհիվ դառնալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի զարգացման գերազանցության և տարածաշրջանային բազմագործառնության կենտրոն՝ ստանձնելով կրթական բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը՝ աշխատաշուկայի պահանջներին և անձի պահանջմունքներին համապատասխան:

Այս նպատակներից էլնելով կազմակերպվում և իրականացվում են մասնագիտական ուսուցման և վերապատրաստման լրացուցիչ կարճաժամկետ դասընթացներ: Դրանք իրագործելու համար քոլեջը հազեցած է համապատասխան նյութատեխնիկական բազայով և անհրաժեշտ բոլոր միջոցներով, մասնավորապես՝ կարի արհեստանոց, վարսավիրանոց, խոհանոց և այլն:

Հաշվի առնելով շուկայի փոփոխվող պահանջները, քոլեջի նյութատեխնիկական բազան և տեխնիկական հնարավորությունները՝ նախատեսվում է նաև թարմացնել քոլեջի մասնագիտությունների ցանկը, այսինքն հիմնական կամ կարճաժամկետ ծրագրեր ներդնելով՝ զարգացնել արհեստագործական հոսքը:

Քոլեջը վերջին 3 տարիների ընթացքում հաջողությամբ և արդյունավետորեն գործարկել է մի շարք կարճաժամկետ ծրագրեր, մասնավորապես՝

2017թ. քոլեջի նախաձեռնությամբ իրականացվել է ժողովրդական և եվրոպական պարերին նվիրված կարճաժամկետ դասընթաց, որի շրջանակներում մասնակիցները տիրապետել են մի շարք պարերի: Այս դասընթացին մասնակցած ուսանողները քոլեջի մյուս ուսանողներին սովորեցրել են իրենց հմտությունները, որոնք հետագայում օգտագործվել են տարատեսակ միջոցառումների ժամանակ: Այս գործընթացը նպաստել է դասապրոցեսի արդյունավետության բարձրացմանը և ակտիվացրել հետաքրքրությունը սովորողների ստեղծագործական մտեցումների նկատմամբ:

2019թ. համագործակցելով GIZ «Ֆրիներջի» ՄՊԸ-ի հետ, իրականացվել է «Արևային և ջերմային կայանների տեղակայում և շահագործում» մասնագիտությամբ 4 ամսյա կարճաժամկետ դասընթաց՝ առկա ուսուցմամբ, որի արդյունքում պայմանավորվածություն է ձևառվել դասընթացի մասնակիցներին հետագայում ապահովել աշխատանքով: Ընդ որում, դասընթացին մասնակցել են տարբեր տարիքային խմբի ուսանողներ, այդ թվում ապագա զինվորներ, քանի որ, վերը նշված կազմակերպությունը նպատակ է հետապնդում ՀՀ տարբեր գորամասերում տեղադրել արևային և ջերմային կայաններ, որոնց տեղադրմանը մասնակից կարող են լինել նաև տվյալ ուսանողները: Դասընթացը իրականացվել է ԴՈՒԱԼ կրթական ծրագրով, որի շրջանակներում, մասնակիցները բացի տեսական գիտելիքներից գործնականորեն դրանք կիրառել և վարձատրվել են Սևան քաղաքի շրջակայքում գտնվող Ծովագյուղ համայնքի արևային և ջերմային կայանների տեղադրման աշխատանքների ընթացքում: Արդյունավետ համագործակցության արդյունքում, դասընթացը իրականացնող քոլեջի երկու դասախոսները վերապատրաստվել և ընդգրկվել են «Արևային և ջերմային կայանների տեղակայում և շահագործում» մասնագիտության արդեն երկարաժամկետ ծրագրի և չափորոշիչների մշակման աշխատանքներում՝ նպատակ ունենալով հետագայում վերը նշված մասնագիտությունը ներդնել քոլեջում՝ եռամսյա կրթությամբ: Դասընթացի մասնակիցներին աշխատանքի տեղավորեման գործընթացը շարունակվում է:



Նույն թվականին համագործակցելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Հրագրանի ՁՏԿ-ի հետ՝ իրականացվել է «Հաշվետար» մասնագիտությամբ երկամսյա կարճաժամկետ դասընթաց՝ առկա ուսուցմամբ: Դասընթացի շրջանակներում մասնակիցները ձեռք են բերել մասնագիտական բարձր որակներ և անհրաժեշտ գիտելիքներ, ինչն ապահովել են քուլեջի փորձառու դասախոսները: Բացի «Հաշվետար» մասնագիտության անհրաժեշտ գիտելիքներից, նրանք մանրակրկիտ ուսումնասիրել և լիարժեք յուրացրել են համակարգչային օպերատորության հիմունքներով նախատեսված գիտելիքներ՝ ձեռք բերելով մասնագիտական հմտություններ, որի արդյունքում մասնակիցներից ոմանք արդեն ուսուցման ընթացքում տեղավորվել են աշխատանքի: Դասընթացին մասնակցել են տարբեր տարիքային խմբի ուսանողներ, նրանց աշխատանքի տեղավորման գործընթացը ևս շարունակական բնույթ է կրում:



«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության շրջանակներում մշակման փուլում է նաև ԴՈՒԱԼ կարճաժամկետ ծրագիրը, որը նախատեսված է ինչպես ուսանողների, այնպես էլ՝ մեծահասակների համար: Վերը նշված կարճաժամկետ ծրագրերի արդյունավետ գործարկումը պայմանավորված է ոչ

միայն քոլեջի նյութատեխնիկական բազայով, այլ նաև՝ մասնագիտական, գիտելիքներով, կարողություններով, հմտություններով օժտված փորձառու մարդկային ռեսուրսներով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարագացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Հիմքեր	<p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի գրադարանի աշխատանքի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական կաբինետների կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ</u></p> <p><u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ</u></p>
--------	---

Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացմանն համար քոլեջում առկա են մի շարք անհրաժեշտ ռեսուրսներ: Շենքը հիմնանորոգված է, ունի նորագույն տեխնիկական միջոցներով հագեցած կաբինետներ, լաբորատորիաներ, լսարաններ, 3 համակարգչային սենյակ, նորագույն մարզագույքով մարզադահլիճ և խոհանոց, ժամանակակից գույքով վարսավիրանոց, կարի արհեստանոց, ուսումնական նպատակով կահավորված հյուրանոցային սենյակ, գոդման, փականագործական և կենցաղային զագային սարքավորումներով կահավորված արհեստանոց: Ուսուցումը քոլեջում կազմակերպվում է ժամանակակից ձևերով և մեթոդներով՝ հիմքում ունենալով ավանդական մեթոդների լավագույն և արդարացված տարբերակները:

Այս ամենով հանդերձ քոլեջում շարունակաբար տեղի են ունենում նաև նյութատեխնիկական բազայի հարստացման և ուսումնառության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, թարմացման, նորագույն սարքավորումների ձեռք բերման գործընթացներ: Ինչը իրականացվում է հիմնականում վճարովի տեղերից և պետպատվերից գոյացած ֆինանսական մուտքերի հիման վրա:

Հետազոտական աշխատանքներին է ուղղված նաև քոլեջի գրադարանի ակտիվ գործունեությունը, որը թարմացվել է նոր գրականությամբ, նախատեսվում է ստեղծել նաև էլեկտրոնային գրադարան: Տեղի է ունենում ԿՏՊԲ-ի ընթերցողական համակարգի գրական – տեղեկատվական սպասարկում՝ արդի գրադարանավարության և մասնագիտական պահանջների չափանիշներով: Մասնագիտական ուսումնական գործընթացներին համապատասխան նախատեսվում է իրականացնել գրադարանային ֆոնդի (գրականություն, մամուլ, էլեկտրոնային գրադարան) շարունակական ձևավորում և համալրում: Առկա է նաև սերտ համագործակցություն ՀՀ տարածքային և մարզային գրադարանների հետ: Անհրաժեշտ գրականություն որոնելու, ընտրելու, տեղեկատու ապարատից օգտվելու, նորույթներին իրազեկ դառնալու գործընթացներում ընթերցողին ցուցաբերվում է անմիջական օգնություն՝ ամբիոնի վարիչների, դասախոսների, ուսումնական մասի կողմից: Ամբիոնների մասնակցությամբ իրականացվում են ֆոնդի պարբերական վերլուծություն՝ ուսումնական և գիտական գրականությամբ այն ապահովելու նպատակով: Միաժամանակ քննարկվում են դասախոսների կողմից սպագրված ձեռնարկները, գրքերը,

հողվածները, որոնք հետագայում ներառվում են դասապրոցեսի մեջ:

Արդյունավետ հետազոտական աշխատանքների իրագործմանն է ուղղված նաև քոլեջի լաբորատորիաների, կաբինետների, արհեստանոցների առկայությունը: Օրինակ՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության ուսանողները տեսական գիտելիքների հետ մեկտեղ, գործնականում դրանք կիրառում են երթևեկության համար նախատեսված կաբինետում: Այստեղ հնարավորություն են ստանում տեղում ծանոթանալու, ուսումնասիրելու մեքենաների մասերը կաբինետում առկա է մեքենայի ամբողջական մակետ, անհրաժեշտ պաստառների, ստենդների միջոցով սովորում են ճանապարհատրանսպորտային երթևեկության նշաններն ու կանոնները:

Արհեստանոցներում ուսանողները տեսական գիտելիքները կիրառում են գործանականորեն՝ զոդման, գազային սարքավորումների և խողովակների հավաքման, այլ աշխատանքների միջոցով:

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» և «Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտությունների շրջանակներում դասախոսների կողմից հանձնարարվում են հետազոտական աշխատանքներ իրականացնել: Օրինակ՝ ուսումնասիրել որևէ մեքենայի մաս, որը կարող է կիրառվել այլ մեքենաների վրա, ինչպես նաև անհատական աշխատանքների ձևով ներկայացնել ավտոմատ և մեխանիկական փոխանցման տուփերով մեքենաների նմանություններն ու տարբերությունները՝ ուսումնասիրելով համաաշխարհային ավտոմեքենաշինության զարգացման առանձնահատկությունները:

Խնդիր է դրվում ընդլայնել հետազոտական ուսումնասիրությունների շրջանակը, համագործակցությունը հանրապետության այլ քոլեջների, բուհերի, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների հետ: Դրամաշնորհների և արտաքին ֆինանսավորման աղբյուրների միջոցով իրականացնել նորարարական նախագծերի մշակման աշխատանքներ:

Հետազոտություն կատարելիս շատ կարևոր է պահպանել ակադեմիական ազնվությունը: Հաշվի առնելով համացանցի լայն հնարավորությունները, դասախոսական անձնակազմը գրագողությունից խուսափելու համար ուսանողներին հանձնարարվող ռեֆերատների, դիպլոմային նախագծերի թեմաները ընտրում է համապատասխան նյութի ծավալուն ուսումնասիրություններից հետո: Դրանք համակարգվում և հանձնարարվում են հիմնականում անհատական աշխատանքների ձևով, վերահսկվում են ընթացիկ աշխատանքները, գրականության ցանկը և հատկապես խրախուսվում են այն աշխատանքները, որտեղ արտացոլված են ուսանողների նորարարական և փորձարարական մոտեցումները:

Հատկանշական է «Դիզայն» մասնագիտության շրջանակներում ուսանողների հետազոտական աշխատանքների խրախուսման, հնի ու ժամանակակից տարրերի համադրման մեթոդների և մեխանիզմների իրականացման գործընթացը: Մասնավորապես, պահպանելով հանձնարարվող թեմաների արդիականությունը, և շեշտը դնելով ինքնուրույն մտածողություն ձևավորելու կարողությունների զարգացման վրա, ուսանողները դասապրոցեսի ընթացքում ծանոթանում և ուսումնասիրում են հայկական զարդանախշերի ծագումնաբանությունը: Նույն խմբարնտանիքին պատկանող զարդանախշերով ստեղծում են ժամանակակից զարդանախշեր: Ստեղծված ժամանակակից զարդանախշը պատկերագրում են կենցաղային տարբեր իրերի վրա: Այս աշխատանքները կատարվում են նաև հաշվի առնելով պահանջարկը, հետաքրքրությունն ու արդիականությունը հին հայկական զարդանախշերի նկատմամբ, որոնք արտահայտվում են ինչպես տարբեր հագուստների էլեմենտների, այնպես էլ զարդերի և այլ իրերի վրա:

«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» օտար լեզվի խորացված իմացությամբ՝ մասնագիտության շրջանակներում, դասախոսների կողմից իրականացվող խրախուսման

մեթոդներից է նաև ուսանողների հետազոտական այնպիսի նախագծերի մշակումը, որոնք արդիական են, համապատասխանում են շուկայի պահանջարկին և կարող են հետազոտողների համար հանդիսանալ ինչպես ֆինանսական աղբյուր, այնպես էլ շնորհակալագրերի, պատվոգրերի, բանավոր խոսքի և այլնի տեսքով: Բացի այդ, նույն թեմայի շրջանակներում կատարվող հետազոտությունների ժամանակ, յուրաքանչյուր ուսանող ընտրում է իր հետազոտական հարցը /վարկածը/, որով էլ լիարժեք բացատրում է գրագողության ռիսկերը:

Մովորողներին հանձնարարվում են այնպիսի անհատական հետազոտական աշխատանքներ, որոնք նպաստում են նրանց ինովացիոն մտածողության ձևավորմանը և զարգացմանը: Օրինակ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ստովորողներին «Մարիոթը Հայաստանում և Մարրիոթը արտասահմանում» խորագիրը կրող աշխատանքի շրջանակներում, հանձնարարվում է ուսումնասիրել և ներկայացնել «Մարրիոթ» հյուրանոցային ցանցի առանձնահատկությունները տարբեր երկրներում /Ներքին և արտաքին հարդարում, ազգային խոհանոցների համադրում և այլն/:

Գրագողության դեմ պայքարի ընթացակարգերի մշակման համար քոլեջում շարունակաբար քննարկումներ են տեղի ունենում ամբիոնների վարիչների, դասախոսական անձնակազմի միջև, որի ընթացքում վերջիններս կիսվում են իրենց արդյունավետ փորձով և նոր ուղիներ առաջարկում:

Աշխատակազմի հետազոտական գործունեության խրախուսման կոնկրետ մեթոդաբանություն չկա:

ՉԱՓՈՂՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրատարակումների ցանկ, կոնֆերանսներին, մրցույթներին, փառատոններին, ցուցահանդեսներին մասնակցություն

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2016	2017	2018	2019	2020
1	«Образование и воспитание» международный научный журнал «Возрастные возможности приобщения учащихся к искусству» № 1 (21) / 2019 г. издательства ст64. «Школьная педагогика» международный научно - методический журнал «Педагогика: воспитательная деятельность педагога» издательства «Молодой ученый» г. Казань, № 2 (15), июль 2019 г. ISSN 2410 – 7344 ст 30, с1-3. «Молодой ученый» международный научный журнал «Хачкары и их смысловые элементы» №20 (258) / 2019 г. издательства ст531 ISSN 2072-0297				«Молодой ученый» международный научный журнал «Особенности преподавания курса национального орнамента в колледже» № 51 (237) ISSN 2072 – 0297 2018г издательства ст 321.		
2							
	Կոնֆերանսներին(երկիրը)						
	Մրցույթ (երկիրը)						
	Ցուցահանդես (երկիրը)				<<Կերպարվեստ	<<Կերպարվե	

				անվանակարգում Հայաստանի Թեքեյան մշակութային միության ամենամյա միջազգային մրցույթ ցուցահանդես:	Եստ անվանակար գում Հայաստանի Թեքեյան մշակութային միության ամենամյա միջազգային մրցույթ ցուցահանդես : 1-ին միջազգային Հայկական ֆոտոփառատ ոն Ժամանակակ աից արվեստի թանգարան 2019թ. Բնապահպան ությունը կերպարվեստ ի լոգոյով ՀԿ, թեմա <<Հանուն կենդանիների պաշտպանու թյան>> ցուցահանդեսու մ գրավել եմ առաջին տեղ:
--	--	--	--	---	---

Հիմքեր [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՄՈՒՀ-ը դեռևս չունի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականություն, սակայն մի շարք միջազգային ծրագրեր ներդրվել և արդյունավետ գործարկվում են:

Միաժամանակ ՄՈՒՀ-ը համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ՝ քոլեջի միջազգայնացման գործընթացը կազմակերպելու նպատակով:

Օրինակ՝ 2019թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ և գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում /ՄԿՈՒ համագործակցություն/» Հարավային Կովկասի տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, մի շարք քոլեջների տնօրեններ և գործատուներ մասնակցել են մի քանի փուլով իրականացված վերապատրաստումների. վերջնարդյունքում տեղի է ունեցել մրցույթ, որում հաղթող է ճանաչվել նաև ԿՏՊԲ-ն: Վերապատրաստումների շնորհիվ քոլեջում ներդրված և ապագայում ներդրվող ԴՈՒԱԼ կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպման համար ձեռք են բերվել մասնագիտական գիտելիքներ, գործատուներ ձեռք բերման անհրաժեշտ հմտություններ և մեթոդներ՝ հաշվի առնելով նաև գործատուների և շուկայի ժամանակակից պահանջները:

2020թ «Եվրոպական թրեյնինգ» հիմնադրամի կողմից քոլեջը ընտրվել է գերազանցության ցանցի անդամ, հետագայում տարբեր ծրագրեր գործարկելու հեռանկարով:

Հարկ է նշել նաև, որ քոլեջի դասախոսներից Լ.Ներսիսյանը սեփական նախաձեռնությամբ մասնակցել է բազմաթիվ միջազգային ցուցահանդեսների, մրցույթների, ունի միջազգային ամսագրերում տպագրված մի շարք հոդվածներ, որոնք ներկայացված են վերը նշված աղյուսակում:

Իսկ միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգեր դեռևս առկա չեն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե.ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

<p>Հիմքեր</p>	<p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի առարկայական (մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ(փոփոխություն)</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոններում դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ (փոփոխություն)</p> <p>Հարցումների անցկացման կանոնակարգ</p>
---------------	--

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելու լավագույն մեխանիզմներից է քոլեջի կողմից արդյունավետ իրականացվող պրակտիկաները, որոնք հանդիսանալով ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս և հենվելով ուսանողի ստեղծագործական մտածողության վրա, խթանում են մասնագիտական հմտությունների ձևավորմանը և անմիջականորեն նպաստում արհեստավարժ մասնագետների կայացման գործընթացին:

Քոլեջում կազմակերպվող սեմինարները, ցուցահանդեսները, տարատեսակ միջոցառումները ուսանողների հետազոտական աշխատանքների արդյունք են, որոնք բխում են նաև ուսումնական գործընթացների արդյունավետ իրականացումից: Այս գործընթացին է միտված նաև ճանաչողական այցերը, արշավները, որոնց շրջանակներում բացահայտվում են ուսանողների հետազոտական կարողությունները, դրանց շրջանակներում հանձնարարվում են ներկայացնել ինքնուրույն աշխատանքներ:

Օրինակ՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Միջազգային համագործակցության գերմանական խնայբանկերի հիմնադրամի կողմից կազմակերպվել է «Անձնական ֆինանսների արդյունավետ կառավարում» թեմայով դասընթացը: Դասընթացի նպատակն էր՝ զինել մասնակիցներին համապատասխան գիտելիքներով: Դասընթացի ավարտին ձեռք բերված գիտելիքների հիման վրա կազմակերպվել է «Խնայողությունների խաղը», որի ընթացքում ուսանողները ներկայացրել են իրենց տեսակետները, առաջարկությունները, բացահայտվել են նրանց կարողությունները ձեռնարկատիրության ոլորտում: Սովորողները ներկայացրել են իրենց կազմած փոքր բիզնես-պլանները, որի արդյունքում քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության ուսանողները գրավել են առաջին տեղը:



«Դիզայն» մասնագիտության շրջանակներում ուսումնական գործընթացը հետազոտական գործունեության հետ կապելու համար, շարունակաբար կազմակերպվում են տարբեր թեմաներով ցուցահանդեսներ: Օրինակ՝ «Տիպոգրաֆիա և շրիֆտ» առարկայից ուսանողները ցուցահանդեսի շրջանակներում ներկայացրել են իրենց աշխատանքները՝ «Տառեր՝ բուսական մոտիվներով, հայկական թռչնատառեր» թեմայով, որտեղ բացահայտվել է նրանց ստեղծագործական, տրամաբանական մտածողությունը և վառ երևակայությունը:





Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողները հաճախում են Հրազդանի Երկրագիտական թանգարան, ծանոթանում տարածաշրջանի պատմությանը, և ամբողջական տեղեկություն ստանում տարածաշրջանում հաստատված տեղաբնիկների պատմագիտական զարգացման, նրանց վարած կենցաղի, նյութական մշակույթի, հուշարձանների, պատմաաշխարհագրական պայմանների մասին: Այնուհետև ձեռք բերված գիտելիքների հիման վրա կատարում են հետազոտական աշխատանքներ՝ ներկայացնելով իրենց տոհմի պատմության, վարած կենցաղի, սպրելակերպի, ազգային կերակուրների և այլնի մասին:



Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելու նպատակով, «Դիզայն» և «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության դասախոսների կողմից այս բաժինների ուսանողներին հանձնարարվում է ներկայացնել հետազոտական աշխատանք, որի շրջանակներում «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանողները ուսումնասիրում և «Դիզայն» մասնագիտության ուսանողներին են ներկայացնում որևէ պատմամշակութային հուշարձանի պատմություն, որը լսելուց հետո վերջիններս վեր են հանում նույն կոթողի զարդանախշերի սինվոլիզմը և ծագումնաբանությունը:

ԿՏՊԲ-ում իրականացվող հետազոտությունների շնորհիվ վերանայվում են մի շարք ծրագրեր: Մասնավորապես ՄԿՈԲԶԱԿ-ի կողմից իրականացվող մշտադիտարկումների արդյունքում մշտադիտարկող հանձնաժողովի կողմից առաջարկություններ են արվում՝ ներկայացնել քոլեջի դիտարկումները ՄԿԾ-ներում փոփոխությունների կատարելու վերաբերյալ: Ամբիոնների քննարկման արդյունքում գրվում են համապատասխան առաջարկությունները, որոնք հետագայում հաշվի են առնվում նոր կրթական չափորոշիչների մշակման ժամանակ: Քոլեջի դասախոսական կազմի կողմից այսպիսի հետազոտական աշխատանքներ են տեղի ունենում բոլոր մասնագիտությունների գծով: Օրինակ՝ քոլեջի բոլոր մասնագիտություններում ուսումնասիրում էին մարքեթինգ /շուկայագիտություն/ մոդուլը, բացի «Հաշվապահական հաշվառում» բաժնից, ինչը մեծ բացթողում էր: Առաջարկությունների արդյունքում մարքեթինգ մոդուլը ներառվեց նոր կրթական չափորոշիչի մեջ: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Պատասխանել հետևյալ հարցերին	%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	70%
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	93%
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	

Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները /SWOT վերլուծություն/

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> Քոլեջի կանոնադրությունից և ռազմավարական նպատակներից բխող ստեղծագործական, հետազոտական, փորձարարական այնպիսի աշխատանքների իրականացում, որոնք բավարարում են մասնագիտական կրթության բնագավառում գործատուների պահանջները և դրանցում արտահայտվում են ուսանողների ստեղծագործական, նորարարական, ինքնուրույն մտածողական կարողությունները: Նյութատեխնիկական բազի շարունակական թարմացում, ատկա ռեսուրսների համապատասխանություն ժամանակակից պահանջներին /լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, արհեստանոց, հյուրանոցային սենյակ և այլն/: Որոնք ապահովում են ուսանողների և դասավանդողների հետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացումը: 	<ul style="list-style-type: none"> Դասախոսական կազմին հետազոտական աշխատանքներին ներգրավելու համար ոչ բավարար խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև այս մասով ֆինանսական միջոցների բացակայություն: Հետազոտական նախագծերում միջազգային համագործակցության բացակայություն՝ դասախոսական անձնակազմի օտար լեզվի չիմացության պատճառով:

<ul style="list-style-type: none"> • Արդյունավետ գործարկված մի շարք կարճաժամկետ ծրագրեր՝ քոլեջի նյութատեխնիկական հազեցած բազայի և մասնագիտական բարձր որակներով օժտված դասախոսական կազմի շնորհիվ: • Պրակտիկների շրջանակներում արդյունավետ իրականացված մի շարք հետազոտական աշխատանքներ՝ մասնավորապես տարբեր ոլորտային մասնագիտություններով գրանցվել են մեծ հաջողություններ : • Սովորողները պրակտիկաների շրջանակներում, ուսումնասիրում են իրենց ոլորտի արհեստավարժ մասնագետների փորձը, մշակում մասնագիտական գործունեության պլանավորման, նախագծման, կազմակերպման, իրականացման, արժևորման, գնահատման և ինքնագնահատման կարողություններ: • Իրականացվում է ամբիոնների դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքների ուսումնասիրություն, ձեռքբերումների ընդհանրացում ու տարածում՝ հետազոտական փորձի փոխանակման նպատակով: • Քոլեջում ամբիոնների վարիչների, դասախոսական անձնակազմի միջնտեղի են ունենում շարունակաբար քննարկումներ՝ որտեղ վերջիններս կիսվում են իրենց արդյունավետ փորձով և նոր ուղիներ առաջարկում գրագողության դեմ պայքարի նպատակով: 	
<p>Հնարավորություններ</p>	<p>Ռիսկեր</p>
<ul style="list-style-type: none"> • Նախատեսվում է ստեղծել էլեկտրոնային գրադարան՝ սովորողների և դասախոսական կազմի հետազոտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և խթանելու նպատակով: • Հետազոտական աշխատանքները առավել որակյալ դարձնելու, միջազգային փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով միջազգային համագործակցության ընդլայնում: • Դրամաշնորհային ծրագրերի մասնակցությամբ հետազոտական ծրագրերի իրականացում • Ժամանակակից հետազոտական գործիքների հասանելիությունը, ձեռք բերումը հնարավորություն կընձեռնի բարելավել հետազոտական աշխատանքների որակը: • Հետազոտական աշխատանքների առևտրայնացում: 	<ul style="list-style-type: none"> • Գրագողության անվերահսկելիություն: • Հեղինակային իրավունքների խախտում: • Որոշ ոլորտային մասնագիտությունների շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքների նկատմամբ գործատուների պասիվ հետաքրքրություն, ինչը նվազեցնում է ուսանողների շահագրգռվածությունը:
<p align="center">Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները</p>	

- Մշակել ֆինանսական և խրախուսման մեխանիզմներ՝ դասախոսական կազմին հետազոտական աշխատանքներին ներգրավելու նպատակով:
- Սովորողների և դասախոսական կազմի համար օտար լեզվի շարունակական դասընթացների կազմակերպում՝ հետազոտական նախագծերում միջազգային համագործակցություն ձևավորելու, միջազգային փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով:
- Էլեկտրոնային գրադարանի ստեղծում՝ սովորողների և դասախոսական կազմի հետազոտական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և խթանելու նպատակով:
- Հետազոտական աշխատանքների իրականացում՝ հաշվի առնելով գործատուների և արտաքին շահառուների պահանջները, ինչը և կրնդլայնի վերջիններիս հետաքրքրությունների շրջանակը:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

ԿՏՊՔ ռազմավարական նպատակների իրագործման նախադրյալներից մեկը համապատասխան ուսումնական և աշխատանքային միջավայրի ապահովումն է: Քոլեջը հազեցած է ժամանակակից նյութատեխնիկական բազայով, ձևավորված են անհրաժեշտ ենթակառուցվածքները, որոնք բավարար են որակյալ կրթություն մատուցելու և արդի ժամանակաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մասնագետներ պատրաստելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:	
Հիմքեր	<u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն</u> <u>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի գրադարանի</u> <u>աշխատանքի կանոնակարգ</u>
Պատասխանել հետևյալ հարցերին:	50%
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	41,6%
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	50%
Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:	
<p>ԿՏՊՔ-ի կարևոր ռազմավարական նպատակներից է նյութատեխնիկական բազայի հարստացումն ու ուսումնառության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: 2020 թվականի դրությամբ քոլեջի առկա և հեռակա ուսուցման համակարգում սովորում են շուրջ 570 ուսանողներ, որոնց համար ուսումնական գործընթացը կազմակերպվում է 1 մասնաշենքի 33 լսարաններում: ԿՏՊՔ-ում գործում է 2 լաբորատորիա, համակարգչային 3 լսարան, 7 կաբինետ, 3 արհեստանոց :</p> <p>Ուսումնական միջավայրի բարելավումը մշտապես իրականացվող գործընթաց է, որը ԿՏՊՔ-ի ռազմավարական նպատակներին տանող կարևոր առաջնահերթությունն է :</p> <p>Յուրաքանչյուր տարի պարբերաբար ուսումնասիրվում է ԿՏՊՔ-ի մասնաշենքի, լսարանների, կաբինետների վիճակը, տեխնիկայի մաշվածությունը: Ուսումնասիրության արդյունքում ներկայացվում է հաշվետվություն,որի հիման վրա քոլեջի բյուջեից հատկացվում են գումարներ՝ վերանորոգման և տեխնիկայի արդիականացման համար: «Հրազդանի պետական բժշկական քոլեջի» և ԿՏՊՔ-ի միավորման արդյունքում քոլեջը համալրվել է 3 նոր մասնագիտություններով՝ «Քույրական գործ», «Դեզագործ» և «Ատամնատեխնիկական գործ»:</p> <p>2010 թ. հիմնվել է ինտերակտիվ ուսուցման լսարան՝ անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումներով /smart-գրատախտակ, պրոյեկտոր, համակարգիչներ/, որոնց շնորհիվ դասապրոցեսը ավելի արդյունավետ է դառնում:</p>	

Դասախոսների մեծամասնությունը դասընթացները վարում են տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ, իսկ ինտերակտիվ ուսուցման լսարանում անցկացվող մեծ թվով դասախոսությունները ու կազմակերպվող հանդիպումները ցույց տվեցին, որ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև՝ պահանջ, ուստի ստեղծվեց նաև շարժական ինտերակտիվ լսարան՝ պրոյեկտորով և շարժական գրատախտակով:



«Դիզայն» մասնագիտության համար գործում են 1 նախագծման կաբինետ, 3 մասնագիտական լսարան՝ համապատասխան սարքավորումներով, ուսումնական գործընթացը ապահովող նյութերով:



«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության համար ստեղծվել է երթևեկության կաբինետ, որը վերազինվել է ավտոմեքենայի մակետով, որի օգնությամբ ուսանողները սովորում են մեքենայի կառուցվածքը:



«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության համար ստեղծվել է 3 համակարգչային լսարան: Լսարաններից մեկում կա ինտերնետ կապ: Քոլեջի ողջ տարածքում հասանելի է նաև անվճար ինտերնետային WiFi կապը:

«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության համար ձևավորվել է լեզուների կաբինետ, որը նախատեսվում է համալրել լինգվիստիկային սարքավորումներով, ստեղծվել է հյուրանոցային սենյակ՝ դասընթացների գործնական պարապմունքները անցկացնելու համար, որը կազմված է լվացքատան տարածքից, հյուրանոցային համարից՝ լոգարանով, սանհանգույցով, և ադմինիստրատիվ տարածքից:





«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության համար ստեղծվել է տնտեսագիտության կաբինետ, որը համալրվել է մասնագիտական դիդակտիկ նյութերով, պաստառներով:

«Գազային սարքերի և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության համար քոլեջում առկա է գոդման արհեստանոց, որտեղ ուսանողները սովորում են գոդում, եռակում և ջեռուցման կաթսաների վերանորոգում:



Քոլեջում իրականացվող կարճաժամկետ դասընթացների ապահովում են լրացուցիչ եկամուտներ: Նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար ստեղծվել են կարի արհեստանոց՝ համալրված կարի մեքենաներով, վարսահարդարման սենյակ՝ համալրված անհրաժեշտ գույքով, ճաշարան:



Քոլեջի մարզասրահում կա 2 լոգարան, 2 հանդերձարան, կահավորված է սպորտային ժամանակակից մարզագույքով: Այն օգտագործվում է և՛ որպես կրթական ծրագրերի իրականացման անբաժան մաս, և՛ որպես կարճաժամկետ դասընթացների կազմակերպման տարածք՝ (ժամանակակից և ժողովրդական պարեր):



ԿՏՊՔ-ի կարևորագույն ռազմավարական ուղղություններից է նաև գրադարանի զարգացումը: Գրադարանն ունի 90քմ մակերես: Բավարար ուշադրություն է դարձվում գրադարանի հագեցվածությանը: Տարեցտարի գրադարանի գրքային ֆոնդը համալրվում է ժամանակակից ուսումնական գրականությամբ՝ դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, ժամանակակից հեղինակների հրատարակած գրքերով, համապատասխան տեղեկատվական տարբեր նյութերով, որին նպաստում է անվճար ինտերնետ կայքը:

2016-2017 թթ. քոլեջի գրադարանը գույքագրման գործընթացի մեջ է. տեսակավորվել են արդեն հնացած մասնագիտական ձեռնարկները, որոնց ինֆորմացիան արդիական չէ: Գործընթացը դեռ չի ավարտվել:

Քոլեջի գրադարանում առկա է շուրջ 4680 միավոր գրականություն: Քոլեջը չունի էլետրոնային գրադարան, սակայն նախատեսում է ունենալ գույքագրման գործընթացն ավարտելուց հետո: Քոլեջի գրքային ֆոնդը համալրվում է նաև սեփական միջոցների հաշվին: Քոլեջի ձեռքբերումներից են քոլեջում դասավանդող դասախոսների հեղինակած ձեռնարկներն ու հոդվածները:

Քոլեջն ունի սպորտային ժամանակակից մարզագույքով կահավորված մարզասրահ, որն ունի 2 լոգարան և 2 հանդերձարան: Տարածքն օգտագործվում է նաև կարճաժամկետ դասընթացների կազմակերպման համար: Մարզասրահն ունի մոտ 252մ² մակերես:

ԿՏՊՔ-ն ունի kptc.am հասցեով կայք, որը դեռ գտնվում է մշակման փուլում:

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջն իրականացնում է դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման աշխատանքներ, կարևորում է մասնագիտական և համակարգչային լաբորատորիաների, արհեստանոցների, գրադարանի, ամբիոնների և այլ ենթակառուցյունների արդյունավետ և նպատակային օգտագործումը, որոնց արդիականացման և լիարժեք օգտագործման համար հատկացվում են անհրաժեշտ նյութական ռեսուրսներ, իսկ նրանց շարունակական բարելավման համար անհրաժեշտ կլինեն նոր ֆինանսական միջոցներ: Կատարված հարցումների արդյունքների ամփոփումից պարզ է դառնում, որ շահակիցների մոտ 50%-ը բավարարված է ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրից: /Հավելված 1. Հավելված 2./:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:


Հիմքեր

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական
հաշվառման վարման քաղաքականություն

Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունը իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը:

ԿՏՊԲ-ի բյուջետային մուտքերը ձևավորվում են ուսման վճարներից, պետական ֆինանսավորումից, դրամաշնորհային ծրագրերից, կարճաժամկետ դասընթացներից և այլն: Տոկոսային հարաբերակցությամբ քոլեջի ֆինանսական մուտքերը ունեն հետևյալ բաշխվածությունը:




Ինչպես նշվեց նախորդ չափորոշիչում, քոլեջը անընդհատ նորացնում և վերազինում է լաբորատորիաները, գրադարանի գրքերի ցանկը, կատարում է վերանորոգման աշխատանքներ: Այս ամենը քոլեջը իրականացնում է իր միջոցների հաշվին:

2019թ-ին համակարգչային լաբորատորիան թարմացնելու համար իրականացվել է գնում բաց ընթացակարգով (մրցույթի հայտարարմամբ) և գնվել է համակարգչային տեխնիկա: Այս տարի ևս քոլեջը նախատեսում է ձեռք բերել նոր համակարգչային տեխնիկա: Քոլեջի արհեստանոցի համար ձեռք է բերվել փականագործի գործիքներ, թարմացվել են ռազմագիտության կաբինետի ստենդները: Ամառվա ընթացքում բարելավվել են շենքային պայմանները, ավելացվել են նոր լսարաններ և կատարվել ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Բարձրացվել է աշխատակազմի աշխատավարձը մոտ 12%, ինչպես նաև տրվել են պարգևավճարներ:

Քոլեջի ֆինանսական միջոցների զգալի մասը ուղղված է բարձրորակ կրթությունն ապահովելուն: Քոլեջի ռեսուրսների ամենամյա նորացումները և վերազինումները նպատակ ունեն առավել արդյունավետ դարձնել կրթական ծրագրերի իրականացումը:

Կից ներկայացվում է ընդհանուր ծախսերի սխեման.



ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Հիմքեր Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական
հաշվառման վարման քաղաքականություն

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ում ֆինանսական միջոցները բաշխվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ. կազմվում է բյուջեի նախագիծը՝ հիմքում ունենալով հաշվապահության կողմից հաշվարկված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը (աշխատավարձ, սոցիալական վճարներ, պետական հարկեր, կոմունալ վճարումներ և այլն) և քոլեջի ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը, որը քննարկվում է կառավարման խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում՝ հաստատվում տնօրենի կողմից: Յուրաքանչյուր ու.ս.տարվա ավարտին ուսումնամեթոդական խորհուրդը կազմում է և տնօրինությանն է ներկայացնում հաջորդ ու.ս. տարվա ուսումնական ծանրաբեռնվածությունը, որի հիման վրա էլ կատարվում է դասախոսների հաստիքների ձևավորումը և աշխատանքի վարձատրությունը: Ռեսուրսների բաշխման մեխանիզմներից է առանձին ստորաբաժանումների պահանջների հիման վրա գնումներ կատարելը: Քոլեջը հետևում է բյուջեի կատարմանը և յուրաքանչյուր եռամսյակը մեկ քննարկվում է բյուջեի կատարողականը, նախարարություն են ներկայացվում եռամսյակային հաշվետվություններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉդ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Հիմքեր Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական
հաշվառման վարման քաղաքականություն
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին
ապահովման կենտրոնի քաղաքականություն

Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊՔ-ում կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն: Քոլեջը յուրաքանչյուր տարվա սկզբին կազմում է գնումների պլան, որը ներառում է առաջիկա ֆինանսական տարվա համար պահանջվող ռեսուրսները՝ դրանց գնման գործընթացն ըստ օրենքի պահանջի (մրցույթի հայտարարում, մատակարարների ընտրություն և այլն) իրականացնելու համար: Ռեսուրսների բաշխումը կանոնակարգվում է քոլեջի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով և աշխատանքների կատարման ժամանակացույցով և հաշվի է առնված քոլեջի գործունեության առանձնահատկությունները:

Գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմներից է հանդիսանում կրթական ծրագրերի վերանայումը, որից էլնելով գնահատվում է ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ռեսուրսներ են ձեռք բերվում: Ռեսուրսների ձեռքբերումն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ բոլոր կրթական ծրագրերի համար համատեղ, իսկ դրանց բաշխումը՝ ըստ առանձին ծրագրերի ռեսուրսային կարիքների: Քանի որ ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված և ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից հատկացված լիցենզավորման տեղերի թվի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ, որպես կանոն, տեղի չեն ունենում, եթե իհարկե, նոր մասնագիտությամբ ընդունելություն չի իրականացվում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Հիմքեր Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջում փաստաթղթաշրջանառության կազմակերպումը և փաստաթղթերի կառավարումը՝ ներքին և արտաքին փաստաթղթերի շարժք, իրականացվում է գործավարության կանոններին համապատասխան: 2013 թվականից քոլեջում գործում է արտաքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային (Mulberry) համակարգը:

Քոլեջն ունի պաշտոնական էլեկտրոնային փոստ՝ statecollege@list.ru, ուղղված դիմումներին և նամակներին համապատասխան ընթացք է տրվում:

ԿՏՊՔ-ն ունի նաև պաշտոնական կայքէջ՝ www.kptc.am, որտեղ զետեղվում են.

- 1) ԿՏՊՔ-ի կանոնադրությունը
- 2) Ռազմավարական ծրագրերը
- 3) Կանոնակարգերը
- 4) Ընթացակարգերը
- 5) Հայտարարությունները
- 6) Քոլեջի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտեր
- 7) Ինֆորմացիա՝ քոլեջի մասնագիտությունների վերաբերյալ
- 8) Միջոցառումների վերաբերյալ տեսաֆիլմեր, նկարներ և այլն:

Բացի այդ քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ, որտեղ լուսաբանվում է քոլեջի առօրյան, տրվում են հայտարարություններ: Ֆեյսբուքյան էջում կա խումբ՝ Կարիերայի կենտրոն, որտեղ լուսաբանվում են շահակիցների հետ կապը, միջոցառումները, որոնք իրականացվել են սովորողների մասնագիտական կողմնորոշման և

կարիերայի ուղղորդման նպատակով: Բոլոր միջոցներով ապահովվում է հետադարձ կապ: Նշված համակարգերում պարբերաբար կատարվում են թարմացումներ:

Քոլեջի բոլոր ստորաբաժանումները համալրված են համակարգչային տեխնիկայով և կա ինտերնետ կապ, ինչի շնորհիվ շահակիցները լինում են առավել տեղեկացված, փաստաթղթային գործընթացները կատարվում են առավել արդյունավետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Հիմքեր Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն

Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը , հիմնվելով շահակիցների արձագանքների վրա:

Առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների գործունեությունը գտնվում է քոլեջի ղեկավարության անմիջական ուշադրության կենտրոնում: Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով քոլեջում ներդրվել են ներքին հսկողության տեսահամակարգ, անվտանգության ձայնային համակարգ և հակահրդեհային անվտանգության համակարգ: Նշված համակարգերի ներդրմամբ կարգավորվում են ներքին կարգապահական կանոնների պահպանումը, օտար մարդկանց մուտք քոլեջ, ապահովվում է քոլեջի սեփականության ամբողջականությունը: Ներդրվել է նաև ներքոլեջային ռադիոհանգույց, որը հարմարավետություն է ստեղծում ներքոլեջային աշխատանքային պրոցեսում:

ԿՏՊԲ-ում սովորողների, աշխատողների առողջության պահպանման և առաջին օգնություն ցուցաբերելու համար գործում է բուժկետ՝ հազեցած առաջին օգնության համար անհրաժեշտ նյութերով, դեղորայքով: Այստեղ շահակիցները ստանում են առաջին բուժօգնություն: Կատարված հարցումից երևում է, որ շահակիցները բավարարված են առողջության և անվտանգության պահպանման ծառայություններից: /Հավելված 1./:

Քոլեջի առաջին հարկը հարմարեցված է հատուկ կարիքներ ունեցող շահակիցների համար: Կառուցվել է թեքահարթակ, առաջին հարկում սանհանգույցը հարմարեցվել է հատուկ կարիքներ և տեղաշարժման խնդիր ունեցող շահառուների համար: Այս ուղղությամբ աշխատանքները կընդլայնվեն , եթե նման շահակիցների շրջանակը մեծանա:

Վերլուծել ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ի բուժկետը տեղակայված է երրորդ հարկում և աշխատանքը սկսվում է ժամը 9:00-ից : Բուժկետն ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով և որոշ սարքավորումներով, որը դեռևս վերազինման կարիք ունի: Բուժկետում աշխատում է մեկ բուժաշխատող, որը իր պարտականությունների շրջանակում, հարկ եղած դեպքերում, տեղում ցույցաբերում է անհրաժեշտ առաջին բուժօգնություն, իսկ առանձին դեպքերում ուսանողներին կամ աշխատակիցներին ուղեկցում է քաղաքային պոլիկլինիկա կամ հիվանդանոց: Քոլեջն ունի հոգեբան:

Քոլեջի ուսանողների առողջության պահպանման, մարմնակրթության գործում զգալի ներդրում ունի ֆիզդեկը, ով իրականացնում է «ֆիզիկական դաստիարակություն» առարկայի ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան ուսանողների

կրթական, դաստիարակչական, ինչպես նաև առողջության ամրապնդմանն ուղղված գործունեության և սպորտ-մասսայական միջոցառումներ: Բացի ուսումնական պարապմունքներից, կազմակերպվում են նաև մրցույթներ տարբեր մարզաձևերից (սեղանի թենիս, վոլեյբոլ, բազկամարտ, շախմատ, ֆուտբոլ և այլն): Ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի համար քոլեջի հետնամասում ստեղծված է 1200Է մակերեսով խաղահրապարակ: Քոլեջի ուսանողներից մի քանիսը գրանցված են «Հայկական դուրսագնազբում», մի քանիսն էլ հաջողություններ են գրանցել բազկամարտից:

Քոլեջում մարզադահլիճին կից կա նաև մարզասրահ, որը համալրված է ժամանակակից մարզասարքերով:

Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ԿՏՊԲ-ի քաղաքացիական պաշտպանության շտաբը: Քոլեջի բոլոր հարկերում փակցված են արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման սխեմաները, հակահրդեհային անվտանգության համար կան անհրաժեշտ քանակով կրակմարիչներ, որոնք ԱԻՆ-ի հսկողությամբ պարբերաբար թարմացվում են: Քոլեջն ունի անհրաժեշտ թվով մուտքեր՝ ուսանողների տարհանումն արդյունավետ իրականացնելու համար: Յուրաքանչյուր ուսումնական տարի կազմակերպվում են ուսումնական տարհանումներ: Ինչպես նաև ուսումնական պրոցեսի ընթացքում զինդեկր ուսանողներին սովորեցնում է անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու կանոնները: Քոլեջում իրականացվում է շուրջօրյա հերթապահություն, որի համար կազմված է աշխատանքային գրաֆիկ, իսկ գիշերային ժամերին միացվում է անվտանգության համակարգը և շենքը հսկվում է գիշերային պահակի կողմից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն
Որակի ապահովման քաղաքականություն

Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քանի որ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը դեռ 2011 թվականից անցել է մոդուլային ուսուցման, որը ենթադրում է ուսանողների մեջ ձևավորել գործնական հմտություններ, ուստի կրթության որակի բարձրացման համար մշտապես բարելավվում են քոլեջում առկա ռեսուրսները: Ուսումնական գործընթացում արդյունավետ օգտագործվում են առարկայական կաբինետները, որոնք հազեցած են անհրաժեշտ տեխնիկայով: Քոլեջի ռեսուրսները հասանելի են բոլոր ներքին շահակիցներին:

Քոլեջում իրականացվում են ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հարցումներ, որոնցից էլնելով կատարվում են համապատասխան փոփոխություններ: /Հավելված 1.Հավելված 2./:

Վերլուծել Չափանիշ 7-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները: /SWOT վերլուծություն/

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
--------------	--------------

<ul style="list-style-type: none"> • Արդյունավետ կրթական ծրագրերի և հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և ուսումնառության պայմաններ: • Որակյալ ինտերնետ և WiFi կապերի առկայություն՝ քոլեջի համապատասխան ենթակառուցվածքների արդյունավետ աշխատանքերը ապահովելու նպատակով: • Անվտանգության համակարգերի առկայություն • Քոլեջի բոլոր ռեսուրսներից օգտվելու հնարավորություն և հասանելիություն ներքին շահակիցների համար: • Ինտերակտիվ լսարանի առկայություն • Ըստ անհրաժեշտության ռեսուրսների պարբերաբար թարմացում՝ քոլեջի ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման շնորհիվ: • Հյուրանոցային սենյակի առկայություն • Բուժկետի, ճաշարանի, սպորտդահլիճի առկայություն: • Ընդարձակ շենքային պայմաններ, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել լրացուցիչ լսարաններ /օրինակ Հրազդանի պետական բժշկական քոլեջի միավորումից հետո լսարանների խնդիր չի առաջացել/: • Լրացուցիչ և կարճաժամկետ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կաբինետների առկայություն: • Քոլեջի նյութատեխնիկական և ռեսուրսային ապահովվածության և բավարարվածության վերաբերյալ հարցումների պարբերաբար իրականացում ներքին շահակիցների շրջանում՝ հնարավորություն տալով նաև ապահովել դրանց շարունակական վերազինումը և թարմացումը: 	<ul style="list-style-type: none"> • Մասնագիտական գրականության պակաս: • Հաշմանդամություն ունեցող և հատուկ կարիքներով անձանց համար անհրաժեշտ պայմանների ոչ լիարժեքություն:
<p>Հնարավորություններ</p>	<p>Ռիսկեր</p>

- Էլեկտրոնային գրադարանի ստեղծում
- Արտաքին, ինչպես նաև տեղական և տարածքային կառավարման մարմինների հետ համագործակցության ընդլայնում՝ նոր ֆինանսական աղբյուրների ձեռք բերման, ռեսուրսների շարունակական բարելավման, թարմացման նպատակով:

- Այլ ֆինանսական մուտքերի բացակայություն:
- Պետության կողմից տրամադրվող թույլ աջակցություն:

Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները

Քոլեջի թույլ կողմերը և վտանգները հաղթահարելու համար նախատեսվում ֆինանսական աղբյուրների ձեռք բերման նպատակով զարգացնել համագործակցությունը պետական, տեղական և տարածքային կառավարման մարմինների և այլ շահագրգիռ կողմերի /արտաքին շահակից, կազմակերպություններ, հովանավոր, դրամաշնորհներ և այլն/ հետ :

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԶԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ԿՏՊԲ-ն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում և զարգացման ռազմավարության ծրագրի համաձայն իրականացնում է որակյալ կրթության մատուցումը շահագրգիռ կողմերին՝ ապահովելով կրթության որակի արտաքին և ներքին գնահատման չափանիշները: Իր գործունեությամբ ԿՏՊԲ-ն ապահովում է հասարակության հետ սերտ կապի պահպանումը, զարգացումը, և հանրային ծրագրերում քոլեջի ներգրավումը, աջակցում է տարածաշրջանի հասարակության գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանը: Այս գործընթացը նպաստում է քոլեջի վարկանիշի բարձրացմանը, ինչպես նաև քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների իրազեկմանը և հասանելիությանը՝ ստեղծելով համագործակցության լայն շրջանակ:

Քոլեջը հասարակության հետ կապերի բարելավման նպատակով ընդլայնել և զարգացրել է սոցիալական համագործակցության համակարգը: Այս նպատակի իրականացման համար սոցիալական ոլորտում ընդլայնվում է գործընկերների շրջանակը, աջակցվում է դասախոսական կազմին և ուսանողությանը, որպեսզի առավելագույնս ներգրավվեն սոցիալական միջավայրի անցուղարձին: Հասարակական պատասխանատվության բարձրացման նպատակով արդյունավետորեն օգտագործվում են քոլեջի մարդկային և բազային ռեսուրսները՝ վերանայելով ռազմավարական ծրագրերը, ստեղծելով միջոցառումների, ծրագրերի կազմակերպման և իրականացման մշակույթ:


ԶԱՓՈՂՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:	
Հիմքեր	<p>«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն «ԿՏՊԲ-ի 2015-2020 թթ-ին զարգացման ռազմավարության ծրագիր» Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կարիերայի ստորաբաժանման կանոնակարգ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրինական խորհրդի կանոնակարգ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական հաշվառման վարման քաղաքականություն Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական խորհրդի կանոնակարգ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ</p>
	<p>Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</p> <p>ԿՏՊԲ-ի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով և ԿՏՊԲ-ի կանոնադրությամբ՝ ըստ որի լիազորված մարմինն իրականացնում է քոլեջի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը:</p> <p>ԿՏՊԲ-ի հիմնական հաշվետու փաստաթուղթը տարեկան /կիսամյակային/ հաշվետվությունն է, որն իր մեջ ներառում է քոլեջի գործունեության բոլոր բնագավառներն ու</p>

հիմնախնդիրները: Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ քոլեջի խորհուրդը, տարեկան 2 անգամ /կիսամյակը 1 անգամ/ լսում և գնահատում է տնօրենի հաշվետվությունը (հիմք ԿՏՊԲ-ի կանոնադրություն): Խորհուրդը ձևավորվում է ներքին և արտաքին շահակիցներից՝ դասախոսներ, ուսանողներ, գործատուներ, զբաղվածության կենտրոնի ներկայացուցիչներ, արհմիության ներկայացուցիչ, հիմնադրի ներկայացուցիչ, լիազոր մարմնի ներկայացուցիչ:

Երկրորդ կարևորագույն փաստաթուղթը ֆինանսական հաշվետվությունն է՝ ֆինանսական եկամուտների և ծախսերի, կատարողականի: Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ԿՏՊԲ-ն անցնում է ներքին աուդիտ, որը նույնպես ներկայացվում է ԿՏՊԲ-ի կառավարման խորհրդին: Այս գործընթացն ավելի թափանցիկ է դարձնում քոլեջի ֆինանսական գործունեությունը:

ԿՏՊԲ-ի հաշվետվողականության համակարգը գործում է ԿՏՊԲ-ի կանոնադրությամբ:

Բացի ներքին հաշվետվողականությունից, ԿՏՊԲ-ն ապահովում է նաև հաշվետվություններ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական ծառայությանը և այլ պետական գերատեսչություններին: Օրինակ՝ Կարիերայի կենտրոնն ամեն տարի ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ներկայացնում է շրջանավարտների տեղաշարժի վերաբերյալ հաշվետվություն, որն իր մեջ պարունակում է հետևյալը՝/աղյուսակ 1/:



Լիազոր մարմին ներկայացրած հաշվետվությունները ներառում են ոչ միայն ֆինանսական ցուցանիշներ, այլ նաև ուսանողների շարժը, դասախոսական անձնակազմի շարժը, վերջիններիս որակավորման, ստաժի և վարած դասընթացի մասին տեղեկատվություն և ընդունելության արդյունքները: Քոլեջում իրականացվող միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը:

Ներկայացված հաշվետվությունների արդյունքում լիազոր մարմնի կողմից վեր են հանվում քոլեջի խնդիրները, որոշվում է քոլեջի ռիսկայնությունը և, դրան համապատասխան, ՀՀ Կրթության տեսչությունը տարվա սկզբին հրապարակում է իր տարեկան աշխատանքային պլանը՝ ներկայացնելով այն քոլեջների ցանկը, որտեղ պետք է իրականացվեն մասշտաբային ստուգումներ: Հաշվետվությունները ներկայացվում են առանց ուշացումների:

Բացի արտաքին հաշվետվություններից՝ քոլեջում առկա է նաև ներքին հաշվետվողականության համակարգ, որը համակարգվում է համապատասխան ստորաբաժանումների կանոնակարգերով: Բոլոր ստորաբաժանումները համագործակցում են միմյանց հետ: Օրինակ՝ ամբիոնների դասալսումների, հարցումների, քննարկումների

արդյունքում բացահայտված խնդիրներին լուծում տալու համար կադրերի բաժինն իր տարեկան հաշվետվության մեջ ներառում է նաև այն դասախոսների ցանկը, որոնց պարտադիր վերապատրաստման արդյունքում կբարելավվի կրթության որակը:

Հաշվետվողականության այսպիսի մեխանիզմը նպաստում է քոլեջի կառավարման բարելավմանը, քանի որ արձանագրվում են բոլոր հիմնախնդիրները՝ իրենց դրական և բացասական կողմերով, ինչպես նաև բոլոր ձեռքբերումները:

Հասարակությանը տրամադրվող ծառայությունների նպատակները և քաղաքականությունը (օր.՝ մասնագիտական զարգացման /վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ/) կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ քոլեջը դարձնում է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացման առավել մեծ ներուժ ունեցող լիարժեք կառույց՝ տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն՝ ստանձնելով բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը:

Հասարակությանը տրամադրվող ծառայությունների նպատակներից են նաև մարզի, համայնքի ու երկրի զարգացման պահանջների բավարարմանը և մասնագիտական կրթության համակարգի զարգացմանն ուղղված մասնագիտական, կառավարչական, ուսումնամեթոդական, մշակութային, նյութատեխնիկական ներուժի ձևավորմանը նպաստելը, ինչպես նաև հարակից ուսումնական հաստատությունների հետ համագործակցությանը :

ՉԱՓՈՐՈՇԻՉք. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Հիմքեր	«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն «ԿՏՊԲ-ի 2015-2020 թթ-ին զարգացման ռազմավարության ծրագիր»
--------	---

Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունն ու հասանելիության կառուցակարգերը ամրագրված են «ՀՀ կրթության և գիտության մշակույթի և սպորտի նախարարության ԿՏՊԲ ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության», և «ԿՏՊԲ-ի 2015-2020 թթ-ին զարգացման ռազմավարության ծրագիր» փաստաթղթերում:

ԿՏՊԲ-ի գործունեության թափանցիկության ապահովման գործիքներից են քոլեջի կողմից հրատարակվող տեղեկատվական սեղմագրերը, բուկլետները, ՁԼՄ-ները, քոլեջի կայքէջը, թափուր աշխատատեղերի համալրման հայտարարությունները: Սեղմագրերը, բուկլետները հրատարակվում են տարին մեկ անգամ՝ պարունակելով համապարփակ տեղեկատվություն ՄՈՒՀ-ի գործունեության մասին: Դիմորդների ներգրավման, իրազեկման նպատակով իրականացվում են դասախոսների, կարիերայի խորհրդատուի այցելությունները դպրոցներ, որտեղ բանավոր, ինչպես նաև տեսաերիզների, բուկլետների միջոցով ներկայացվում են քոլեջի գործունեությունը, գործող մասնագիտությունները, նրանց առանձնահատկությունները: Այս մեթոդով տեղեկատվությունն ավելի հասանելի է շահառուին:

Քոլեջի բարձր վարկանիշը նպաստում է բարձր որակավորում ունեցող մասնագետների, բիզնես միջավայրի ներգրավմանը: Այս ամենը պայմանավորված է հանրությանը ճիշտ ներկայանալու, հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովման արդյունավետ գործիքների ընտրությամբ, հասարակության հետ հետադարձ կապի գործուն կառուցակարգերի ներդրմամբ: Քոլեջն իր գործունեության լուսաբանումն իրականացնում է www.kptc.am պաշտոնական կայքում, սոցիալական հարթակներում, <http://armcom.am/>, dasar.am, dimord.emis.am, կայքերում:


Այս կառուցակարգը նպաստում է շահակիցների կարիքների ներկայացմանը, քոլեջի խնդիրների վերհանմանը, դրանց լուծմանն ուղիների առաջարկմանը, լուծմանը, ինչը նպաստում է կառավարման բարեփոխմանը, կրթության որակի ապահովմանը, նոր կառուցակարգերի

մշակմանը:


Լուսաբանման միջոցներից են նաև քոլեջում փակցված հարթակները, որոնց վրա փակցվում են տնօրինության կողմից տրվող հրամանները, վերջին նորությունները, հայտարարությունները, շարժական դասացուցակը, սովորողների գերազանցության պատի թերթը, դիմորդի անկյունը, կարիերայի անկյունը, ուսանողի անկյունը և այլն:

Քոլեջը մշտապես կապ է ապահովում գործատուների հետ: ՀԶՏԿ-ն ամեն տարի կազմակերպում է աշխատանքի տոնավաճառ Սահմանադրության հրապարակում, որին մասնակցում են տարածաշրջանի խոշոր ձեռնարկությունները՝ «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ –ն, տուրիստական և հյուրանոցային համալիրներ, «Տելնետ» ՍՊԸ –ն, «Հայրուսգագարդ» ՓԲԸ –ն, «Հրագրանի ՃՇՇԶ» ԲԲԸ-ն, «Վիլն Լայն» ՍՊԸ-ն, «ԷՅ-Ի-ՋԻ-Մերվիս» Հրագրանի մասնաձյուղը, «ՀրագՋԷԿ» ԲԲԸ-ն և այլ ձեռնարկություններ: Քոլեջն այդ գործընթացին մասնակցում է որպես գործատու, իսկ քոլեջի վերջին կուրսի ուսանողներն ու շրջանավարտները՝ որպես աշխատանք փնտրողներ: Երկկողմանի համագործակցության արդյունքում ուսանողների մի մասը ձեռք է բերում աշխատանք՝ հիմք ԿԳՄՄ ներկայացվող հաշվետվություն:


Որոնում են աշխատանք



Աշխատում են ոչ իրենց մասնագիտությամբ



Աշխատում են իրենց մասնագիտությամբ



Այս ամենի արդյունքում քոլեջը ձեռք է բերել վստահելի գործընկերներ և գործատուներ, որոնք ապահովում են ուսանողներին պրակտիկ գիտելիքներով և հետագայում նաև աշխատատեղերով: Դրանք են. «Մարրիոթ Ծաղկաձոր» հյուրանոցային համալիրը, «Ալվա» հանգստյան տունը, «ՆՅՈՒ հորիզոն» գրուպը, «Ալպինա» հանգստյան տունը, «Ադվերան Ռեզորթ»-ը, «Մուլտի ռեստ» հյուրանոցը, «Գրին ֆերմեր» ՍՊԸ, «ՀՃՇԾՋ ՍՊԸ», Հրագրան «Տելնետ» ՍՊԸ, «Հայանտառ» ՊՈԱԿ, «Բազեկատ» ՍՊԸ, «Սասուն Համբարձումյան» ԱԶ, «Զավա Գրուպ» ՍՊԸ և այլն:

Ուսանողական խորհուրդը արդեն մի քանի տարի է ներքին ռադիոհանգույցի միջոցով լուսաբանում է մի շարք հայտարարություններ, որով ամփոփվում են տնօրինության կողմից արձակած հրամանները, ուսանողական, երիտասարդական, մշակութային և տեղեկատվական ոլորտում կատարվող իրադարձությունները և նորությունները: Պարբերաբար հնչեցվում է ՀՀ հիմնը:

Ըստ որակի ապահովման քաղաքականության՝ ԿՏՊԲ-ի աշխատանքի հիմնական սկզբունքներից է հանդիսանում գործունեության թափանցիկությունը. բոլոր ընթացակարգերը հասանելի են շահառուների շրջանակներում:

ԶԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հիմքեր	ՀՀ կրթության և գիտության մշակույթի և սպորտի նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը «ԿՏՊԲ-ի 2015-2020 թթ-ին զարգացման ռազմավարության ծրագիր» Կարիերայի կանոնակարգ
--------	---

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԿՏՊԲ-ում գործող ռազմավարական ուղղություններից է հասարակության հետ կապերի զարգացումը, հանրային ծառայություններում ներգրավվածությունը: Համաձայն իր կանոնադրությամբ սահմանված գործառույթների, քոլեջն ապահովում է հասարակության հետ հետադարձ կապը, որն իրականացվում է տարբեր մեխանիզմներով: Տեղեկատվության արդյունավետ ապահովման ձևերից մեկն առցանց տեղեկատվությունն է, որը հնարավորություն է տալիս արագ արձագանքնել բարձրացված հարցերին, պարզել հասարակության պահանջներն ու ակնկալիքները և գործել դրանց դիտարկումներով՝ ապահովելով հետադարձ կապի իրականացումը: Օրինակ՝ ֆեյսբուքյան էջն ունի 3500-ից ավելի ակտիվ հետևորդներ: Էջում լուսաբանվում են կազմակերպվող դասընթացների, միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն և նորություններ, քոլեջին առնչվող այլ անցուղարձեր: Հետադարձ կապն ապահովվում է նաև քոլեջի պաշտոնական կայքի և էլեկտրոնային փոստի միջոցով:

Քոլեջը գործունեությունը լուսաբանվել է նաև «Մասնագիտական կրթություն և ուսուցում» լրագրում:

ԿՏՊԲ-ն համագործակցում է Կոտայքի մարզի հանրակրթական դպրոցների, հասարակական կազմակերպությունների, գործընկեր և գործատու կազմակերպությունների, ինչպես նաև շահակից մասնակիցների հետ: Ամփոփիչ ատեստավորումների հանձնաժողովներում ընդգրկված են համապատասխան ոլորտների բանիմաց և փորձառու մասնագետներ:

2018-2020 թթ. մարզի երիտասարդությունը գտնվում է Կոտայքի մարզպետարանի և Հրազդանի համայնքապետարանի ուշադրության կենտրոնում: 2019 թ նոյեմբերի 17-ին՝ ուսանողների միջազգային օրվա կապակցությամբ Կոտայքի նախկին մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը հանդիպում էր կազմակերպել մարզի պետական քոլեջների ուսման բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հետ: Մեր քոլեջը ներկայացնում էին քոլեջի ղեկավարությունը, որոշ դասախոսներ և ուսխորհրդի կողմից առաջադրված լավագույն ուսանողներ: Կարևորվեց ուսանողների դերը պետության կայացման գործում: Հանդիպման ավարտին Կոտայքի մարզպետ Ռ. Պետրոսյանը ուսանողներին նվիրեց հանրագիտական բառարաններ՝ կարևորելով ինքնակրթությունը:

Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվում են հայրենասիրական միջոցառումներ, տարբեր սպորտային խաղեր (սպորտլանդիա, շախմատի, ֆուտբոլի ներքոլեջային առաջնություն), որոնց մեջ որոշակի հաջողություններ ունեցող ուսանողները խրախուսվում են մրցանակներով:



Քոլեջում գործում է «Քիք-բոքսինգ» մարագաձևի սպորտային ակումբ, որի մարզիչը քոլեջի դասախոս է, և 2019 թ. Անապա քաղաքում տեղի ունեցած աշխարհի գավաթի առաջնությունում մեր ուսանողը գրավել է 3-րդ պատվավոր տեղը:



Քոլեջն ակտիվ համագործակցում է տարբեր հասարակական կազմակերպությունների հետ: «Բարի եղիր» միջոցառման շրջանակներում քոլեջի ուսանողները 2019 թ դեկտեմբերի 18-ին այցելեցին «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ Հրազդանի ցերեկային կենտրոն: Այցելության նպատակն էր ամանորյա բարձր տրամադրություն հաղորդել կենտրոնի տարեցներին: Ուսանողներն ու տարեցները իրար հրաժեշտ տվեցին՝ հետագայում հանդիպելու ակնկալիքով:





2020 թ. գարնանը «Միասնական Հրազդան» հասարակական կազմակերպությունը Հրազդան քաղաքում բանահավաքչական աշխատանքների կազմակերպման աշխատանքների շրջանակներում Հրազդանի ավագ դպրոցների սաների և քոլեջների ուսանողների շրջանում հայտարարեց շարադրության մրցույթ՝ «Հրազդանը՝ երեկ, այսօր, վաղը» թեմայով, որի նպատակն էր պատկերացում կազմել, թե համայնքի պատանիներին, երիտասարդներին ի՞նչ հարցեր են հուզում և ինչպիսի՞ն կուզենային տեսնել Հրազդան քաղաքը տարիներ հետո: Արդյունքում տարվեցին համեմատականներ անցյալի, ներկայի և ապագայի միջև՝ վեր հանելով համայնքային կարևորագույն հիմնահարցերը, որոնք մեզ կօգնեն ապագայում նոր մոտեցումներ խնդիրների վերհանման և լուծման համար: Մրցույթին մասնակցեցին նաև քոլեջի ուսանողները՝ 10 առաջատար տեղերից 5-ը զբաղեցնելով (<https://www.facebook.com/-Հրազդանի-Բանավոր-Պատմություններ>):

Այս մրցույթի կարևոր նպատակներից է նաև ուսանողների ներկայացրած հետաքրքիր գաղափարները կյանքի կոչել՝ վերածելով դրանք գրանտային ծրագրերի:



ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կողմից 2019 թ. իրականացվեց «ՀՀ 2020 թ. երիտասարդական մայրաքաղաք» մրցույթ: Մրցույթի նպատակն էր նպաստել ՀՀ համայնքների համաչափ զարգացմանը, զարգացնել երիտասարդական նախաձեռնողականություն և նպաստել մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառույցների զարգացմանը: Քոլեջի ուսանողները ուսանողական խորհրդի կոչով ակտիվորեն մասնակցեցին մինչև նոյեմբերի 25-ը հայտարարված քվեարկությանը: Նոյեմբերի 15-ին Հրազդան քաղաք այցելեցին մրցույթի կազմակերպչական կոմիտեն և փորձագետները: Այց կատարվեց Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ, որտեղ փորձագետները հանդիպում ունեցան Հրազդանի տարբեր քոլեջների և ավագ դպրոցների երիտասարդների հետ: Հանդիպմանը մեծ ակտիվություն ցուցաբերեցին հատկապես մեր քոլեջի ուսանողական խորհրդի անդամները, որոնց հիմնավորված պատասխանները և առաջ քաշած հարցերը մեծ տպավորություն թողեցին փորձագետների վրա: Մրցույթի ժյուրիի այցը ԿՏՊԲ:



Քոլեջն ակտիվորեն համագործակցում է այլ ՄՈՒՀ-երի հետ: Փորձի փոխանակման ծրագրի շրջանակներում քոլեջը հյուրընկալել է այլ երկրների կրթական ոլորտում աշխատող մասնագետների: ԿՏՊՔ-ն աշխատանք է ծավալում նաև ՄԿՈՒ ոլորտում: 2016 թվականին այդ շրջանակներում քոլեջ են այցելել Տաջիկստանի ՄԿՈՒ ոլորտի մասնագետներ:



ԿՏՊՔ-ում մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված միջազգային փորձի ներդրումը հանգեցնում է փոխանցման միասնական համակարգի զարգացմանը, տարածմանը և տեղայնացմանը:

Հասարակության հետ կապերի զարգացման արդյունավետ միջոց է նաև տարբեր ցուցահանդեսների կազմակերպումը, որտեղ ցուցադրվում են ուսանողների և դասախոսների աշխատանքները: Ցուցահանդեսներին ներկա են լինում նաև բարձրաստիճան պաշտոնյաներ (նախարարությունների ներկայացուցիչներ, մարզպետ, քաղաքապետ, տնօրեններ, մշակութային գործիչներ և այլն): Քոլեջի Դիզայն մասնագիտության դասախոսներից Լ.Ներսիսյանը քոլեջի անունից մասնակցել է Բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «Բնության մեղեդի» խորագրով անհատական ցուցահանդեսին՝ արժանանալով շնորհակալագրի: Նույն խորագրով ցուցահանդեսի մասնակցել են նաև քոլեջի ուսանողները և արժանացել են պատվոգրերի:

2019 թ նոյեմբերի 30-ին Կոտայքի մարզպետի կազմակերպած «Կոտայքի մարզի

գեղանկարիչների ցուցահանդես»-ի շրջանակներում Լ. Ներսիսյանը արժանացել է նվերների և հավաստագրի:



Քոլեջի ուսանողները շարունակական ակտիվ մասնակցություն են ունենում Կոտայք ԻնֆոՏուն կազմակերպության աշխատանքներին, որոնք կազմակերպվում են երկու ուղղությամբ՝ մեդիագրագիտություն և համայնքային զարգացմանը վերաբերվող գործունեություն:

Համայնքի զարգացման ծրագրի շրջանակներում մեր ուսանողների ներկայացրած լավագույն գաղափարները հավակնում են դառնալ գրանտային ծրագրեր:



Հասարակության հետ կապերի զարգացմանն է նպաստել նաև կամավորների օրվա կապակցությամբ խոշոր ՀԿ-ների ներկայացուցիչների հետ հանդիպումը՝ ամրապնդելով հայրենասիրական և մարդասիրական հատկանիշները:



Մեկստեմբերի 15-ը ամբողջ աշխարհում նշվում է որպես Համաշխարհային մաքրության օր, որին 2018թ.-ին մասնակցել է նաև Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության առաջին և երկրորդ կուրսերը՝ իրենց կուրսղեկների և տնօրենի գլխավորությամբ: Միջոցառմանը մասնակցած կուրսղեկերը արժանացան շնորհակալագրերի:



Այս միջոցառումները նպաստում են ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու ակտիվ քաղաքացու համակողմանի ձևավորմանը:

Քոլեջում առկա է հայտարարությունների ցուցատախտակ ու “Բողոքների և առաջարկությունների արկղ”: Բողոքներն ու առաջարկությունները ցանկության դեպքում գրվում են անանուն, այդ խնդիրները ստանում են համապատասխան լուծում: Օրինակ՝ ուսանողների առաջարկով թարմացվեցին հագուստի կախիչները, շերտավարագույրները և այլն:

Վերը նշված բոլոր միջոցառումների արդյունքում ձևավորվում են անհատի մասնագիտական կրթական կարողությունները և ունակությունները, իրականացվում մասնագիտական

կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ներդրում՝ խթանելով սոցիալական գործընկերության համակարգում երկխոսությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:


Հիմքեր *ՀՀ կրթության և գիտության մշակույթի և սպորտի նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն*
«ԿՏՊԲ-ի 2015-2020 թթ-ին զարգացման ռազմավարության ծրագիր»

Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջի տարբեր ստորաբաժանումներ ունեն հասարակական ծառայությունների մատուցման գործառնություններ. (օրինակ՝ գործատուների հետ կապերի և կարիերայի զարգացման կենտրոնը, կադրերի բաժինը, ընդունող հանձնաժողովը, ուսումնական մասը և այլն): Ներկայացված բոլոր ստորաբաժանումները պարբերաբար իրականացնում են խորհրդատվություն՝ հասարակական տարբեր խմբերի համար:

Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման նպատակն է քոլեջի ուսուցման գործընթացին հաղորդակից դարձնել հասարակական լայն շրջանակներին՝ տարածելով ձեռք բերված դրական փորձն ու գիտելիքը: Մինչև ժամանակ, քոլեջի գերինձիրն է առկա մրցակցային պայքարում պատրաստել այնպիսի պատրաստակամ անհատներ, ովքեր կդառնան մրցունակ և սոցիալապես պատասխանատու մասնագետներ, ինչպես նաև օրինակելի քաղաքացիներ: Այս գործընթացին նպաստում է շարունակական կրթության ծրագրերի իրականացումը, պետական, ինչպես նաև հավատարմագրված բուհերի հետ եղած կապերի ամրապնդումը:

Տեղափոխվել են (ընդունվել են) ԲՈՒՀ



ԿՏՊԲ-ի բազմաթիվ շրջանավարտներ իրենց գործունեությունը ծավալում են ՀՀ հանրային կյանքի տարբեր ոլորտներում:

ԿՏՊԲ-ն իր ամբողջ ներուժով հաղթահարում է կրթական և տնտեսական ոլորտում առաջացած խոչընդոտները՝ զարգացման արդի արագընթաց տեմպերին դիմակայելու համար:

Բացի գիտելիքների մատուցումից քոլեջի գերագույն նպատակներից է նաև հասարակական պատասխանատվության և բարոյական արժեքների սերմանումը:

Որպես տարածաշրջանային, բազմագործառնության հաստատություն՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում իրականացվում են կարճաժամկետ դասընթացներ՝ ապահովելով ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաև արտաքին այլ շահակիցների կարողությունների և հմտությունների շարունակական բարելավումը:

ԿՏՊՔ-ում իրականացված կարճաժամկետ ծրագրերը

Վարսահարդար:	3 ամիս
Ժողովրդական և ժամանակակից պարեր:	6 ամիս
Կարուձև:	2 ամիս
Ավտոփականագործի և գազային սարքավորումների տեղադրման և կարգավորման դասընթաց:	2 ամիս
Համակարգչային օպերատորություն:	3 ամիս
Արևային էներգիայի համակարգերի շահագործում և սպասարկում:	3 ամիս
Հաշվետար:	2 ամիս

Քոլեջում պարբերաբար իրականացվում են մանկավարժական և մասնագիտական վերապատրաստման դասընթացներ քոլեջի և միջին մասնագիտական այլ հաստատությունների դասախոսների համար՝ իրականացնելով փորձի փոխանակում:



ԿՏՊՔ-ի դասախոսների վերապատրաստման դասընթացներն են՝

2016-2017թթ - «MANAGING TVET INSTITUTION», «CULTURE & CREATIVITY COURSE», «STRATEGIC PLANNING COURSE», «Կարողություններին միտված ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում», «Կարողություններին միտված ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում, տեղեկատվական տեխնոլոգիաներ»:

2018-2020 թթ - Ներառական մասնագիտական կրթության կազմակերպման սկզբունքների և իրականացման տեխնոլոգիաների պարզաբանման և ներկայացման համար՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» և «Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» դասընթացները, անձի զարգացման համընդհանուր հմտությունների տիրապետման նպատակով՝ «Անձի զարգացման համընդհանուր հմտություններ» դասընթացը, ՄԻԱՎ-ԶԻԱՀ մարդու իրավունքների թեմայով վարժանք, ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կամավոր խորհրդատվություն, հետազոտություն և այլն:

ԿՏՊՔ-ի դասախոսները չեն դադարում զբաղվել ինքնակրթությամբ: Նույնիսկ վերջին ժամանակներում՝ արտակարգ դրության ժամանակահատվածում քոլեջի դասախոսները փորձեցին իրենց հմտությունները զարգացնել՝ օգտվելով և համագործակցելով «Բնտերակտիվ կրթության զարգացում» կրթական հիմնադրամի հետ, որը բաց դասընթացներ իրականացրեց ուսուցիչների և դասախոսների համար: Վերջին դասընթացներից, որոնց մասնակցեցին քոլեջի դասախոսները, MOODLE հեռավար հարթակի դասընթացի ստեղծումն ու իրականացումն էր:

Նաև նույն հարթակում դրված են եղել այլ բաց դասընթացներ Microsoft կազմակերպության կողմից: Քոլեջի դասախոսները մասնակցել են նաև գերմանական GIZ կազմակերպության կողմից առցանց անցկացրած «Ձեռնարկատիրական հմտություններ» թեմայով դասընթացին:

Որոշ դասախոսներ սեփական նախաձեռնությամբ մասնակցել են հեռավար ուսուցման վերաբերյալ որոշ դասընթացներ՝ արժանանալով հավաստագրերի: Կից ներկայացված են հղումներ այդ դասընթացների վերաբերյալ.

1. <https://education.microsoft.com/ru>
2. <https://www.culturepartnership.eu/>
3. <https://www.futurelearn.com/courses>
4. <https://multiurok.ru/>

Դիմակայելով անսովոր մարտահրավերներին և ստեղծված դժվարին իրավիճակին տարատեսակ վերապատրաստումների մասնակցելով քոլեջի դասախոսները և վարչական անձնակազմը փորձում են հետ չմնալ դասավանդման նորամուծություններից՝ կրթական մակարդակը էլ ավելի բարձրացնելու նպատակով: Այս շրջանակներում ստեղծվել է օպտիմալ պայմաններ՝ ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ արդյունավետ և որակյալ ուսուցում կազմակերպելու համար (էլեկտրոնային ուսուցում):

2016 թվականին քոլեջը մասնակցել է «Մեյվ դը չիլդրեն» հայաստանյան մասնաճյուղի հայտարարած դրամաշնորհային ծրագրին, հաղթել և քոլեջում իրականացրել է կարճաժամկետ երեք դասընթացներ՝ հատուկ կարիքներ ունեցող շահակիցների համար:



«Աջակցություն բանտարկյալներին» ծրագրի շրջանակներում քոլեջը համագործակցում է ՀՀ արդարադատության նախարարության հետ: Մասնագիտական ծրագրերով վերապատրաստումներ է անցկացրել Սևանի քրեակատարողական հիմնարկում իրենց պատիժը կրող բանտարկյալների համար՝ տալով լրացուցիչ մասնագիտական կրթություն:

Որպես մասնագիտական ուսումնական հաստատություն՝ ԿՏՊՔՆ-ն ունենալով ակտիվ քաղաքացիական դիրքորոշում՝ հաճախ է հանդես գալիս քաղաքացիական նախաձեռնությամբ և մասնակից է դառնում հասարակական տարբեր ծրագրերի: Օրինակ՝ քոլեջի ղեկավարությունն ուսանողական խորհրդի հետ համատեղ կազմակերպում են միջոցառումներ՝ երթեր, ֆլեշ մոբեր, ինչպես նաև ճանաչողական արշավներ: Մասնավորապես՝ ամեն տարի հոկտեմբերին

կազմակերպվում է արշավ՝ դեպի Հայաստանի պատմամշակութային և տեսարժան վայրեր: Քոլեջն իր մասնակցությունն է ցուցաբերում նաև «Հայաստան համահայկական հիմնադրամին» կատարելով հանգանակություն, բարեգործական դրամահավաքներին՝ կարիքավորներին աջակցելու համար, համագործակցում է «Աջակցություն երեխաներին» կազմակերպության հետ:

Կոտայքի մարզային գրադարանը, գիտելիքի ամրապնդման և տարածման նպատակով, պարբերաբար կազմակերպում և անցկացնում է հանդիպումներ անվանի գրողների, դերասանների, մշակութային և քաղաքական գործիչների հետ: Այդ միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում մեր ուսանողները՝ ձեռք բերելով մի շարք հմտություններ:



«Աննա Ֆրանկի օրագիրը» գրքի քննարկում



Հանդիպում Արտեմ Հարությունյանի հետ

Քոլեջում որոշ մասնագիտությունների գծով պարբերաբար կազմակերպվում են բանավեճ-քննարկումներ՝ մասնակից դարձնելով քոլեջի բոլոր շահակիցներին:

Քաղաքացու դաստիարակումը տեղի է ունենում նաև արտալսարանային միջոցառումների շրջանակներում՝ բարեգործական ծրագրեր (այցելություն Գյումրու մանկատուն), ուսանողական միջոցառումներ (ազգային տոների, հայ Մեծերի, Եղեռնի վերաբերյալ):



2016 թ-ին ԿՏՊԲ-ն լիազոր մարմնի թույլտվությամբ, իր հարկի տակ առավ ՀՅԴ Լիբանանի Երիտասարդական միության կողմից կազմակերպված ճամբարին՝ «Կյանքս Արցախին» խորագրով, որին մասնակցում էին 12-ից 16 տարեկան պատանիներ: Մեր քոլեջի ակտիվ ուսանողներից շատերը մասնակցեցին այդ ճամբարի աշխատանքներին՝ որպես խմբավարներ:

Ուսանողների քաղաքացիական դաստիարակության և նրանց համամարդկային արժեքների փոխանցման պարտավորվածությունը բխում է ինչպես ՀՀ օրենսդրությունից և որակավորումների ազգային շրջանակից, այնպես էլ ուսանողների տարիքային խմբերի առանձնահատկություններից և մանկավարժական գործունեության համընդհանուր բնույթից: Այդ շրջանակներում Հայ Օգնության Միությունը (ՀՕՄ) իրականացում է երիտասարդների մոտ հայրենաձանաչության և հայրենասիրական մակարդակը բարձրացնող ծրագրեր, որին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում քոլեջի ուսանողները:



«Միասնական Հրազդան» երիտասարդական հասարակական կազմակերպությունը, երիտասարդների դերը հասարակության մեջ մեծացնելու նպատակով՝ իրականացնում է ծրագրեր քոլեջի ուսանողների ակտիվ մասնակցությամբ:



Կադրերի երիտասարդացման, աշխատանքի վարձատրության բարձրացման, հաջողակ մասնագետների՝ դասախոսությունների հրավիրման և մի շարք այլ մեխանիզմներով քոլեջը ձգտում է հնարավորինս փոխանցել ուսանողներին այնպիսի արժեհամակարգ, որի հիմքում գիտելիքի, հմտությունների և կարողությունների գերակայությունն է՝ որպես հաջողության հասնելու առաջնային գործոններ:

Վերլուծել Չափանիշ 8-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները: / SWOT վերլուծություն/

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> ԿՏՊԲ-ի գործունեության մասին տեղեկատվության հասանելիություն և թափանցիկություն, ինչին 	<ul style="list-style-type: none"> Հասարակության հետ կապերի ոլորտում և ԿՏՊԲ-ի

<p>նպաստում են՝ ակտիվ համագործակցություն ՁԼՄ-ների հետ, քոլեջի գործունեությունը լուսաբանող շաբաթաթերթեր, պաշտոնական կայքէջ, տեղեկատվական բուկլետներ, ներկայացվածություն սոցցանցերում, այցելություններ դպրոցներ, սահիկաշարով ներկայացվող տեղեկացվածություն:</p> <ul style="list-style-type: none"> • Հանրային նշանակություն ունեցող միջոցառումների մասնակցություն՝ (աշխատաշուկայում տեղ գրավելու նպատակով, քոլեջը հասարակությանը ներկայացնելու միտում), որը բարձրացնում է քոլեջի մրցունակությունը և վարկանիշը: • Կազմակերպվող ցանկացած միջոցառման հասանելիությունը ներքին և արտաքին շահառուներին էլեկտրոնային հարթակների միջոցով, ինչը նպաստում է քոլեջի գործունեության թափանցիկությանը: • Ցկյանս կրթություն. (կրթություն ամբողջ կյանքի համար): ԿՏՊԲ-ն պարբերաբար իրականացնում է կարճաժամկետ կրթություն նաև մեծահասակների համար, լուծում է զբաղվածության հարցը և բարձրացնում է քոլեջի վարկանիշը: • ՀՀ Կոտայքի մարզի հանրային կյանքի տարբեր ոլորտներում ԿՏՊԲ-ի ուսանողների և շրջանավարտների մեծ ներգրավվածություն, ինչը նպաստում է հասարակության արդի պահանջներին համապատասխան որակյալ մասնագետների ձևավորմանը: • Գործարար և արտադրական գործակցային կապերի զարգացում Կոտայքի մարզի հիմնարկ ձեռնարկությունների հետ՝ միտված գործնական հմտությունների և կարողությունների ձևավորմանը: 	<p>պաշտոնական կայքում հետադարձ կապի վերահսկողության մեխանիզմների բացակայություն:</p> <ul style="list-style-type: none"> • Հասարակության կարիքների ուսումնասիրման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառում:
<p>Հնարավորություններ</p>	<p>Ռիսկեր</p>
<ul style="list-style-type: none"> • Հասարակության և քոլեջի միջև սերտ կապերի պահպանում և ընդլայնում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների՝ բուկլետների, գովազդային հայտարարությունների, վահանակների և այլ արդիական միջոցների և տեխնոլոգիաների զարգացմամբ: • Գործընկերային կազմակերպությունների ղեկավարների ընդգրկվածություն՝ Կառավարման խորհրդում և պետական ատեստավորման հանձնաժողովներում, հետագայում աշխատանքի տեղավորման խնդիրների լուծման համար: 	<ul style="list-style-type: none"> • Աշխատաշուկայի անկանխատեսելի ություն: • Քոլեջում առկա որոշ մասնագիտությունների նկատմամբ հանրության սոցիալական պատվերի նվազում՝ քոլեջի կողմից տրվող պետական ատեստավորման վկայականի ցածր մրցունակության պատճառով /ԲՈՒՀ-երի համապատասխան փաստաթղթի համեմատ/:

Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները

Հասարակության կրթական կարիքների վերհանման նպատակով իրականացնել աշխատաշուկայի խորքային ուսումնասիրություն՝ ըստ մասնագիտությունների:

Հասարակության հետ հետադարձ կապերի ամրապնդման մեխանիզմների կատարելագործում:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ Ը

ԶԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ԿՏՊԲ-ի ռազմավարական նպատակներից է միջազգային համագործակցության ներուժի զարգացումը, ինչի համար քոլեջը պլանավորում է քայլեր ձեռնարկել հաստատության միջազգայնացման ուղղությամբ՝ հետևյալ միջոցներով.

- Եվրոպական երկրների ՄԿՈՒ հաստատությունների համագործակցության լավագույն փորձի ուսումնասիրում:
- ՄԿՈՒ ոլորտում գործունեություն իրականացնող այլ այդ թվում՝ արտասահմանյան ՄԿՈՒ իրավաբանական անձանց և ցանցերի հետ համագործակցության հաստատում:

ՄՈՒՀ-ը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

ՄՈՒՀ-ի նպատակներից են՝

3. Իր մարզի, համայնքի և երկրի զարգացման պահանջների բավարարմանը և մասնագիտության կրթության համակարգի զարգացմանն ուղղված մասնագիտական կառավարչական, ուսումնական, մեթոդական, գիտամանկավարժական, մշակութային, նյութատեխնիկական ներուժի ձևավորմանը նպաստելը, ինչպես նաև հարակից ուսումնական հաստատությունների զարգացմանը օժանդակելը:
4. Մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջնային առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրթության զլոբալ համակարգերին ինտեգրումը:

ԶԱՓՈՂՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր [«ԿՏՊԲ-ի 2015-2020 թթ-ին զարգացման ռազմավարության ծրագիր»](#)
[ԿՏՊԲ-ի կանոնադրություն](#)

Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների փորձի փոխանակման, զարգացման, կրթական, հետազոտական գործընթացն իրականացնելու նպատակով ՄՈՒՀ-ը համագործակցում է տարածաշրջանում գործող նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև ձեռնարկատիրական կազմակերպությունների հետ: Քոլեջների հետ տեղի է ունենում փորձի փոխանակում և խորհրդատվություն: Օրինակ՝ մոդուլային համակարգի ներդրման,

ինստիտուցիոնալ ինքնավերլուծության և այլն:

Դեռևս բացակայում են միջազգային փորձի ներդրման և փոխանակման գործընթացները կարգավորող դրույթներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Հիմքեր [«ԿՏՊԲ-ի 2015-2020 թթ-ին զարգացման ռազմավարության ծրագիր»](#)
[ԿՏՊԲ-ի կանոնադրություն](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջը դեռևս միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքներ չունի: Արտաքին համագործակցության ապահովման գործընթացները իրականացնում է տնօրենը՝ գործընկերներ ներգրավելու միջոցով (ուսանողների ուսումնասիրտադրական և նախաավարտական պրակտիկաների անցկացման, ներդրումների համար), ինչպես նաև կարիերայի կենտրոնը՝ համագործակցելով գործատուների, տարածքային զբաղվածության կենտրոնի և այլ կազմակերպությունների հետ: (Չրջանավարտների զբաղվածությունը ապահովելու համար):

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Հիմքեր [«ԿՏՊԲ-ի 2015-2020 թթ-ին զարգացման ռազմավարության ծրագիր»](#)
[ԿՏՊԲ-ի կանոնադրություն](#)
Համագործակցության համաձայնագրեր

Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

2013 թվականից քոլեջում գործում է Կարիերայի կենտրոն, որի արդյունքում քոլեջը համագործակցում է մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի հետ: Համագործակցությունը հնարավորություն է տալիս ստանալ անհրաժեշտ մեթոդական և անհրաժեշտ ռեսուրսային օժանդակություն(վերապատրաստումներ, մեթոդական ուղեցույցներ և ձեռնարկներ):

2015 թվականից քոլեջը համագործակցում է ՈԱԱԿ-ի հետ, ինչի արդյունքում քոլեջում ներդրվել է որակի ներքին ապահովման մշակույթ, հիմնվել է Որակի ներքին ապահովման կենտրոն, իրականացվել է նախնական ինքնավերլուծություն: Քոլեջի մի քանի աշխատակիցներ, ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների հետ կապված, պարբերաբար մասնակցել և մասնակցում են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին:

2017 թվականից Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ֆինանսավորմամբ գերմանական միջազգային համագործակցություն ընկերությունը (ԳՄՀԸ) իրականացնում է «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» համալիր ծրագրերը, որի նպատակն է բարելավել տնտեսական զարգացումը մասնավոր հատվածի մրցունակության աճի միջոցով:

Ծրագիրն աջակցում է մասնագիտական կրթության և ուսուցման առաջարկների մշակմանը և արդիականացմանը, որոնք ունեն շուկայական ուղղվածություն և պահանջարկ մասնավոր հատվածի կողմից՝ հզորացնելով մասնավոր սեկտորի ներգրավվածությունը և համագործակցությունը ՄՈՒՀ-երի հետ: ԿՏՊԲ-ն այս ծրագրի հիմնական շահառուներից է, ինչի արդյունում քոլեջում ներդրվել են տարածաշրջանում պահանջարկ ունեցող մի շարք կարճաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրեր՝ երկակի ուսուցման մոդելով (Դուալ): Ծրագրերը կրում են շարունակական բնույթ:

2019 թ. ԿՏՊԲ-ի տնօրենը մասնակցել է Գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈւ) - համագործակցություն» ծրագրին, որի արդյունքում, հաշվի առնելով գործատուների կարիքներն ու պահանջները մասնագիտական կադրերի նկատմամբ, ստեղծվեցին պրակտիկայի վայրեր, ձեռք բերվեցին նոր գործընկերներ՝ ուսանող-մասնագետների գործնական ուսուցումը կազմակերպելու, նաև՝ սեփական ընկերության համար մասնագիտական կադրեր պատրաստելու համար:

Բացի այդ, ծրագրի շրջանակներում ձեռք բերված գիտելիքներով և եվրոպական երկրների նմանօրինակ փորձի ուսումնասիրման արդյունքներով տնօրենը տվեց մեթոդական, կազմակերպչական ճիշտ ուղղություն՝ քոլեջում 2019թ-ից ներդրված «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության դուալ կրթական ծրագրի իրականացման համար:

2020 թվականին ԿՏՊԲ-ը ՀՀԿԳՄՍ նախարարության և եվրոպական կրթական հիմնադրամի կողմից ընտրվել է «Գերազանցության ցանց»-ի անդամ (ENE): ENE-ն արհեստագործական գերազանցության կենտրոնների միջազգային ցանց է, որի նպատակն է ստեղծել համագործակցության, տարիքային ուսուցման (peer learning), և մեխանիզմների զարգացման հնարավորություններ իր և համագործակցող անդամների միջև: Այս համագործակցության շրջանակներում քոլեջը նպատակ ունի կապ հաստատել նմանօրինակ եվրոպական ՄՈՒՀ-երի հետ և իրականացնել փորձի փոխանակման ծրագրեր:

ԲՈՒՀ-երի հետ համագործակցության արդյունքում, քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարողանում են ուսումը շարունակել բակալավրիատի երկրորդ կուրսից՝ վճարովի ուսուցման համակարգում /միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգ/:


ՉԱՓՈՂՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հիմքեր


Հարցումներ, աշխատողների անձնական թերթիկներ
Համառոտ տեղեկատվություն քոլեջի վերաբերյալ 3 օտար լեզուներով
Միջազգայնացումը խթանող այլ մեխանիզմներ

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:


Նշեք Ձեր պաշտոնը



Բանավոր խոսք







Գրավոր խոսք



Աշխատակիցներ	2018		2019		2020	
	Քանակ		Քանակ		Քանակ	
Դասավանդող	37		39		50	
Վարչական աշխատող						

Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:





Ուսանողներ	2018		2019		2020	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Մասնագետ	400		439		570	

Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվ ըստ տարիների

Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը	2016	2017	2018	2019	2020

Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների

Երկրներ	2016	2017	2018	2019	2020

Ներկայացնել և վերլուծել վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • ՀՀ ԲՈԻՀ-երի, քոլեջների, արհեստագործական ուսումնարանների և հիմնարկ ձեռնարկությունների հետ սերտ համագործակցություն՝ շարունակական կրթության, փորձի փոխանակման, պրակտիկայի անցկացման և աշխատանքի տեղավորման նպատակով: • 2019 թվականին Գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈւ) - համագործակցություն» ծրագրի շրջանակներում մեթոդական և կազմակերպչական աջակցության ապահովում: • 2020 թվականին ԿՏՊԲ-ը ՀՀԿԳՄՍ նախարարության և Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից ընտրվել է Գերագանցության Ցանցի անդամ՝ զարգացման մի շարք ծրագրերի իրականացման նպատակով: • 2019թ-ից «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության շրջանակներում դուալ կրթական ծրագրի գործարկում, որը հնարավորություն է տալիս երկակի ուսուցում ստանալ: 	<ul style="list-style-type: none"> • Քոլեջում միջազգայնացման ուղղությամբ կանոնակարգող փաստաթղթերի բացակայություն • Արտերկիր մեկնող և արտերկրից ժամանող ուսանողների և դասախոսների շարժունակության բացակայություն • Մասնագիտական օտար լեզուներ տիրապետող դասավանդողների սակավություն • Ուսանողների փոխանակման ծրագրերի, համաձայնագրերի բացակայություն • Հավելյալ ծառայությունների ներդրման համար ֆինանսական միջոցների սղություն • Քոլեջին հասանելի միջազգային ծրագրերի սղություն • Միջազգային փոխանակման և հետազոտական ծրագրերի վերաբերյալ ցածր տեղեկացվածություն
Հնարավորություններ	Ռիսկեր
<ul style="list-style-type: none"> • Քոլեջի համար եռալեզու կայքի ստեղծում /հայերեն, ռուսերեն, անգլերեն/ • Եվրոպական թրեյնինգ հիմնադրամի (ETF) կողմից իրականացվող աշխատանքներին մասնակցելու և աջակցություն ցուցաբերելու հնարավորություն: • Միջազգային համագործակցության ընդայանում՝ փոխանակման ծրագրերի ներդրման, կրթության որակի զարգացման, նոր հայեցակարգերի մշակման նպատակով: 	<ul style="list-style-type: none"> • Բարձրորակ մասնագետների արտահոսք • Մշակութային արժեքների, արժեհամակարգերի բախում • Փոխանակման ծրագրերի անհամապատասխանություն • Համագործակցող կրթական հաստատություններում տարբեր մեթոդների և մոտեցումների կիրառում

Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները

- Մասնակցություն արտասահմանյան դասավանդողների կողմից կազմակերպվող՝ օնլայն դասընթացներին:
- Համագործակցության եզրեր գտնել միջազգային կառույցների և ուսումնական հաստատությունների հետ՝ կրթության որակի բարելավման նպատակով:
- Նախատեսվում է մշակել տեղեկատվական փաթեթների օտարալեզու/ռուսերեն, անգլերեն/ տարբերակները, որոնք տեղ կգտնեն նաև քոլեջի պաշտոնական կայքէջում:
- Քոլեջի անգլերեն դասավանդող դասախոսների կողմից կազմակերպել դասընթացներ՝ քոլեջի մյուս դասախոսների անգլերեն լեզուն բարելավելու նպատակով:
- Միջազգային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը բարձրացնելու և դրամաշնորհային ծրագրերին հայտ ներկայացնելու ձևերին ծանոթացնելու նպատակով կազմակերպել սեմինարներ դասախոսների համար:
- Մշակել ԿՏՊՔ-ի բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը իր առաքելությանը, ռազմավարական նպատակներին և որակի ներքին ապահովման քաղաքականությանը համընթաց՝ անընդմեջ բարելավում և զարգացնում է իր ներուժը և քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ նպատակ ունենալով պատրաստել ժամանակակից տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան միջին մասնագիտական որակավորմամբ մրցունակ մասնագետներ: ԿՏՊՔ-ն ստեղծում է օպտիմալ պայմաններ՝ արդյունավետ և որակյալ ուսուցման համար ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ, խթանելով նաև երկակի ուսուցման մոդելի ներդրմանը, տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը:

Քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնը խթանում է հետազոտության ինտեգրումը դասավանդման և ուսուցման գործընթացներում՝ ապահովելով դրանցում ուսանողների ներգրավվածությունը:

Որակի ներքին գործընթացների արդյունավետ ապահովման նպատակով ԿՏՊՔ-ն մշտապես զարգացնում և արդիականացնում է քոլեջի ենթակառուցվածքները, նյութատեխնիկական բազան և ռեսուրսները՝ ապահովելով նաև քոլեջի ֆինանսական ռեսուրսների կայուն և բազմազանեցված հոսքը և բարձրացնելով դրանց կառավարան արդյունավետությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր	<p align="center"><u>Որակի ապահովման ներքին կենտրոնի կանոնակարգը</u></p> <p align="center"><u>Որակի ապահովման քաղաքականությունը</u></p>
--------	---

Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը իր առաքելությանը, ռազմավարական նպատակներին և որակի ներքին ապահովման քաղաքականությանը համընթաց՝ անընդմեջ բարելավում և զարգացնում է իր ներուժը և քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ նպատակ ունենալով պատրաստել ժամանակակից տնտեսության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան միջին մասնագիտական որակավորմամբ մրցունակ մասնագետներ: ԿՏՊՔ-ն ստեղծում է օպտիմալ պայմաններ՝ արդյունավետ և որակյալ ուսուցման համար ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ, խթանելով նաև երկակի ուսուցման մոդելի ներդրմանը, տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը:

ԿՏՊՔ-ն որակի ապահովման գործընթացներում և ընթացակարգերում առաջնորդվում է

«Կրթության մասին», «Միջին մասնագիտական և նախնական /արհեստագործական/ կրթության մասին» ՀՀ օրենքներով, իր կանոնադրությամբ և զարգացման ռազմավարության ծրագրով, ինչպես նաև որակի ապահովման չափանիշներով և չափորոշիչներով: ԿՏՊԲ-ն շարունակաբար բարելավում է մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները՝ տարբեր մակարդակներում՝ որակի ապահովման վերահսկման, շարունակական բարելավման և զարգացման նպատակով:

ԿՏՊԲ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության նպատակը քոլեջում կրթության որակի ապահովման սկզբունքների, մոտեցումների և ուղղությունների սահմանումն է: Որակի ներքին քաղաքականության հիմնական խնդիրներն են.

- Ապահովել որակի մշակույթի ստեղծման և շարունակական բարելավման նախադրյալներ

- Հրահանգավորել ԿՏՊԲ-ի վարչական անձնակազմին և կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչներին՝ որակի ներքին ապահովման ընթացակարգերի մշակման և ներդրման նպատակով

- Ապահովելով միջին մասնագիտական կրթության բնագավառում առկա ձեռքբերումները, ազգային առանձնահատկությունները, հիմնարար գիտելիքները՝ իրականացնել պետության, հասարակության և անհատի տվյալ ժամանակահատվածին համահունչ բարձրորակ կրթություն

- Խթանել հետազոտության ինտեգրումը դասավանդման և ուսուցման գործընթացներում, ապահովել դրանցում ուսանողների ներգրավվածությունը,

- Մշակել մեխանիզմներ նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող քոլեջների հետ՝ լավագույն փորձի փոխանակման և տարածման նպատակով:

ԿՏՊԲ-ում որակի ներքին ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և գործընթացների իրագործման վերահսկողության և մշտադիտարկման, գնահատման պատասխանատու ստորաբաժանումը Որակի ներքին ապահովման կենտրոնն է, որը կատարում է տեղեկատվության հետազոտման, հավաքագրման, համակարգման, կրթության որակի ապահովման չափանիշներին համապատասխան օրինակելի փորձի բացահայտման, շարունակական բարելավման, ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման աշխատանքներ: Կենտրոնը պարբերաբար իրականացնում է քանակական և որակական հետազոտություններ որակի ապահովման շրջանակներում՝ արդյունքները հասանելի դարձնելով ներքին և արտաքին շահակիցներին: Իր գործառնությունների շրջանակներում կենտրոնը ապահովում է նաև կրթական ծրագրերի և դրանց իրականացման գործընթացների որակի ապահովման ընթացակարգերի ստեղծումը, մշտադիտարկումը, համագործակցելով որակի արտաքին գնահատումն իրականացնող կառույցների, ինչպես նաև քոլեջի բոլոր ստորաբաժանումների և ենթակառուցվածքների հետ:

Որակի ներքին ապահովման քաղաքականությունն ուղղված է հավաքագրված փաստերի հիման վրա տարբեր մակարդակներում թերացումների և արձանագրված լավագույն փորձի վերհանմանը, բարելավմանն ուղղված միջոցառումների մշակմանը և իրականացմանը:

Տարբեր գործընթացների վերաբերյալ փաստարկված տեղեկատվությունը և դրանց հիման վրա կատարված վերլուծությունները նպաստում են կրթական միջավայրի և կրթության որակի բարելավմանը:

2018 թվականին քոլեջի Որակի ներքին ապահովման կենտրոնի առաջարկով մշակվել և ներդրվել են մի շարք ընթացակարգեր, տարբեր ստորաբաժանումների աշխատանքների կանոնակարգեր՝ նպաստելով որակի մշակույթի արմատավորմանը: Որակի ապահովման խնդիրները և դրանց բարելավման մշակված ուղիները, ընթացակարգերը և միջոցները պետք է ձևակերպված լինեն հստակ, շոշափելի, իրագործելի տվյալ աշխատանքների համար

նախատեսված խելամիտ ժամկետներում:

Որակի ներքին ապահովման համակարգակր, ընթացակարգերը պետք է հասանելի լինեն ԿՏՊԲ-ի կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչների դիտարկմանը, ուսումնասիրմանը՝ հետադարձ կապի ապահովման, գործընկերային և թիմային մոտեցման համար:

Կենտրոնի աշխատանքային խմբերը կազմված են առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների /ամբիոնների/, ղեկավարների և դասախոսների մասնակցությամբ: Կենտրոնի աշխատանքներում ընդգրկված է նաև ուսանողական խումբ:

Որակի ներքին ապահովման քաղաքականության շրջանակներում ԿՏՊԲ-ն իրականացնում է հստակ ուղղորդված միջոցառումներ, մասնավորապես՝ ստեղծում է բարենպաստ միջավայր քոլեջի դասախոսական, վարչական կազմի և ուսանողների մասնագիտական զարգացման դասավանդման և ուսուցման նորագույն հմտությունների և գիտելիքների ձեռքբերման համար: Ապահովում է կառավարման և հաշվետվողականության թափանցիկ համակարգ՝ հնարավորություն տալով ներքին շահակիցներին մասնակցել որակի ապահովման գործընթացներին, կարծիքներ ու առաջարկություններ ներկայացնել որակի ընթացակարգերի և գործընթացների բարելավման նպատակով:

ԿՏՊԲ-ն իր ռեսուրսները ծառայեցնում է որակի ապահովման գործընթացների արդյունավետ իրագործմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական հաշվառման վարման քաղաքականություն

Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի ներքին ապահովման կենտրոնը պատասխանատու է որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, կանոնակարգային, ընթացակարգային չափորոշիչ փաստաթղթերի և առարկայական /մոդուլային/ ծրագրերի վերանայման, քննարկման ու ուսումնամեթոդական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար:

Որակի ներքին ապահովման կենտրոնը կազմված է ղեկավարից, աշխատանքային և ուսանողական խմբերից, անհրաժեշտության դեպքում նաև ժամանակավոր խմբերից: Որակի ներքին ապահովման կենտրոնի ղեկավարի գործառույթներն են.

1. Վերահսկել և ղեկավարել կենտրոնի աշխատանքները,
2. Պատասխանատվություն կրել կենտրոնի որակի և նրա առջև դրված գործառույթների իրականացման համար
3. Մշակել ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմներ ու համապատասխան փաստաթղթեր

4. Կազմակերպել և իրականացնել քոլեջի ինքնավերլուծությունը
5. Ձևավորել որակի ներքին ապահովմանն ուղղված ուսանողական շարժում

Որակի ներքին ապահովման կենտրոնի աշխատանքային խմբերը կազմվում են առարկայական, ցիկլային հանձնաժողովների /ամբիոնների/ ղեկավարների և դասախոսների, վարչական կազմի մասնակցությամբ: Աշխատանքային խմբերի գործառույթներն են.

1. Կազմակերպել քոլեջի գործունեության, ուսումնական գործընթացների գնահատման վերաբերյալ հարցումներ, վերլուծել դրանց արդյունքները
2. Ցուցաբերել մեթոդական օգնություն
3. Վերանայել քոլեջի ներքին կարգերը և համապատասխանեցնել գործող չափանիշներին, հետևել դրանց իրագործման ընթացքին

Ուսանողական խումբը բաղկացած է խմբի նախագահից և յուրաքանչյուր կուրսի մեկ ուսանողից: Ուսանողական խմբի գործառույթներն են.

1. Ծանոթացնել ուսանողներին իրենց իրավունքներից օգտվելու հնարավորություններից
2. Կազմակերպել քննարկումներ ուսանողական խորհրդի հետ՝ կրթության որակի հետ կապված խնդիրների բացահայտման և որակի ապահովման կենտրոնին համապատասխան առաջարկությունների ներկայացման նպատակով
3. Աջակցել մշտադիտարկման մեխանիզմների մշակմանը:

Որակի ներքին գործընթացների արդյունավետ ապահովման նպատակով ԿՏՊԲ-ն մշտապես զարգացնում և արդիականացնում է քոլեջի ենթակառուցվածքները, նյութատեխնիկական բազան և ռեսուրսները՝ ապահովելով նաև քոլեջի ֆինանսական ռեսուրսների կայուն և բազմազանեցված հոսքը և բարձրացնելով դրանց կառավարան արդյունավետությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Հիմքեր

- [Որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ](#)
- [«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի հաշվապահական հաշվառման վարման քաղաքականություն](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի մանկավարժական խորհրդի կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրինական խորհրդի կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ \(փոփոխություն\)](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական](#)

խորհրդի կանոնակարգ
Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի
ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ներքին ապահովման համակարգում արտացոլվում է վերջիններիս ընդգրկվածությամբ կառավարման տարբեր օղակներում և խորհրդակցական մարմիններում:

Քոլեջի դասավանդողները և ուսումնաօժանդակ կազմը որպես ներքին շահակիցներ ընդգրկված են տարբեր խորհրդակցական մարմինների կազմում՝ այդ կերպ մասնակցելով իրենց առնչվող գործընթացների կազմակերպմանը, կառավարմանը, խնդիրների վերհանմանն ու լուծմանը: Մասնավորապես՝ կառավարման խորհրդի կազմի 20%-ը դասախոսներ են, որոնց թեկնածությունն առաջադրում է մանկավարժական խորհուրդը: Կառավարման խորհրդի կազմում ընդգրկված դասախոսներն իրավունք ունեն ներկայացնել առաջարկներ, նախագծեր և ստանալ համապատասխան լուծումներ:

Քոլեջի ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով փոխստեղծները, պրակտիկայի վարիչը, գլխավոր հաշվապահը, կադրերի տեսուչը, ամբիոնների վարիչները, որակի ներքին ապահովման կենտրոնի ղեկավարը հանդիսանում են տնօրինական խորհրդի՝ որպես խորհրդակցական մարմնի անդամներ: Խորհրդի կազմում տնօրենի որոշմամբ կարող են ընդգրկվել տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ և ուսումնաօժանդակ կազմից տարբեր աշխատակիցներ, եթե վերջիններս առնչվում են օրակարգի քննարկվող հարցերին: Տնօրինական խորհուրդը քննարկում և իրականացնում է քոլեջի ողջ գործունեությանն առնչվող հարցեր և միջոցառումներ: Տնօրինական խորհրդի կազմում տնօրենի որոշմամբ կարող են հրավիրվել տարբեր աշխատակիցներ, եթե քննարկվող հարցերը առնչվում են նրանց:

Քոլեջի փոխստեղծները, ամբիոնների և կաբինետների վարիչները, պրակտիկայի և այլ բաժինների ղեկավարներ, հանդիսանում են նաև ուսումնամեթոդական խորհրդի անդամներ, որի միջոցով իրենց իրավասությունների շրջանակներում քննարկում և առաջարկություններ են ներկայացնում տնօրինական խորհրդին և տնօրենին: Ուսումնամեթոդական խորհուրդը կոչված է նպաստելու ԿՏՊԲ-ում տարվող ուսումնական և մեթոդական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

Քոլեջի բոլոր դասախոսները, փոխստեղծները, ամբիոնների և կաբինետների վարիչները հանդիսանում են նաև մանկավարժական խորհրդի անդամներ, որը կոլեկտիվ ղեկավարման մարմին է: Խորհրդի անդամները կարող են հարցեր և առաջարկներ ներկայացնել նաև կառավարման մարմիններին: Մանկավարժական խորհուրդը իր գործառույթների շրջանակներում քննարկում է պետական չափորոշյին համապատասխան մասնագիտական ծրագրերի իրագործման հարցերը, ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտալսարանային և արտաքոլեջային աշխատանքների կազմակերպման, ուսումնական գործընթացին առնչվող այլ հարցեր:

Քոլեջի դասախոսական և վարչական կազմը պարբերաբար մասնակցում է Ռրակի ներքին ապահովման կենտրոնի կողմից անցկացվող հարցումներին, որոնք միտում ունեն բացահայտելու դասախոսների բավարարվածության աստիճանը ուսումնական գործընթացի կազմակերպումից և քոլեջի ռեսուրսային հագեցվածությունից: /Հավելված 2./:

Կրթական միջավայրի և գործընթացների արդյունավետության և որակի ապահովման նպատակով քոլեջը խթանում է ուսանողակենտրոն միջավայրի բարելավումը՝ կարևորելով իր ուսանողների՝ որպես կարևորագույն ներքին շահակիցների ներգրավվածությունը քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում և շեշտը դնելով ուսումնառողների կրթական կարիքների

վերհանման և դրանց բավարարման վրա: Ուսանողներն ընդգրկված են կառավարման խորհրդի /25%, ուսանողական խորհրդի՝ որպես ուսանողների շահերը ներկայացնող և պաշտպանող ինքնավար մարմնի, ինչպես նաև՝ որակի ներքին ապահովման կենտրոնի կազմում, ինչի շնորհիվ նրանց հնարավորություն է տրվում բարձրացնել հարցեր, վերհանել կարիքներ և ստանալ լուծումներ : Ուսխորհրդի 5 հանձնաժողովներից 2-ը՝ ուսանողների հետ կապի և տեղեկատվական, ինչպես նաև ուսումնամասնագիտական հանձնաժողովները, զբաղվում են նաև կրթական կարիքների վերհանմամբ:

Ուսանողներին հուզող հարցերի, խնդիրների բարձրաձայնման և առաջարկներ ներկայացնելու նպատակով քոլեջում տեղադրվել է բողոքների և առաջարկությունների արկղ, որի միջոցով վերհանված հարցերը ներկայացվում են տնօրենին, քննարկվում և ստանում անհրաժեշտ լուծումներ:

Քոլեջի վարչական և դասախոսական կազմը մասնակցում է Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից կազմակերպվող հարցումներին, որոնց միջոցով բացահայտվում է վերջիններիս բավարարվածությունը ուսումնական գործընթացից, քոլեջի նյութատեխնիկական առկա ռեսուրսներից, բազայից:

ԿՏՊԲ-ում կրթական և ուսումնական գործընթացից ուսանողների բավարարվածության աստիճանի բացահայտման, գնահատման և մշտադիտարկման, կրթության որակի ապահովման նպատակով պարբերաբար անկացվում են հարցումներ ուսանողների շրջանում: Հարցումները թույլ են տալիս բացահայտել ուսանողների բավարարվածությունը ուսումնական գործընթացից, քոլեջում իրականացվող հետազոտական նախագծերից, քոլեջի նյութատեխնիկական առկա բազայից և ռեսուրսներից: Հարցման արդյունքների վերլուծությունները նպաստում են քոլեջի գործընթացների բարելավումներին: /Հավելված 1./:

Քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կազմում ևս ձևավորված է ուսանողական խումբ, որը բաղկացած է խմբի նախագահից և յուրաքանչյուր մասնագիտության ուսանողից: Որակի ներքին ապահովման կենտրոնի ուսանողական խումբն իր գործառույթների շրջանակներում ծանոթացնում է քոլեջի ուսանողներին իրենց իրավունքներին և պարտականություններին, իրենց իրավունքներից օգտվելու հնարավորություններին, կազմակերպում է ուսանողական քննարկումներ՝ ուսանողական խորհրդի հետ՝ կրթական գործընթացի և ուսումնական միջավայրի որակի հետ կապված խնդիրների բացահայտման և որակի ներքին ապահովման կենտրոն համապատասխան առաջակություններ անելու նպատակով: Ուսանողական խումբը իր գործառույթների շրջանակներում աջակցում է նաև մշտադիտարկման նոր մեխանիզմների մշակմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

<p>Հիմքեր</p>	<p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնական մասի կանոնակարգ</p> <p>Հարցումների անցկացման կանոնակարգ</p> <p>Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ամբիոնների աշխատանքի կանոնակարգ (փոփոխություն)</p>
---------------	--

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողական խորհրդի կանոնակարգ

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգ (փոփոխություն)

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի առարկայական

(մոդուլային) ծրագրերի վերանայման, մշակման, գնահատման և հաստատման կանոնակարգ(փոփոխություն)

Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջի տարբեր գործընթացների մշտադիտարկումը, գնահատումը և ըստ անհրաժեշտության վերանայումը կրում են շարունակական բնույթ՝ արդյունավետության ապահովման և շարունակական բարելավման նպատակով: Քոլեջի ռազմավարական ծրագիրը, որը մշակվում է 5 տարվա կտրվածքով, վերանայվում է ըստ աշխատաշուկայի փոփոխվող պահանջների՝ հետագայում բարելավելու և գերական խնդիրները արդյունավետ լուծելու նպատակով:

ԿՏՊԲ-ում կրթական գործընթացների կազմակերպումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ տարբեր մակարդակներում կառավարման գործընթացները մշտադիտարկվում են ուսումնական տարվա ողջ ընթացքում՝ համապատասխան մեխանիզմների միջոցով: Մշտադիտարկման և վերահսկման նպատակով տեղեկատվության հավաքագրման և վերլուծության համար որակի ներքին ապահովման կենտրոնը համագործակցում է ԿՏՊԲ-ի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների հետ՝ թերությունների շտկման, համապատասխան երաշխավորությունների, առաջարկությունների և միջոցառումների մշակման և նախաձեռնման, լավագույն փորձի տարածման նպատակով: Քոլեջի յուրաքանչյուր ստորաբաժանում որակի ապահովման շրջանակներում և ստեղծված քաղաքականությամբ պարբերաբար իրականացնում է ուսումնասիրություններ և ինքնավերլուծություններ:

ԿՏՊԲ Որակի ներքին ապահովման կենտրոնի կազմում ստեղծված աշխատանքային խմբերը (ամբիոնների վարիչներ, դասախոսներ, ուսանողական խմբեր, ֆոկուս խմբեր և վարչական կառույցի աշխատողներ), ըստ որակի ներքին ապահովման կանոնակարգի, ընթացակարգերի իրականացնում են իրենց գործառույթները՝ պլանավորման, իրականացման, գնահատման, բարելավման սկզբունքներով: Կազմակերպվում են քոլեջի գործունեության, ուսումնական գործընթացների գնահատում, արդյունքների վերլուծություն, վերանայվում քոլեջի ներքին կանոնակարգերը և դրանք համապատասխանեցվում գործող չափանիշներին՝ հետևելով դրանց իրագործման ընթացքին: Օրինակ 2020թ. որակի ներքին ապահովման բարելավմանը ուղղված աշխատանքների արդյունքում վերանայվել և անհրաժեշտ փոփոխություններ են կատարվել քոլեջի որոշ ընթացակարգերում և կանոնակարգերում, ինչպես նաև մշակվել է նոր ընթացակարգ (Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոսական և ուսանողական համակարգից քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի անդամի առաջադրման և ընտրության ընթացակարգ):

Քոլեջի ուսումնական գործընթացի արդյունավետության մշտադիտարկման, բացթողումների վերհանման, դրանց գնահատման աշխատանքները, բարելավմանն ողղված միջոցառումների մշակումը, ինչպես նաև՝ դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման առաջարկությունների և երաշխավորությունների մշակումն իրականացնում է ուսումնական

մասը՝ իր գործառույթների շրջանակներում: Քոլեջի ուսումնական և մեթոդական աշխատանքների համակարգմանը և արդյունավետության բարձրացմանն են միտված նաև ուսումնամեթոդական խորհրդի աշխատանքները: Խորհուրդը քննարկում և երաշխավորում է ուսումնական պլանները և ծրագրերը, դասավանդման նոր և առաջավոր մեթոդները, եղանակները, ուսումնական գործընթացում ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը՝ ըստ անհրաժեշտության համապատասխան առաջարկություններ ներկայացնելով տնօրինական խորհրդին կամ տնօրենին: Քոլեջում մշտադիտարկում և գնահատում իրականացվում է դասավանդման /ուսումնառության/ մեթոդների վերանայման և արդիականացման նպատակով: Մշտադիտարկումը իրականացվում է նաև քոլեջում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի /մոդուլի/ ծրագրի ուսումնասիրման, թերությունների վերհանման, արձանագրման և դրանց շտկման նպատակով: Գնահատումը ենթադրում է առարկայի /մոդուլի/ ծրագրում ներառված դասավանդման /ուսումնառության/ մեթոդների դասընթացի նպատակների և ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանության ստուգումը և գնահատումը՝ նախապես սահմանված գնահատման չափանիշների հիման վրա: Օրինակ վերանայման գործընթացներից մեկի արդյունքում հաշվի առնելով 3 գործընկեր-հյուրանոցների պահանջները, ուսումնական պլանից հանվել են այն մոդուլներ, որոնց հետ կապված տվյալ գործատուները պահանջ չեն ներկայացրել:

Դասախոս-ուսանող համագործակցությանը և դասավանդման որակի կատարելագործմանը նպաստում է նաև «Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ»-ը՝ հանդիսանալով դասախոսի կողմից անցկացրած դասընթացը և կրթական միջավայրը ուսանողների կողմից գնահատելու և վերլուծելու միջոց: Ընթացակարգը նաև հնարավորություն է տալիս դասախոսին առկա բացթողումների շտկման ճանապարհով խթանել մասնագիտական աճը և կատարելագործել սեփական հմտությունները:

Ուսումնական գործընթացի արդյունավետ ապահովման նպատակով դասախոսները մշտապես կատարելագործում են իրենց կողմից կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները:

ԿՏՊԲ-ի գործընթացների մշտադիտարկմանը, գնահատմանը, անհրաժեշտ վերանայումներին և բարելավումներին նպատում են Որակի ներքին ապահովման կողմից պարբերաբար անկացվող հարցումները, որոնք նպատակաուղղված են ուսումնական և կրթական գործընթացից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության բացահայտմանը և գնահատմանը: Հարցումների արդյունքների հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ և մշակվում նախագծեր՝ որակի արդյունավետ ապահովման և առավել թույլ կողմերի և խնդիրների հաղթահարման նպատակով:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

ԶԱՓՈՐՈՇԻՉ Է. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր	Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվությունները ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների:
--------	---

Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Որակի ներքին ապահովման համակարգը քոլեջում ներդրվել է 2018 թվականին: Որակի ապահովման քաղաքականության դրույթներից էլնելով քոլեջը մշակել և ներդրել է մի շարք կանոնակարգեր և ընթացակարգեր: ՈԱ կենտրոնը իր գործառույթների ծրջանակներում ապահովում է կրթության որակի մշտադիտարկման, գնահատման նոր մեխանիզմների ներդրմանը և հետևում դրանց արդյունավետությանը:

ԿՏՊԲ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի մեջ է:

ԶԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Հիմքեր

- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ռազմավարություն](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի կանոնակարգ](#)
- [Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի ներքին ապահովման կենտրոնի քաղաքականություն](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Քոլեջն իր գործունեության շրջանակներում ուսումնական գործընթացը կազմակերպում է՝ ապահովելով թափանցիկությունը և հրապարակայնությունը արտաքին և ներքին շահակիցների համար: ԿՏՊԲ-ի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով և ԿՏՊԲ-ի կանոնադրությամբ:

ԿՏՊԲ-ի հիմնական հաշվետու փաստաթուղթը տարեկան /կիսամյակային/ հաշվետվությունն է, որն իր մեջ ներառում է քոլեջի գործունեության բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները: Քոլեջի կոլեգիալ կառավարման մարմինը՝ քոլեջի խորհուրդը, տարեկան 2 անգամ /կիսամյակը 1 անգամ/ լսում և գնահատում է տնօրենի հաշվետվությունը: Խորհուրդը ձևավորվում է ներքին և արտաքին շահակիցներից՝ դասախոսներ, ուսանողներ, գործատուներ, զբաղվածության կենտրոնի ներկայացուցիչներ, արհմիության ներկայացուցիչ, հիմնադրի ներկայացուցիչ, լիազոր մարմնի ներկայացուցիչ:

Լիազոր մարմին ներկայացրած հաշվետվությունները ներառում են ոչ միայն ֆինանսական ցուցանիշներ, այլ նաև ուսանողների շարժը, դասախոսական անձնակազմի շարժը, վերջիններիս որակավորման, ստաժի և վարած դասընթացի մասին տեղեկատվություն և ընդունելության արդյունքներ: Քոլեջում իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը:

Ներկայացված հաշվետվությունների միջոցով լիազոր մարմնի կողմից վեր են հանվում քոլեջի խնդիրները, որոշվում քոլեջի ռիսկայնությունը, որի հիման վրա ՀՀ Կրթության տեսչությունը տարվա սկզբին հրապարակում է իր տարեկան աշխատանքային պլանը՝ ներկայացնելով այն քոլեջների ցանկը, որտեղ պետք է իրականացվեն մասշտաբային ստուգումներ: Հաշվետվությունները ներկայացվում են առանց ուշացումների:

Երկրորդ կարևորագույն փաստաթուղթը ֆինանսական հաշվետվությունն է՝ ֆինանսական եկամուտների և ծախսերի, կատարողականի վերաբերյալ: Համաձայն «Հաշվապահական

հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ԿՏՊԲ-ն անցնում է ներքին աուդիտ, որը նույնպես ներկայացվում է ԿՏՊԲ-ի կառավարման խորհրդին: Այս գործընթացն ավելի թափանցիկ է դարձնում քուլեջի ֆինանսական գործունեությունը:

ԿՏՊԲ-ն ներկայացնում է նաև հաշվետվություններ ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական ծառայությանը և այլ պետական գերատեսչություններին: Օրինակ՝ Կարիերայի կենտրոնն ամեն տարի ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ներկայացնում է շրջանավարտների տեղաշարժի վերաբերյալ հաշվետվություն:

Բացի արտաքին հաշվետվություններից՝ քուլեջում առկա են նաև ներքին հաշվետվողականության մեխանիզմներ, որոնք համակարգվում են համապատասխան ստորաբաժանումների կանոնակարգերով: Բոլոր ստորաբաժանումները համագործակցում են միմյանց հետ: Օրինակ՝ ամբիոնների դասախոսների, հարցումների, քննարկումների արդյունքում բացահայտված խնդիրներին լուծում տալու համար կադրերի բաժինն իր տարեկան հաշվետվության մեջ ներառում է նաև այն դասախոսների ցանկը, որոնց պարտադիր վերապատրաստման արդյունքում կբարելավվի կրթության որակը:

Հաշվետվողականության այսպիսի մեխանիզմները նպաստում են քուլեջի գործունեության թափանցիկությանը և կառավարման բարելավմանը, քանի որ վեր են հանվում առկա խնդիրները և բացթողումները, ինչպես նաև արձանագրվում ձեռքբերումները:

ԿՏՊԲ-ի հաշվետվողականության համակարգը գործում է ԿՏՊԲ-ի կանոնադրությամբ:

Քուլեջի գործունեության, իրականացվող աշխատանքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը արտաքին և ներքին շահակիցներին հասանելի է բուկլետների, ցուցապաստառների, կայքի, ֆեյսբուքյան էջի միջոցով: Պաշտոնական կայքում տեղադրված են քուլեջի գործունեությունը կարգավորող և համակարգող բոլոր փաստաթղթերը, որոնք հասանելի են:

Լուսաբանման միջոցներից են նաև քուլեջում փակցված հարթակները, որոնց վրա փակցվում են տնօրինության կողմից տրվող հրամանները, վերջին նորությունները, հայտարարությունները, շարժական դասացուցակը, սովորողների գերազանցության պատի թերթը, դիմորդի անկյունը, կարիերայի անկյունը, ուսանողի անկյունը և այլն:

Ուսանողական խորհուրդը արդեն մի քանի տարի է ներքին ռադիոհանգույցի միջոցով լուսաբանում է մի շարք հայտարարություններ, որով ամփոփվում են տնօրինության կողմից արձակած հրամանները, ուսանողական, երիտասարդական, մշակութային և տեղեկատվական ոլորտում կատարվող իրադարձությունները և նորությունները:

Քուլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվական հասանելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով մշտապես կատարելագործվում է տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգը /Նախատեսվում է ստեղծել քուլեջի եռալեզու կայք, ինչպես նաև լուսաբանել քուլեջի գործունեությունը սոցիալական այլ հարթակներում/:

Դիմորդների ներգրավման, իրազեկման նպատակով իրականացվում է դասախոսների, կարիերայի խորհրդատուի այցելությունները դպրոցներ, որտեղ բանավոր, ինչպես նաև տեսաերիզների, բուկլետների միջոցով ներկայացվում է քուլեջի գործունեությունը, գործող մասնագիտությունները, նրանց առանձնահատկությունները: Այս մեթոդով տեղեկատվությունն ավելի հասանելի է շահառուին:

Իր գործառույթների շրջանակներում քուլեջի գործընթացների հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև ապահովում է նաև Որակի ներքին ապահովման կենտրոնը: Քուլեջի որակի ապահովման համակարգը, ընթացակարգերը հասանելի են ԿՏՊԲ-ի կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչներին՝ դիտարկման, ուսումնասիրման և հետադարձ կապի ապահովման նպատակով:

ԿՏՊԲ-ն ապահովում է հասարակության հետ սերտ կապի զարգացումը, պահպանումը և

հանրային ծրագրերում քոլեջի առավելագույնս ներգրավումը, աջակցում տարածաշրջանի հասարակության գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանը: Այս գործընթացը նպաստում է քոլեջի ու նրա գործունեության վարկանիշի բարձրացմանը, քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների իրազեկմանը և հասանելիությանը՝ ստեղծելով համագործակցության լայն շրջանակ:

Հասարակական պատասխանատվության, հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովման արդյունավետ գործիքների ընտրությամբ, հասարակության հետ հետադարձ կապի գործունե կառուցակարգերի ներդրմամբ քոլեջը ձեռք է բերել բարձր վարկանիշ տարածաշրջանում՝ նպաստելով բարձր որակավորում ունեցող մասնագետների, բիզնես միջավայրի ներգրավմանը: Այս կառուցակարգը նպաստում է շահակիցների կարիքների ներկայացմանը, քոլեջի խնդիրների վերհանմանը, դրանց լուծման ուղիների առաջարկմանը՝ նպաստելով կառավարման բարեփոխմանը, կրթության որակի ապահովմանը, նոր կառուցակարգերի մշակմանը:

Քոլեջը մշտապես կապ է ապահովում գործատուների հետ: ՀԶՏԿ-ն ամեն տարի կազմակերպում է աշխատանքի տոնավաճառ Մահմանադրության հրապարակում, որին մասնակցում են տարածաշրջանի խոշոր ձեռնարկությունները՝ «Մեդրաձոր Գոլդ» ՍՊԸ –ն, տուրիստական և հյուրանոցային համալիրներ, «Տելնետ» ՍՊԸ –ն, «Հայտուսգագարդ» ՓԲԸ –ն, «Հրազդանի ՃՇՇԶ» ԲԲԸ-ն, «Վիլն Լայն» ՍՊԸ-ն, «ԷՅ-Ի-ՋԻ-Սերվիս» Հրազդանի մասնաճյուղը, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն և այլ ձեռնարկություններ: Քոլեջն այդ գործընթացին մասնակցում է որպես գործատու, իսկ քոլեջի վերջին կուրսի ուսանողներն ու շրջանավարտները՝ որպես աշխատանք փնտրողներ: Երկկողմանի համագործակցության արդյունքում ուսանողների մի մասը ձեռք է բերում աշխատանք՝ հիմք ԿԳՄՄ ներկայացվող հաշվետվություն:

Այս ամենի արդյունքում քոլեջը ձեռք է բերել վստահելի գործընկերներ և գործատուներ, որոնք ապահովում են ուսանողներին պրակտիկ գիտելիքներով և հետագայում նաև աշխատատեղերով:

Ըստ որակի ապահովման քաղաքականության՝ ԿՏՊՔ-ի աշխատանքի հիմնական սկզբունքներից է հանդիսանում թափանցիկությունը, ըստ որի բոլոր քաղաքականությունները, ընթացակարգերը կարող են տարածվել շահառուների շրջանակներում

Վերլուծել Չափանիշ 10-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները / SWOT վերլուծություն/

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համահունչ քոլեջի որակի ապահովման արդյունավետ քաղաքականություն, որն ապահովում է որակյալ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև պատրաստում միջին մասնագիտական որակավորմամբ մրցունակ մասնագետներ: • ԿՏՊՔ-ն ստեղծում է օպտիմալ պայմաններ՝ արդյունավետ և որակյալ ուսուցման համար ցանկացած տեղում և ցանկացած ժամանակ, խթանելով նաև երկակի ուսուցման մոդելի ներդրմանը, տարածաշրջանային և միջազգային համագործակցության ներուժը: • Խթանում է հետազոտության ինտեգրումը՝ դասավանդման և ուսուցման գործընթացներում՝ ապահովելով դրանցում ուսանողների 	<ul style="list-style-type: none"> • Բենչմարքինգի բացակայություն՝ որակի ապահովման նոր մեխանիզմների և ընթացակարգերի ներդրման նպատակով • Որակի ապահովման վերլուծության և գնահատման գործիքակազմի անկատարություն:

<p>ներգրավվածությունը:</p> <ul style="list-style-type: none"> • Որակի ներքին գործընթացների արդյունավետ ապահովման նպատակով ԿՏՊԲ-ն մշտապես զարգացնում և արդիականացնում է քոլեջի ենթակառուցվածքները, նյութատեխնիկական բազան և ռեսուրսները՝ ապահովելով նաև քոլեջի ֆինանսական ռեսուրսների կայուն և բազմազանեցված հոսքը և բարձրացնելով դրանց կառավարան արդյունավետությունը: • Որակի ներքին ապահովման կենտրոնի աշխատանքային թիմում ՈԱԱԿ-ի կողմից վերապատրաստված փորձագետների առկայություն: • Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածություն տարբեր խորհրդակցական մարմինների կազմում՝ այդ կերպ մասնակցելով իրենց առնչվող գործընթացների կազմակերպմանը, կառավարմանը, խնդիրների վերհանմանն ու լուծմանը: • Որակի ներքին ապահովման վերանայման արդյունավետ մեխանիզմների առկայություն՝ մշտադիտարկման, տեղեկատվության հավաքագրման, վերլուծության, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների հետ համագործակցության, թերությունների շտկման, համապատասխան երաշխավորությունների, առաջարկությունների, միջոցառումների մշակման և նախաձեռնման, լավագույն փորձի տարածման միջոցով: • Հասարակական պատասխանատվության, հաշվետվողականության, գործունեության թափանցիկության ապահովման արդյունավետ գործիքների ընտրությամբ, հասարակության հետ հետադարձ կապի գործուն կառուցակարգերի ներդրմամբ քոլեջը ձեռք է բերել բարձր վարկանիշ տարածաշրջանում: • Քոլեջը մշտապես կապ է ապահովում գործատուների հետ: ՀՉՏԿ-ն ամեն տարի կազմակերպում է աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցում են տարածաշրջանի խոշոր ձեռնարկությունները: Քոլեջն այդ գործընթացին մասնակցում է որպես գործատու, իսկ քոլեջի վերջին կուրսի ուսանողներն ու շրջանավարտները՝ որպես աշխատանք փնտրողներ: Երկկողմանի համագործակցության արդյունքում ուսանողների մի մասը ձեռք է բերում աշխատանք: 	
<p>Հնարավորություններ</p>	<p>Ռիսկեր</p>
<ul style="list-style-type: none"> • Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի ուղղությամբ աշխատանքի 	<ul style="list-style-type: none"> • Արտաքին և ներքին շահակիցների ոչ

<p>հնարավորություն միջազգային ծրագրերի շրջանակներում:</p> <ul style="list-style-type: none"> • Համագործակցություն նպանատիպ կրթական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատությունների հետ՝ փորձի փոխանակման, կրթության որակի բարելավման նպատակով: • Գործատուների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացում՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան, ինչպես նաև սովորողներին հետագայում իրենց մոտ աշխատանքի տեղավորման նպատակով: 	<p>բավարար հետաքրքրվածություն որակի ներքին ապահովման գործընթացներում:</p>
--	---

Թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման պլանավորվող ուղիները

- Մշակել քոլեջի գործընթացների արտաքին և ներքին գնահատման, մշտադիտարկման, որակի ապահովման նոր արդյունավետ մեխանիզմներ՝ ապահովելով դրանց շարունակական կատարելագործումը: